Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

20009

891.99-192
Z - 30

Q. D.

M.

№ 2003

891.99-192
Հ-30
0
13

Թիւ 6, Հրատարակութիւն «Հայրենիք»-ի

ՀԱՅՐԵՆԻՔ
ԵՐԳԱՐԱՆ

ՆՒԷՐ
Հայ ազատագրութեան հերոսներու
անմահ յիշատակին

ՊՕՍԹԸՆ
ՏՊԱՐԱՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»-Ի
1908

18917

Բոլոր իրաւունքները վերապահուած են։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека

93483-ԱՐ

1615-2002

ԳԱՐՈՒՆՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հայո՛ց աշխարհիկ, գարո՛ւնդ է հասել.
Ահա գեղեցիկ գարուն քո եկել.
Ո՛վ դու ի վաղուց մոռցուած հայրենիք,
Ո՛վ դու իմ սրտիս անմոռաց տեղիք.
Ահա գարունիկդ հասել է հասել,
Աւաղ Մասեաց ծայրն ընդ քեզ հաշտ հայել.
Այն սեւ-սեւ ամպերն են դարձել ի փախ,
Այն ճերմակ-ճերմակ սարերն՝ են անվախ.
Ձընիկն ի ծոցին բացեր է ճանպարհ,
Քաղցրիկ կըրկըչով գլորէ գետս հազար.
Յայն բարձըր ժայռից որ երկնից են մօտ՝
Կենաց օրհնութեան ծագէ առաւօտ......
Հայո՛ց աշխարհիկ, գարո՛ւնդ է եկել,
Ահա՛ գարունիկդ հասե՛լ է հասե՛լ......

Ղ. ԱԼԻՇԱՆ.

* * *

Նկատի առնելով ձայնագրուած երգարան մը տպագրելու դժուարայաղթելի պայմանները, այդպիսի գործի մը համար պահանջուած ահագին ծախսերը, ինչպէս նաև տպարանական անյարմարութիւնները՝ հասկնալի պիտի դառնայ թէ որքան խոչընդոտներ պիտի ծագէին, ներկայ հրատարակութիւնը գլուխ հանելու համար։ Մենք չկրցինք աւելի շատ ձայնագրուած երգեր դնել մեր գրքին մէջ՝ պարզապէս այն պատճառով, որ անկարելի էր պահանջուած հսկայ գումարները հայթայթել և՝ բացի այդ՝ երգարանի հրատարակութիւնը պիտի ձգձգուէր անորոշ ժամանակով։ Հրապարակ հանելով ներկայ հատորը 61 ձայնագրուած երգերով՝ մենք ներելի կը համարենք մեզ համար այն դիտողութիւնները, որոնք թերևս ուղղուին մեզ զանազան կողմերէ երգարանի ծաւալին նկատմամբ։ Չնայելով իր համեմատաբար չափաւոր արտաքինին — ան կը պարունակէ գրեթէ մինչև այսօր ճանչցուած բոլոր ընտիր երգերը, աւելցնելով անոնց վրայ բազմաթիւ նոր նիւթեր։ Մենք մասամբ զոհեցինք գրքի արտաքին վայելչութիւնը, մանաւանդ վերջին մասերուն մէջ՝ խիտ ու սեղմ ձևով շատ նիւթ ամփոփելու համար։

Երգերը հմուտ անձերու կողմէ երգուելով՝ ձայնագրած է Պօսթընի յայտնի երաժշտագէտ Mr. J. P. WESTON. Կոմիտաս Վարդապետի և Պն. Գրիգոր Միրզայեանի (Սիւնի) եղանակած երգերը ընդունած ենք ուղղակէն՝ հեղինակներէն. մասամբ միայն օգտուած ենք կողմնակի աղբիւրներէ։

Ձայնագրուած երգերու մէջ պատահող թեթև վրիպակները դիւրաւ նըկատելի ըլլալով՝ մեր գրքի վրիպակներու բաժնին մէջ չենք առած։

Նիւթերու դասաւորութեան մէջ ջանացած ենք որոշ կարգ մը պահել, առանց սակայն խիստ բաժանումներու սիստէմին հետևելու — միօրինակութենէ հեռու մնալով։

ԲԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

Հրատարակութեան յանձնելով ներկայ աշխատութիւնը՝ անհրաժեշտ կը սեպենք նախապէս քանի մը խօսք ըսել այն ուղղութեան մասին, որուն հետեւած ենք նիւթերու ընտրութեան մէջ:

Անտարակոյս, բարեխիղճ գործ մը արտադրելու համար բաւական չէր ձեռք անցած ամէն պատահական երգերն ու տողանաւորները հաւաքել և գրքի մը ձեւով ժողովուրդին յանձնարարել: Նման հրատարակութիւններու հանդէպ այդպիսի մակերեւութական վերաբերումի սկզբունքով հակառակորդ ըլլալով՝ մենք ջանացինք խիստ զատումի ենթարկել մեր տրամադրութեան տակ գտնուած հազարաւոր երգերը և անոնցմէ այնպիսիները միայն ընտրել, որոնք դէթ չափով մը կը համապատասխանեն կանխապէս մեր ընդգծած ուղղութեան:

Կատարեալ, խնամքով պատրաստուած երգարան մը՝ մեր համոզումով՝ պէտք է իր մէջ ամփոփէ երգեր, որ հարազատօրէն կը թարգմանեն կեանքը այն ժողովուրդին, որուն համար կը պատրաստուի ան: Բաւական չէ այդքանը. անհրաժեշտ է քայլ մըն ալ անդին անցնիլ, կրթիչ, դաստիարակչական դարձնելու համար ան, ընտրելով նաեւ նոր, թարմ տարրեր, հոգ չէ թէ պահպանողական մտքերու համար անախորժ նորաձեւութիւններ թուին անոնք: Երգը ամէնէն հզօր շարժիչն է մարդկային զգացումի, հոգիի, և անոր բարեկիրթ ազդեցութիւնը անհունապէս մեծ է միշտ, երբ նեարդերը շարժելէ զատ՝ նաեւ կը ձգտի միտքը, դատողութիւնը իրեն հպատակեցնել, ազնիւ, վեհ ու անպայման իտէալական սահմանքի մը մէջ դնելով ան: Եւ մենք այդ կարեւոր կէտին վրայ դարձնելով մեր ուշադրութիւնը՝ փորձեցինք, որքան հնար էր՝ երգարանի մը խմբագրութիւնը ընդունուած ձեւերու մէջ սահմանափակելու սովորութենէն հեռու մնալ, յայտնի, ծանօթ ու շատ անգամ տեսակ մը թիւրիմացութեամբ սիրուած երգերու նկատմամբ յաճախ անհիւրընկալ դարձնելով մեր հրատարակութիւնը, և անոնց փոխարէն տալով աւելի կենսունակ ու գեղարուեստական բարձր արժանիք ունեցող նիւթեր: Կը կարծենք, որ փոքր ի շատէ ճաշակ ու գրական ուրոյն ըմբռնումներու տէր ամէն անհատ ընդունելի պիտի գտնէ մեր ընտրած ուղղութիւնը:

Ժողովուրդը առանձնապէս նուրբ ճաշակ ու քննական ոգի չի ցուցներ իր երգերու հանդէպ: Ան կ'երգէ ա՛յն, ինչ որ կը սորվեցնէ իրեն երգիչը—ըլլայ ան մեծ բանաստեղծ մը կամ շատ սովորական մէկ աշուղ: Ժողովուրդը աւելի կենսունակութիւն կը ներշնչէ այն երգերուն, որ կը յարմարին իր ներքին, հոգեկան պահանջներուն, իր առօրեայ գոյութեան արտայայտիչը կը լինին, իր ցաւը, ուրախութիւնը, երազներն ու անորոշ իտէալները կ'ուրուագծեն: Սակայն շատ յաճախ՝ ժողովուրդին բերանը կ'անցնին նաեւ խորթ տարրեր, որոնք պատահականութեամբ ներս սպրդելով իր մէջ՝ կը սկսին ընդհանրանալ, տեսակ մը քաղաքացիական գոյութեան իրաւունքի տիրանալ: Բայց առաջընթաց կեանքը իր անվերջ բարեփոխութիւններով, նոր հոսանքներու, նոր պահանջներու ճնշման տակ՝ կը ջախջախէ, կ'անէացընէ ընթացիկ գոյութեան ներդաշնակ արձագանքը չյայտնող երգերն ալ, փոխարինելով անոնք աւելի նպատակայարմար ու վճիտ նորութիւններով:

Հայ ցեղի դարաւոր տառապանքը անհունապէս դաժան ողբերգութիւններու շարք մը եղաւ, մշակելով անոր մէջ լալկանութեան, գանգատի ու

անզօր մրմունջի եղական, ուրիշ ազգերու քով չը նշմարուող շեշտեր: Հայ երգերը տխուր են բովանդակութեամբ, իբրեւ հարազատ հայելի հայ կեան-քի. եղանակները արեւելեան թանձրութեան, մելամաղձոտութեան ու ա-ղերսի միօրինակ ելեւէջներով, գրեթէ միշտ՝ քիչ կամ շատ չափով կրօնա-կան միսթիքականութեան զգալի ներշնչումով, յաճախ անտանելիօրէն յարանման կրկնաձայներով — թերեւս մեր ախական յոգութեան քաղցր հըն-չեն, բայց իրապէս ամէն անգամ գեղարուեստական արժանիքներ չեն կըր-նար նկատուիլ: Բայց և այնպէս մեր երգերէն շատեր՝ իրենց տխուր ու ող-բական արտայայտութիւններուն մէջ ալ կը հիւսեն թախիծի անզուգական, հաճելի շեշտեր. լալու, ողբալու մէջ հայերս չունինք հաւասար այս աշխար-հի մէջ. իսկ ճակատագրական այնպիսի խոշոր հարուածներ, ինչպէս գաղ-թականութեան աւերներն են եղած, ծնունդ տուած են մեր մէջ պանդուխ-տի երգերու աննման ճոխութեան մը, որ մեր ժողովրդական մտքի ա-մենաշքեղ կոթողը, անոր ստեղծագործական հանճարի ամենէն զմայլելի դրուագները կը ճանչցուին: Եւ այնպիսի հռչակաւոր գրագէտ-քննադատ՝ ինչպէս է Գէորգ Բրանդէս՝ արդարացիօրէն ազգերու պանդուխտի երգե-րուն մէջ առաջնութեան դափնին հայ ժողովուրդին կուտայ, իր այդ հա-մոզումը յենելով «Կռունկ»ի և «Ծիծեռնակ»ի գերմաներէն թարգմանու-թիւններուն վրայ:

Մեր ազգային և յեղափոխական երգերու քաղաքացիութեան շրջանը պէտք է ընդունիլ անցեալ դարու վերջին կէսը, առանձնապէս Նալբանդ-եանի, Գամառ-Քաթիպայի և ուրիշ երկրորդական բանաստեղծներու ազ-դեցութեան տակ բեղմնաւորուած ու ընդհանրացած: Չենք ուրանար որ անոնցմէ առաջ եւս հայ ժողովրդի կրծքին մէջ հեծեծանքէ զատ հնչած են նաև բողոքի ու ըմբոստութեան ձայներ կեանքի անարդարութիւններուն դէմ, սակայն թոյլ, անգոյն, և կարծես օտարամուտ, ոչ-հարազատ եթեր-ներէն: Գլխաւորաբար այդ երկու հսկայ վերանորոգիչներու հրաշակեր-տած երգերը եկան խելագար թափով մը հիմն ի վեր ցնցելու հայ երգը, անոր մէջ մտցնելով ազատ ու հզօր ձայներու մրրիկ մը. անոնք հիմը դը-րին մեր յեղափոխական երգերու իրական ու շքեղ շրջանի, ստեղծագոր-ծութեան բոլորովին նոր ուղիի մը մղելով ազգային բանահիւսութեան այդ կարեւորագոյն ճիւղը:

Սակայն անցեալ յաւիտենականութեան գիրկին մէջ հանգչելու այդ մեծ դէմքերը, և երբ անոնց նախերգած ընդվզումի շրջանը վրայ հասաւ, երբ յեղափոխական գրական գործունէութեան առաւօտը փայլեցաւ՝ տարօրի-նակ անբեղմնաւորութիւն մը ցցուց հայութիւնը -- ան չի տուաւ պայքարի ու արիւնոտ ճգնաժամի և ոչ մէկ ժողովրդական ու արժանաւոր երգիչ. աս-պարէզը մնաց զանազան մութ անկիւններու մէջ կծկուած խեղճ ու կրակ անանուն աշուղներուն, որոնք ազգային անպաշտպան քնարը յափշտակելով կամաւոր կերպով յանձն առին հայկական Հոմերոսի պաշտօնը, ցեղի ազա-տամարտը անշնորհքութեամբ երգելու համար: Եւ անոնք կրցան արգա-սաւորել անսովոր քանակութեամբ հայդուկային-ֆիտայական ու զանազան հերոսներու անուններուն վրայ ստուեր ձգող անհամ, անբովանդակ, տա-փակ ու ողորմելի երգեր: Այդ ձեւով ահա ստեղծուեցաւ մեր յեղափոխա-կան երգերու մեծամասնութիւնը գրաւող «գեղարուեստական» շտեմարանը, այնպիսի բովանդակութեամբ ու այնքան վատ թխուած, որ իր նպատակին չծառայելէ զատ՝ այլ և վնասակար բնոյթ ունեցաւ, ճաշակի ու վսեմու-թեան ոգիի բացակայութեան պատճառով:

Սիամանթօն և կամ անոր հետեւողութեամբ գրողները երբեք շփոթե-լու չէ ժողովրդական երգիչներու հետ. դասականութիւնը իր ամէնէն

փառապանծ ու շքեղ վիճակի մէջ ալ գեղարուեստասէրներու գրասեղանէն չի կրնար իջնել և ժողովրդի սրտին ու շրթունքին անցնիլ. ցեղի մը դիւցազներգութեան կոփիչը անոր հաւաքական ստեղծագործութիւնն է և կամ անհատի մը՝ եթէ ընդունելի ու իւրացելի ընդհանուր ժողովուրդին կողմէ:

Ուշի-ուշով քննելով յեղափոխական անունը կրող երգերը, աննշան բացառութեամբ՝ մեծամասնութիւնը — կը տեսնենք իսկոյն — հեղինակուած է այնպիսի անձերէ, որոնք փոքր ի շատէ կանոնաւոր ու սովորական խօսակցութեան լեզուին իսկ անծանօթ են. գրական-գեղարուեստական կամ տաղաչափութեան տարրական պահանջներու անհասկացողութիւն, եղանակներու քաոս, ոճական միօրինակութիւնը կը ցուցնեն թէ անոնց արտադրիչները շատ խեղճ տիրացուներ են, յաճախ աւելի պակաս, արուեստական ոգևորութեան տակ իրենց ներքին հիւսուածքին անհամապատասխան ձայներու բեկբեկումով բացայայտօրէն իրենց դիրքի անհարազատութիւնը ցուցադրող. պարզ կ՚երևի, որ այդ մարդիկ կուռի մասին շատ մութ գաղափար ունին, թերևս զէնքի երեսը չտեսած. «առէ՛ք սուր, թուր, նիզակ» և այլ միամտութիւններ, անդրջրհեղեղեան զուպարածի հրաւէրներ աւելի և՛ս անհեթեթ կը դարձնեն այդպիսի երգերու իմաստը: Եղածն ալ անկապ բացականչութիւններու կոյտ մը, գրական սահմանափակ ճաշակ ունեցող ամէն մէկու քմծիծաղը շարժող. բառերը կարծես թուքով իրարու փակցուած են, անվերջ ճառամարտութիւններ, և փոխանակ վսեմ, ազնիւ ու գաղափարական ընդվզումի ոգիի՝ շատ յաճախ արևելեան վայրագութեան ու անմիտ կրքի գեղումներով: Մինչև օրս ախորժով կ՚երգուին այնպիսի այլանդակութիւններ, ինչպէս «մեր մէկ հատը գողացողի ամբողջ տունը թալանենք». մեր բանաստեղծներէն շատեր, նոյնիսկ առաջնակարգ՝ օրէնք էին ըրած թուրքի և քիւրդի ոչնչացումը ընդունել իբրև միակ ու անհրաժեշտ պայման ազգային ազատագրութեան, անընդունակ յայտնելով որոշելու հայութեան իսկական թշնամիները ենթադրականներէն. Խորէն Նար-Պէյն իսկ հայրենասիրական առաքինութիւն կը սեպէր «թշնամիի երկիրն աւերելը ու հարուստ աւարով տուն դառնալը», որ մեր ըմբռնումով քրդականութեան ամենէն զզուելի յատկանիշներէն է, բացարձակապէս անպատուաբեր ո՛և է ինքզինքը ոչ-վայրենի ճանչցող ցեղի համար: Նոյնը պէտք է ըսել «վրէժ»-ի զգացումի տիրապետութեան մասին մեր երգերու մէջ, որ անհունապէս սուր ըլլալով ու զուտ անասնական՝ երբեք չփոթելու չէ հայրենիքի ազատագրութեան իսկական — ամէնուս համար ալ սրբազան դրդապատճառներուն հետ: Անշուշտ, հասկնալի է վիրաւոր սրտի մը մաղձոտ կատաղութիւնը վայրագ բռնութեան դէմ, բայց ջանալու է մեղմացնել այն լուսաւորուած մարդ-էակի մը իմացականութեամբ ու շրջահայեցողութեամբ. հայհոյական գրականութիւն մը այս կամ այն բռնապետի դէմ, յափշտակութեան ու աւազակութեան բնազդի գրգռում, վրէժի ծարաւը բորբոքելու ամէն ճիգ — չեն կրնար յեղափոխական դաստիարակութեան զօրաւոր ազդակներ համարուիլ. և մեր այն գրագէտ-բանաստեղծաշուղները, որոնք հայութիւնը կրթելու ձանձրոյթը իրենց վրայ կ՚առնեն, ամբոխի կիրքերը միայն վառելու ուղղութեամբ, առանց ամենևին անոր մէջ յեղափոխական գիտակցութեան սաղմերը բեղմնաւորելու՝ այդպիսիները արջի բարեկամութենէն անդին չեն անցնիր — թէև անգիտակցաբար. անոնք կը մոռնան, որ աշխարհի ծանրութիւնները մտքի ու պայծառ ինքնագիտակցութեան լծակը միայն կրնայ տեղէն խախտել, բայց ոչ երբեք զգացմունքը, նոյնիսկ շատ ու շատ բոցավառ ու կատաղի:

Ազգային և յեղափոխական երգերու ընտրութեան մէջ մեր ծրագրած ուղղութեամբ անշեղ ընթանալու համար՝ մեծամեծ և գրեթէ անյաղթա-

կելի պատուարներու հանդիպեցանք: Զանց ամէնը մեզ ցանկալի սիստէմով չէինք կրնար ոչ մէկ պարագայի տակ· ամբողջութիւն մը կազմելու համար հարկադրուած եղանք վերցնել նաև այնպիսի նիւթեր, որոնք լիովին չեն համապատասխաներ մեր պահանջին· այդպիսիները, որչափ հնար էր, զգուշութեամբ վերցուեցան, տեղ–տեղ անդամահատելով այն մասերէն, որոնք բացարձակապէս անմարսելի են ներկայ օրերին: Բայց և այնպէս, չը նայելով որ անոնք կրթիչ ոգի մը չեն պարունակեր և ներքնապէս ալ գրական մարգարիտներ չեն՝ դէթ որոշ չափով հետաքրքրական են, ընթացիկ կեանքի այլևայլ երևոյթներու շուրջը դառնալով, և թերևս՝ պատմական նշանակութիւն ալ ունենան: Բոլորովին զանց առնել այդպիսիներ՝ պիտի նշանակէր ուրանալ հայ ժողովրդական երգերու կարևորագոյն ճիւղերէն մէկու գոյութիւնը: Դժբախտաբար, մենք հարկադրուած ենք ամէն անգամ մեզ փափաքելի ու գոհացնող երևոյթներու հետ մէկտեղ ընդունիլ նաև չափաւոր արժէք ունեցողներ: Տակաւին մեր քաղաքական գոյութեան հսկայ յեղաշրջումները չկրցան տալ իրենց էութիւնը արձագանգող երգեր, և նոր պահանջներու, նոր անուրջներու և խռէյաններու համար դեռ ևս հայ մուսան մեզ ոչինչ չի գեղգեղած: Վստահ ենք սակայն, որ ապագայի նոր երգարան կազմողները մեզմէ երջանիկ պիտի ըլլան· անոնք պիտի կարենան՝ անշուշտ՝ մոռացութեան յանձնելով հայ ժողովրդի գլխէն անցած արիւնահեղ փոթորիկներու տխուր յիշատակները՝ հասարակութեան նուիրելու տարբեր բովանդակութեամբ հատորներ — խաղաղ, քաղաքացիական կենցաղավարութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն ու երջանիկ վաստակի վայելումը սրբագործող ու արձանագրող երգերով, անփուշ վարդերու բուրումով հոտաւէտ, հայ պատանիի ու հայ աղջկայ անվրդով ու պայծառ սիրոյ շշուկներով զեղուն, խռէյալի, երազներու իրականացումի օրհներգով....:

Զուգելով ներկայ հրատարակութիւնը սեղմ, ընդունուած ձևի մէջ ամփոփել՝ մենք ընտրեցինք նաև այնպիսի հատուածներ, թէև աննշան քանակութեամբ, որոնք երգ չըլլալով հանդերձ՝ ունին գեղարուեստական բարձր արժանիքներ և մեծ հաճոյքով պիտի կարդացուին ամէն գրասէր անհատէ: Կը կարծենք, չմեղանչեցինք այդպիսով գրքի վերնագրին դէմ, եթէ աւելի նրբութիւն չունինք անոր:

«Սիրոյ երգերու» բաժնին մէջ մենք աւելցուցինք յայանի ու գրական արժանիք ունեցող հատուածներուն Նահապետ Քուչակի տաղերը: Անհունապէս երջանիկ կը զգանք մեզ այդ անունը առաջին անգամ՝ ժողովրդական երգարանի մը մէջ անցնելով: Քուչակին երգերը, որ հարիւրաւոր վարիանթներով կ'երգուին Հայաստանի ներքին գաւառներուն մէջ, առանց յաճախ հեղինակի անուան յիշատակութեան՝ պէտք է որ բարձրանայ իր մոռացութեան անդունդէն. Հայկական Պառնասի ամենէն շքեղ ու վսեմ հարստութիւնն է ան, մեր ազգային բանաստեղծութեան հրաշափայլ աստղը, և համարձակօրէն կրնանք ըսել — հայութիւնը տուած չէ աւելի մեծ բանաստեղծ մը, քան Քուչակ: Իր աննման «Սիրոյ տաղեր»ը արտասովոր պճրանքով ու արևելեան արեգակի ճառագայթներուն տակ շքեղօրէն զարդարուած ծաղկոցի մը պէս այնպիսի անբնական ճոխութիւն, գոյներու խառնուրդ և զմայլելի թովչանք կը պարունակեն, որ դրեթէ անկարելի կը դառնէն գրուատումի խօսքեր՝ անոնց արժէքը իսկութեամբ որոշելու համար: Քուչակ՝ որ իր ստեղծած սիրոյ բուրաստանին մէջ թափառող անորոշ դիմագծերով ուրուականի մը պէս կուգայ մեր առջև կանգնելու՝ իրաւամբ արժանի է հայ բանաստեղծութեան հայր կոչուելու, ամենէն մեծ վարպետը իրմէ ետքը եկածներուն ու թերևս գալիքներուն հանդէպ:

M. Harlan



ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

1858-ին՝ Մոսկուայի մէջ Ստեփաննոս Նազարեանի հիմնած «Հիւսիսափայլ»ին լոյսը կը մատակարարէր պզտիկ՝ այլ գեղեցիկ համատեղութիւն մը որուն ամենափայլուն աստղերէն էր Միքայէլ Նալբանդեանց, այն հոյակապ դէմքը՝ որ մեր ժամանակակից պատմութեան ամենափայլուն էջերէն մէկը կը գրուէ:

Միքայէլ Նալբանդեանց ծնած էր 1830-ին Նոր-Նախիջեւան, ուր իր պատանի հասակին մէջ իսկ ամէնուն ուշադրութիւնը կը գրաւէր իր հազուագիւտ ընդունակութիւններով, ճարտար լեզուով, և մանաւանդ ըմբոստի նորանշան նկարագրով:

Նալբանդեանց իր հանրային գործնէութիւնը կը սկսէր տասնըեօթը տարեկան հասակէն: Ազատութեան ու ազատասիրութեան նուիրուած այդ բացառիկ տիպարը դուր չէր գար հին սարկական առաքինութիւններով տոգորուած մեր եկեղեցականներուն, և 1847-էն մինչև 1853ը իր՝ և այս վերջիններու միջև եղած ընդհարումները բաւական աղմուկ հանեցին:

Նալբանդեանցի համար ամենէն աւելի բաներն էին բռնութիւն և տգիտութիւն. այդ երկու վատ ազդակներու դէմ ալ խրոխտ և անողոք էր:

Գիտութեան անզուսպ փափաքին գոհացում տալու համար, 1853-ին, Մոսկուա գնաց. և յետոյ՝ Փէթրսպուրկ, ուր համալսարանի ընթացք աւարտեց: Քաղաքական-տնտեսագիտութենէն և ուրիշ գիտական դասընթացքներէ զատ՝ հետեւած էր լեզուներու, մանաւորապէս հմուտ էր ֆրանսերէնի, անգլիերէնի և գերմաներէնի: Իր ունեցած բարձր դաստիարակութիւնը և գիտական լայն պաշարը լաւագոյն յանձնարարականներն էին Մոսկուայի Լազարեան ճեմարանին մէջ ուսուցչական պաշտօնի համար: Երիտասարդ ուսուցիչը խուզարկու միտք մը ունէր և տենդագին կերպով կ'ուսումնասիրէր բազմակողմանի նիւթեր: Ո՛չ միայն յափշտակութեամբ կը կարդար ռուս ժամանակակից գրականութեան ամենէն փայլուն հեղինակները, այլ նաև մեծ խանդով կը մշակէր բնապատմական, բնագիտական և փիլիսոփայական խնդիրներ:

Իր լայն հմտութեան և խորունկ իմաստասիրութեան վրայ գաղափար մը կազմելու համար՝ կարդալ միայն պէտք է «Հիւսիսափայլ»ի մէջ Կոմս Էմմանուէլ ստորագրութեամբ գրած իր յօդուածները, որոնք գեղեցիկ պայծառութեամբ լոյս կը սփռեն, և անողոք կերպով կը մտրակեն մոլութիւններ ու վատթար բարքեր:

«Հիւսիսափայլ»-ին մէջ կատաղի յօդուածներ հրատարակեց Սարգիս արքեպ. Հասան-Ջալալեանին դէմ, որ կը մեղադրուէր ռուս կառավարութենէն 30.000 ռուբլի կաշառք առնելուն մէջ՝ հայութեան պատմական ամենէն հոյակապ դէմքերէն՝ Ներսէս Ե.-րդ Աշտարակեցի կաթողիկոսը թունաւորելու համար:

Մ. Նալբանդեանց պարզ հրապարակագիր մը չէր, այլ նաև հայրենասէր բանաստեղծ մը: Իր բանաստեղծութեան յատկանիշը՝ ձևի գեղեցկութենէն աւելի՝ ոյժի և կենդանութեան գեղեցկութիւնն է: Իր «Ազատութեան երգը» ամբողջ աշխարհի գրականութեան ամենաթանկագին գոհարներէն է:

Իբրև հայ մտաւորական, քաղաքական և տնտեսական զարգացման նուիրուած մէկը՝ Նալբանդեանց չէր կրնար հանդիստ մնալ տեղ մը:

Հնդկաստանի մէջ անժառանգ մեռած մեծափարթամ հայու մը թողուած վիթխարի գումարէն գէթ պզտիկ մաս մը ազատելու յոյսով, և կաթողիկոսի յանձնարարութեամբ՝ Հնդկաստան և Անգլիա ճամբորդեց: Եթէ իր այս նպատակին մէջ չյաջողեցաւ. բայց բարոյական և մտաւորական տեսակէտով մեծապէս օգտուեցաւ:

Նալբանդեանցի սիրտը չափազանց լայն էր և ընդունակ ամէն տեսակ գեղեցիկ խոհերու: Իր արտասահմանեան ուղեւորութեան միջոցին, 1861-ին, պատեհութիւն ունեցաւ շփման գալու մեծ անձնաւորութիւններու հետ, որոնցմով ծանօթացաւ նաև կարգ մը նոր գաղափարներու, որոնց արձագանգն իսկ ստանալ դժւար էր Ռուսաստանի մէջ: Մարքսի, Ռ. Օվէնի, Սէն Սիմօնի և Ֆուրիէրի ընկերվարական վարդապետութիւնները կը յուզէին ու կը մորմոքէին քաղաքական աշխարհի առաջդիմական տարրերը: Նալբանդեանց անտարբեր չէր կրնար մնալ այդ խոհերուն հանդէպ, և իբրև արդիւնք իր ծնած և իւրացուցած նոր գաղափարներուն՝ «Սիմէօն Մանիկեան» կեղծ անունով գրեց «Երկրագործութիւն» գիրքը, որուն մէջ իրեն յատուկ զօրաւոր ու կծու ոճով կը ձաղկէր բռնապետութիւնները եւ զրկւած դասակարգին իրաւունքները կը պաշտպանէր:

Իր ոգեգրած խոհերը, Հերցէնի նման յեղափոխական մեծ դէմքերու հետ ունեցած տեսակցութիւնները՝ զինքը վտանգաւոր անձնաւորութիւն մը դարձուցին ռուս բռնապետական կառավարութեան աչքին: Նալբանդեանց ձերբակալուեցաւ Եւրոպայէ վերադարձին և քաղաքական ամենավտանգաւոր յանցաւորներուն յատուկ Փէթրօ-Փավլօվսքի բանտին մէջ փակուեցաւ ամբողջ երեք տարի, 1862էն մինչև 1865. ժամանակ մըն ալ Սարատովի մէջ աքսորական մնաց: 1866-ի սկիզբները զօրաւոր միջամտութիւններու շնորհիւ ազատուեցաւ, բայց դաժան կառավարութեան ստեղծած դժոխային պայմանները արդէն յաջողած էին անոր առողջութիւնը խանգարել անբուժելի ըլլալու աստիճան: Այդ վիթխարի ու տոկուն մարմինը, հազիւ կմախք մը, ուրուական մը մնացած էր, անսահման կորովը աներեւութացած, և կրակոտ վառվռունութիւնը չքացած, թոքերը մաշած և սպառած էին: Նալբանդեանց բանտէն ելած էր գերեզման իջնելու համար միայն. ազգին ցաւերով տւայտելու, անոր ներքին ու արտաքին թշնամիներուն դէմ կատաղի պայքար մղելու համար ուժերը հատած էին այլևս: 1866, մարտ 13ին մարեցաւ այն թանկագին կեանքը, 36 տարեկան հասակին մէջ, առանց միջոց ունենալու իր ամբողջ կենսունակութիւնը արտայայտելու և իր վերջին խօսքը ըսելու...:

Թաղուեցաւ Նոր-Նախիջեւանէն (Ռոստով-Տօն) չորս մղոն հեռու բանաստեղծական դիրք գրաւող Սուրբ-Խաչ վանքին մէջ եկեղեցիին հանդէպ, և իր անշուք գերեզմանին վրայ՝ տասնեակ տարիներու մոռացումէն ետք միայն՝ քարէ արձան մը բարձրացուց կովկասահայը՝ իբր նշան երախտագիտութեան:

Ապագայ ազատ սերունդներու համար, Նալբանդեանցի անունը, սրբութիւն մը պիտի ըլլայ, սրբութիւն մը, որ ուժ, կորով, արիութիւն և առաքինութիւն պիտի ներշնչէ ամէն երիտասարդի՝ բարձր պահելու ազատութեան դրօշը, խաղաղութեան ատեն անսայթաք քալելու առաջդիմութեան շաւղէն, իսկ կռուի ատեն անվեհեր ու անվրդով «Ազատութիւն» պոռալու «մինչև անարգ մահու սիւն»:

No. 1

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ



2. Ես՝ անբարբառ մի մանուկ՝
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թեւերով
Ազատութիւն գրկեցի։

3. Մինչ գիշերը անհանգիստ՝
Օրօրոցում կապկապւած,
Լալիս էի անդադար՝
Մօրս քունը խանգարած՝

4. Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել՝
Ես այն օրից ուխտեցի
Ազատութիւնը սիրել։

5. Թոթով լեզւիս մինչ կապերն
Արձակւեցան բացւեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան՝

6. Նախկին խօսքն որ ասացի՝
Չէր հայր կամ մայր, կամ այլ ինչ.
«Ազատութի՛ւն» դուրս թռաւ
Իմ մանկական բերանից։

7. «Ազատութի՞ւն», ինձ կրկնեց
Ճակատագիրը վերեւից,
«Ազատութեան դու զինւոր
Կամի՞ս գրւիլ այս օրից»։

8. «Ո՛հ, փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կը սպասէ.
Ազատութիւն սիրողին՝
Այս աշխարհը խիստ նեղ է»։

9. — Ազատութի՛ւն, — գոչեցի, —
Թո՛ղ որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ —
Թո՛ղ դաւ դրնէ թշնամին։

10. Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչեւ անարգ մահու սիւն՝
Պիտի գոռամ, պիտ՝ կրկնեմ
Անդադար — Ազատութի՛ւն»։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

No. 2

ԱՇՈՒՂԸ

Սև խաւարը իմ ընկերն է անբաժան,
Ես չգիտեմ, ի՞նչ ասել է պայծառ օր,
Բայց այսօրւայ խաւարն է խոր, հոգեհան...
Դիակները փսփսում են ահաւոր,
Եւ պատմում են իրենց ցաւերն անպատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:

Հին դարերից ցաւեր շալկած, յամրօրէն,
Հառաչելով անցաք արեան ծովերով,
Համբերութեան դասեր առիք լեռներէն...
Քնէ՛ք այժմ բոցով, ցաւով, վէրքերով.
Եւ պատմեցէք ձեր ցաւերն անպատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:

Այս իմ անճար քնարն ունի երեք լար.
Մին՝ ողբաձայն, լալկան, խղճուկ, դողդոջուն, —
Ի՞նչպէս ողբամ ձեր ցաւերն անհամար,
Սրտեր վառեմ, արցունք քամեմ ես անհուն...
Դո՛ւք պատմեցէք ձեր ցաւերն անպատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:

Տառապանքի, սուգ ու սեր ինձ ընկեր
Մարդ չմնաց իմ արիւնոտ վաթանում.
Լուռ են շուրջս լեռներ, ձորեր, շիրիմներ,
Լոկ քամին է կողկողագին մրմնջում...
Դո՛ւք պատմեցէք ձեր ցաւերն անպատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում...

Ես էլ ցաւի դաշն կապեմ քամու հետ,
Եւ արցունքի երգեր հիւսենք միասին.
Նա խաղում է ամպրոպների շանթի հետ,
Նա յոյզ ու բոց կուտայ նաև մեր երգին:
Կոյր աշուղը, մրրկաշունչ, խոլ քամին
Կը պատմեն ձեզ տառապանքներն աշխարհին:

Ոռնա՛, քամի, հազար ու մի ձայներով.
Թո՛ղ սարսռան լեռներ, ձորեր, անդունդներ...
Անցի՛ր մէկ-մէկ դիակների վրայով,
Լիզի՛ր վէրքեր ու հաւաքիր հառաչներ...
Կոյր աշուղը, մրրկաշունչ, խոլ քամին
Կը պատմեն ձեր տառապանքներն աշխարհին:

Ի՞նչ ես վազում աննպատակ դէպ հեռուն,
Հառաչանքներ, խոր–խոր ցաւեր չալակած.
Վե՛ր սլացիր դէպի երկինքն անհուն,
Գտի՛ր գահը, ուր բազմած է մի Աստուած:
Թէ անզօր է սրբել արցունքն աշխարհում,
Գահ էլ պէտք չէ և ոչ Աստուած երկնքում...

Փչի՛ր վրան ահեղաշունչ որոտով,
Թող իր գահը դողայ հիմքից և Աստուած.
Թո՛ղ երկինքը մթնի իր վառ աստղերով,
Տիեզերքը դարձրո՛ւ քաոս, աւերած...
Թէ անզօր է այն Աստուածն աշխարհում,
Գահ էլ պէտք չէ և ոչ Աստուած երկնքում...

Ջուր ես խառնում ծեր ալիքներն աշուղին.
Այնտեղ միայն հին օրերի խոհեր կան:
Դու խօմ գիտես լեզու, խօսք տալ ժայռերին,
Նրանց ասա՛, թող քեզ պատմեն, ի՞նչ տեսան..
Երբ անզօր է այն Աստուածն աշխարհում,
Գահ էլ պէտք չէ և ոչ Աստուած երկնքում...

Անցի՛ր հանդարտ շիրիմների վրայից,
Հողի տակ էլ թշւառները քուն չունին.
Ճարան–չարան հողաթմբի խորքերից
Խուլ մրմունջներ գուցէ լսես ցաւագին...
Երբ այսքան ցաւ ու արիւն կայ աշխարհում,
Գահ էլ պէտք չէ և ոչ Աստուած երկնքում...

Կոյր աշուղը, մրրկաշունչ խօլ քամին
Սև երգ կ՛ասեն, ցաւ կը պատմեն աշխարհին:
Երբ այսքան ցաւ ու արիւն կայ երկրում,
Գահ էլ պէտք չէ և ոչ Աստուած երկնքում...

Խօսի՛ր քնար.... Արար–աշխարհ թէ լսի
Ցաւի, արեան, տառապանքի լուռ ծոցում,
Կոյր աշուղը հառաչանքի պարտք ունի
Թշւառութեան ու անէծքի վայրերում:
Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,
Թո՛ղ ողջ աշխարհ կարդայ հային նախատինք...

Երեք լար կայ, մէկը մէկից սգաւոր.
Մէկն արիւն, մէկն արցունք է քամում,
Եւ երրորդը, այն ամենից թունաւոր,
Անէծք ունի իր թրթռուն խաղերում:
Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,
Թո՛ղ ողջ աշխարհ հային կարդայ նախատինք...

Սև բռնութեան, աւերածի զինուորներ,
Խոպան աւեր բոց փռեցիք ձեր ոտքով,
Բնակութիւն, չէն քաղաքներ ու տներ
Անապատի վերածեցիք անվրդով:
Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,
Թո՛ղ ողջ աշխարհ հային կարդայ նախատինք...

Դիակների վիշտը լացի ու ցաւեր...
Քանի՛ դարեր լոկ ողբ ու սուգ ենք ասում.
Այժմ անէծք դահիճներին մարդակեր,
Վրէ՛ժ միայն, լոկ վրէժ եմ պահանջում...
Այսքան արիւն թէ ձեզ ներեն մեր որդիք,
Թո՛ղ ողջ աշխարհ հային կարդայ նախատինք...

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

No. 3

ՈՐՍԿԱՆ ԱԽՊԷՐ

— Որսկան ախպէր, սարէն կուգաս, սարի մարալ կը՞տեսնաս,
Ասա՛, եղբայր, դու չտեսա՞ր իմ մարալս, իմ բալէս,
Դարդի ձեռքից սարերն ընկաւ, իմ ջէյրանս, իմ բալէս:

— Տեսայ, քոյրիկ, նաշխուն բալիդ. կարմիր պսակ էր կապել,
Սիրած եարի համբոյրի տեղ, սրտին վարդեր էր բռնել:

— Որսկան ախպէր, ասա՛, եղբայր, ո՞վ էր հարսն իմ բալիս,
Ո՞վ է դրկում չոր գլուխը իմ մարալիս, իմ բալիս:

— Տեսայ, քոյրիկ, սիրուն բալիդ, քարն էր դրել բարձի տեղ.
Անուշ քնով տաք գնդակն էր կրծքին սեղմել եարի տեղ:
Սարի մարմանդ հո՛վն էր շփում, վառ ճակատը մարալիդ.
Ծաղիկներն են վրան սգում, քո մարալիդ, քո բալիդ...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

No. 4

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ

(Իտալացի աղջկայ երգը)



2 Մեր հայրենիք շղթաներով.
Այսքան տարի կապկապուած,
Իր քաջ որդոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած:

3· Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի:

4· Նայի՛ր նրան, երեք գոյնով
Նուիրական մեր նշան.
Թող փողփողի թշնամու դէմ,
Թող կործանւի Աւստրիան:

5· Ինչքան կին–մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իր եղբօրը՝
Ջանց չարեցի քո սիրուն:

6· Ահա՛ իմ գործ, ահա՛ դրօշ,
Տո՛ւր՝ ձի հեծիր քաջի պէս,
Գնա՛ փրկել մեր հայրենիք՝
Պատերազմի վառ հանդէս:

7· Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ կը մեռնի,
Բայց երանի՛, որ իր ազգի
Ազատութեան կը զոհւի:

8. Գնա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալեր.
Գնա՛, թէեւ չեմ կարող գալ,
Բայց իմ հոգիս քեզ ընկեր։

9. Գնա՛, մեռի՛ր դու քաջի պէս,
Թող չտեսնէ թշնամին
Քո թիկունքը, թող նա չասէ
Թէ վատ է իտալացին։»

10. Ասաց, ուեց օրիորդը
Իր եղբօրը մի դրօշ.
Մետաքսից էր, ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կար որոշ։

11. Եղբայրն առաւ եւ ողջունեց
Իր սիրական քնքուշ քոյր.
Առաւ զէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իր ձին սեւաթոյր։

12. «Քոյրիկ, կանչեց քաջ պատանին,
Մնա՛ս բարեաւ, սիրական,
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակն իտալեան։

13. Նա սուրբ է ինձ, երբ մխրճուած
Արտասուքով ու կնքուած
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքին նուիրուած։

14. Եթէ մեռնիմ, դու մի՛ ողբար,
Իմացիր որ տարեցի
Դէպի մահու արքայութիւն
Իմ հետ քանի թշնամի։»

15. Ասաց, վազեց դէպի հանդէս
Աւստրիացու յանդիման.
Իր արիւնով գնել յաւէրժ,
Ազատութիւն իտալեան։

16. Ո՜հ, իմ սիրտը կտրատւում է,
Տեսնելով այսպիսի սէր՝
Դէպի թշուառ մի հայրենիք
Որ ոտնակոխ եղած էր։

17. Սորա կէսը, կէսի կէսը
Գէթ երեւէր մեր ազգում,
Բայց մեր կանայք... ո՜ւր Եղիշէ..
Ո՜ւր մեր տիկնայք փափկասուն...։

18. Ո՜հ... արտասուքս ինձ խեղդում է...
Է՜լ չեմ կարող բան խօսել...
Չէ՛, թշուառ չէ՛ Իտալիան,
Եթէ կանայք այսպէս են։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

No 5

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Կանգնի՛ր, ո՛վ անցորդ,
Դու այս շիրմի մօտ
Եւ հանգիստ կարդա՛ քաջ նահատակին,
Որ կուի դաշտում
Սուր ու զէնք ձեռքում՝
Զոհ բերեց կեանքը իր ազգի փառքին։
Բայց կարեկցութեան
Ո՛չ լաց, ո՛չ կական
Թո՛ղ չըպղտորեն քո սիրտն ու հոգին.
Նա լալ չէր սիրում.
Կուի փոթորկում
Նահատակն ընկա՛ւ ժպիտը դէմքին...

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

No 6

ԽԱՆԱՍՕՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ



Սոսկայ քիւրդը՛, քնաթաթախ Մազրիկցին,
Չէր երազում ջնջւել իսպառ Փիդայուցը լուսացին :

— Նամա՛ն, Աստուած, Փիդան եկաւ, ո՛ւր փախչենք․
Ասաց որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրդուհին :

— Մի՛ վախենար, հանգիստ կացիր, բաջի ջան,
Կանանց երբէք ձեռք տալու չէ վրէժխնդիր քաջ Փիդան :

Մի ժամւայ մէջ Մազրիկ ցեղը ջնջւեցաւ,
Խանասորայ կանաչ դաշտը կարմիր գոյնով ներկւեցաւ . . .

Ուխտադրուժ Արտուլը բարձունքից,
Ժպիտներես ողջունում էր օրւայ հերոս հայերին :

Փչի՛ր չեփոր, դէպ Արտուլ մենք թռչենք,
Դիրքեր բռնենք, գաթա, հալւայ ձիւնի ջրով ճաշակենք . . .

Մերթ կռւում է, մերթ երգում է քաջ Փիդան—
Նշանի է պատմութեան մէջ արշաւանքի տեսարան :

Չկար Կարօն · տխուր պատեց ամենքին,
Երանի է նրա հոգուն — նահատակւեց այս կռւում :

Քեզ ենք յանձնում, ո՛վ պաշտելի Արտուլ,
Մեր զոհերը ամուր պահիր գրկիդ մէջը խնկելի :

Կը գայ շուտով չղթան կտրած հայ մարդը,
Մասունքներիդ համբոյր կտայ, կը խոնարհւի ողջ ազգը :

Հայեր, յիշէք նւիրական այս օրը,
Յուլիս ամսի քսան հինգին կատարեցէք մեր տօնը :

ԹՈՐՈՍ

No. 7

ԿՈՎԿԱՍ

(Արտասանութիւն)

Ի՛նչ ահեղէն դարագլուխ է այս, և շղթաները ի՛նչ զայրագին փշրտում ·
Ի՛նչ ընդհարում ճակատ ճակատի, և հաւատքի ի՛նչ յաղթանակ ·
Ի՛նչ երկաթակուռ հարուած բռնապետութեան անխախտելի օրէնքներուն ·
Ի՛նչ արիւնի հեղհեղում քեզ անարժան թշնամիիդ վայրագ չարքերէն
Եւ դիակի ու բացուած լանջքերու ի՛նչ արդարացի մեռելակոյտ,
Մեր բոլորին վրիժածարաւ աչուըներուն առջև...
Կովկա՛ս, յաղթականօրէն դուն եղար, որ յայտնութիւններուն գերագոյնը ըրիր ·
Քու բազուկներուդ հուրին մէջն էր գետնահարող զօրութիւնը Ցեղին,
Քու մտածումիդ մէջն էր, որ ծնաւ կարմիր արևը յուսահատեալ Յաղթութեան,
Քու արիւնիդ մէջն էր, որ վառեցաւ ճշմարիտ արիւնը երազուած Ընդվզումին ·
Եւ այսպէս իրիկուն մը քու զինավառ ձեռքերդ ազատութեան աստղերուն նիզակեցան
Թշնամի երկինքներուն չարիքի կամարներէն կորզելու քիչ մը լոյս, քիչ մը կեանք, քիչ մը սէր և քիչ մը երազ
Քու խռովեալ սերունդիդ և ի քեզ ակնդէտ ու տառապող եղբայրներուդ համար :
Օ՛, փառք քեզի, և փառք չանթարմատ հպարտութեանը քու լեռներուդ,
Կարծես անոնց ապառաժներուն յաւիտենական տարրերէն են կռուցած՝
Անպարտելի հասակները քու սեւահեր ու հրաշէկ որդիներուդ,
Քու անտառներուդ ահագնաթափ փոթորիկը գիշերական
Անոնց զինուորեալի կուրծքերուն մէջ իր հսկայական հեւքը դրաւ ·
Քու հովիտներդ Անոնց քայլերուն առջև Յոյսին ճամբաներուն պէս կանանչցան...
Եւ քու հողերդ Անոնց մէջէն փրկութեան ժամը չփորեցին :
Քու ծոցիդ մէջն է, քու սրտիդ վրան է, քու արեգակիդ տակն է
Եւ հարազատ և անպարտելի և անվեհեր զանգուածը մեր հինաւուրց Ազգին,
Մեր նսեմացեալ ճակատները այդտեղ էր որ վերջապէս իրենց մութէն պայծառացան,
Այդտե՛ղ էր, որ սկսաւ պայքարի սուրերուն ամենէն արդարը շողալ,
Այդտեղ էր, որ ժողովուրդը իր իրաւունքը իր կռուփովը պահանջեց,
Այդտեղ էր որ, Ան չի լացաւ, չի ծնրադրեց և իր գլուխը հողին չի հասաւ,
Այդտե՛ղ էր, որ կատաղութեամբ զարկաւ և հպարտօրէն զարնուեցաւ,
Այդտե՛ղ էր, որ արդարութիւնը որոտացողի իր ճակատը փառակերտ՝
Արեւմուտքի աշխարհներուն դիմաց ջահերու պէս ցոլացուց,
Այդտե՛ղ էր, որ իր անէծքի և պժգանքի թուքը թագակրին նետեց,
Եւ այդտե՛ղ էր, որ վերջապէս Անիրաւութիւնը օր մը ամօթահար պարտըւեցաւ,
Եւ քեզի համար այդտեղ է որ կոթողները Փառքին,
Մարմար առ մարմար սերունդիդ ձեռքերովը պիտի բարձրանան...
Զա՛րկ, Կովկա՛ս, աւերակեալ ու արցունքոտ Հայաստանին աչքերը քեզի կը նային ·

Ան գիտէ, որ քու թշնամիիդ ատելութիւնը իր թշնամիներէն է որ կը բղխի,
Երբ իր գերեզմանին մոխիրը իր գուժկան հովերուն հետ եկաւ ճամբաներդ ագաւորել,
Երբ իր արիւնը եկաւ քու եղբայրական տանդ սեմերը թրջել,
Երբ իր կոտրած բազուկը քու կարիճի ձեռքերուդ ի խնդիր քեզի դողդոջեցաւ,
Թշնամին նոյնն էր այն ատեն, այն որ այսօր, քու պաշտպանի բազուկէն զարհուրած՝
Կ'ուզէ զայն ջախջախել, կարենալ տօնելու համար վերջնական մահացումը մեր Ցեղին…
Ուրեմն, զա՛րկ, Կովկա՛ս, թէեւ գիտեմ որ քու ասպետական ձեռքերուդ հարուածին անարժան է ան,
Զա՛րկ, թէեւ գիտեմ որ քու սուրիդ վեհութիւնը պէտք չէ՛ր արատաւորել
Այդ անարժաններու խուժանին թունաւոր ու պժգալից արիւնէն…
Զա՛րկ, թէեւ գիտեմ որ հերոսները հերոսներու միայն կրնան ընդհարիլ,
Զա՛րկ, սա անարգ ճակատագիրը ջախջախելու եւ Չարիքը ըմբերանելու համար,
Զա՛րկ, որովհետեւ ամէ՛ն Յոյս զՔեզ կը յուսայ եւ ամէն Աղաղակ զՔեզ կը պաղատի,
Զա՛րկ, Քու անթառամ սիրոյդ եւ ատելութեանդ չափին խորութեանը համեմատ.
Զա՛րկ, զա՛րկ, ահաւասիկ հորիզոնները կը կապոյտնան, ահաւասիկ Առաւօտները կը ճեղքուին,
Զա՛րկ, ազատարար հարուածիդ շռինդը Մասիսէն Տաւրոս եւ մինչեւ Հայրենիքին խորերը կը թնդայ:

ՍԻԱՄԱՆԹՕ

No 8

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Հազա՛ր բարով, հպա՛րտ սարեր,
Թեւ եմ առեր, ձեզ կուգամ,
Արծիւների ձէնն եմ լսեր,
Արծիւներին դէմ կուգամ…։

Իմ հայրենի՛ք, կապուտ սարե՛ր,
Թշնամու չարք ձեր բոլո՛ր
Դա՛շտ, անտա՛ռ, արնոտ գետե՛ր,
Արազը խոր ու ոլո՛ր…

Հազար ձէնով, հազար սրտով
Արծիւների հետ կուգամ.
Հողիդ մեռնիմ հազար սրտով,
Իմ հայրենիք, մերիկ ջա՛ն…

Բարով ձեզի, դա՛ր ու դուրա՛ն,
Բարձրիկ սարեր ու քարե՛ր.
Հազա՛ր բարով, հով ու դումա՛ն,
Ծովակ, ծմակ ու ձորե՛ր…

ՀԱՅ-ԴՈՒՍԱՆ

No 9

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ



2. Զեղանից յետոյ եկաւ գիտութիւն՝
Իր ծանր հայեացքով աշխարհի վրայ.
Ամէն բան ընկաւ մըտածութեան տակ,
Բայց չը մնաց աղատ կամ ունայն։

3. Գիտակցութիւնը յաջորդեց սըրան,
Աղգի վիճակը ծանրացաւ սրտիս.
Ապողոն տըւեց ինձ իր քընարը՝
Որպէս փարատիչ տրտում ցաւերիս։

4. Աւա՜ղ, այդ քնարը իմ ձեռքում հնչեց
Նոյնպէս լալագին, նոյնպէս վշտահար,
Ինչպէս իմ սիրտն էր՝ իմ զգացմունքը.
Ուրախացուցիչ չը գտայ մի լար։

5. Ես այն ժամանակ միայն ըղձացի,
Որ այդ ցաւերից ազատուելու չեմ,
Որչափ իմ ազգս կը մնայ ըստրուկ՝
Օտարների ձեռք, անխօս, տխրադէմ։

6. Մանկութեան օրեր, ինչո՞ւ այդպէս շուտ
Թռաք գնացիք, անդարձ յաւիտեան.
Ես այն ժամանակ, անհոգ ու ազատ,
Կարծում էի ինձ աշխարհի իշխան։

7. Գերութեան շղթան ինձ ըղձալի չէր,
Եւ ոչ բռնութեան անգութ ճանկերը.
Ձեզանից յետոյ ծանրացան նրանք,
Ո՜հ, անիծում եմ ես այս օրերը...

8. Լո՛ւռ կաց, դու քնար, էլ մի՛ հնչիր ինձ,
Ապողոն, յետ ա՛ռ դարձեալ դու նորան.
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է
Զոհ բերել կեանքը՝ սիրած աղջկան։

9. Ես պիտի դուրս գամ՝ դէպի հրապարակ՝
Առանց քնարի, անզարդ խօսքերով,
Եւ պիտի գոչեմ, պիտի բողոքեմ՝
Խաւարի ընդդէմ պատերազմելով։

10. Ներկայ օրերում էլ ի՞նչ ու քնար,
Սո՛ւր է հարկաւոր կարիճի ձեռքին.
Արի՛ւն ու կրակ թշնամու վրայ—
Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին։

11. Թո՛ղ պատգամախօսը՝ հնացած Դելփի,
Իր եռոտանու վրայ փրփրի,
Թո՛ղ վերջին դարու գաղափարներով
Ամբոխը խաբել ճգնի, աշխատի.—

12. Թո՛ղ նա թարգմանէ զրպարտութիւնը,
Թո՛ղ մխիթարուի ծովի ափերում.
Մենք ազատութեա՛ն ենք միայն թարգման,
Միա՛յն այս խօսքը ունենք բերանում։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

No. 10

ՖԻԴԱՅԻԻ ԵՐԳԸ



Մօտ է գարունը, շուտով կը բացուի,
Հայի խօսքն է քաջ, գարուն թո՛ղ բացուի,
Հայերը բոլոր հոգով միացած՝
Հրացան ուսերնին մերն է «Նոր–Տարին»...

Խմբապետները հոգւով են երդուած,
Ֆիդայի ուժով գնում են առաջ.
Առաջն է կանգնած Անդրանիկը քաջ,
Գոռում է գոչում, կ'ուզէ պատերազմ:

1615-2002

No. 11

ԳԵՐԻԻ ԵՐԳԸ

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպի քեզ, հոգովս անդադար.
Բայց, աւա՛ղ, այս բանտում փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կռւում և ես:

Հանապազ տանջւեցայ քու ճակատագրով,
Սրտումս շղթաների ձայներ կրելով...
Թո՛ղ այստեղ չարչարւիմ՝ անծանօթ, կապուած,
Միայն քեզ, հայրենիք, տեսնեմ ազատուած:

Ա՛խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,
Եւ վառ արշալոյսով քու օր կարմրում է.
Չգիտեմ ի՛նչպէս է կռիւը հրդեհւում,
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում...

Տարւում է միշտ համբաւ սպանութեան ահեղ,
Թափւում է ազգն արիւն, բայց ես չեմ այնտեղ:
Կը փշրեմ ես շղթան և կ'ելնեմ բանտից,
Սրբել դառն արտասուք քու սէգ աչերից:

Քաջ ընկերներովը հեշտ է ինձ կռւել,
Եւ սուրբ գործի համար քաղցր է մեռանել.
Չեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,
Ա՛խ, կամ ոչընչանալ, կամ լինել ազատ:

Յ. ՔՈՒՉՈՒԲԷԳԵԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀԱՅԿ. ՍՍՀ

ՆԱԶԷԻ ՕՐՕՐԸ

Քնի՛ր իմ բալիկ, օրօր եղ արա՛,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել·

Կոյր կռունկները սուգ ու շիւանով
Մեր սև երկնքից եկան անցկացան,
Ա՜խ, մեր լեռներում նրանք կուրացան·
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել։

Հողմն է հեծեծում սև անտառներում,
Անտէր մեռելի սուգն է այն, բալի՛կ,
Անտէր ու անթաղ մեռելները շա՜տ·
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել։

Կարաւանն անցաւ, բարձած արցունքով,
Սև անտառներում ծունկ չոքեց մնաց·
Այն մեր աշխարհի դարդ ու զուլումն է,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել։

Ցուլունք եմ շարել կապել օրօցքիդ՝
Չար աչքերի դէմ մեր չար դուշմանի —
Քնի՛ր ու աճիր, շուտ արա՛, բալի՛կ,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել։

Դալուկ շրթունքիդ իմ կաթը սառեց.
Գիտեմ, այն դառն է, չես ուզում բալի՛կ —
Ա՜խ, վշտիս թոյնն է քամուել նրա մէջ....
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել։

Կաթիս հետ մէկտեղ սև վիշտը ծծիր,
Հոգուդ մէջ թո՛ղ նա սև վրէժ դառնայ·
Ծլի՛ր, բոյ քաշիր, բոյի՛դ ես ղուրբան,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել....։

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

Ռափայէլ Պատկանեան՝ կեղծանունով Գամառ-Քաթիպա՝ անպայման ամենամեծ դէմքերէն մէկը պէտք է ընդունիլ ընդհանուր հայ վերածնութեան ջահակիրներուն մէջ: Իբրև ազգայնական զգացումներն ու ըմբռնումները արթնցնող, ինքնապաշտպանութեան, ցեղային արժանապատուութեան ու ազատութեան գիտակցութիւնը մշակող բանաստեղծ՝ Պատկանեան եզական եղած է:

Թիւրքահայերու համար Գամառ-Քաթիպայի անձնաւորութիւնը անհամեմատ աւելի կարեւոր և իր գրական փայլուն կեանքը շատ աւելի արդիւնաւէտ եղած է, քան ռուսահայ հասարակութեան համար. ժամանակակից ռուսահայ իրականութեան յոռի կողմերը անդթօրէն հարուածելով հանդերձ՝ Պատկանեան՝ մրրկային թափով մը կը սլանար հայու անցեալ փառքի յիշատակներուն, կորուած անկախութեան ու ազատութեան աւերակները պեղելու. ան կուլար ու կը հեծէր իր հմայիչ քնարի լարերուն վրայ՝ Թիւրքահայ տառապանքները երգելով. հրաբխային որոտումով հուր ու պատուհաս կը տեղար հայի պատմական թշնամիներու գլխուն. կը նախատէր ստրկութիւնը՝ ըմբոստութեան ոգին խթանելով. ունեւոր հայ ջոջի կարեկցութիւնը կը ջանար շարժել արենակից ժողովրդի թշուառ դասակարգին վրայ. և ընթացիկ կեանքի մէջ չկար երևոյթ մը, որ հասարակական բնոյթ ունենալով՝ Պատկանեանի գրիչէն վրիպած ըլլար:

Սակայն Թիւրքահայ քամեցուցիչ տառապանքի պատկերները, որոնք առանձնապէս արձագանգ սկսան գտնել ռուսահայ հասարակութեան մէջ վերջին ռուս-տաճկական պատերազմէն առաջ և անկէ ետք՝ գրեթէ գլխաւոր ներշնչող տարրը հանդիսացան Գամառ-Քաթիպայի արտադրութիւններուն: Կարճ՝ բայց անբնականօրէն զօրեղ ու արտայայտիչ՝ ան քանի մը բառով գիտէր պատկերացնել ամբողջ կեանք մը, դժոխային ողբերգութիւնը – մշեցի կամ վանեցի գեղջուկին: Բռնութեան ու ճիւաղ կառավարութեան հանդէպ՝ Պատկանեան անողոք և վրէժխնդրութեամբ լեցուած, պատրաստ էր տրորել, անէացնել հայութեան վայրագ հարստահարիչները: Իր զգացումներուն այս տեսակ արտայայտումը պատճառ եղաւ, յետագային, որ կարգ մը աւելորդապաշտ «առաջդիմականներ» նսեմացնել ջանային անոր արժանիքը, հասկնալի է, չըմբռնելով ո՛չ Պատկանեանը՝ իր հոգեբանական բարդ խառնուածքովը, ո՛չ ալ ժամանակակից պայմանները՝ իրենց իրական լոյսին մէջ: Պատկանեան, իրա՛ւ է, եղաւ և պիտի մնայ հայ ազգայնականութեան ամենահզօր և ինքնատիպ դէմքերէն մէկը, բայց հոյակապ ու բարձր նոյնիսկ ներկայ հասկացողութեամբ և թէև իր երգերուն մէջ կը հանդիպինք տողերու, որոնք մարսելի չեն կրնար նկատուիլ՝ մեր ներկայ ըմբռնումներով, բայց անոնք ամենևին չեն վնասեր իր մեծ հմայքին:

Պատկանեանի բանաստեղծութիւնները գրեթէ ժողովրդականացած են և կ'երգուին աշխարհիս ամէն անկիւնները, ուր հայ մը կայ. իր քերթուածներէն շատերը թարգմանուած են եւրոպական լեզուներու:

Ան մեռաւ 62 տարեկան հասակին մէջ, 1892, օգոստոս 22-ին (ծնած էր նոյեմբեր 8, 1830) իր կեանքը բեղմնաւորելով հայութեան ի նպաստ. Ան եղաւ ամենէն ազդեցիկ ուսուցիչներէն ռուսահայ այն ընտիր յեղափոխական երիտասարդութեան, որու մասնակցութիւնը Թիւրքահայ ազատագրական գործին մէջ՝ այնքան արդասաւոր եղաւ...:

No· 13

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

ՁԱՅՆԱԳՐԵՑ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



2 Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պըղտոր ջրով եզերքին
Դարիւ դարիւ խփելով՝
Փախչում էին լալագին :

3· — Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չը հասած
Սըգաւոր ես ինձ նըման :

4· Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէգ, հըպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից :

5· Մի՛ պըղտորիլ յատակըդ ·
Հանդարտ հոսէ՛ խայտալով, —
Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կը հասնիս դէպի ծով :

6· Վարդի թըփեր թո՛ղ բուսնին
Քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ :

7· Մշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջըրին
Ճըկուն ոստն ու տերև
Թո՛ղ թաց անեն տապ օրին :

8· Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող գան համարձակ,
Գառն ու ուլը քու վըճիտ
Ջուրը մըտնեն միշտ արձակ» : —

9· Մէջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նըման գոռալով՝
Ասպէս խօսեց յատակից :

10· —«Խելա՛ռ, անմի՛տ պատանի,
«Նիրհըս ինչո՞ւ դարևոր
«Վըրդովում ես, նորոգում
«Իմ ցաւերը բիւրաւոր :

11· «Սիրելիի մահից յետ՝
«Ե՞րբ ես տեսել, որ այրին
«Ուքից գըլուխ պըճնուի
«Իր զարդերով թանկագին :

12. «Որի՞ համար զարդարուեմ,
«Որի՞ աչքը հրապուրեմ·
«Ծառերն ինձ են ատելի,
«Ծառերին ես օտար եմ...

13. «Իմ ազգակից գիժ Կուրը՝
«Թէև այրի ինձ նըման,
«Սարւօրէն տանում է
«Գայթակղչի կուռ շղթան

14. «Բայց նա ինձ չէ՛ օրինակ,
«Ես Հայ՝ Հայիս կը ճանչնամ,
«Օտար փեսայ չուզելով՝
«Ես միշտ այրի կը մնամ:

15. «Կար ժամանակ, որ ես էլ՝
«Ծըքեղազարդ հարսի պէս՝
«Հազար ու բիւր պըչրանքով,
«Փախչում էի ափերէս:

16. «Ցատակըս պարզ ու վըճիտ,
«Կոհակներըս ոլորուն,
«Լուսաբերը մինչև այգ
«Ջըրիս միջին էր լողում:

17. «Ի՞նչըս մընաց էն օրից,
«Ո՞ր ջըրամօտ գեղերըս,
«Ո՞րը իմ չէն քաղաքից,
«Ո՞ր բերկրալի տեղերըս:

18. «Տուրքը ջըրի ամէն օր
«Իմ սուրբ ծոցէն Արարատ
«Մայրախընամ իր սնունդ
«Պարգևում է լիառատ:

19. «Բայց ես այն սուրբ ջըրերով
«Սուրբ Ակոռի աղբիւրին
«Պիտի ցօղեմ արտորա՞յքն
«Իմ ատելի օտարին:

20. «Մինչ իմ որդիք, ո՛վ գիտէ
«Ծարաւ, նօթի, անտէրունչ
«Օտար աշխար՝ յածում են
«Թոյլ ոտքերով, կիսաշունչ...

21. «Հեռո՛ւ, հեռո՛ւ քըշեցին
«Բընիկ ազգըն իմ Հայկեան,
«Նորա տեղը ինձ տուին
«Ազգ անկրօն, մոլեկան:

22. «Դոցա՞ համար զարդարեմ
«Իմ հիւրընկալ ափերը,
«Եւ կամ դոցա՞ հրապուրեմ
«Ճըպռոտ, պըլշած աչերը:

23. «Քանի որ իմ զաւակունք
«Այսպէս կը մընան պանդուխտ,
«Ինձ միշտ սըգւոր կը տեսնէք,
«Այդ է անխաբ իմ սուրբ ուխտ»:

24. Էլ չը խօսեց Արաքսը,
Ցորձանք տուեց ահագին,
Օղակ–օղակ՝ օձի պէս՝
Առաջ սողաց մոլեգին:

ԳԱՄԱՌ–ԳԱԹԻՊԱ.

No· 14

ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

ՁԱՅՆԱԳՐԵՑ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



ՀԻՄԻ Է՞Լ ԼՌԵՆՔ

Շարունակութիւն



Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թշնամին
Դաւով, հրապոյրով տիրեց մեր երկրին,
Ջնջեց աշխարհից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խլեց մեզանից թագ, և՛ խօսք, և՛ զէնք.

Հիմի՞ էլ լռենք:

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը — պաշտպան մեր անձին,
Մշակի ձեռքիցն էլ խոփը խլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կռեց.
Վա՜յ մեզ, շղթայով կապուած գերի ենք, —

Հիմի՞ էլ լռենք:

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թշնամին
Սոսկալի զէնքը բռնած մեր գլխին,
Կուլ տալ է տալիս արտասուք առատ,
Աղէխարշ բողոք փակուց ակռատ.
Մեր գլուխ լալու Եփրատ ո՞ւր տանենք,

Հիմի՞ էլ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Լիրբ գոռոզութեամբ լցրած իր հոգին,
Արդարութեան ձայնն հանած իր սրտից՝
Արտաքսում է մեզ մեր բնիկ երկրից·
Պանդո՛ւխտ, հալածեա՛լ, եղբարք, ո՞ւր դիմենք·

Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Անհոգ՝ մեր բերած ծանր զոհերին,
Իր լիրբ, նըզովված ձեռքը կարկառեց,
Ազգութեան վերջին կապը պատառեց.
Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք —

Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գառնազգեստ գայլին մեզ դըլուխ դըրաւ·
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր աղօթենք·

Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, մարդիկ ի՞նչ կ՚ասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն·
Չէ՞ն ասիլ, որ հայք արժանի էին
Այդ բարբարական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,

Մինչեւ ե՞րբ լռենք:

Թո՛ղ լռէ մունջը, անդամալոյծը,
կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը·
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ՝
Ե՛կ, անվախ ելնենք թշնամու առաջ·
Գոնէ մեր փառքը մահով յետ բերենք, —
Ու այնպէս լռենք:

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ.

No 15

ՎԱՀԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի է՞լ խոսենք, եղբարք, հիմի է՞լ,
Երբ ընտանեկան երկպառակութեամբ,
Ուրիշ բան չունենք, բայց իրար դաւել,
Եւ սարսափելի ազգուրացութեամբ
Մեր նախնեաց ուխտը ոտքով կոխել ենք.

Հիմի է՞լ խոսենք։

Հիմի է՞լ խոսենք, երբ քաջն Վարդան
Վաթսուն հազարից հազարով մնաց,
Մինչ մնացել էր պարսից լոկ Մատեան
Գունդը՝ մեր վաթսուն հազարի դիմաց.
Երբ մեր վատութեամբ ո՛ղջ կորուսել ենք՝

Հիմի է՞լ խոսենք։

Հիմի է՞լ խոսենք, երբ օտարից շատ
Մենք ենք մեր ազգի արիւնը խմում.
Մոխրանով լցրինք Դուին, Արտաշատ,
Ծխի մէջ կորաւ խաչն եկեղեցուն։
Երբ այս ամէնը մենք կատարել ենք՝

Հիմի է՞լ խոսենք։

Հիմի է՞լ խոսենք, երբ հրապարակում
Պարսիկը առակ արել է հային. —
«Եթէ ասորու նման աշխարհում
Չկայ մի վատ ազգ, բայց քան ասորին
Էլ վատ է հայը»։ Մենք այս տանո՛ւմ ենք.

Հիմի է՞լ խոսենք։

Հիմի է՞լ խոսենք, երբ իշխանութիւն
Ծախում է անարգ հացկատակներին,
Մինչ ստրուկ մարդիկ նստան մեր գլխին,
Ու մեզ կարծում են հող իրենց ոտքին
Ու մենք՝ մեզ կոխող ոտքը լիզո՛ւմ ենք՝

Հիմի է՞լ խոսենք։

Հիմի է՞լ խոսենք, երբ Լուսաւորչի
Բնիկ ժառանգի թեւերը կտրած՝
Անարգ պարսիկը այս ու այն թեմի
Կարգում է տեսուչ ըստ իր չար կամաց.
Ու մենք դեռ, «կեցցէ՛ Արքին», գոռում ենք.

Հիմի է՞լ խոսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ ձեռք ենք տալիս,
Երբ ողջունում ենք մենք այդ չքերին,
Որոնք դրամ չունեն, և մեզ տեսնելիս՝
Շուտ գլխարկները դնում են երեսին.
Այդ պխիներին դարձեալ պատւում ենք.
Հիմի է՞լ խօսենք:

Էլ մեր երեսին մնա՞ց մի կաթիլ
Ամօթի սուրբ ջուր, որ բերան բանանք:
Ո՛չ, թէ չենք ուզում հողից հող կորչել՝
Թշնամու արեամբ մեր թրին ջուր տանք,
Ազգ, եկեղեցի, փրկենք, ազատենք...
Եւ ապա խօսենք:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

No. 16

ՎԱՆԵՑԻ ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԸ

Աղօթարանը բացւեցաւ, ժամանակ է զարթնելու.
Էրթամ տեսու, գոմշուկներս լծեմ՝ գութան վարելու:
Դէ՛հ, գոմշուկներ, ելէ՛ք, ելէ՛ք, արտը երթանք աշխատինք,
Հարկ ու խարճին վաղէն մօտ է, վօթենք արիւն ու քըրտինք:

Հայի գութա՛ն, հայի գութա՛ն, որի՞ն համար կը ջանաս,
Ո՞վ քեզանով կը տանջուի, որի՞ն դու կուշտ հաց կուտաս.
Այն օր, երբ քեզ ձեռքըս առի՝ ազատ օրըս կորուցի,
Անվախ սիրտըս վըհատեցաւ, հոգիս թուրքին մատնեցի:

Բա՛ւ է, գութան, մեր տանջանքը, համբերութիւնն վերջ ունի.
Դուն տեսա՞ր որ մեր դուշմանը՝ ամօթ, խելք ու գութ չունի:
Արի՛ փըշրեմ ես քո խոփը, տանք դարբինին կըռելու,
Կըռենք-կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դէմ կըռուելու:

Եղբարք հայեր, տւէ՛ք խոփը՝ տւէ՛ք դարբինին կըռելու,
Կըռել-կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ.

No. 17

ԴԱՐՁԵԱԼ ՓԱՅԼԵՑ....



2. Թնդաց որոտաց ձայներից
Ողջ աշխարհը հայկական.
Խումբ-խումբ կը գան հայ զաւակ—
Հայրենիքին օգնութեան: (Ներ

3. Գուրգէն, Վահան, Հրայր-Դժոխք,
Քաջ Անդրանիկ ղեկավար
Տալւորիկի լեռներումը
Շրջում էին անդադար

4. Սարսափեցին քիւրդ ցեղերը,
Մինչ պալատը սուլթանի—
Հրամայեց չուտ կործանել
Դիրքերը հայդուկների:

5. Ահա՛ անգութ մեր թշնամին..
Սարսափելի տեսարան....
«Ժամանակ է վրէժ լուծել..»
Գոչեց ձայնը հայկական:

6. Կրակ տեղաց հայ քաջերի
Բռնակալայր դիրքերից,
Կոտորեցին թշնամիներ
Ահռելի գնդակներից:

No. 18

ԼՌԵՑ...


Andante.
Լը ռեց: Ամ պե րըն է կան ծած կե ցին եր կինք ու լու սին աչ
քէ՛ս խոր լե ցին խոր լե ցին: Մը նա ցի մի նակ, հո գիս
վըր դո՛ված, ձեռ նե րըս ծո ցիս գլու խըս քարշ ա ռած:
Եւ այ նու հե տ'և ա մէն ի րի կուն, մը նում եմ լուս նի
Նո րա տըխ րա մաց դէմ քը նա յե լիս, յի շում եմ թըշ ւառ
խա ղաղ ծա գե լուն, Ա՛խ, ցո լա փայ լէ տըխ րա դէմ լու սին,
վի ճա կը ազ գիս:
գու ցէ քո փայ լից փայլ տա ռա և հա յին պատ մէ շա տե րուն,

ԼՈՒԵՑ...

Շարժունակօրէն



ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

No 19

ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Իբրև արծիւ սաւառնում ես լեռ ու ձոր
Թնդացնում ես երկինք գետինք տենչավառ.
Վեհ անունդ պիտի յիշւի դարէ դար.—
Հայոց լեռներ քեզ ապաստան, Անդրանի՛կ:

Թշնամիներդ երբ լսեն քո անունը՝
Օձերի պէս կը սողան իրենց բունը.
Նրակներիդ աղխւ քաջի արիւնը
Չի ցամաքի մինչ յաւիտեան, Անդրանի՛կ.

Հայոց կուսանք դաւինե այ պսակ թո՛ղ հիւսեն,
Քնքոյշ ձեռքով քո ճակատը պսակեն,
Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն —
Կեցցե՛ս յաւէտ, դո՛ւ անսասան Անդրանիկ.

Հայաստանի սոխակները քեզ համար
Թո՛ղ դայլայլեն գիշեր ցերեկ անդադար.
Անյաղթ մնաս, դ՛ու քաջ կուի սիրահար,
Հայրենիքի տէր ու պաշտպան, Անդրանի՛կ.

No · 20

ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ

Թէ իմ ալեւոր հերքըս սեւնային,
Ուժըս ինձ յետ գար, կորիճ դառնայի,
Նըժոյգ ձի նըստած, պեխըս ոլորած,
Ձեռըս թուր առած, ես դաշտ կ'երթայի:
Ես դաշտ կ'երթայի, — դաշտն Աւարայրի,
Ողողած, ցօղած հայոց արիւնով,
Ա՛զգ իմ սիրական, դու ազգ Թորգոմեան,
Քու կորցրած թագը քեզ յետ կը տայի:

Կ'ասէի հայոց օրիորդներին.
«Ծախեցէք հագի ձեր թանկ շորերը,
Թողէ՛ք պաճուճանք, զարդ, մարգարիտներ —
Ժանգոտած ու բութ են մեր թըրերը:
Տուէ՛ք բեհեզեայ մեզ ձեր շապիկը,
Որ մենք փաթաթենք մեր մարմնի ու վէրքը,
Վիրակապ հիւսէ՛ք դուք ձեր մազերից. —
Այսպէ՛ս յայտնեցէ՛ք դուք մեզ ձեր սէրը»:

Թէ ես լինէի հարուստ մեծատուն,
Սընդուկներըս լի ոսկով, արծաթով, —
Շատերի նըման ես չէի լինիլ
Երբեք ազգասէր ունայն խօսքերով:
Շամպանիա գինու, փառք ու պատւի տեղ,
Կ'առնէի առատ գնդակ ու վառօդ,
Արձակ համարձակ կ'երթայի հանդէպ՝
Հայատեաց ազգաց՝ անթիւ զօրքերով:

Թէ ես լինէի մի երկրի իշխան,
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման —
Շուտաքայլ երթալ դէպի Հայաստան,
Խեղճուկ հայ ազգին լինել օգնական:
Եւրոպ, Ասիա արեան գետերը
Կը վազեցնէի՝ հեղեղի նըման,
Մինչեւ որ թագ, գահ ու ազատ կրօն՝
Ինձնից չըստանար թըշւառ Հայաստան:

Բայց՝ եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ
Աստուած լինէի մեր հողագնդին,
Ի՛նչ սուր սըլաքներ պիտի չաղ տայի
Մեր արիւնարբու թշնամեաց գընդին:
Նենգ ռուս, թիւրք մոլի, պարսիկ ոխերիմ,
Դարաւոր ոսոխ՝ դո՛ւ յոյն կրօնամոլ,
Գիտցէ՛ք որ իմ սուր երկսայրի սըրից
Անփաս չէ՛ր մընալ ոչ մի ձեր որդին:

ԳԱՄԱՌ–ՔԱՏԻՊԱ.

No· 21

ՀԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ



2· Աստուա՛ծ , սրբտով որ բարի ես ,
Մենք վար , Դուն վեր — շատ հեռի ես ,
Այժմ ալ խոշոր գործերի ես ·
Ապա որի՞ն մենք գանգըտինք :

3· Ցոյնը մեզի ասըր կ'առէ ,
Նէմցէն մեզմէ կրօնքով զատ է ,
Ֆրանկի բանը , կ'ասեն , վատ է ·
Ապա որի՞ն մենք գանգըտինք :

4 Թուրքին միաքը դ էպի Պալքան ,
Իսպառ մոռցաւ նա Հայաստան ,
Նըրան պէտք է լոկ մեր փարան ·
Ապա որի՞ն մենք գանգըտինք :

5· Մեր տեղը քաջ կըտրիճներ կայ ,
Պէտք որ եղաւ՝ սաակ էլ կուգայ,
Մենակ՝ ճամբայ ցուցնող չի կայ ·
Ապա որի՞ն մենք գանգըտինք :

6· Հայի դաշտե՛ր , արեւ՛ն դաշտեր ,
Շատ կուլ տըւիք հայի քաջեր ,
Թէ որ ձեզնէ մէկը ելլէր , —
Մեր գանգատին վերջ կը դնէր :

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ.

No. 22

ԱՐԴԱՐ ԶԱՅՐՈՅԹ



ԱՐԴԱՐ ՋԱՅՐՈՅԹ

Շ–ա–ր–ա–Ն–ա–կ–ա–Բ–է–Ն



Ինչով են նրանք մեզ տիրել ու արժանի.
Նրանք մարդիկ չեն այլ գազաններ վայրենի
Մերն է ձիրքը մերն է ուսում ու հա ճար
Մերն է հողը, մենք ենք նորա տէրն արդար :
Հերի՛ք , ելնենք և այլն :

Նրանց են մեր կոյս աղջըկունքը, հարսունքը,
Նրանց է մեր ճակատի քրտանց արդիւնքը,
Նըրանց սրբի ծայրն է կարծես մեր հոգին.
Նըրանց գամփռը մեզնից շատ է թանկագին :
Հերի՛ք, ելնենք և այլն :

Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում
Նըրանք մեր վրայ լըռիկ արցունք են թափում·
Չեն խընայիլ թև ու թիկունք, կը հանին.
Շուտով կը գան, կը միանան սուրբ գ րծին :

Հերի՛ք, ելնենք ցոյց տանք թէ մենք հարազատ
Հին քաջերի արիւնիցն ենք և ազատ·
Թէև չունինք ոչ սուր, ոչ թուր. ոչ նիզակ,
Մեր բազկերն էլ կ'անեն նրանց չանատակ :

ՄՆԱԿԵԱՆ

No. 23

ԱՆՎԵՐՋ ԳԱՆԳԱՏՆԵՐ

Մեր խեղճ ազգը ուսում չունի,
Զունի ուսում՝ խե՛լք ալ չունի.
Խելօքներըս այդ լաւ գիտենք,
Բայց, ա՜խ, միայն մենք կը խօսենք:

Մեր խեղճ ազգը հալածուած է,
Երկրէ երկիր տարագրած է.
Բախտաւորներըս այդ գիտենք,
Գիտենք՝ եւ միայն կը խօսենք:

Հայ մշակը երկիր չունի,
Երկիր չունի՝ հարկ շատ ունի.
Հարուստներըս մենք այդ գիտենք,
Գիտենք՝ եւ միայն կը խօսենք:

Հայի տղան գըրքեր չունի,
Վարժարանը վարպետ չունի.
Գիտուններըս այդ լաւ գիտենք,
Գիտենք՝ եւ միայն կը խօսենք:

Հայ գեղջուկի աղջիկն ու կին,
Անվարձ սեղեխ են Թուրք, պարսիկին.
Ամիրաներս մի՞թէ չգիտենք, —
Օգնելու տեղ՝ լոկ կը խօսենք:

Աչքըս դարձնեմ արեւմուտքին,
Արեւ ծագէ սլաւօն ազգին.
Հայի արեւն ահա՛, վեց դար
Համատարած պատէ խաւար:

Հայի գանգա՜տ, անվերջ գանգա՜տ,
Արտասունք ու լաց, սուգ անընդհատ...
Ե՞րբ ապա սաստ, ե՞րբ սրոյ շաչիւն,
Փողի ձայներ, մարտի գոչիւն...

Թուրը ձեռքէս Թիւրքը առաւ,
Տուայտանքէ խելքըս թըռաւ.
Անգո՛ւթ օզնէց*, մի՞թէ չես տայ
Աղետալի բախտըս սըգալ:

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ.

No. 24

ՄԵՐ ՄԱՅՐԵՐՈՒՆ

Աչերնիդ պըղտո՜ր, չորերնիդ կարմի՜ր,
Խանձուած մազերնիդ մըրրկին տըւած՝
Ո՞րուն կ՚աղօթէք, ցաւատանջ մայրեր.—
Մի՞թէ դեռ կ՚ապրի հայու կոյր Աստուած....:

Ա՜լ վերջ աղօթքին խունկին ու խաչին՝
Սուգի արիւնի այս որբ օրերուն՝
Ձեր չրթները թո՛ղ տարփանքով փակչին
Աստուածանարգ Պողպատին փայլուն:

Աղաղակեցէ՛ք ձեր զաւակներուն
Թէ՝ — «Աստուած հայու մտաւ հողի գոգ.—
«Ահա՛ ձեզ Կապար ու Պողպատ չողուն.
«Մեռցնել–մեռնիլ — ա՜լ մի՛ ընէք հոգ»:

ՎՏԱՐԱՆԴԻ

(*) Հակառակ կողմէն կարդալով՝ ցէնզօր — գրաքննիչ:

No. 25

ՀԱՅԵՐՈՒՍ ԹՈՒՔԸ

Դուն խելօք, հաշւով վաճառական ես,
Միւլք, փող ու ապրանք, — կ'ասեն, — շատ ունես.
Բայց՝ թէ փողէդ չահ չունի Հայաստան,
Թքել ենք քո՛ւ ալ, փողիդ ալ վրան:

Քաջ ես, լսել ենք, ինքըդ մեծաւոր,
Անուն յաղթողի ունիս փառաւոր.
Բայց՝ թէ թըրէդ չահ չունի Հայաստան,
Թքել ենք քո՛ւ ալ, թըրի՛դ ալ վրան:

Ի վերուստ քանքար քեզի տըւած է,
Հեղինակ անունդ աշխարհ փըռւած է.
Բայց՝ թէ գըրչէդ չահ չունի Հայաստան,
Թքել ենք քո՛ւ ալ, գըրչիդ ալ վրան:

Հեռատես մըտքով դուն զարդարեցար,
Հըզօր իշխանի սիրելին դարձար.
Բայց՝ թէ մըտքէդ չահ չունի Հայաստան,
Թքել ենք քո՛ւ ալ, մըտքիդ ալ վրան:

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Շատ կը յօրինես թանկագին բաներ.
Բայց՝ թէ ձեռքէդ չահ չունի Հայաստան,
Թքել ենք քո՛ւ ալ, ձեռքիդ ալ վրան:

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար հռչակ ու հանճար.
Բայց՝ թէ լեզուէդ չահ չունի Հայաստան,
Թքել ենք քո՛ւ ալ, լեզուիդ ալ վրան:

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովքովըդ լըցւած է մարդոց բերան.
Եթէ ուսումէդ չահ չունի Հայաստան,
Թքել ենք քո՛ւ ալ, ուսմանդ ալ վրան:

Կուտամ քեզ պատիւ, կ'ունենաս դու յարգ,
Ու կը գընեմ քեզ ազնիւ մարդոց կարգ, —
Երբ օրօրանէդ մինչեւ գերեզման
Ձըգտումըդ լինի փըրկել Հայաստան:

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ.

No 26

ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ



2· Ազատութիւն փնտռենք և ազատ մեռնենք·
Քան ամէն վայրկեան կենդանի մեռնենք,
Հինգ դարով մեռեալ սորուկ հայ ազգը
Այսպէս պիտ՚ գտնէ իր ազատ կեանքը
Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ,
Ճնշւած հայի որդիք հարազատ:

3· Սարկութեան շղթան խուլ շառաչում է,
Ազատութեան ճնշւած ձայնը գոչում է·
Ազատ լեռներ լինին թող մեր ապաստան,
Եւ ընդարձակ ձորեր ազատ գերեզման:
Մեր կեանք, մեր մահ և այլն:

4· Ցրւած խումբեր հասնին Զէյթուն և ի Վան·—
Շտապենք, միանանք, կազմենք գունդ հայկեան,
Հայի ազատութեան պարզենք դրօշակ·
Կեանքը մահով գնենք, այդ է մեր պսակ:
Մեր կեանք, մեր մահ և այլն:

No · 27

ԵՐԲ ԱԼԵԿՈԾ ···

Երբ ալեկոծ ծովի վրայ
Իմ մակոյկը խորտակւի,
Ես փըրփրադէզ ալեաց մէջը
Դեռ իմ յոյսըս չեմ կտրի ։
Բոլոր ույժով և համարձակ
Բազուկներըս կը շարժեմ,
Ալիքները պատառելով
Դէպի ափը կը թըռչեմ ։
Անհաւասար այս կռւի մէջ
Թէ ուժերըս ինձ թողնեն,
Ալիքները յորձանք տալով
Դէպի անդունդը ինձ տանեն,
Այն ժամանակ մի ըսփոփանք
Ես կը գտնեմ նորա մէջ,
Որ մեռնում եմ քաջի նըման՝
Կըռիւ տալով մինչև վերջ ։

Գ · ԹԱԴԷՈՍԵԱՆ

No 28

Ա՜Խ ՄԵՐ ՍԻՐՏԸ

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արև չըտեսանք
Վա՜խ, մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չ՚իմացանք ։

Հարուստ մարդիկ կ՚ուտեն կը խմեն
Աշխարհի ճոխ սեղանից,
Մենք աշխարհի խորթ–տըղերքն ենք,
Մեզ փայ չկայ աշխարհից ։

Խեղճ աղքատի հոգին դուրս գայ
Քարից–հողից հաց քամէ · —
Բեռով հացը հարուստին տայ,
Հարուստն ուտէ, վայելէ ···

Խեղճ աղքատը դառը դատի —
Դատարկ նստի ··· էհ՜, աշխարհ,
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վրայ, քա՛ր աշխարհ ···

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ
Օր ու արև չը տեսանք ·
Վա՜խ, մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չ՚իմացանք ։

Ա · ԻՍԱՀԱԿԵԱՆ

No. 29

ԿԻԼԻԿԻԱ



Տեսի դաշտերըն Ոնորիոյ,
Լեռն Լիբանան և իր մայրեր.
Տեսի զերկիրն Իտալիոյ,
Վենետիկ և իր կօնտօլներ.
Կըղզի նըման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարև.
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա՝
Աշխարհն՝ որ ինձ ետուր արև:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ՝
Ուր ամենայն իղձ կ՚աւարտի.
Հասակ մը՝ ուր հէգին ի տենչ
Յիշատակաց իր կարօտի.
Յորժամ քընարն իմ ցըրտանայ՝
Սիրոյն տալով վերջին բարև,
Երթամ ննջել յիմ Կիլիկիա՝
Աշխարհն որ ինձ ետուր արև:

Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

No. 30

ՈՒՂԵՐՁ ԱՌ ՍՈՒԼԹԱՆ

Ի դէմս 36 դաւաճան էֆէնտիներուն

Շնորհակալութի՜ւն, վեհափառ սուլթան,
Որ դու քար ու քանդ արիր Հայաստան,
Օրը հազարով հայեր մորթեցիր,
Հայոց չէն գեղեր ամայացուցիր:

Փա՜ռք և պարծանք քեզ, վեհափառ Համիդ,
Որ հնազանդելով պաշտած Ղուրանիդ՝
Մեր Աւետարան դու կոխկըրտեցիր,
Ու ղացիր աղրով խաչ նըկարեցիր:

Գոհութի՜ւն և փառք, մեծըդ փատիշահ,
Որ հայ ջնջելում գըտար դու քեզ չահ,
Հէն չէրքէզները ու գող քիւրդերը
Դարձան սըրտակից քու ընկերները:

Մռայլ բանտերէն հազար հայ բերան
Կ՚օրհնեն անունըդ, վեհափառ սուլթան,
Որ տօնացուցում տեղ չի թողուցիր,
Բիւր նահատակաց անուամբ լըցուցիր:

Բնաւ չի մոռնալ քեզ, վեհափառ սուլթան,
Քու երջանկացրած աւեր Հայաստան.
Քու մեծ անունն ու սըխրագործութիւն
Յաւերժ կը յիշէ Հայոց Պատմութիւն:

ԳԱՄԱՌ–ԳԱԹԻՊԱ.

No·31

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ինձ տեղ տւէ՛ք, Սիփան սարեր,
Բռնաւորի լուծն եմ թողեր.
Ազատութիւնս արնով գրնած,
Պահէք ձեր ծոցն, ազատ սարեր:

Մասից ազա՛տ, Մասից բարձր ես,
Աշխարհից թանկ՝ ազատութի՛ւն.
Կեանքի սէրն ես, կեանքի տէրն ես,
Արծըւի պէս բա՛րձր ես թըռնում:

Ազատ օդում, ազատ հովում
Արծըւի պէս ազատ կ՚ըլնեմ.
Բայց թեւերըս թափ-ծափ տալով
Ախպըրտանցըս քով կը թըռնեմ:

Հա՛յ ախպըրտանք, ձեր ժանգ չըղ-
իմ երկաթէ սուր կտուցով [թան
Ես կը կըտցեմ, կը քըծըծեմ,
Մէկտեղ կ՚երգենք ազատ կրծքով.—

—Ազատութի՛ւն, ազատութի՛ւն,
Կեանքի արե՛ ազատութիւն,
Մասից ազա՛տ, արծւից ազա՛տ,
Աշխարհի տէր ազատութիւն:

Արծըւի պէս բա՛րձր ես թըռնում,
Մասըսից բա՛րձր ազատութիւն.
Դո՛ւ, կեանքից վե՛ր, դո՛ւ լո՛յս-արև,
Ազատութի՛ւն, ազատութի՛ւն......:

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

No·32

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՁԵԶ......

Խաղաղութի՛ւն ձեզ, սո՛ւրբ մարտիրոսներ,
Որ կուի դաշտում ընկաք անվեհեր,
Դուք ջուր ու ցամաք արեամբ ներկեցիք,
Որ ձեր արիւնով փրկէք հայրենիք.
Դուք սուր առնելով՝ սրով կամեցաք
Փշրել բռնութեան շղթան ու կապանք.
Բայց, աւա՛ղ, ձեզ հետ մեռան ձեր իղձեր...
Խաղաղութի՛ւն ձեզ, սուրբ մարտիրոսներ:

Խաղաղութի՛ւն ձեզ, ազգի քաջ որդիք,
Սև հողն է այժմ ձեզ առել իր գիրկ.
Ձեր արեամբ ցօղած սար ու դաշտերում
Ահա խնդալից նոր կեանք է եռում.
Փթթել է դարձեալ գարուն ծաղկաւէտ,
Բայց աւա՛ղ, դուք էլ չէք փթթիլ յաւէտ...
Ցուրտ գերեզմանն է ձեզ առել իր գիրկ,
Խաղաղութի՛ւն ձեզ, ազգի քաջ որդիք:

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

No. 33

ՂԱՐԻԲ ՄՇԵՑԻ

Ես մըշեցի ճամբորդ եմ՝ հեռու տեղերէն,
Ձեզ շատ բարև բերեր եմ հայի գեղերէն.
Ախպէրքըս ինձ ղրկեցին դէպի էս կուման.–
(Մի՛ վախնաք, չուզեմ ձեր մանէթն ու թուման)
Վարագայ Սուրբ Խաչէն բերեր եմ ձեզ լուր
Խըղճացէք հայ ազգիս, տուէ՛ք մէկ մէկ թ ո ւ ր :

Հայ ազգը մեր տեղ նեղ օր կը քաշէ,
Օսմանլին ու քիւրդը կեանքերս կը մաշէ.
Որ կ'ըլլայ՝ գերեվար կ'անէ մեր աղջոց
Որ կ'ըլլայ՝ արտերս ձգէ կրակ ու բոց:
Թէ չօգնէք՝ մենք ալ շուտ կ'ըլլանք ցիրուցան.
Խղճացէք հայ ազգիս, տուէք մեզ հ ր ա ց ա ն :

Սուրբ ժամերըս դարձուցին անասնոց կոյանք,
Խորանները պըղծեցին, քանդեցին սուրբ վանք,
Խաչը ոտքով փըշրեցին, տեղը դրին լուսնակ,
Խեղճ հայը օրնիբուն ծառը է ու ծանակ.
Ո՛վ աղբարք, բերեր եմ ձեզ այսպէս սև բօթ,
Չուզենք մենք ձեր ոսկին, տուէք մեզ վ ա ռ օ դ :

Այսքան շատ տանջանքին ի՞նչպէս դիմանանք,
Մինչև ե՞րբ ձեր դիաց անօգ պիտ՝ մնանք.
Մեր ազգը տէր չունի Սլավօնի նըման,
Բարի դուք ըլլայիք մեզի օգնական.
Հոգիներս տըրորած է, ջաներըս ցաւոտ,
Չուզենք մենք ձեր փարան, տըւէք թ ը ն դ ա ն օ թ :

Շատ տառապանք քաշեցինք դուշմանի զէնքէն,
Շատ ալ մահ դուշմանը կերաւ մեր ձեռքէն,
Առանց ատոր աշխարհքը մեր, չէր բազմամարդ,
Հիմի փուշ կը բըսնի, ուր առաջ էր վարդ.
Բայց մենք ձեր սընդուկի փողին կարօտ չենք.—
Հայ աղբարք, շնորհեցէ՛ք դուք մեզ մէկ–մէկ զէնք:

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ.

No· 34

ՆՊԱՏԱԿԻՍ ՀԱՍՆԵՄ ՄԻԱՅՆ



2· Ա՜խ, Հայաստան, սիրտս ու հոգիս
Քեզ նուիրեմ, ընդունէ
Թէ կարելի, թող ես մեռնեմ,
Թաք Հայաստան ոտքի ելնէ։

3· Անոր սիրուն բանտն ալ մըտնեմ՝
Պալատ է այն ինծ համար,
Ոտքըս, ձեռքըս շըղթայակապ՝
Երջանկութիւն է ինծ համար։

4· Թէ մինչև իսկ աքսորեմ ալ,
Թափառական դանէ գիս բախտ,
Հայաստանի սիրոյն համար
Փշոտ վայրեր կ'ըլլան դրախտ։

5· Ա՜խ, Հայաստան, դու սիրուն մայր,
Մինչ ե՞րբ այդպէս քո որդիք
Քեզնէն հեռու պիտ հառաչեն,
Օտար աշխարհ թափառեն։

No· 35

ՄՇԵՑՈՑ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Երբոր մայրը երկունքով
Աշխարհ բերէ երեխայ,
Հայրը որդուն մի սըրած
Պիտի դաշոյն տայ ընծայ։

Երբ երեխան մեծանայ,
Խաղալիքներու փոխան՝
Հայրը ձեռքը պիտի տայ
Մի մահաբեր հրացան։

Երբոր տըղին վարժատուն
Գայ ժամանակ երթալու,
Նախ՝ սուր խաղցընել, և ապա
Պիտ սովրեցնենք կարդալու։

Կարդալ–գըրել լաւ բան է...
Բայց որ հասու քըննութիւն՝
Աշակերտին հարցուցէք —
Վոթել գիտէ՞ նա արիւն։

Լոկ դուք այսպէս յուսացէք
Փըրկել խըղճուկ Հայաստան.
Ազատ, անկախ մարդ երբեք
Լինելու չէ՛ մուրացկան։

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ.

No. 36

ԷՅ ՋԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Է՛յ, ջան հայրենիք, ի՛նչքան սիրուն ես,
Սարերըդ կորած երկնի մովի մէջ․
Ջրերըդ՝ անուշ, հովերըդ՝ անուշ,
Մենակ բալէքդ արիւն ծովի մէջ։

Քու հոգուն մեռնեմ, անգին հայրենիք,
Ա՛խ, քիչ է, թէ որ մի կեանքով մեռնեմ․
Երնէ՛կ ունենամ հազար ու մի կեանք,
Հազարն էլ սրանց քեզ մատաղ անեմ։

Ու հազար կեանքով քու դարդին մեռնեմ,
Բալէքիդ մատա՛ղ, մատաղ քո սիրուն․
Մենակ մի կեանքը թո՛ղ ինձի պահեմ, —
Է՛ն էլ քո փառքի գովքը երգելուն։

Որ արտուտի պէս վե՛ր ու վե՛ր ճախրեմ
Նոր օրւայ ծէգին, ազի՛զ հայրենիք,
Ու անո՛ւշ երգեմ, բա՛րձր, զի՛լ գովեմ
Կանանչ արեւդ, ազա՛տ հայրենիք․․

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

No. 37

ԶԻՆՈՒՈՐԻ ԵՐԳ

Թըռի՛ր, իմ նժոյգ, սըլացի՛ր շուտով,
Տա՛ր ինձ ցանկալի կռուի փոթորիկ,
Կըռուի մէջ միայն ես արեան գընով
Կը փըրկեմ իմ խեղճ, ստրուկ հայրենիք։

Տա՛ր ինձ այն աշխարհ — անցեալում հըզօր,
Պանծալի վայրը իմ քաջ պապերի,
Ուր, աւա՛ղ, դժբախտ եղբայրըս այսօր
Իւր կեանքն է ողբում՝ օտարին գերի․․

Անցան շա՛տ դարեր, անցան շա՛տ տարիք,
Ազգըս շա՛տ ապրեց քաղցրիկ յոյսերով,
Բայց նորան երբեք չը ժպտաց երկինք,
Չը տեսաւ նա կեանք խաղաղ, անվըրդով։

Միշտ լուռ ու խոնարհ անողորմ բախտին,
Երկա՛ր սպասեց նա կեանքի գարնան․
Բայց նորա առջեւ ոսոխ թշնամին
Իւր սըրով փորեց կեանքի գերեզման․․․

Դէ՛հ, թռի՛ր նժոյգ, սըլացի՛ր շուտով,
Տա՛ր ինձ ցանկալի մարտի փոթորիկ․
Մարտումն է զինուորն իւր արեան գնով
Ազգին պարգեւում յաղթութեան դափնիք։

Ս․ ԾԱՏՈՒՐԵԱՆ

No. 38

ՀԱՍՏԱՏ ՅՈՅՍԸ



Թուխպը թո՛ղ պատէ երկինքը պայծառ,
Թանձրը մառախուղ երկիր թո՛ղ փակէ·
Տարրերք աշխարհիս թո՛ղ խառնուին իրար,
Յուսով եմ, վաղ ուշ՝ արեւ պիտ՚ ծագէ:

Թո՛ղ գայ փորձութիւն, թո՛ղ գայ հալածանք,
Խաւար թո՛ղ դառնայ անաղօտ լոյսը·
Սարսափելի չեն հային տառապանք,
Միայն .... չը հատնէր խեղճուկի յոյսը:

ԲԱՄԱՌ—ԲԱԹԻԳԱ.

Եթէ ուզիք գեղեցիկ ձայն, վայրկեան մ'իսկ մի՛ վարանիք զայն մշակելու համար, նկատելով զայն իբր ամենագեղեցիկ պարգեւը, որ Երկինք ձեզ շնորհած է:

ՏՈՒՄԱՆ.

ՈՂՋՈՅՆ

Ողջոյն տուէք իմ հայրենեաց կիսակործան տաճարներուն,
Ողջոյն տուէք, աւերակաց Արարատեան գաւառներուն·
Ողջոյն տուէք դժբախտ հայուն, թշուառ հայուն, չուառ հայուն·
Ո՛հ ձեռք տուէք, ո՛հ սիրտ տուէք, ոգի տուէք անկեալ հայուն:

Ողջոյն տուէք Աւարայրի արիւնաներկ սուրբ վայրերուն·
Ողջոյն տուէք տխուր լուսնին, որ լոյս տայ սև շիրիմներուն·
Ողջոյն տուէք ի հող իջած արքայական պալատներուն·
Ողջոյն տուէք գետնատարած սրբոց անբիծ մասունքներուն:

Ողջոյն տուէք ոլոր, գլոր, մոլոր վազող գետակներուն·
Ողջոյն տուէք բոլոր պղտոր, աղի, լեղի աղբիւրներուն·
Ողջոյն ծաղկանց տուք որ խումբ-խումբ կան թալկուն մէջ հողերուն·
Ուր հայ սոխակ թումբէ ի թումբ կեանք կը խնդրէ դեռ վարդերուն:

Ողջոյն տուէք հայ մուսային, որ լայ փառս իւր հայրենիքին·
Ողջոյն տուէք իմ քնարին որ Հայկայ տանն է ողբերգու·
Ողջոյն տուէք Հայաստանի լքեալ բեկեալ որդիներուն·
Ողջոյն տուէք գոռ և հուժկու, առոյգահաս քաջերուն:

Ողջոյն տուէք նոցա խամրած և այրած սև սրտիկներուն·
Ողջոյն տուէք քրտնավաստակ (?) ու բազմատուժ (?) հարուստներուն·
Ողջոյն տուէք մերկ և նօթի տարաթափառ աղքատներուն·
Ողջոյն տուէք ինձ սիրելի քաղցրաբարբառ գիտուններուն:

Ո՛հ, չեմ մոռնար ողջոյնս տալ արիւն-գերի շինականներուն·
Որոնց վաստակ սուրբ և արդար կուլ եղած է վատ քիւրտերուն·
Ողջոյն տուէք հայկեան մանկտւոյն, որ մրմնջէ փառքն անցելոյն,
Թո՛ղ մրմնջէ, թող հառաչէ, մինչև տեսնէ կենաց գարուն:

Գ. ՇԷՐԷՆՑ

No. 40

ԹԱԼԱՆԱԾ ԳԵՂ

Ծուխը ամպի պէս կ'ելլէր դէպի վեր,
Տընակի նըման բոցը կը քալէր·
Տուն, եկեղեցի, պարտէզ ու այգի
Անսիրտ անհոգի մատնած են կրակի։

Հայերն հօտի պէս սարսած կը վազեն,
Անցորդ–դարձողէն օգնութիւն կ'ուզեն·
Օգնութի՞ւն։ Խեղճե՛ր։ Կատղած օսմանլին
Զար մահ կը սպառնայ զարհուրած հային։

Մայրը կականով կը փնտռէ աղջիկ,
Աղջկան գերի տարաւ չար տաճիկ·
Իր որդուն կ'ուզէ հայրը շուարած,
Որդուն կը տեսնէ խազուխի դըրած։

Հայի հաւաքած մալը աղքատին
Հէլալ փայ եղաւ անկըշտում քիւրդին·
Խեղճը յուսահատ կ'աչէ երկընքին,
Կը սպասէ նըպաստ հրեշտակաց զօրքին։

Խաբուսի՛կ յոյսեր…։ Դեռ շա՛տ ու շատ դար
Պիտի խաբուիս, հա՛յ, ինչպէս խաբուեցար·
Թէ ինքըդ չանես քու գըլխու ճարը,
Ե՞րբ պիտի օգնէ քեզի օտարը…

Խե՛ղճ մարդ, մի անգամ մեռնելէ վախցար,
Մինչև մահւան օրըդ հազար մահ տեսար,
Հազար մեռնելըդ՝ հազար ցաւերով,
Զաւակիդ փոր ձեռքովդ փորելով…

Դու միշտ եղբօրըդ անտէրունչ թողիր,
Մատիդ ծայրովը նըրան չօգնեցիր·
Գլուխն առաւ խեղճը, գընաց հեռացաւ,
Հայաստան ձեռքէդ ամայի դարձաւ։

Դու կարծեցիր թէ՝ ոսկին մեծ բան է,
Ամէն մի ցաւի, դարդի դարման է·
Ապա հէ՞ր ոսկիդ քեզի չի օգնեց,
Կընկանդ, զաւակիդ մահէ չի փըրկեց….։

Ա՛խ, հայե՛ր, հայե՛ր· թէ որ ձեր ոսկին
Կիսով չափ զոհուէր յօգ՚ուտ հայ ազգին,
Առ միշտ կը դադրէր ձեր լացն ու կական,
Ու դրախտ երկրաւոր կ'ըլլար Հայաստան։

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ.

ՍԵՐՈԲ-ԱՂԲԻՒՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ոսկէ գագաթը բարձրիկ Նէմրութայ
Վա՛ռ-վառ կը շողայ մէջ Վանայ ծովուն ·
Ազիզ անունդ, քա՛ջ Սերոբ—Փաշա՛,
Ալմաստով փէլուն մէջ մեր սրտերուն ·
Թո՛ղ արարքներիդ արժանի գովքն էլ՝
Խըղճուկ գուսանիս անզարդ երգերում՝
Ջինջ աղբիւրի պէս՝ գըլայ, գըլգըլայ · · ·

Նէմրութայ սարը հազար ակն ունի,
Հազարն էլ Մըշու դաշտն ի վար կ՚երթայ ·
Մենակ Սերոբի աղբիւրը սըրտի
Խեղճ ժողովուրդի սըրտի մէջ կ՚երթայ —
Ազատ օրերի, դալար օրերի
Ծարաւ ժողովուրդի սըրտի մէջ կ՚երթայ · · · :

Նէմրութայ սարը քառասուն ժէռ ունի,
Քառասունի գըլխուն մարմար քարափ կայ · —
Էն քարափի վրայ արծիւ է նստել՝
Ժէռերի արքան իր գահի վրայ,
Ու կըտուցի մէջ մի սիրտ է բռնել,
Եւ գիլ կը կանչէ, չորս դին ձէն կուտայ—
Սարերի արքան ամպերի վրայ · · ·

«Էհ՛յ, ականջ արէ՛ք, հովե՛ր ու հաւքե՛ր,
Կըտրիճ Սերոբի սիրտն է կըտցիս մէջ,
Սիրտը՝ որ ձեզնէն բարձրանց կը թռնէր :
Սերոբ-Փաշայի սիրտն է կըտցիս մէջ,
Սիրտը, որ ձեզնէն մեծ էր ու խորն էր :
Սերոբ-Աղբիւրը ազատ Նէմրութից
Աղբիւրի նըման վազեց լեռն ի վար
Ու հեղեղ դառաւ, ահ ու մահ սփռեց,
Զարկեց ու ջարդեց հայու դուշմանին՝
Քուրդին ու Թուրքին հարո՛ւր ու հազա՛ր :
Ա՛խ, քուրդն ու Թուրքը վախկոտ են, նամարդ,
Սիրտ չունին կայնել ճակատ առ ճակատ :
Եօթ տարի բոլոր եանէդ ընկան,
Շւաքըրդ տեսան, եօթը ծակ մտան ·
Վերջն հազար դաւով, հազար խաղերով
Ընկար, քա՛ջ Սերոբ · · · Ու երբ դուն ընկար,
Ես եկայ-հասայ, սիրտըդ հանեցի,
Որ գէշ դուշմնին փայ-բաժին չըլնի :

«Իգիթ սիրտը քաջ Սերոբի
Արևի պէս
Նէմրութ սարում լոյս կուտայ.
Ու քարերում, սև հողերում
Թէկուզ թաղեմ՝ չի մարի, —
Սուրբ վաթանի ազնիւ սիրուն
Ջուր յաւիտեան չի մարի:
Կարիճ սիրտը քաջ Սերոբի
Արևի պէս
Նէմրութ սարում բոց կուտայ.
Սարի սառուց ձիւների մէջ
Թէկուզ թաղեմ՝ չի սառի, —
Ժողովուրդի ազատ օրւայ,
Պատւի սիրուն՝ չի սառի,
Ջուր յաւիտեան չի սառի»...

Նէմրութայ սարը հազար ակն ունի,
Հազարն էլ Մշու դաշտն ի վար կ'երթայ.
Մենակ Սերոբի աղբիւրը սըրտի
Խեղճ ժողովըրդի սրտի մէջ կ'երթայ —
Ազատ օրերի, դալար օրերի
Ծարաւ վաթանի սըրտի մէջ կ'երթայ...:

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

No. 42

ՋԱԽՈՐԴ ՕՐԵՐԸ....

Ջախորդ օրերը ձմռւայ նըման կուգան ու կերթան
Վըհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան.
Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ երկար,
Որպէս յաճախորդ չարուէ-չարան կուգան ու կերթան:

Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի գըլխից,
Ինչպէս ճանապարհի կարաւան՝ կուգան ու կերթան.
Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը՝ ծաղիկ,
Որքան մանիշակ, վարդ, պալասան՝ կուգան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ էլ տըկարը տըխրի,
Փոփոխակի անցքերը զանազան՝ կուգան ու կերթան.
Արևը առանց վախենալու ցայտում է լոյսը,
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կերթան:

Երկիրը ուսեալ զուակին է փայփայում մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական՝ կուգան ու կերթան.
Աշխարհը հիւրանոց է ՋԻՎԱՆ, և ազգերը՝ հիւր, —
Այսպէս է կանոնը բընական — կուգան ու կերթան:

No. 43

ԾԻՐԱՆԻ

1. Ես մէկ ծառ եմ ծիրանի,
Հին արմատ եմ անուանի,
Պտուղներըս քաղցրահամ,
Բոլոր մարդկանց պիտանի:

2. Հին ծառ եմ արեւելեան,
Չունիմ որոշ այգեպան,
Տունկերըս ամէն երկիր
Ընկած են բաժան-բաժան:

3. Տունկերըս ուր էլ գընան,
Թէպէտ նոյնը կը մնան,
Բայց օտարի հողի վերայ
Չեն անի, կը չորանան:

4. Արեւելքում ինձ տընկեց,
Երբոր Աստուած ստեղծեց,
Ասաց՝ «աճէ՛, բազմացի՛ր»,
Մի այգի էլ ինձ տուեց:

5. Ուղարկեց մի այգեպան—
Հարաւից հըսկայ իշխան,
Այդ հըսկայի անունով
Կոչւեցայ ծառ Հայկական:

6. Չորս հազար տարուայ ծառ եմ,
Արմատըս պինդ՝ կայտառ եմ,
Թէպէտ ոյժըս պակաս է,
Բայց անունով պայծառ եմ:

ՋԻՒԱՆԻ

No. 44

ԹԷՊԷՏ ԵՍ ՄԵԾ ՏԱՆ ՆՇԱՆ ԵՄ

1. Թէպէտ ես մեծ տան նշան եմ,
Ամէնից ազնիւ իշխան եմ,
Ոչ մեռած եմ, ո՛չ կենդան եմ,—
Օգնական չունիմ, ի՞նչ անեմ:

2. Ո՛վ անցւոր, ինձի նայի՛ր,
Անբախտութեանըս խնայի՛ր,
Ի՛նչ կուլէր՝ փոքր ըմնայիր,
Իմանայիր թէ ի՞նչ բան եմ:

3. Թըշնամիքս մարդս մեռուցին,
Մէջքս ծանրութեամբ կեռուցին,
Որդիքս ինձնից հեռուցին—
Այժմ այլոց ապաստան եմ:

4. Զեռումըս կոտրեց սուրըս,
Վնասւեցաւ առուտուրըս,
Լեղի դարձաւ քաղցըր ջուրըս,
Բաս ես ո՞նց չը հոգւոց հանեմ:

5. Առաջ կէի անձամբ անձին,
Այժմ կարօտ այլոց գանձին,
ՍԷՅԱԴ, քեզ ասեմ առանձին,—
Այրիացեալ Հայաստան եմ:

No· 45

ՀԱՅ ԱՊՐԻՆՔ



Հայ ապրինք · մեր հայրն է ան դիւցազուն,
Որ ազատութիւն սորվեցուց մարդուն,
Ու մեզ մեծ անուն տուաւ բաժինք ·
Եղբա՛րք, Հայ ապրինք :

Մեր աշխարհն է սուրբ, մեր հողին վրայ
Աստուած է քալեր, օրհնելով զԱդամ ·
Մեր լեզուն սաղմեր ու խօսեր նախ ինք ·
Եղբա՛րք, Հայ ապրինք :

Հայն ու մարդկութիւն նոյն ունին օրրան,
Երկիր փրկութեան է մերս Հայաստան.
Կրօնի նախկին սեղանն է Մասիք—
Եղբա՛րք, հայ ապրինք։

Հայու պերճ անուն՝ ո՛չ միայն յերկիր,
Այլ և եթերց մէջ շողայ լուսալիր.
Քաջ Հայկին աստեղք անմահ են երկինք.
Եղբա՛րք, հայ ապրինք

Հայ ապրինք։ Ո՞ր ազգ կայ հայու նըման,
Որ ունենայ հին պարծանքներ այսքան,
Ո՞ր ազգ՝ հայուն պէս՝ չքեղ հայրենիք.
Եղբա՛րք, հայ ապրինք։

Ըսէ՛ք, ո՞ր ազգին չորս առաքեալներ
Երկնից թագաւորն է դեսպան խըրկեր,
Որ թագաւորին հետ թղթակցեր ինք.
Եղբա՛րք, հայ ապրինք։

Ո՞վ կրնայ համրել սրբոց մեր գանուան,
Մեր պատմութիւնն է նահատակաց ցանկ.
Մեր եկեղեցին յերկրի է երկինք.
Եղբա՛րք, հայ ապրինք։

Ո՛չ, ճակատագիր մեր չէ միշտ տըխուր,
Զթըշուառութեան ուտել հացն ու ջուր.
Նոր երջանկութեան ապագայ մ՚ունինք...
Եղբա՛րք, հայ ապրինք։

Հայ ապրինք, որ մեր որդիք ալ, եղբա՛րք,
Կարենան պարծիլ որ զմեզ ունին հարք.
Զըլլանք հայ անուան, չըլլանք նախատինք.
Եղբա՛րք, հայ ապրինք։

Խ. ԵՊ. ՆԱՐՊԷՅ

Ազա՛տ է հոգիս և ես չեմ թոյլ տայ,
Որ մէկը նորա վրայ բռնանայ.
Ո՛չ ժանգոտ շղթան, ո՛չ փայլուն ոսկին,
Ո՛չ բռնաւորը, ոչ էլ սիրուհին...։

ԼԷՕՆԻԴ ԿՆԻՆԱ.

No. 46

ԲՈՂՈՔ

Ծխում է խունկը աւեր տաճարում
Սուրբ խաչելութեան պատկերի առաջ,
Տառապեալ հօտը հովւին է կանչում
Արիւնաշաղախ, մերկ, լալահառաչ:

Իսկ տաճարի մօտ մայրեր, այրիներ
Գերեզմանատան նիրհը խանգարած,
Հողակոյտներն են արցունքով ծածկել
Եւ դարձեալ օրհնում քո կամքը, Աստուա՛ծ:

Բայց ո՞ւր ես Աստուա՛ծ, ինչո՞ւ չես լսում
Հալածեալ հօտիդ աղերսը արդար,
Որ քո սուրբ անուան համար այս կեանքում
Արիւն-արցունք է թափել դարէդար:

Նա, որ ամէն բան զոհեց քեզ համար
Վանքեր, տաճարներ կառուցեց շքեղ,
Որ իր թանկ որդոց արիւնով արդար
Ներկեց քո անուան կռուի դաշտն ահեղ,

Եւ այսօր անգամ նեղ ճգնաժամին
Երբ հալածւում է անսիրտ, չարաչար,
Կրկին քո գութն է հայցում լալագին,
Արհամարհելով մարդիկ և աշխարհ:

Նայի՛ր այդ դողդոջ դալուկ շրթներին,
Որոնք քեզ հետ են խօսում այս կեանքից,
Քեզ, որ խոստացար քո հաւատարիմ
Ծառային փրկել չարից, փորձանքից՝

Միթէ՞ գթութեան անգամ մի նշոյլ
Զլանում է քո սիրտը գըթառատ.
Եւ մի՞թէ բաւ չէ, որ միայն նա խուլ
Մարդկային արիւն-արցունքի առաջ:

Հատան սաղմոսի բառեր ու բարբառ,
Էլ խօսքեր չունին, որով աղօթեն.
Պըղտոր արտասուաց ակունքը իսպառ
Ցամքեցան և արդ արիւն ծորում են:

Տե՛ս, էլ անբարբառ քո ստրուկ խեղճ հօտ
Տաճարիդ անգամ փոշին է լիզում,
Փրկութեան յուսով վէրքերն արիւնոտ
Քո սեղանների քարերին քսում...

Բայց գիտցի՛ր, Աստուա՛ծ, որ քո ստեղծած
Ամէնաանգութ ոճրագործն անգամ
Գիտէ յետ տանել սուրը չը ներկած
Արտասուող գոհի արիւնով անպարտ...

Բայց որոնց քայլը դու անիծել ես
Վաղանցուկ կեանքի այս տանջարանում,
Եւ որոնց համար տանջանքով պէս-պէս
Դժոխք յարդարել անտի աշխարհում...

Իսկ թէ քո կուրծքը ծարաւի է դեռ
Լըծիդ տակ հեծող սրտի արեան,
Ահա պատրաստ եմ, արձակի՛ր վըճիռ
Եւ դատապարտիր ինձ անմահութեան:

Թաղի՛ր ինձ ողջ-ողջ գերեզմանի մէջ
Եւ շրջապատիր զազիր որդերով...
Բորբոքի՛ր խարոյկ գեհենում անշէջ,
Ուր նետուիմ անվախ, այրուիմ դարերով:

Եւ կամ երկընքի բարձրում անկործան
Խաչ ըրնկիր ահեղ փըշերից հիւսած,
Ուր ես բևեռուած անվերջ, անվախճան
Քաւեմ մեղքերը հօտիդ · չը գործած:

Կամ այլ տանջանքներ, որ աստուածային
Միտքը կարող է երևակայել...
Լոկ թէ դրանով հալածեալ հօտին
Մի անկապտելի ազատ կեանք գընեմ:

Վ.ՏԱՐԱՆԴԻ

No. 47

ՎԱՆԵՑՈՅ «ՀԱՅՐ-ՄԵՐԸ»

Հայր մեր երկնաւոր, սուրբ' լայ քո անուն,
Հային երկրաւոր տուր արքայութիւն·
Ամէն բանի մէջ քու կամքը թող' լայ,
Միայն թէ հայը լուծի տակ չի' լայ·
Ո՛չ չոր, ոչ կակուղ հացդ մենք կ'ուզենք,
Միայն տուր ամէն հայի ձեռքը զէնք·
Ձենք խնդրիլ թողնել մեր անձանց պարտքը,
Թէք վերցուր թիւրքի խայտառակ հարկը·
Գլորէ մեզ, Աստուած, մարտի փորձութեան,
Որ չուտ ազատի ազգը քո Հայկեան:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

No. 48

ՄՇԵՑՈՒ ՈՂԲԸ

Ընցաւ տարին, հայոցս էլ փառք ընցաւ հետ·
Դրախտի սարէն գարուն յետին բարև եա·
Կտրինք առան զէնքեր, իջան տակ հողին,
Վա՜յ մեր գլխուն՝ սև մուր էկաւ էն օրին:

Հայու աչքեր թող մեզ լա՜ն,
Ա՜խ, մեզ լան, վա՜խ, մեզ լա՜ն:

Հայերս գերի եղանք բախտին անողոք,
Աստուած, հրեշտակ, մարդ չլսեց մեր բողոք·
Մըր լարերու ծէն ծածկըւաւ Տարնոյ տակ,
Մշու դաշտեր պահեն սըրտիս հառաչանք:

Հայու աշուղք թո՛ղ մեզ լա՜ն,
Ա՜խ, մեզ լա՜ն, վա՜խ, մեզ լա՜ն:

Մըր աշխարհի քակվուկ չէնքերու ներքև
Նըստուկ մամ, պապ, ճժեր միացին անարև,
Նօթի, ակլըղ, ա՜խ, չկայ տէր տիրական,
Անգութ քըրդու զուլմին եղած ենք խուրպան:

Ղարիպ ախբէրք թո՛ղ մեզ լա՜ն,
Ա՜խ, մեզ լա՜ն, վ՜ախ, մեզ լա՜ն:

Մատղաշ աղջիկ ու հարս հալաւ մի չունի,
Որ իր մարմին անօրէնին դէմ ծածկի·
Էնպէս դրած ձեռքերն աչից ամըչկոտ,
Գութի, սիրոյ, ողորմութեան է կարօտ:

Հայ աղջիկներ թող մեզ լա՜ն,
Ա՜խ, մեզ լա՜ն, վա՜խ, մեզ լա՜ն:

Կեցէ՛ք, Մըշու դաշտի քամիք, քիչ մ՚կեցէ՛ք,
Մըր ողբաձէն բարևն ալ ձըր հետ տարէք,
Ու՝ երբ ընցնիք Սահմանադրութեան կամարից,
Հոնկուց ըսէք ղարիպ մըր հայ ախբերց·—

Մըր արտասուք սրբեն թող մըր աչվընուց,
Կ՚անցնի տարին էլ չը լա՜նք, էլ չը լա՜նք:



ՍՈՒԼՈՒԽՑԻ ՍԵՐՈԲ ԻՐ ԿՈՐԻՒՆՆԵՐՈՎ

ԱՒԵՏԻՍ	ՍԵՐՈԲ	ՅԱԿՈԲ
Կրտսեր որդին	Հայրը	Աւագ որդին

No 49

ԿՌՒԵՑԷ՛Ք ՏՂԵՐՔ



2․ Մեզ տօնախըմբեն մեր նախնի քաջեր,
Մեզի կը սպասեն մեր հէգ եղբայրներ։
Չի ծնանք ազատ, գէթ մեռնենք ազատ,
Մեր սիրտն ու հոգին պահենք անարատ․
Այս անգամին էլ ցոյց տանք թըշնամուն՝
Թէ ի՛նչ է հայու ուժն ու քաջութիւն։

3․ Ահա՛ քիւրդերը փախան սարսափած,
Ահա դիակներ արեամբ շաղախուած․
Կըրակ տեղացէ՛ք, անդադար կըրակ,
Փա՛ռք ժողովուրդին, առաջ է գընդակ․
Օ՛ն, կռուենք տղերք՝ մինչ շունչը վերջին,
Արժանի լինինք փառքի պըսակին։

4․ Մեռնենք յուսալով, մերն է ապագան,
Մեռնենք, բայց կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան։
Այսպէս յորդորեց ու ընկաւ արին,
Թողլով մեզ անուն՝ յիշատակ բարին՝
Ահեղ կռուի մէջ մի փոքրիկ հերոս՝
Անմոռանալին կըտրիճ Մարտիրոս։

Մ․ Ե․

No․ 50

Ա․ ՄԱԼՕՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Էն արծիւ էր, թըռաւ, գընաց,
Մեր վըրայով, մեր միջով․
Ա՜խ, էն մեր սիրտ, մեր ազիզն էր,
Գընաց սարով, սա՛ր դարդով։

Էնոր դարդը, ա՜խ, մեր դարդն էր,
Ու մեր սըրտից էն գընաց․
Էնոր դարդը խեղճի դարդն էր—
Խեղճի սըրտիցն էն գընաց։

Ո՞ւր գընացիր, ո՞ւր գընացիր,
Մենակ–մենակ գընացիր․․․։

Հեռո՜ւ տեղեր, արնոտ տեղեր՝
Ոխը սըրտից՝ հոգի ջա՛ն,
Ընկար մենակ ու անընկեր՝
Դու ման դաշտեր, Ավօ ջան։

Ընկերներըդ, ա՜խ, քեզ մոռցան,
Կեանքի ճամբով գընացին,
Քո սուրը սըրտի սէրը մոռցան,
Գերեզմանըդ կորուցին․․․։

Ո՞ւր գընացիր, ո՞ւր գընացիր,
Մենակ–մենակ գընացիր․․։

ՀԱՅ–ԳՈՒՍԱՆ

No. 51

ՇՂԹԱՅ

Ազատութեան քաջ զինուորը պատանին
Մութ բանտին մէջ մենակ նստած է հիմա,
Եւ շարժելով անիծում է շղթային՝
Որ ճնշում է ձեռն ու ոտը անխընայ․
«Քաջ պատանի, ասաց շղթան, ո՛հ, շարժիր,
Շարժի՛ր, փըշրիր ինձ, միայն մի՛ անիծիր․

Շարժի՛ր, շարժի՛ր, շառաչիւնըս անէծք է,
Կայծակի պէս բռնաւորին կը զարկէ»։

«Գիտեմ, դու ինձ հիմա էլ չես ճանաչում․
Ես երբև սուր փայլում էի քո ձեռքին՝
Ազատութեան պատերազմի դաշտերում,
Հաւատարիմ ծառայելով սուրբ գործին․
Աւա՜ղ, հիմա այս ի՞նչ տեղ ենք մենք, ա՜խ, ո՞ւր,
Անբա՛խտ տըղայ, և ես նոյնպէս անբախտ սուր։

Շարժի՛ր, շարժի՛ր, շառաչիւնըս անէծք է,
Կայծակի պէս բռնաւորին կը զարկէ»։

«Աւա՜ղ, ինձնից՝ փայլուն սըրից կըռեցին
Կոպիտ շըղթայ և մի գործիք բռնութեան,
Ազատութեան պաշտպանին իմ աջակցին,
Ինքըս ահա՛ շըղթայում եմ յաւիտեան․
Այս ժանգը, որ շուրջ պատում է ինձ հիմա,
Իմ ամօթի և բարկութեան գոյնն է նա։

Շարժի՛ր, շարժի՛ր, շառաչիւնըս անէծք է,
Կայծակի պէս բռնաւորին կը զարկէ»։

Թարգ․ Գ․ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

Սրտիս ականջին ըսաւ Երկինքը ծածկաբար․ —
«Նախասահմանուած տնօրէնութիւնը ինէ՛ գիտցիր,
Եթէ իմ հոլովումիս մէջ ես մատ ունենայի՝
Ես ինքս կը փրկուէի գլխի պտոյտէ»։

ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄ

No. 52

ՌԱԶՄԵՐԳ



ՌԱԶՄԵՐԳ

Շարժուն, աշխոյժ



ՌԱԶՄԵՐԳ

Շարունակութիւն



ՌԱԶՄԵՐԳ

Շարունակութիւն



ՌԱԶՄԵՐԳ


sff
sempre ff
Օն, օն յա–ռաջ, օն ի մարտ օն ի հրա–պայր․ մեր ար
իւ – նով մեր ար – իւ – նով ճամ-բայ բա-նանք հայ եղ-բայր ջ․ն եղ-բայր
p
Ա – րե – ւել – քից լոյս է ծագ ում եւ Հա–յաս–տան
Ա – րե–ւել – քից եւ Հա–յաս – տան
ում-գին ցընց-ւում Օն օն յառաջ օն ի մարտ օն ի հրա–պայր մեր ար–
իւ –նով մեր ար–իւ – նով ճամ–բայ բա-նանք հայ եղ –բայր ջան եղ-բայր ։

No. 53

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՉ

Տո՛ւր ձեռքդ, եղբա՛յր, ժամ է շարժուելու,
Ժամ է ժամանակ՝ ոտքի կանգնելու.
Հասել է արդէն հայերիս օրհաս, —
Լինել–չլինել մեզնից է կախուած:

Տո՛ւր ձեռքդ, եղբայր, հերի՛ք համբերենք,
Հերի՛ք ուրիշից օգնութիւն հայցենք.
Մե՛նք ենք տանջւողը, մե՛նք չարչարւողը,
Մ՛ենք պիտի լինենք մեզի փրկողը:

Մե՛րն է հայրենիք դարերով ճնշուած,
Դարեր շա՛տ ու շատ արիւնով ներկուած.
Պահանջէ՛ մեզնից արիւնը մաքրել
Թշնամու արեամբ՝ մեր լեռներ, ձորեր:

Շտապի՛ր, եղբայր, ահա ա՛ռ քեզ զէնք,
Սրանով միայն մենք փրկուելու ենք.
Այս է գործածում մեզ դէմ թշնամին,
Ա՛յս պիտի լինի գործիք մեր ձեռքին:

Շտապի՛ր, եղբայր, ի դաշտ–պատերազմ,
Սպասում է մեզ թշնամին ի կազմ.
Աշխարհի սկզբից ամբողջ մարդկութիւն
Այսպէս է գտել իր ազատութիւն:

Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ

No. 54

ՀԱՅ ԶԻՆԻՈՐ

Մասսի ճակատին ամպրոպ պատռեցաւ,
Հայերուս սրտէն վախ փարատեցաւ.
Նըժոյգ է տակըս, ձեռքս այնալու,
Սուլթա՛ն, ունի՞ս ուժ՝ ինձ դիմանալու:
Ըստրուկ եմ եկել, կը դառնամ ազատ՝
Յետ խըլած քեզմէն հողն իմ հարազատ:

Անսուտ երդումով ուխտել եմ ազգիս —
Զոհել մարմինըս, զոհել և՛ հոգիս.
Արհամարհել սով և անդորրութիւն՝
Տալ Հայաստանին սուրբ ազատութիւն:
Ըստրուկ եմ եկել, կը դառնամ ազատ,
Յետ խըլած քեզմէն հողն իմ հարազատ:

Թըշուա՛ռ, քու յոյսն է չէրքէզն ու քիւրդը,
Հա՛, մէկ քամիին տամ նոցա բուրդը.
Ձեռքիս ունիմ ես Ղևոնդի լախտը,
Որ ջարդեմ–փշրեմ քու փտած թախտը:
Սուլթա՛ն, սիրտ ունի՞ս, իջի՛ր՝ մարտի դաշտ,
Տե՛ս, քու առջեն է թշնամիդ անհաշտ:

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ

No. 55

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ



2. Ե՛կ, աբեղաձագ, թո՛ղ արտ ու արօտ,
Օրօրէ՛ որդիս, քնի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ:

3. Թո՛ղ դու, տատրակիկ, քու ձագն ու բունը,
Վուվույով որդիս բե՛ր անուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակիկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ ուխտաւոր դառնալ:

4. Կաչաղակ ճարպիկ, գող, արծաթասէր,
Շահի զրուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սովդաքար դառնալ:

5. Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասիրտ բազէ,
Քո՛ւ երգը գուցէ իմ որդին կ'ուզէ...
Բազէն որ եկաւ՝ որդիս լռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ:

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ.



ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Մկրտիչ Պէշիկթաշլեան Թրքահայ գրական այն կարեւոր դէմքերէն մէկը կը ներկայանայ, որոնք իրենց միջավայրին մէջ որոշ դիրք ստեղծելով՝ նկատելի ազդեցութիւն մը ձեռք կը բերեն, ուղղութիւն կուտան իրենց յաջորդներուն՝ իբրև ուսուցիչ և ռահվիրայ իրենց ընտրած առաքելութեան:

Տաճկահայ կեանքին մէջ սկսած մեծ յեղաշրջումի շրջանին մէջ ապրեցաւ Պէշիկթաշլեան և եղաւ անոր գլխաւոր գործիչներէն մէկը Յ. Սվաճեանի, Կ. Փանոսեանի, Մամուրեանի, Սէրվիչէնի և Գրիգոր Օտեանի հետ, որոնք պատրաստեցին այսօրուայ ազատասէր ու պայքարող հայ սերունդը: Պէշիկթաշլեանի, ինչպէս նաև նոյն շրջանին մէջ գործող հայ մտաւորականներու բարձր դերը ա՛յն ատեն աւելի լաւ պիտի կրնանք ըմբռնել ու գնահատել, երբ նկատի ունենանք որ հայ ժողովուրդը ստրկութեան և տգիտութեան կրկնակ լուծերուն տակ պահելու նպաստող ամիրաներն ու եէնիչէրիները կային:

Ինչ դեր որ նոյն թուականին ռուսահայ կեանքին մէջ կատարեցին Նալբանդեանց և Գամառ-Քաթիպա իրենց ընկերներով, Պէշիկթաշլեանը նոյնը կատարեց տաճկահայ կեանքին մէջ՝ ընկերակցութեամբ այն գործիչներուն, որ վերը յիշեցինք:

Պէշիկթաշլեան՝ իբրև ուսուցիչ և գեղարուեստի ճաշակը տարածող ալ՝ մեծ տեղ մը կը գրաւէ: Ստացած ըլլալով եւրոպական կրթութիւն, գիտէր գեղեցիկ կերպով արտայայտել իր գաղափարները և ազդել հոգիներու վրայ: Բնութիւնը զլացած էր անոր հարուստ ֆիզիքական մը — ժառանգաբար թոքախտաւոր ըլլալով՝ տժգոյն էր ու նիհար և իր կրակոտ սև աչքերը շիլ էին: Իր հոգիին ու սրտին գեղեցկութիւնը կը տիրապետէր, սակայն, մարմինին:

Իբրև գեղեցկին սիրահար, ան երգեց նաև ամէնավսեմ գեղեցկութիւնը — ազատութեան կռիւը, ժամանակակից ըլլալով Զէյթունի 1862-ի հերոսական կռիւներուն, որոնց ներշնչումին կը պարտինք «Մահ Քաջորդւոյն», «Հայ Քաջուհին», «Քաջորդին» և «Թաղումն Քաջորդւոյն» քերթուածները:

Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանի արժանաւոր սաներէն մէկը ըլլալով՝ Պէշիկթաշլեան չափազանց ազդուած է Բագրատունիէն, Ալիշանէն և Հիւրմիւզէն, որոնց կը ջանար հետևիլ իր երկերուն մէջ, մոլեռանդութեամբ որդեգրելով անոնց ընդունած ձևերն ու ոգին, խիստ սահմանափակ դասականութեան սահմաններուն մէջ: Գրաբար գրած իր բանաստեղծութիւնները, ձօներն ու քանի մը թարգմանութիւնները անմիջական արդիւնք են այդ հետևողութեան, և թէև անոնք արուեստի նրբութեան ու բարձրաթռիչ — գրեթէ փաթէթիք — ոճի հետ՝ ունին նաև անկեղծ ոգևորութեան ու զգացումի քնքշութիւն, բայց և այնպէս անոնք չունեցան ա՛յն ընդունելութիւնը, ինչ որ իր աշխարհիկ լեզուով գրածները: Հասարակութեան մանաւորապէս սիրելի եղաւ Պէշիկթաշլեան իր հայրենասիրական երկերով՝ մեղմ ու նկարագրական, ինչպէս նաև իր պատմական թատերգութիւններով, որոնք կը ներկայացուին մինչև այսօր:

Ծնած էր 1828-ին, Պոլսի Օրթաքէօյ թաղին մէջ և զաւակն էր հայ-կաթոլիկ հասարակութեան պատկանող աղքատ և անուս հօր մը:

Մեռաւ 1868 նոյեմբեր 29ին, 40 տարեկան հասակին մէջ և մեծաշուք հանդիսով թաղուեցաւ. ան զոհ գնաց թոքախտին, որ աւելի ծանրացաւ չվարձատրուած սէրով մը...:

No. 56

ՄԱՀ ՀԱՅՈՐԴԻՈՅՆ



2․ Ինչպէս երբեմն օրրանիս մէջ
Կակուղ ձեռքով փայփայելով,
Մանկիկ մարմինս հանգիստ տայիր՝
Իբրև հրեշտակ նուագելով․
Զիս հանգչեցուր ի հող, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

3․ «Նորեկ որդւոյս կենացն արև
Ձեզի համար փայլի, հայե՛ր»․
Այսպէս յայնժամ դու կ՚երգէիր,
Օրօրոցիս նըստեալ քովեր:
Անոնց համար չիջաւ, և դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

4․ Կարմիր կայլակք ցայտեն վէրքէս,
Սակայն, մա՛յր իմ, նայէ չորսդին,
Զարիւնռուշտ քիւրտերըն տե՛ս,
Հազարներով փռուած գետին․
Կերաւ զանոնք սուրն մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

5. Մըռընչեցին ինչպէս վիշապ
Ու մեր վըրայ յարձակեցան.
Ո՛վ հայրենիք, ի հուր ի բոց
Քո համար մեր սիրտք վառեցան:
Կարմիր ներկան ձորք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

6. Ու ծափ զարկին մեր հարց ոսկերք,
Զի չէ՛ մեռած հայոց կըրակ,
Ու ցնծացին այնչափ զոհեր,
Զի լուծաւ վրէժ յարեան վըտակ.
Խնդաց Մասիս, մա՛յր իմ, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

7. Վերջին համբոյր տամ քեզ, մա՛յրիկ,
Հատուցանես զայն սիրուհւոյս,
Վերջին անգամ գրկեմ մեր հող,
Ուր արդ կ'իջնամ ի ծոցն անլոյս:
Խաչ մը ընկէ վըրաս, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

No. 57

ԴԱՄԲԱՆԻ ՎՐԱՅ

Հազա՛ր երանի քեզ, մանուկ անբիծ,
Որ շուտ հեռացար դու այս աշխարհից,
Ուր վաղուց ի վեր ունի բնակութիւն
Անմեղութեան հետ մոլի չարութիւն...
Բայց այն ո՞վ գիտէ, քեզ ի՞նչ էր սպասում
Փըշոտ, տատասկոտ այս մեր աշխարհում.—
Միթէ յաւիտեան պիտի մընայիր
Հանգիստ գըրկի մէջ քո մօր սիրալիր,
Կամ թէ յաւիտեան քեզ պիտի ժըպտա՞ր
Գարնան վարդի պէս այս օտար աշխարհ....

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Դուն նըստեր ես ճամբաներուն անկիւնը·
Մազերդ ի վար իջեր կախուեր է ձիւնը·
Մարմնոյդ վըրայ կը փտտանան մութ խոցեր,
Եւ աչուըներդ արիւնի լիճ են դարձեր:

Ո՞ր չար պարիկը հիւսեց թելը բաղդիդ...
Ո՞վ՝ տեսնելով քեզ տապալած ու վըտիտ՝
Պիտի յիշէ որ դուն երբեմըն հըզօր
Աղջիկն էիր սէգ աչքերով լուսաւոր:

Կը ծըփային մազերդ ինչպէս դրօշ մը լայն
Ազատ լերան մէջ՝ ուր հոգիդ մեծաձայն
Կը մըռընչէր խոյանալով սարէ սար·
Ու ծոցդ՝ հըպարտ՝ մեղր ու կաթով կ'ուռենար:

Քեզ ցանկացին յեղուզակները բոլոր,
Պաշարեցին քեզ ոսոխներ ահաւոր·
Երկա՜ն ատեն ոգորեցար կռուեցար,
Մինչեւ՝ ա՛լ խոնջ՝ ինկար գետին ուժասպառ:

Եւ քու հոգիդ արգաւանդ էր ու բարի՝
Կործանարար ուժերուն մէջ վիթխարի·
Դուն կեանքի ծիլ մ'աւելցուցիր աշխարհին,
Մատներդ հողէն գեղեցկութիւն հանեցին:

Դուն Անահիտն էիր խաղաղ աչքերով,
Ոսկիամայրն էիր պայծառ լանջքերով·
Ծոցէդ բուրիք, նայուածքէդ լոյս կը տեղար,
Շըրթներըդ դաշն էին և ձե՛ռքըդ ճարտար:

Եկան խուժերն ու ձեռքիդ կապ անցուցին,
Բըզըքտեցին, աղարտեցին ծոցդ անգին·
Եւ բիւրախոց դարձար դուն Մա՛յրը կարմիր,
Գողգոթային ճամբուն վըրայ ծընրադիր:

Ի՜նչ գեղեցիկ, ի՜նչ քաջ եղար ցաւին մէջ...
Աղէտքին տակ հոգիդ մնացեր էր անշէջ·
Կարծըր լուծեր կոտրըտեցիր, ու մահէն
Քանի՛ անգամ ոտքի ելար դուն նորէն:

Աչքըդ Լոյսին կը սեւեռէր անդադար·
Միտքըդ խիզախ, Նոր Աշխարհին կը դառնար·
Ու դարերով յամառեցար, առանձին,
Թումբ ձեւանալ ասիական հեղեղին:

Մեծցաւ հեղեղն ու պղտորեց քեզ՝ մոլեգին,
Ու մարեց բո՛ցըդ թափօն իր ալիքին։
Զըւառական, խաւարին մէջ՝ հողամած՝
Միշտ կենդանի, դուն սպասեցիր գալարուած։

Գիշեր առեն, մերթ հին չիրմաց խաչերը
Կ'երերային, և Մասիսի քաջերը
Մութին մէջէն կը շողային բարկաճայթ
Աչուըներէն արձկելով շառ ճառագայթ։

Օդին մէջ խուլ կը թընդային թըմբուկներ.
Դուն, դող ելած, կ'առնէիր պահ մ'աչքըդ վեր,
Ու վըրդոված կը նայէիր լեռներուն
Ոչի՛նչ, բայց մո՛ւթը ծանր ու պա՛ղ լըռութիւն...

Օր մ'ալ ցաւի ցընցման մը մէջ անսահման՝
Ցըցուեցար՝ մեծ ճիչով մ'անձկոտ ընդվըզման.
Աշխարհ ձայնիդ խուլ մընաց. ու Բիրտ Ուժին
Կոյր դարշապա՛րը ճըզմեց ճիգըդ քուկին։

Ժանտ հուրերու մէջ ճիւղներ ցատկեցին,
Սիրտդ այրեցին և աչուըներդ փորեցին.
Տունէն վանուած, հովերուն տակ մնացիր,
Մերկ տարածուած, չորդիդ արիւն ու մոխիր...

Հիմա նստեր ես, ցաւադին ուրուական,
Աւերներուն պատկերին մէջ տըխրական.
Կը խածկըրտէ վէրքերըդ հովը սառուտ.
Արիւն կ'իյնայ խեղճ ծիծերէդ կաս–կապուտ։

Դանդաղօրէն կը շարժես գլուխդ ու կուլաս,
Ու ցած անուշ ձայնով օրօր կը կարդաս
Զաւակըներուդ որ արիւնին մէջ ինկան
Եւ անոնց՝ որ չորս հովերուն ցըրուեցան։

Օրօր կանանչ արտերուն, լուսաւէտ
Աչուըներուն որ մարեցան առ յաւէտ.
Եւ անոնց որ դեռ կ'ապրին ու կը տանջուին
Զընտաններուն մէջ ու մռայլ աքսորին։

Հերի՛ք, հերի՛ք... այդ օրօրդ ո՛ղբէ մահու.
Հերի՛ք, մենք նոր օրօր ունինք երգելու.
Պիտի երգենք օրօրն յոյսին ու վրէժին,
Ու մեռելներն պիտի հողուն տակ սարսին...

Հերի՛ք, հերի՛ք... վեր առ գըլուխդ ու մի՛ լար.
Ցաւը սուրբ է, ցաւը՝ մեծ ու փըրկարար.
Ոչինչ կայ վեհ քան խաչին տակ զոհն արի.
Գիշերին մէջ կը հիւսի ա՛յգը բարի։

Շառ դահիճներն ու քանդողնե՛րը մըթին
Փոշիի պէս պիտի անցնին ու ցընդին.
Ու մոխիրին մէջէն ելլես պիտի դուն,
Տառապանքէն նորոգուած ու շողշողուն։

Մի՛ լար, մի՛ թող մազերդ հովուն տարտղնեն,
Մի՛ լար, մի՛ խեղճ գըլուխըդ վար կործաներ.
Ծանչցիր դուն քեզ, ժողվէ՛ ու՛ժերդ ցիրցան.
Հերի՛ք ուժերդ օտար տան սիւն կանգնեցան:

Հանգի՛ստ արժգոյն եղբայրներուն որ ինկան.
Ելի՛ր, օրհնէ՛ մեզ, տարածէ մեր վըրան
Թեւերդ անհուն: Թող մեր արիւնն ու հոգին
Քու արեւուդ մատաղ ըլլան ու ցամքին:

Մութին մէջէն պիտի ցըցուիս յաղթական.
Աչքերդ սառեր պիտի դառնան ու ցոլան.
Վէրքերըդ վարդ պիտի ըլլան հոտաւէտ,
Ու լոյս պիտի թափի ճերմակ մազերէդ:

Պիտի կանգնիս ճամբաներուն բերանը,
Պիտի քանդես Բռնութեան սեւ խորանը.
Ոտքի՛ ելիր. ցաւերդ երկունքն են հըսկայ.
Ո՛վ Մայր, աշխարհ մը ծոցիդ մէջ կը խըլըրտայ:

Ա. ԶՕՊԱՆԵԱՆ

No. 59

ՏԵՐՆ ՎԱՆԱՅ

Մո՛ւթ է գիշերս, ինչպէս սիրտս ալ.
Եւ թուխ ալիք մըշտափըրփուր
Վանայ ծովուն ծխածաւալ
Հառաչանօք լի են տըխուր:
Գոց են ամպով աստղունք... և յոյս,
Դեռ շատ հեռու է արշալոյս:

Ո՛վ Նազուհի դուստր իմ Մեհիկ,
Շուշա՛ն և վարդ դաշտաց մերոց,
Եկո՛ւ, և հօրդ ծերուկ ու հէք
Առաջնորդէ՛ ի Ջուրն Հայոց:
Գոց են ամպով և այլն:

Քու սիրատարփ կըտրիճ Արտակ
Տըխուր երգեց, ո՛հ, այս գիշեր.
Սէրն էր երգոց իր նըպատակ,
Բայց Թորգոմայ պաղէտան յիշէր.
Գոց են ամպունք և այլն:

«Ո՛հ, ինչուան ե՞րբ հաճոյք և սէր,
Առանց սուգի պիտի չըլլան».
Այսպէս ի քնարն իւր նա երգէր,
Ու արցունքով աչք մեր լըցան.
Գոց են ամպով և այլն:

Հոս են շիրիմք մեր նախահարց,
Նոճ մի ունի ամէն դամբան.
Երբ փոթորիկ գոռայ յանկարծ,
Հեծեն ննջող ոգւոց փոխան.
Գոց են ամպով և այլն:

Հին են ցաւերս, հեծեմ և ես.
Ժամ է իջնամ ի գերեզման,
Երթամ վեհից Հայոցն ի տես,
Վանայ կոհակք թող զիս ողբան:
Եւ դու Մեհեկ, կուլա՞ս անյոյս.
Ո՛հ, ո՛չ, դընա՛... գայ արշալոյս:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

No. 60

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒԳԸ

1. Իմ սիրելի զաւակունքըս
Կը թափառին օտար աշխարհ.
Ես ո՞ւր դիմեմ, ո՞ւր փնտռեմ,
Կը ծառայեն այլոց խոնարհ:

Եկա՛յք, որդեակք իմ
Ձեր մօրն այցելութեան:

2. Դարեր անցան, լուր մը չառի,
Իմ քաջերըս մեռան, կորան,
Կուլամ, արիւնըս կը սառի...
Մէկը չունիմ՝ տայ ինձ դարման,

Եկա՛յք, և այլն:

3. Արիւնս ցամքած, սիրտըս մաշած,
Դէմքս է տխուր միշտ յաւիտեան
Եւ կարօտով իմ որդեկաց
Պիտի իջնեմ սև գերեզման:

Եկա՛յք, և այլն:

4. Եւ դու, հովիւ թափառական,
Կ'երգես տխուր ի մէջ հովտաց,
Ե՛կ, արտասուենք թանկ կորստեան
Տխուր մահուան մեր որդեկաց:

Եկա՛յք, և այլն:

5. Իսկ դու կռունկ իմ հայրենեաց,
Գնա՛ հեռու, աչքէս ի բաց,
Ցեղին ողջոյն տուր զաւակացս,
Զի կեանքիս մէջ յոյս է մեռած:
Եկա՛յք, որդեակք իմ,
Ձեր մօրն այցելութեան:

No. 61

ՎԱՆԵՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Պըզտի՛կ տըղայ, չեմ օրօրել օրօրանքըդ որ քուն՝ լաս,
Հայ աղբարքըդ ոտքի ելան, մինակ դո՞ւ ես պիտ՝ մնաս.
Զարթէ՛, հոգիս, անուշ քունէդ, թող աչքերըդ լոյս տեսնեն,
Արեւմուտքէն արև ծագեց, բախտը բանեց հայ ազգին:

Զար սուլթանին ոսկի գահը ջարդըւեցաւ, վար ինկաւ,
Թախտի տակէն հազար ազգաց ազատութիւն ծագեցաւ.
Ով որ չուառ ոտքի ելլէ, ազատութիւն կը գտնէ,
Սիրուն որդի՞ս միթէ մինակ չար լուծի տակ պիտ՝ մըռնէ:

Մենք սուլթանէն շատ խնդրեցինք կողկողագին ու լացինք,
Աղի-աղի արտասուքով ձեռքն ու ոտը լըւացինք.
Բայց նա չանսաց պաղատանքին ողորմելի հայերուն,
Այժմ, նայենք, նա կը լըսէ՞ շառաչիւնը սուրերուն:

Տո՛ւր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուլները, արձակեմ,
Ու այդ թուլիկ ափիդ մէջը մի պողպատէ սուր դընեմ.
Ըստրուկ գընա՛ արեան դաշտը, վերադարձիր ազատուած.
Արդեօք մի օր պիտի լըսե՞ս մեր խընդիրքը, ո՛վ Աստուած:

[1877 թ.] ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ.

No. 62

ՀԱՅԻ ՄԱՂԹԱՆՔ



ՀԱՅԻ ՄԱՂԹԱՆՔ
Շարունակութիւն



2· Ո՛վ տէր մեր, տէր փութա՛,
Զազգն մեր համայն փրկեա՛
Ի թշնամեաց :

Կափո՛ զաչս նոցուն,
Հա՛տ զարմատոյ զբուն,
Եւ զազգ մեր պարտասուն`
Արա՛ հզօր :

3· Աչքովդ համատարած,
Զազգն մեր արտահալած,
Փոյթ գումարեա՛ :

Ցաշխարհ Արարատեան,
Ի վայր մեր ծննդեան,
Որ այժմ է սեփական
Օտար ազգաց :

4· Ի քո իջեալ տեղի,
Զաթոռն հայրապետի`
Մեր հաստատեա՛ :

Զերկարութիւն կենաց
Հօրն մեր Աստուածազգեաց,
Շնորհեա՛ պետին մեր հարց`
Որ զմեզ հովուէ :

Մ. Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆ

No. 63

ԼՈՒՌ ԳԻՇԵՐԻՆ...

Լուռ գիշերին մըտքիս դիմաց
Շա՜տ ստուերներ ժողովւան. —
Ընկերներս` մեռա՜ծ, կորա՜ծ,
Հոգուս խորքով անց կացան :

Նրանց աչքերն` բո՜ց ու վըրէ՜ժ
Սրտիս խորը նայեցին·
Սիրտըս բաց էր խոր վէրքի պէս, —
Նրանք այնտեղ սուզւեցին :

Անհաւասար, գոռ կռուի մէջ
Ընկաք, իմ վե՜հ ընկերներ·
Ա՜խ, ձեր շիրիմն իմ սրտումն է,
Իմ վեհ, իմ սո՜ւրբ ընկերներ...

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

ԹԱՂՈՒՄՆ ՔԱՋՈՐԴՒՈՅՆ

Նմանողութիւն Ուօլֆի

Ո՛չ փող զարկինք, ո՛չ արձագանգ լեռնայոյզ,
Սարէ ի սար չարաշըշուկ տարին լուր·
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտայոյզ,
Երբ պատանւոյն բացինք մըռայլ փոսին դուռ:

Գիշերական մունջ ըստուերներ շուրջ կային,
Երբ հրացանի կոթով ըզհող փորեցինք·
Լուսին միայն դողդոջ շողայր մեր գլխին·
Սուգ էր պատեր ըզդաշտ, բլուր և երկինք:

Պէտք չէր դագաղ, և ոչ ճերմակ պատանքներ,
Որով զուգէր ազատորդի Զէյթունցին·
Նա յետ մարտին կարծես յոգնած կը հանգչէր,
Ու վերարկուն կարմիր բաւէր իւր անձին:

Անձայն ու կարճ «Ննջեցելոց» մը գրուցեց
Մեր քաջ Տէրտէրն, գինուոր Հայոց ւ'Աստուծոյ,
Գովեց ըզմահն և զքաջութիւնն իւր օրհնեց,
Թոյլ չի տըւաւ հառաչ մ'ու ճիչ հանելոյ:

Բայց երբ գըլուխն ի բարձ դըրինք հողաչէն,
Տեսանք ըզգեղ ճակտին ու վէրքըն պայծառ,
«Ո՛վ պատանեակ, ըսինք ամէնքս մէկ բերնէն,
Վասն հայրենեաց մեռար, դու չա՛տ ապրեցար:

«Գընա՛, գրուցէ՛ հայկազարմից մեծ ոգւոց,
Որ կան այստեղ ազատ ու քաջ դեռ հայեր,
Որոնք ի բիւր պատերազմաց թէպէտ խոց՝
Մէջ ամպրոպաց ի ժայռ կանգուն են կեցեր»:

Մէյ մ'ալ քամի յանկարծ փըչեց ցըրտաշունչ,
Լուսնին շողերն եկաւ գոցեց մըթին ամպ,
Ու մեր սարերն, գերթ ուրուականք անմռունչ
Սև գըլուխնին անկած դիտեն ապշութեամբ:

Ցայնժամ ցուրտ ցուրտ հող լեցուցինք իր վըրայ,
Խաչ մը դըրինք, ինչպէս իւր մօր պատուէր ետ·
Ո՛չ այլ շըքեղ արձանագիր, ո՛չ տապան·
Զինքըն մինա՛կ թողուցինք իւր փառքին հետ:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՎԱՂԱՄԵՌԻԿ

Աշնան չորցած թըփերու հետ,
Հովիկ զայն ալ գըլեց տարաւ·
Վաղաթորշամ ծաղիկն անեղծ
Դեռ չը բուսած՝ խափառ կորաւ:

Սև գերեզման մը փորեցին,
Լացող չեղաւ անոր վրայ·
Սիրոյ համար ծընած հոգին
Անսիրտ իջաւ մութ գերեզման:

No. 65

ՎԱՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ



2. Նա նայում էր լռիկ մընջիկ
Իբրև մի կոյս՝ դէպի Վան,
Նրա աչքին երևում էր
Մի ցաւալի տեսարան—

3. Նա տեսնում էր անթիւ քիւրդեր
Բռնած սուր, թուր, հրացան՝
Կոտորում են, կողոպտում են,
Աւերում են անտէր Վան:

4. Եւ կարծես թէ վեր երկընքից
Խօսում էր այդ լուռ վըկան. —
«Վըրայ հասի՛ր, հայ ազգասէր,
Ձեռքից կ՚երթայ Հայաստան:»

Ս. ՍԱՓԱՐԵԱՆՑ

No. 66

ԳԱՐՈՒՆ

Ո՜հ, ի՜նչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փչես՝ հովի՛կ,
Ծաղկանց վըրայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ։
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գնա՛, անցիր սըրտէս ի բաց։

Ո՜հ, ի՜նչ աղու և սըրտագին
Ծառոց մէջէն երգես, թռչնիկ,
Սիրոյ ժամերըն ի յանտառին,
Ըզմայլեցան ի քո ձայնիկ։
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա՛, թռիր սըրտէս ի բաց։

Ո՜հ, ի՜նչ մըմունջ հանես, վտակ,
Ականակիտ և հանդարտիկ,
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային գիրենք վարդն ու աղջիկ։
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գնա՛, հոսէ սըրտէս ի բաց։

Թէև թռչնիկն և հովն հայոց
Աւերակաց թռչին վերայ,
Թէպէտ պղտոր վըտակն հայոց
Նոճիներու մէջ կը սողայ.
Նոքա հառա՛չք են հայրենեաց.
Նոքա չերթա՛ն սըրտէս ի բաց։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

No. 67

ԻՆՁ ՀԱՄԱՐ ՉԷ...

Ինծ համար չէ՛ գարնան գալը,
Ինծ համար չէ՛ ծառի ծաղկիլը,
Ուրախութեան սրտի զըրգիռը,
Ո՛չ մի բերկրանք չեն ինծ համար։

Ինծ համար չէ՛ կենաց բախտը,
Ինծ համար չէ՛ երջանկութիւնը,
Եւ մրայօն կուսին աչերը,
Նոցա արցունք չեն ինծ համար։

Ինծ համար չէ փայլուն լուսնի
Անտառ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինծ համար։

Ինծ համար չէ բարեկամաց
Մէկտեղ սիրով տօն կատարելը.
Ջատկի օրւայ ուրախ ասելը
«Քրիստոս յարեաւ» չէ՛ ինծ համար։

Ինծ համար չէ ծնողաց լացը,
Ինծ համար չէ աղջկայ ողխրիլը.
Գերեզմանիս վրայ արտասուելը
Բարեկամացս՝ չէ ինծ համար։

Բայց ինծ համար կուգայ ժամը,
Կ'երթամ թշնամեաց պատերազմը,
Եւ մահաբեր սպանիչ գնդակը՝
Անդ պատրաստուած է ինծ համար։

(Թարգմ.) Բ. Տ. Մ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

№ 68

ԹՈՂ ԵՐԳԷ ԲԼԲՈՒԼ



2. Մշու դաշտեր ծաղկունքով բացւած,
Հայու սերունդը կը պահէ Աստւած,
Ինչքան որ կ'ուզեն թշնամիք թող գան,
Սասնոյ լեռներէն ի՞նչ պիտի տանան:

3. Ինչո՞ւ չը ծաղկէ ծաղիկն անխնայ,
Այդ թշնամուցը ո՛վ կը վախենայ·
Թող հայ աղջիկը երգէ վառվռուն,
Սուր զէնքը ձեռին՝ ջարդ տայ քիւրտերուն...

No. 69

ՁԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ

Աստուած վըկայ որ՝ մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք·
Օրէ օր թուրքը կ'ելլէ մեր տեղէն,
Տեղըս մարդ չի մնայ՝ պատ ծըծի աղէն:

«Հայը զէնք չունի», կ'ասէ օսմանլին,
Անտէր թողեր է նա մեր հայրենին...
—Աստուած վըկայ որ՝ մենք կը յաղթէինք,
Թէ մէ անձնուրաց մարդ ունենայինք:

Լոկ այն, որ կուտաք խումբ և թըղթի,
Հա՛յք, ձեզ կը հասցնէր ազգային բախտի·
Աստուած վըկայ որ՝ մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Ո՞ր կաթողիկոս գըրեց մէկ կոնդակ,
Ո՞ր եպիսկոպոս ցըրուեց հրաւիրակ,
Ո՞ր գիտնականը ձայնը բարձրացուց,
Ո՞ր զօրականը թուր ու զէնք վերցուց:

Ո՛վ հայ ազգասէր, ո՞ւր ես, ո՞ր ծակն ես,
Ազգային զգացմո՛ւնք, միթէ դեռ խա՞կ ես·
—Աստուած վըկայ՝ որ մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Ա՜խ, անդարձ կ'անցնի լաւ ժամանակը
Անփոփոխ կը մնայ մեր դառն վիճակը,
Սլաւօնի ձեռքէն թափթըփած չղթան
Քեզ պինդ կը կապէ, խըղճուկ Հայաստան...

Բայց լա՛ւ յիշեցէք, սառնասիրտ հայեր,
Որ փրկութիւնը ձեզի շատ մօտ էր...
Եւ ես միշտ կ'ասեմ. —«Մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք»:

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ.

No. 70

ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ



2․ Տո՛ւր ինձ քո ձեռք, եղբա՛յր իմ,
Որ մըրըրկաւ էինք զատուած․ [մեք
Բաղդին ամէն ոխ չարանենք
Ի մի համբոյր ցրւին ի բաց․
Ընդ աստեղօք ի՛նչ կայ սիրուն՝
Քան զանձկալի Եղբայր անուն:

3․ Երբ ալեոր Մայրն Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
Սրտին խորունկ վէրքըն դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցօղով․
Ընդ աստեղօք ի՛նչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն:

4․ Մէկտեղ լացինք մենք ի հընում․․
Եկէ՛ք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսր և ըղխնդում
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան․
Ընդ աստեղօք ի՛նչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն։

5․ Մէկտեղ յոգնինք ,մէկտեղ ցանենք
Մէկտեղ թափին մեր քրտինքներ ,
Ըղձունձ բարեաց յերկինս հանենք ,
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր․
Ընդ աստեղօք ի՛նչ կայ սիրուն՝
Քան զանձկալի Եղբայր անուն։

Մ․ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

No․ 71

ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է

Զիւներն հատ–հատ երկընքէն վար կը թափին ,
Բայց երբ կ՚իջնեն , մեղմով կ՚ասեն ընկերին․
Դո՛ւն ալ , ես ալ , թոյլ էակներ ջրի պէս ,
Կը հալինք՝ թէ չը միանանք պընդապէս․
Մենք ամէնքս մէն մինակ ի՞նչ կրնանք , ոչինչ ենք ,
Բայց երբ մեկտեղ ենք մենք , լեռն ու դաշտ կը ծածկենք։

Անձրև կուգայ , ջըրի փոքրիկ կաթիլներ ,
Մէկտեղ կ՚իջնեն և կը հանեն մեծ ձայներ․
Կ՚ասեն՝ ի՞նչ կայ աւելի թոյլ քան թէ ջուր ,
Բայց միութեանս չի դիմանար նոյնիսկ հուր։
Մենք ամէնքս մէն մինակ ի՞նչ կրնանք , ոչինչ ենք ,
Բայց երբ մէկտեղ ենք մենք , մեծ գետեր կը կազմենք։

Քամին փչեց , թէև ամառ․ տերևներ
Դողդողալով կը փըսփըսան իրենց մէջ—․
Այս քամին մեզ զատ–զատ ամէնքս կը թափէր ,
Բայց շատին վրայ կ՚անէ միայն ել և էջ։
Մենք ամէնքս մէն մինակ ի՞նչ կրնանք , ոչինչ ենք ,
Բայց մէկտեղ՝ մենք մարդերն արևէն կը ծածկենք։

Շատ տկար են ծիծեռնակներ , բայց խըմբով
Կը ճամբորդեն գարնան ատեն ապահով․
Երբ գիշակեր թըռչուն տեսնեն , խըմբովին
Մեծ աղմուկով կը փախցընեն թըշնամին․
Այդ աղմուկ մեզ կ՚ասէ․ մենք մինակ տկար ենք ,
Բայց երբ մէկտեղ ենք մենք , արծիւն ալ կը վանենք։

Բնականէն տըւած է այս մեծ օրէնք ,
Որ տկարներ , թէև չունին ուժ և զէնք ,
Միանալով կը զօրանան , կը կըռուին
Եւ միութեան չի դիմանար թըշնամին։
Կը կըրկնեն ձիւն , անձրև , տերև և թռչուն ,
«Միացէ՛ք , միութեան մէջն է մեր զօրութիւն»։

Մ․ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

No. 72

ԿՈՐԿՈՏԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



2. Ազատութեան վառ սէրը
Ինձ հանել է լեռները,
Թըշնամու դէմ կըռւելու,
Հայրենիքս փըրկելու ։

3. Առաւօտ արշալոյսին
Զօրս կողմերըս պատեցին.—
Զօրս ցերեկ և չօրս գիշեր
Անհամար թըշնամիներ ։

4. Լեռ՚ն, սուրըդ քաշեցիր,
Վըրէժ առնել ուզեցիր.
Երբոր գընդակը դիպաւ՝
«Ա՜խ, ընկերներ», գոչեցիր ։

5. Մայր անունս է Արամեան,
Մականունս է Կորկոտեան.
Երբոր բանաէն ազատեմ,
Նորէն խումբեր կը կազմեմ ։

No. 73

ԻՆՉ ՄԻ՛ ԽՆԴՐԻ

Ինձ մի խնդրի, ես չեմ երգի—
Տըխրութիւնս է ահագին.
Աղէկըտուր նորա ձայնից
Կը խորտակուի քո հոգին ։

Ո՛չ, քեզ համար այդպիսի երգ
Երգելու չեմ ես երբեք ։

Ես երգեցի սարի վերայ,
Ուր չորացան խոտ ու վարդ.
Անապատ է այնտեղ հիմա,
Սև, ամայի անապատ.

Հառաչանքից այրւած սըրտում
Էլ ծաղիկ չի դալարւում ։

Բուր ու զեփիւռ ես կուզէի,
Եւ արշալոյս ոսկեվառ,
Որ մի պայծառ երգ հիւսէի
Ու երգէի քեզ համար ։

Բայց իմ սիրտը բռնած են դեռ
Հուր, հառաչանք, սև գիշեր ։

No 74

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԳԻՆ

Հայաստանի Ոգին
Ո՛վ պատանիք, աւերց ներքև
Ալ մարեցաւ հայոց արև...
Լանջքս խոցոտ, ստինքս արիւն
Կաթեն, և չիք ինձ փրկութիւն:

Հայ Պատանին
Օ՛հ, անուշ մայրիկ,
Մի քիչ համբերէ·
Թէ այսօր մըրրիկ
Վաղը անդորր է·
Եւ մօտ է վաղն այն,
Մերն է ապագան.
Մայրի՛կ, հըրճուէ դուն,
Մօտ է փրկութիւն:

Հայաստանի Ոգին
Ձեռքըս ղարկի վերայ չիմնաց,
Եւ կարկեցան սուրերք արեաց·
Դէպ կենդանիս դարձի գերեաս,
Կոյր ձեւացան· լքեալ եմ ես:

Հայ Պատանին
Ո՛չ, անոյշ մայրիկ,
Լըքեալ չես ընաւ,
Քեզ հետ մեր հոգիք
Տըխրին կամ անձկաւ,
Օ՛հ, քեզ հետ խայտան,
Մերն է ապագան.
Մայրի՛կ, հըրճուէ դուն՝
Մօտ է փրկութիւն:

Հայաստանի Ոգին
Շատեր ինձ յոյս շըռայլեցին,
Ամէն խոստում մոռցուց ոսկին,
Եւ ես մնացի դարձեալ ի սուգ,
Վախեմ, մանկունք, դըրժէք և դուք:

Հայ Պատանին
Անէծք մեր վրայ,
Թէ անարգ ոսկին
Մեր առջև շողայ
Քան արցունք քոյին.
Երդնունք միաձայն,
Մերն է ապագան,
Մայրի՛կ, հըրճուէ՛ դուն,
Մօտ է փրկութիւն:

Մ. ՁԵՐԱԶ

No. 75

ՔԱՅԼԵՐԳ

Յուսահատուել մեղք է, ընկե՛ր,
Արիացի՛ր, ոգի՛ առ,
Նայի՛ր, փայլեց հեռուում լապտեր,
Մենք էլ կ'առնենք շուտ դադար...

Արիացի՛ր, սի՛րտ առ, ընկե՛ր,
Շարունակենք մեր ուղին,
Լսի՛ր, կարծես թէ զանգակներ
Ղօղանջեցին սարերին...

Ահա բացուեց աղօթարան,
Վստահ, ընկե՛ր, առաջ քայլենք,
Զինուոր ենք մենք ազատութեան
Եւ անփորձ տեղ կը հասնենք:

No · 76

ԽԱՆԻ ԵՐԳԸ



2 · Կեանքերը ազգին նուիրած,
Կըտրիճ Խանն առաջն ընկած՝
Գնում էին դէպ սահման,
Եւ թռչում կրակի նման :

3 · Հրացանները ուսերով,
Պարզած էին դրօշակ,
Գնում էին ուրախ, զուարթ,
Ազատութիւնն երգելով :

4 · Անցնում էին մութ անտառով,
Ամէն մէկն առիւծ կտրած,
Նժոյգ ձիերը հեծած,
Մերկ սուրերը փայլելով :

5 · Երբ քաջ Խանը եկաւ Բասեն,
Արձակեցին թնդանօթ,
Հայ քաջերի մօսինները
Գոռգոռացին մահուան բոթ :

No · 77

ԱԶԻԶ ՄԵՐԻԿ

Ազիզ մէրիկ, քեզի թողի,
Դարդ ունէի՝ դուրս ընկայ ·
Սուրբ վաթանիս ժողովրդի
Ձէնը կանչեց դուրս ընկայ :

Դուման սարեր, դարդլու սարեր,
Դարդ ու դուման մեր վաթան ·
Ա՜խ, գլուխըս քո ուղուրին,
Ա՜խ, մեր անուշ մէր-վաթան :

Էյ, Սիս, Մասիս, ձեզի մեռնիմ,
Իմ Սիս-Մասիս ջան աղբերք ·
Դուք տասի չափ, հազարի չափ,
Ձեզի մեռնիմ ջան-աղբերք :

Առիւծի պէս առուն կուգայ՝
Բաշը տըւած քարերին ·
Առիւծի պէս հայ ախպըրտանք,
Վո՛ւհ վրայ կը տանք դուշմանին :

Մէկ սիրտ դառնանք, բիր սուր դառնանք,
Ջարդենք, փչրենք դուշմանին ·
Ջա՛ն, տղերք ջա՛ն, զա՛րնենք, զա՛րկենք,
Մեր վաթանի ուղուրին :

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

No 78

ՀԱՅ ՔԱՋՈՒՀԻՆ

Այն ո՞ւր կ'երթայ զըւարթադէմ
Եւ սուրալով լերանց վըրան
Փափուկ թեթեւ ոտիցն ի ճեմ,
Ուսից վըրայ հերքըն ծըփան։

Արդեօք չքնաղ եկա՞ւ գարուն,
Կամ աւետի՞ս տա ծիծառնուկ
Թէ՝ ե՛լ հագուէ, պարէ՛ Զէյթուն,
Ելէ՛ք ի դաշտ, ծե՛ր, կո՛յս, մանուկ·

Եւ նա խնդում և զարդարուած
Ու նայելով աշխուժաբար,
Կ'երթայ ընդ պարս ընկերուհեաց
Քաղել նարկի՞զ և նունուփար։

Սակայն ոչ ոք կայ իրեն քով·
Ձայն մը լըսուի, բայց ծիծռան չէ·
Թեւիցը տակ չունի կողով՝
Ուր որ ծաղկի փունջեր չարէ։

Բօթ մը փըչեց ինչպէս մըրրիկ,
Ու Զէյթունի անտառներուն
Յաղթահասակ դողան մայրիք·
Ցցուեց առիւծ բաշ գալարուն։

Այն բարձրաբերձ սարից պահպան
Ազատութիւնն՝ ել սըլացաւ,
Հովտաց, դաշտաց, հիւղից վըրան
Թեւատարած հովանացաւ։

«Արի՛ք ի գէն, Թուրքն ահարկու
Լողաց եղբարց արեան ի ծով,
Արդ ի մեր կոյս վաղըս կ'առնու
Արիւնթաթախ ճիրաններով։»

Ու կանգնեցան հսկայաբար
Հազարաւորք՝ աչք բոցահատ,
Իրենց ահեղ սարից հաւասար
Բարձրացուցած գոռող ճակատ։

Բայց ո՞ւր կ'երթայ այն գեղադէմ
Աղջիկ թռուցեալ լերանց վըրան,
Փափուկ թեթեւ ոտիցն ի ճեմ,
Ուսից վըրան հերքըն ծըփան։

Ի՞նչ է այն որ կուրծքըն սըղմէ· —
Բոցանըշոյլ զըրա՛հ մի լայն·
Ի՞նչ զըգւանօք նա համբուրէ,
— Ճակատամուղ երկաթն է այն։

Նա այլ զըգւանք և այլ համբոյր՝
Կուսան անբիծ՝ դեռ չըգիտեր,
Երախայրի սրտին իբոյր
Ցոլաց միայն ազգին իւր սէր։

Օրհնեա՛լ անմահ դու Քաջուհին,
Պըսակ լանջաց Ազատութեան,
Որ պհրեղէն վառես զուարթուն
Եւ զիրտ քնքուշ հայ աղջկան։

Տե՛ս ինչպէս քաջ կոյս Հայկուհին
Խրախոյս կարդայ գոռ բարբառով·
«Յառա՛ջ, մօտ կայ ժանտ թըշնամին,
Զինք վանեցէ՛ք կոտորածով։»

Տեսին հսկայք զայն ահաւոր,
Ծափ ըզծափի մեծ աղաղակ
Որոտացին ցվհըս խոր,
Կարծես բոմբիւն հանեց կայծակ։

«Հայկուհի՛ն է, տեսէ՛ք ահա
Կրակներ թափին իւր աչքերէն·
Հայկուհի՛ն է որ թռչի գայ
Ինչպէս հրեշտակ ըսպառազէն։

Որպէս շանթից հրավառ նիզակ
Զարնէ կատար մեր յաղթ լերանց,
Այնպէս զարնենք այն աւազակ
Թըրքին զըլուխն արինախանձ։

Ինչպէս մըղեալ ի փոթորկաց
Գըլրին ժայռից մեր հատորներ,
Հա՛պա, այնպէս ի մէջ Թըրքաց
Իյնանք թաւալ օրհասաբեր։

Հայկուհի՛ն է, կորիճ եղէք,
Հայկուհին տայ խրախոյս յորդոր·
Ժանտից վրայ հուր տեղացէք՝
Մինչև մոխիր դառնան բոլոր։

Ու շանթեցին, հարցէ՛ք ո՞ւր է
Այն բազմամբոխ Թըրքին բանակ,
Սեւափրփուր շունչն արձըկէ
Զէյթունցիին ոտքերուն տակ·

Այդ կոյսն աւոր ո՞ւստի կուգայ
Թռուցեալ զըւարթ լերանց վըրան·
— Պատերազմէն նա կու դառնայ,
Հերանց վըրայ դափնիք շողան։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

No 79

ՏԵՍԻԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Թէ իմս հայրենեաց քընար սըրտաւոր
Հեծէ տըխրագին՝ իմ հոգին է ան.
Թէ անոր բեկբեկ թելեր վըշտաւոր
Խօսին բարձրաձայն՝ իմ սրտիկս է ան:

Թէ հայ մուսային սրտառուչ նըւագ
Դեռ կ'եղերերգէ՝ հառաչանքս է ան.
Թէ Հայաստանի սեւ բախտին հագագ
Լայ աղէկտուր՝ հեծեծանքս է ան:

Թէ իմս հայրենեաց կիսամեռիկ շունչ
Դեռ լըսւի տխուր՝ իմ ողբերս է ան.
Թէ յըռիկ-մընջիկ հեծէ անշըշունչ՝
Ո՛հ, անկարեկիր իմ հոգին է ան:

Եւ Հայկայ փառաց յօժար ողբերգուն
Հարազատ լացողն՝ իմ ձայնիկս է ան.
Ջորս հազար տարւան պարծանաց գարուն
Արձագանգ տուողն՝ աղաղակս է ան:

Իմ Հայաստանիս ցաւերուն հատոր
Ահա՛ այս մաշած իմ կուրծքս է ան.
Սեւ-սեւ թերթերուն մէջ սըրտակտոր
Արցունքով գրւած՝ իմ աչքս է ան:

Թէ բանաս կարդաս արիւնոտ դաշտեր,
Վարդագոյն ներկւած՝ իմ կողերս է ան.
Թ'աչքէ անցնես շամփրւած նիզակներ
Մահահոտ ցըցւած՝ իմ թիկունքս է ան:

Թէ Հայկ եւ Արամ, Վարդան, Վահաններ
Ինկած տեսանես՝ իմ ուժըս է ան.
Թէ զէնք, թէ դրահ, թէ սուր, թէ սուսեր
Փշրած կոտորած՝ ոսկորներս է ան.

Թէ արեամբ ներկեն ակունք Եդեմին
Նշխար քաջերուն՝ իմ բիբերս է ան.
Թէ քաղցր ու անբիծ ալիք Եփրատին
Լեղի են դարձեր՝ արտասուքս է ան.

Թէ վճիտ գետերն, աղբերքն արծաթի
Լալիք տաւակեն՝ երակներս է ան.
Թէ Տիգրիս, Գեհոն, Փիսոն մընչեն՝
Թէ պըղտոր գնան՝ իմ արիւնս է ան:

Թէ տառնամանիք ձմրան բքաբեր
Լեռներն է պատեր՝ իմ գագաթս է ան․
Եւ քաղցրիկ զեփիւռ, անուշիկ հովեր
Ցըրտագին փըչեն՝ իմ շնչիկս է ան։

Թէ վըտակ–վըտակ ցօղէ զյիշատակ
Ձայս տրտմավաստակ՝ աչերըս է ան․
Թէ սրտաձայնիկ երգէ զՀայաստան,
Կանչէ զՀայաստան՝ անկեղծ սէրս է ան։

Թէ մթին խորշերն ու ձորերն լըռեն,
Սեւերով ծածկին՝ մենաստանս է ան․
Թէ ողբ կը կարդան փայլերն Եդեմին՝
Ճընշած լեարդերու արձագանգն է ան։

Եւ Հայաստանի հողերը ուխտի
Պինդ սիրով գըրկողն՝ իմ ձեռքերս է ան․
Թէ կը համբուրեն կաթոգին խնդիւ՝
Ո՛հ, մայրակարօտ շըրթունքներս է ան։

Եւ հայոց լերանց ցուրտ շուքերուն տակ
Ընկած ապարախտ՝ իմ ճակատս է ան․
Մասեաց սուրբ քարերն իր բարձն ու պըսակ
Դըրած սըգաւոր՝ գլուխիկս է ան։

Եւ կիսակործան տաճարն հայրենի
Սև սուգ է պատեր՝ տաղաւարս է ան․
Ուր չիջելավառ կանթեղ դեռ հիւծէ
Նըւաղ առ նըւաղ՝ իմ յոյսըս է ան։

Ուր տըխուր նստեր, մազերն են ծածկեր
Իր սեւուկ աչքեր՝ սիրականս է ան․
Ձեռքերն ի ճակատ, կռնակն ի հողեր
Ցաւով կռթներ՝ Հայաստանն է ան․
— Գերեզմանս է ան։

Ու երբ տեսանեմ զիմ հէգն Հայաստան
Ի մէջ իր փառաց՝ իմ բաղձանքս է ան․
Ցայնժամ թող մեռնիմ իր ծոց մայրական,
Զիմ վերջին շնչոյս՝ միակ ուխտս է ան։

Ս․ Հ․ ՖԷԼԷԿԵԱՆ

No. 80

ՎՐԷԺՔ Ի ՇԱԻԱՐՇԱՆ

INTRODUCTION.
Allegro. (Tempo di marcia).



ՎՐԷԺՔ Ի ՇԱՒԱՐՇԱՆ

Տ—ր——ն—ձ——Բէ—ն



ՎՐԷԺՔ Ի ՇԱՒԱՐՇԱՆ

Նարանակաթեան



ՎՐԷԺՔ Ի ՇԱՒԱՐՇԱՆ

Շ——ր——Ն——կ——Բէ——Ն



Հայկեան փանդռանց որոտընդոստ դղրնչին բարբառք մարտադոռ,
Գոռնագոռոչ անդրաձայնէ պարսիկ կերկերն ի չեփոր·
Շարժեն հրեշտակք թեւս լուսադողդողջս,
Ճիւղք ճիւղոց կայտռեն ի դժոխս,
Տախնդ չանթառաք զեթերօք փայլ,
Սարսափին սանդարք ի խոլ խաւարի·
Հապօ՛ն, արի արանց մանկունք, և այլն :

Մամիկոնեան սուսաննեցու դրօշուն յայերս գոգ ծալ ի ծալ,
Ի ճակատուց ի թշնամեաց՝ սա ոչ գիտաց յուլատ կալ·
Հեծեալ հրանըժոյգ վեհին Վահանայ,
Վրէժ կանչէ արեան կարմիր Վարդանայ :
Փռնչեալ բոցաշունչ սափր ի դարշապար,
Թաղմամուռ փարգի յանծայժ երիվար :
Հապօ՛ն, արի արանց մանկունք, և այլն :

Արի՛ք ի կռիւ, քաջակորովք ընդ կորակոր հրոսն Արեաց.
Հապա՛ հաւհարգք մեր բիւրայաղթք ձեզ նոր հանդէսք են փառաց.
Թռէ՛ք ի ռազմ, ի խազմ, առէ՛ք զէն և զարդ.
Երեանիւք, յընիւք, հարուլ բիւրս հազարս
Ի սուր, ի սուսեր կարնչեղ յաղեղունս,
Ըղնեաւ Սասանեաց ջարդել կառափունս:
Հապօ՛ն, որ որանց մանկունք, և այլն:

Մինչ ցե՞րբ, ցե՞րբ սուգ լինի ի Հայս, հասէ՛ք զարտօսր որբք, այրիք,
Հարանց, հարսանց, եղբարց, որդւոց, հանուրց հայոց վրէժխնդիրք.
Թինդս առեալ երթամք յասպարէզ քաջաց,
Ցերկնից հնչեն ձայն արեան սիրելեաց.
Սօսափիւնք վերինք, արհաւիրք յերկրէ,
Քաջացն օժանդակ, զպարս հերքեսցէ:
Հապօ՛ն, որ որանց մանկունք, և այլն:

Օ՛ն անդր, ի բա՛ց հայկեան հողոց հսկայազանց և սրբոց,
Ի բա՛ց ջոլիր չւառական մոխրապաշտիցն պղծոց:
Դաշտք մեր մերժեսցեն զսկըրտաիքն անգամ
Արիւնք վըկայից զճապաղիսն անժամ,
Ուն ընդ դիս տոռնեալ դարձցին ի փախուստ,
Մատնակուրծք ընդ հայս հայեսցեն հեռուստ:
Հապօ՛ն, որ որանց մանկունք, և այլն:

Արք աղեղանց բարձր ի Թիրախ Թռուջիք, վերջին ձեզ խրախոյս,
Առեալ դարձցուք զանթիկնադարձ զայս վարդագոյն դրօշն անխոյս:
Ի վերայ յիսնից յաղթից Վարդանայ,
Պարսկաւան բազկաւ արեան Վահանայ,
Ճեշտ ի ծայր չիրմի դաշտին Շաւարշան
Տնկել յաղթանակ անմահ յաղթութեան:
Հապօ՛ն, որ որանց մանկունք,
Հայրենավրէժ հայկազունք,
Ի Շաւարշան դունդագունդ
Ցնծեալ ի պար թունդ ի թունդ,
Ի յաղթանակ, օ՛ն անդր առաջ.
Օ՛ն անդր յառաջ
Մի ձախ, մի յաջ,
Օ՛ն անդր, յառաջ,
Հապօ՛ն յառաջ
Ի յաղթանա՛կ:

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ

No. 81

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ



2· Մի՞թէ մենք Վարդանի ցեղից չենք·
Մէկս հազարի դէմ կը կռւենք·
Մի ժամանակ մենք շղթայուած էինք,
Այժմ ազատ ենք և ունինք շատ զէնք:

3· Օգնութեան հասան քաջ Խանն ու Մուրադ,
Ճիշդ հայու զաւակ--ծնունդ Հարազատ·
Մոկացի Գրիգոր և երկու Արշակ՝
Գնդակ էին թափում կարկուտից արագ:

No. 82

ԱՌ ԶԵՓԻՒՌՆ ԱԼԷՄՏԱՂԻԻ

Դու փափկաթեւ մանկիկ զեփի՛ւռ,
Ազբերց վրայէն լուսակարկաջ,
Անուշ հոտով ծաղկանց բոփիւռ՝
Ի՞նչպէս թռչիս ինձ ընդ առաջ,
Ու խունկ եւ զով ընծայելով
Ձիս ողջունես հեզիկ շունչով:

Ո՛հ, կը սիրեմ ըղձեզ, հողմի՛կ,
Երբ դու փութաս ինծի գալու,
Ի պար ի թռիչ ի սոյլ մեղմիկ,
Այրած ճակտիս իմ այցելու.
Ծաղիկ հոգւոյս քեւ զովացած,
Բացւի ի լոյս ախորժ կենաց:

Սլացի՛ր, փափկիկ դու սուրհանդա՛կ,
Լո՛ւր տար հովտին ու ծործորին
Եւ անտառաց բարձրադիտակ՝
Ուր երամով սոխակք թառին,
Թէ մըտերիմն իւրեանց եկաւ
Բիւր ըղձմայլմանց յիշատակաւ:

Ո՛հ, կորուսած իմ հաճոյքներ,
Հոս վերըստին գըտնեմ ըղձեզ.
Ծառոց շըքով էք ծածկըւեր
Ու փըրփուրով առւակին հեզ.
Ահա կայտռէք ի յայս ծըմակ,
Ի յայս թըփուտ հովանոցաց:

Հոս դառն հոգեր մէկիկ-մէկիկ
Ճակտէս ի բաց հեռանային
Ու փունջք ժամուց գեղապարիկ
Սիրոյս թեթեւ օրօրէին,
Եւ Բընութիւն՝ մայր որդեսէր՝
Փնքուշ գրկաց մէջ զիս գըգւէր:

Հոս ճէմէին երեկոյեան
Ի զով բոյսեր պար մի կուսից,
Մազերն հովուն բազմաբուրեան,
Սիրտք ընծայուած հեշտ վայելից.
Շող լուսնակին, կոյսն ու ծաղիկ
Ձիրար չոյեն սիրատարփիկ:

Մտերմութի՛ւն, Սէր կրակուրոց,
Ի՛նչ անուշ էք յայս տեսարան,
Ուր բիւր դալարք ձեզ հանգըստոց
Ու՛ անհուն դաշտեր ըզբօսարան.
Մտերմութի՛ւն, ինձ երանի՛
Թէ հոս ծոցէդ հոգիս թռանի:

Դու փափկաթեւ մանկիկ զեփի՛ւռ,
Ազբերց վրայէն քաղցրակարկաջ,
Անուշ հոտով ծաղկանց բոփիւռ՝
Թռի՛ր, թռի՛ր ինձ ընդ առաջ,
Ու խունկ եւ զով ընծայելով
Պարէ՛ շորս զիս հեզիկ շնչով:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

No. 83

ՍԵՐԷՄՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վէրքերով լի ջան Փիդայ եմ,
Թափառական տուն չունեմ,
Նարխս փոխան զէնքս եմ գրկել՝
Մի տեղ հանգիստ քուն չունեմ:

Արնոտ երկրի սուգ ու չիվան
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից.
Տանջուած Հայրենիքի սէրը
Զըր վախեցուց վտանգից:

Սասնոյ լեռներ գողգոթայ են
Շատ բարձըր են, խիստ դըժւար,
Կեանքի խաչը ես շալակած
Այնտեղ տարի շատ յօժար:

Ես խաչւեցայ, ջան Փիդայի
Ընկրդունքս սուրբ մնայ,
Թող իմ արեան կաթիլներով
Հայ զինուորը զօրանայ:

Մակեդոնական միութիւն
Իմ խաչովըս կընքւեց,
Եղբայրական սիրոյ զէնքով
Գազան Սուլթան խորտակւեց:

Ահա հանգիստ հող կը մտնեմ,
Ցոյցըս դուք էք, ընկերներ,
Շարունակեցէք սուրբ գործը,
Դաշնակցութեան վեհ քաջեր:

Կախաղանից երբ որ քամին
Ինձ տարուբերէ ճօճալէն,
Յիշէք Պետրոս Սէրէմճեանին
Թըշնամուց վրէժ գոռալէն:

No. 84

ՀՆՉԱԿ



2· Նոր գաղափարի քու ցանած սերման,
Ազնիւ պտուղներ հասուն են արագ ·
Կարին և Պոլիս որոտման նման,
Անդրանիկ շարժումք ծնաւ քե, Հնչակ:

3· Զոր բռնակալը հայոց կեղեքիչ՝
Վախէն պահուեցաւ ոսկէ գահի տակ.
Խուլ Եւրոպայի թմբըդաց մեծ դաշնին,
Հայը զընդուեցաւ, կարմրեցաւ Հնչակ:

4· Այսօր քո սերմանց նոր պտուղք ահա՛
Հասան, կարմրին, արեան նմանակ,
Կենաց և մահու սուրբ ժամ մերձենայ,
Կարմիր հրաւէրիդ ակն ունինք, Հնչա՛կ:

5· Կոչնակ հնչեցո՛ւր, հնչեցո՛ւր արագ,
Թո՛ղ հայք ոտք ելնեն — ծագէ մինչև ծագ·
Փըշրէ ժանտ շըղթան, ծագէ նոր արև
«Ազատ ենք», հընչէ, ոսկեզօծ Հնչակ:

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

No. 85

ՀԱՅՐԵՆԵԱՑ ՍԻՐՈՅ ՀԱՄԱՐ.....

Հայրենեաց սիրոյ համար
Խմբեր պատրաստուել են քաջ,
Հրացանները ուսերին,
Փամփուշտները ձախ ու աջ·

Հընազանդ կարգով շարուած,
Իրանք առիւծի պէս քաջ·
Խմբապետը հրահանգ տւեց
Գնալ դէպի յառաջ յառաջ:

Ոսկեզօծ բաշլուխներով,
Լացի չօրեր թանկագին,
Գընում էին դէպ Սասուն
Օգնելու Անդրանիկին:

Հայ քաջերը դիրք մտան,
Թըշնամուն պաշարեցին,
«Ամէն կողմից կրակ տւէք,
«Կոտորեցէք», — գոռացին:

«Եաման եկաւ ջան ֆիդան» —
Սարսափ տիրեց բանակին,
Փախչում էին դէպի լեռներ,
Վախկոտները խըմբովին:

Խաւարից լոյս ծագեցաւ,
Երևում էին յոյսեր·
Դաշնակցութեան ցանած սերմեր
Տալիս են նոր-նոր բոյսեր:

Մեր ապագայ սերունդից,
Ըսպասում ենք մեծ յոյսեր,
Կերգենք միշտ ազատ կըրծքից
Խրախոյսալից վեհ երգեր:

No. 86

ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐԻՑ

Աստուա՜ծ, ինչպէս ծուխ օրերըս անցան,
Ոսկերքըս, ինչպէս խըռիւ, չորացան,
Սիրտըս ցամաքեց, ընկայ խոտի պէս,
Ճամբէս մոռացայ ահագին վըշտէս։

Հացս՝ նախատինք եղաւ օտարի,
Հանգիստըս՝ ճամբում հալածանքների,
Լսեցի ցերեկն աղաղակ ու բօթ,
Գիշերը լացի մինչև առաւօտ։

Տըքնեցի, ինչպէս բու աւերակում,
Ինչպէս միայնակ ճընճղուկ տանիքում...
Աստուա՜ծ, տանջանքից ուժերըս հատան,
Մի՞թէ չըհասաւ ժամը փրկութեան։

Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆ

No. 87

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Ինչպէս փըչէ հուժկու մըրրիկ ովեցերքի խորերէն
Հաւաքելով երկնից դաշտէն ցըրիւ եկած իր բանակ,
Սև ու ճերմակ բոլոր ամպեր դէպ միևնոյն նպատակ
Կը սլանան՝ հետևելով մէկը միւսին վեհօրէն,

Այնպէս այժմ թող մըռնչէ այս մեր երկրին ծայրերէն
Սուրբ մըրրիկը ըմբոստութեան՝ իր թափովը բովանդակ.
Թո՛ղ սըլանան ա՛լ աներկիւղ դէպի մէկ վեհ նպատակ՝
Ազատութեան ցրիւ եկած որդիք հեռու վայրերէն։

Որպէսզի հոն բոլոր հըզօր զայրոյթները խըմբուին
Հո՛ն, ուր փռած հովիտներ կան, հո՛ն՝ ուր լեռներ կան հիւանդ,
Ուր ձիգ դաշտեր կը տըժգունին բռնութեան տակ հընաւանդ,
Ուր կը չորնան բիւր ծաղիկներ՝ դեռ չը ծաղկած բընաւին։

Որ՝ այն ատեն՝ խոր ցասումի որոտներէն զայրագին,
Ոտքի կանգնի թարմ ուժերով հայ գեղջուկը վեհապանծ,
Եւ լայն դաշտեր ազատութեան հեղեղներով ոռոգուած՝
Սընուցանեն ծոցերնուն մէջ արմատները նոր կեանքին։

ՎԷՏԱ.

No. 88

ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԿՌՈՒԵՆՔ



2· Էլ չը դանդաղենք և ոչ լաց լինենք ,
Կըրակուած սըրտով մեր գործը վարենք.
Անվեհեր քաջին այս է պատկանում —
Միշտ ազատ մեռնել կռուի լայն դաշտում:

3· Մոլի և երկչոտ թըշնամին թող լայ ,
Երբ հայ քաջի դէմ կռուի դուրս կուգայ.
Մենք վախեցող չենք սովից , տանջանքից ,
Ո՛չ էլ մահառիթ դաժան գընդակից :

4· Անէ՛ծք այն հօրը՝ որ ազգի սիրուն
Չի մըղում որդուն թափելու արիւն.
Ամօ՛թ այն հային և բիւր նախատինք ,
Որ ազգի սիրուն չի գործում բարիք :

No· 89

ԱՂԱՍՈՒ ՄՕՐ ԵՐԳԸ

Զարթի՛ր, մանուկ իմ նազելի, բա՛ց այդ պայծառ աչերը,
Թերթերունքէդ քունը թօթուէ՛, գիրկը հանգչի՛ր քու մօրը·
Բաւ քեզ որքան բարի հրեշտակք հէքեաթ ասին երազում,
Այժմ արի՛, քեզ այն պատմեմ, ինչ պիտ՚ տեսնես աշխարհում:

Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես,
Բա՛ց աչերըդ այդ նաշխուն,
Ուր որ մայրըդ իր բախտ, փառքը
Կեանքն ու արևն է տեսնում:

Դու կը մեծնաս, բոյ կը քաշես — չինար բոյիդ ես ղուրպան,
Քեզ ուժ կուտան Մասի քաջքը, որ դու լինիս քաջ Վարդան·
Իմ մատներով մի ոսկեթել, մէջքիդ գօտի եմ կարել,
Գօտիիցըդ թուր կը կապեմ, այն էլ ինքըս եմ սրել:

Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես և այլն:

Մեր բակումը ձի է կայնած, քեզ է մընում անհամբեր,
Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես, ա՛ռ քու թուրը մահաբեր·
Քու հայ ազգը հեծեծում է՝ ձեռքը, ոտքը շղթայած,
Քու եղբայրը գերութեան մէջ... քա՛ջ, միայն դու ես քընա՞ծ:

Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես և այլն:

Զէ՛, իմ որդին շուտ կը զարթի, ձին կը հեծնէ սանձակոծ,
Հայի արցունքը կը սրբէ, կը դադրեցնէ լաց ու կոծ.
Հա՛յ եղբայրներ, քիչ էլ կացէ՛ք, իմ Աղասին զարթեցաւ,
Գօտին կապեց, թուրը կախեց և իր նըժոյգ ձին նըստաւ:

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ

No· 90

ՊԵՏՕՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գարահիսար լերան կըրծքին՝ նա էլ ընկար վիրաւոր,
Կուրծքը պատռած, սիրտը խոցուած, չար թշնամու գնդակով:
Ժայռոտ լերան լերկ կատարից վա՛ր սըլացիր, սև արծի՛ւ,
Թևերըդ բաց, լայն թևերըդ ու ջիւանուն հո՛վ արա:

Խոցուած սրտից մուգ արիւնը կաթիլ-կաթիլ կը ծորայ...
Ա՛խ, ջիւանու կեանքն է հոսում ցաւոտ կըրծքի լայն վէրքից...
Ժայռուտ լերան լերկ կատարից վա՛ր սլացիր, սև արծիւ,
Թևերըդ բաց, լայն թևերըդ ու ջիւանուն հո՛վ արա...

No. 91

ԶԻՆԻՈՐԻ ՄՕՐ ԵՐԳԸ



2. Պատրաստեր եմ քո զէնքերը
Եւ քո գօտին ոսկեթել,
Եւ մի պսակ ոսկեփետուր
Երկինք կանխէ պատրաստել:

3. Հաւաքեր եմ քո զէնքերը,
Ահա՛, գըլխիդ վերև կան,
Ինչպէս երբեմն քո գըրքերը՝
Երբ կ՚երթայիր վարժարան:

4. Ելի՛ր, կապեմ սուրը մէջքիդ,
Ասպար կապեմ քո ուսէդ,
Եւ սուրբ դրօշակն հայրենիքիդ
Թո՛ղ ծածանի աջ թևէդ:

5. Մինթէ դուն չե՞ս յիշեր, երբոր
Գըրիչ ու թուղթ տըւի քեզ,
Փոխան դոցա, ըսի, մի օր
Ուրիշ բաներ կուտամ քեզ:

6. Ահա, փոխան գրչի՝ քեզ սուր
Փոխան թղթի՝ կուի դաշտ.
Ազգի համար գնա՛, կեանքըդ տուր,
Քո մայր ժըպտի երկինք հաշտ:

7. Գըրչով ուսար ազգ, հայրենիք,
Գընա՛ սուրով փըրկել զայն.
Մեր հայրենեաց վըշտաց հերի՛ք՝
Զըսաւ աշխարհը համայն:

8. Մեր հայրենեաց թըշուառութիւն
Երկրիս ազգաց մէկը չունի.
Մեր խեղճութեան կարեկցութիւն
Երկրիս վրայ մարդ մը չունի:

9. Գնա՛, որդեակ, այդ սև չարիք
Խեղդեց շունչը քո ազգի.
Գնա փրկել քո հայրենիք,
Թէ ոչ՝ է՞ր քեզ ծընեցի:

10. Քանի՛ տարի կերակրեցի
Մինչ հասակըդ այդ առիր.
Բարձր հասակիդ մայրըդ մեռնի,
Դուն ալ քու ազգիդ մեռիր:

11. Դու՝ հայրենեաց սեղանին զոհ՝
Մատի՛ր, որդեակ, ժամ հասաւ,
Երկինք ու ազգ յայդ մընան գոհ,
Մայրդ ալ վասն այդ քեզ ծընաւ:

12. Յառա՛ջ, որդեակ, ահա կ՚երթան
Քու ընկերներդ բիւրաւոր,
Որպէս ընկեր դպրոցական,
Քաջըր է ընկեր կուարար:

13. Յառա՛ջ, որդեակ, խմարտ անմահ,
Տւէ՛ք անվախ կուրծք ու ճակատ.
Հոգ չէ թէ քեզ կը գտնէ մահ,
Զի յանյժամ է ազգըն ազատ:

Պ. Վ. ՆԱԹԱՆԵԱՆ

No. 92

ԱՆԻԻ ՈՂԲԸ

Անի քաղաք նստեր կուլայ,
Չի կայ ըսող՝ մի՛ լար. մի՛ լար.
Կ՚ըսեն թէ, չէ՛, թող նըստի լայ,
Ա՜խ, երբ լըսեմ՝ մի՛ լար, մի՛ լար:

Շատ ցաւերով կ՚այրիմ, տապիմ,
Զունիմ մէկ մարդ հաւատարիմ,
Որ խղճալոյս գայ մօտենայ,
Գոնէ ըսէ՝ մի՛ լար, մի՛ լար:

Ա՜յ, հայ տըղայ, խըղճա՛ ինծի,
Տե՛ս, քո Անին ինչպէ՞ս է.
Հերիք ես լամ, դու չը գթա՞ս,
Չէ՞ քո Անին շատ ափսոս է.

Ախ ու վախով օրերս անցաւ,
Լալէն աչերս կուրացաւ,
Որբ մնալն ինձ վիճակւեցաւ,
Բախտս խպառ գլխ մոռացաւ:

Կորուսեր եմ թագաւորներ,
Ժողովեր եմ գըլխուս բուեր,
Որ միշտ կ՚երգեն.—«Անին անցաւ,
«Անին անտէր աւերեցաւ»:

Ա՜յ, հայ տըղայ, և այլն:

Անին էի մարդաբընակ,
Մնացեր եմ դառն աւերակ.
Իմ լացն, իմ կոծն, իմ աղաղակ,
Անտէր որբոցն է նմանակ:

Երբեմն էի շատ աննըման
Հայոց քաղաքն արքայական,
Այժմ՝ աւեր, հիմնայատակ՝
Նըստեր կուլամ ես միայնակ:

Ա՜յ, հայ տըղայ, ևն:

Եկար տեսար, դարձար կ՚երթաս,
Լալով կ՚ըսես. «բարեաւ մընաս».
Աստուած սիրես գիս չը մոռնաս.
Մասիս սարին երբ մօտենաս՝

Ասա՛ իմ քաջ Արարատին՝
«Նստեր կուլայ քո խեղճ Անին».
Կ՚ըսես՝ ե՞րբ դաս աւետիք տաս,
Թէ՝ «իմ Անի, հերի՛ք է լաս»:

Ա՜յ, հայ տըղայ, ևն:

Հայ Տղան

Ողբերգութիւնդ հերի՛ք, Անի,
Թըշւառացեալ դու լաս քանի՛,
Օր մը գըթած աչն Անեցին
Մարդասիրեալ՝ առ քեզ հայի:

Գան ժողովին հայք միաբան,
Գեղեցկանաս շատ աննըման.
Հապա մի՛ լար, սիրուն Անի,
Անի՛, Անի՛, իմ ջա՛ն Անի:

Ա. Վ. ԱՐԱՐԱՏԵԱՆ

No 93

ՔԱՋ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Մեր նախնիքը ազգի համար
Իրենց կեանքը զոհեցին,
Թըշնամեաց դէմ միշտ աներկիւղ՝
Սուրը ձեռքին վազեցին:

Նրանց առաջնորդ ազգի սէրն էր,
Նրանց խրախոյսը՝ մեր հաւատն էր.
Նրանով նրանք քաջի անունը
Իրաւամբ ժառանգեցին:

Նախնեաց փառքին ժառանգաւոր՝
Ժառանգ է մեզ քաջ Վարդան,
Մեծ սպարապետ հայրենասէր,
Սուրբ հաւատոյ վեհ պաշտպան:

No. 94

ՕՐՕՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Քընէ՛, քընէ՛, իմ հայրենիք,
Իմ կաթոգին Հայաստան․
Ես քեզ օրօր կ'ասեմ մեղմիկ,
Որ չըզարթիս անդուման։

Քանի՞ դարեր այդ խոր քունը
Քեզ կաշկանդել կապել է․
Քընի սերմունք, ասես, Մորփէն,
Լոկ քու վըրայ թափել էն։

Եւ ի՞նչ զարմանք, ազգ ու ազինք,
Մինչ լաւակամ քեզ համար․
Քունըդ վրդովել չուզելով
Օրօրում են անդադար։

Քեզ․․․ թուր ձեռը բռնած,
Մարդ չի թողնում քեզի մօտ․
Թէ մօտ եկան՝ դարձեալ չէ՛ փոյթ,
Ունի լաւ ռումբ, շատ վառօդ․

Ու աչքերդ չի խըտըտղեն,
Վառ շողերը արեգին՝
Անթափանցիկ ու մեծ ապար,
Ունի բռնած իր ձեռքին։

Կամ թէ՝ անուշ քընիդ խափան,
Չլինեն նաեւ քու որդիք․
Ըսպառազէն պահապաններ,
Նոցա վըրայ կան հերիք։

Թէ ճիչ բառնան՝ այն ծամանակ,
. . . .
Այդ պատճառաւ հէնց քու որդիք
Ե՛ւ երկչոտ են, և՛ ըզգաստ․

Արդ՝ դու նընջէ՛ ծանր քընով
Ու մի՛ զարթիլ շատ՜դարեր․
Պարտքըն աշխարհի դու տըւել ես,
Կատարել ես շատ բաներ։

Ունիս քաջեր (թէեւ մեռած),
Ունիս գըրքեր անհամար,
Սխրալի գործ քու զաւակաց
Կ'անցնեն, կ'երթան դարէ դար։

Աստուածախօս քու լեզուն է,
Ծոցըդ՝ Դըրախտ երկրաւոր,
Նոյայ սերունդք են քու որդիք,
Դէ՛հ, Հայաստան իմ, օր օ՛ր։

Երբեմըն դու խիստ լաւ կ'անես
(Այս քեզ խըրատ իմ բարի,
Հաւատացի՛ր, սըրտով բաղձամ,
Որ այդ ճշդիւ կատարի),

Թէ սեփական զաւակներիդ
Տաս խըրատներ մայրական,
Որ կործանած իրենց գահը
Վերականգնել չի ջանան։

Շուտ–շուտ ըրկէ՛ քարոզիչներ
Սեւազըլուխ, մըրքաւոր,
Որ յորդորեն ապրել նոցա,
Թէեւ ըստրուկ, բայց անդորր։

Խաղաղասէր կեանք քարոզեն,
Մեծ մեծ յոյսեր երկնային,
Ազնիւ զգացմանց ցընորք ասեն,
Անօգտաւէտ ըընաւին։

Զի հասկանան վախճան կենաց,
Կոյր են եկել՝ կոյր կ'երթան,
Կրօնն էլ ինչպէս հարք կը մեկնեն
Նոքա այնպէս հասկանան։

Մաքուր կրօնն է, ասեն, պասը
Ժամուց տալը յորդոյ հարց,
Կուշտ ուտելը, ճոխ ապրելը —
Այս է վախճան մեր կենաց․

Դիւրահաւան մեր հայերը
Բարի խրատը լսելով՝
Չեն վըրդովիլ, ու քեզ կուտան
Լաւ կըշտանալ խոր քընով։

Դէ՛հ, իմ պառաւ մայր Հայաստան,
Քընէ՛ անուշ ու անդորր․
Այսպէս յաւէրժ քեզ կը կարդան
Ազգ ու ազինք օ՛ր օ՛ր օ՛ր․․․

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ.

No. 95

ԹՈՂ ԿՈՐՆՉԻՆ......



ԹՈՂ ԿՈՐՆՁԻՆ......

Շարունակութիւն



2. Հայի հացը, հայի փողը,
Մինչև ե՞րբ օտարն ուտէ.
Եւ գարշելի պիղծ բերանով
Հայութիւնը անարգէ։

3. Վրիժուց կայծակ թող բորբոքւի
Հայ առիւծների սրտում,
Թաղենք թշնամու գլուխներ
Դիւցազունների երկրում։

No 96

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳ

Ճամբէս արիւնի հետք թողեր, կ'երթայ, —
Արիւնոտ ճամբէս մեր թշնամու դէմ.
Խէթ օձը առջեւս ընկեր ու կ'երթայ,
Ու ագռաւները հետըս ճամբորդ են։

Ձիս տըխուր-տըրտում կ'երթայ անդուման,
Ա՜խ, նա լաւ գիտէ, որ յետ չեմ դառնայ.
Դարդըս թաղելու, ցըրւելու կ'երթամ,
Դարդըս-վըրէժս, ու էլ յետ չեմ գայ...

Է՜հ, մնա՛ք բարև, մեր դա՜շտ ու սարե՜ր,
Ուր քօլ ու քարըդ մեր արնով ներկւա.
Ինձ էլ չես տեսնի, իմ խեղճ, ազիզ մէր,
Ու գերեզմանս էլ չես գտնի ընաւ։

Կարմիր օրերի անգին ընկերնե՛ր,
Իմ տեղս պահէ՛ք, երբ գաք իրար քով.
Ա՜խ, եարիս ասէ՛ք, որ ես է՛լ չեմ գայ,
Որ լա՛յ, վրէս լայ անուշ աչքերով..

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

No. 97

ԶԷՅԹՈՒՆԻ ՄԱՐՇ

Allegro. (Tempo di Marcia.)



2. Զէյթունցիներ, մեր զըօսանքն
Է պատերազմ և արշաւանք.
Սուր, թուր, գընդակ և հըրացան
Մեր խաղալիքն են յաւիտեան:

3. Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛ Զէյթուն,
Թող չանանէ ըստրկութիւն.
Քանի ունի մեզ պէս որդիք,
Ապրի՛ Զէյթուն, կեցցէ՛ Զէյթուն:

No. 98

ՀԱՅԴՈՒԿԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Մնաս բարեա՛ւ, քաղցր մայր իմ, ես պիտի գնամ,
Տուր մայրական վերջին համբոյր, սիրտըս զովանայ.
Երկընքի երեսի գոյնը կամար է կապեր,
Կարծես հայ աղաների սիրտը խաւար է պատեր:

Ա՛յ, խըղճալի հայ ծնողներ, չի լաք ի զուր տեղ,
Այլ խնդրեցէք Աստուածանից ձեր վէրքին մի դեղ.
Արդեօք կը լինի՞, որ կըրկին կենդանի մընամ,
Ուրախ զըւարթ գամ հայրենիք, նոր կեանք ըստանամ:

No · 99

ՎԱՐԴԱՆԻ ԵՒ ԻՐ ԶՕՐԱՑ ԵՐԳԸ

Ո՛վ հայկազունք, ո՛վ դիւցազունք,
Ահա՛ ձեզ նոր հանդիսարան.
Բացէ՛ք աչքերդ, հերի՛ք ննջէք,
Տարիք, դարերը անցկացան։

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Մեր կեանքը զոհ բոլորանուէր
Մատաղ անել հայոց ազգին,
Նրա լեզուին ու կրօնին։

Առէ՛ք սուրեր, նետ ու աղեղ,
Ելէք ընդդէմ ձեր թշնամեաց,
Ձեր հաւատը և ձեր ազգը
Պաշտպանեցէք յօտար ազգաց։

Հայ զինուորի կեանքը դառն է,
Երբոր պարապ՝ տանն է նստած.
Ձեզ ասպարէզ անմահ փառաց՝
Կռուի դաշտն է նշանակած։

Հայ զօրականք, ձեր նետերը
Կապարճից մէջ հերիք մնան,
Ձեր երկիրը պարսից երկրից
Ինչո՞ւ լինի այսպէս կոխան։

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք՝
Մեր սուրը երկրից հալածական
Անել անկրօն պարսից ազգը.
Փրկչի խաչն է մեզ օգնական։

Հայոց հովիւք, ձեր ոչխարներ
Է՞ր սար ու ձոր թափառական
Գազանաց ճանկ ընկած կ'ողբան.
Է՞ր չը լսէք նոցա կական։

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք՝
Աւետարան ու խաչ ձեռին՝
Առաջնորդել հայոց զօրքին,
Ի ժամ սրբոյ պատերազմին։

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊ. ՆԱՐ ՊԷՅ

Վենետկի Մխիթարեան սաներէն՝ Խորէն Գալֆայեան՝ ծնած էր Պոլիս, Սամաթիա թաղը: Շատ յաջող կերպով ուսումն աւարտելով՝ վարդապետ ձեռնադրուեցաւ և Պոլիս վերադառնալով՝ Լուսաւորչական եկեղեցիին գիրկը մտաւ. Այդ դաւանափոխութեան նկատումներն ու պատճառները հրապարակով բացատրեց իր մէկ տետրակով, որ ժամանակին բաւական աղմուկ հանեց: Փարիզի մէջ Հայկազեան վարժարանի տնօրէններէն մէկն եղաւ և հոն գտնուած ատեն իր եղբայր Ամբրոսիոսին հետ հրատարակեց «Մասեաց Աղաւնի» գեղեցիկ հանդէսը, ինչպէս նաև շարք մը թարգմանութիւններ և դասագրքեր. անոնք իրենց ներքին արժանիքներու հետ ունէին նաև արտաքին գեղեցկութիւն, տպագրուած ըլլալով Արամեան յայտնի տպարանին մէջ: «Մասեաց Աղաւնի»-ն Հայկազեան վարժարանի գոցուելէն ետք տեղափոխեց Խրիմի Թէոդոսիա քաղաքը, ուր հրաւիրուեցաւ իր վաղեմի բարեկամ Գաբրիէլ վարդապետ Այվազովսքիի կողմէ (հռչակաւոր ծովանկարչին եղբօրմէ), բայց հոն ալ երկար չմնալով՝ Պոլիս անցաւ. 1867-ին Էջմիածին երթալով՝ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և վերադառնալով Պոլիս՝ Պէշիկթաշի քարոզիչ անուանուեցաւ:

Ռուս-տաճկական պատերազմէն ետք իբև Ներսէս պատրիարքի կողմէն Պէռլինի վեհաժողովին խրկուած հայ պատուիրակութեան անդամ՝ Խրիմեան Հայրիկի և Մինաս Չերազի հետ (վերջինը իբրև թարգման-քարտուղար) այցելեց եւրոպական արքունիքները, ուր կրցաւ կապեր հաստատել: Յայտնի է արդէն, որ այդ պատուիրակութեան ջանքերով ստորագրուեցաւ բազմահռչակ 61-րդ յօդուածը......:

Գում-Գաբուի ցոյցէն ետք՝ կառավարութիւնը աշխատեց ամբաստանել զինքը իբրև յեղափոխական շարժման աջակցող մէկուն և պատրիարքարանէն պահանջեց անոր կարգալուծումը կրօնական կոչումէ, իբրև պարզ աշխարհիկ անհատի մը հետ իր հաշիւները կարգադրելու համար. սակայն Խորէն եպիսկոպոսին օգնութեան հասան իր ազդեցիկ բարեկամները, որոնք կրցան ազատել զինքը սպառնացող վտանգէն: Մեռաւ 1893-ին, գրեթէ լքեալ ու աղքատութեան մէջ:

Շքեղ հռետոր, հիմնաւորապէս տեղեակ եւրոպական քանի մը լեզուներուն, ամենաբարձր շրջանակներու մէջ իսկ սիրուած ու յարգուած՝ Խորէն արքեպիսկոպոս՝ եւրոպացիացած հայ եկեղեցականի ականաւոր տիպար մըն էր. իր փառաւոր արտաքինը, գեղեցիկ ձեւերը շատ կը գնահատուէին մասնաւորաբար ազնուական շրջանակներու մէջ: Իր արժանիքին չէր համապատասխաներ իր թուլութիւնը արտաքին փայլին, շքանշաններուն, տիտղոսներուն հանդէպ: Ջանաց հաստատել իր ծագումը Լուսինեան արքայատոհմէն և այդ անունով ալ սկսաւ ճանչցնել ինքզինքը. վերջը փոխեց իր անունը—եղաւ Նար-Պէյ, իսկ իր եղբայրը՝ Ամբրոսիոս՝ որ նոյնպէս ազնուացուցած էր իր անունը՝ իբրև «իշխան» Լուսինեան ալ մնաց ընդ միշտ, Փարիզի մէջ հաստատուելով, ուր և մեռաւ 1906-ին:

Իբրև գրագէտ, բանաստեղծ և թատերագիր՝ Խորէն Նար-Պէյ պատուաւոր տեղ մը կը գրաւէ հայ գրականութեան մէջ, և իր բանաստեղծութիւններէն շատերը ժողովրդական երգերու շարքը անցած են: Պատմական բովանդակութեամբ իր ողբերգութիւնները ներկայացուած են շատ տեղեր:

No. 100

ՇՂԹԱՅԱԿԱՊ ՀԱՅ



2. Ըզմարմին միայն—զայս մարմին
Կարես գերել քեզ ի նախատ,
Սակայն ոգիք մեր երկրային՝
Սիրաք Հայկազանց են միշտ ազատ:

3. Ազա՛տ են, ազատ մեր լեզուք,
Մաղթել ըզշանթս Արդարութեան
Ի գլուխ ձեր, ո՛վ արիւնարբուք,
Որ աւերէք զՀայաստան:

4. Ի զրժախս անկցին թըշնամիք,
Անհետասցին մինչ յաւիտեան.
Կեցցե՛ն ազգ և հայրենիք,
Կեցցէ՛ անմահ մերս Հայաստան:

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ

No. 101

ՀԱՅԱՍՏԱՆ



2. Միթէ արծաթ, ոսկի, գոհար
Կը սփոփէ՞ Հայաստանը.
Այն որ կ'ողբայ որդոց համար,
Խղճալի Հայաստանը:

3. Խոր տխրութեան մէջ է թաղուեր
Թագուհի Հայաստանը,
Բոպիկ ոտքով, արձակ մազով,
Կ'արտասուէ Հայաստանը:

4. Անգութ երկինք ա՛լ չի յիշեր՝
Մոռցեր է Հայաստանը.
Անսիրտ հայեր ալ չեն սիրեր
Անուշիկ Հայաստանը:

5. Ո՛հ, թողէք զիս՝ խօսիմ ազատ,
Երգեմ միշտ Հայաստանը.
Անո՛ւշ երկիր, կոյս անարատ,
Անընման Հայաստանը:

6. Արև ծածկեր է իր դէմքը, —
Խաւար է Հայաստանը.
Հայոց արևն ալ մարեր է,
Սև է հագեր Հայաստանը:

7. Թըշուառ որդիս ձայն կը ձգէ,
Ողբալով Հայաստանը.
Ո՛հ, չկայ հայ որ սփոփէ
Նըւաղեալ Հայաստանը:

8. Մինչև կտրի իմ վերջին շունչ՝
Պիտի կանչեմ Հայաստան.
Պըլլըւիմ մէջ մ'իմ հայրենեացս,
Հապա մտնեմ ի գերեզման:

9. Անդորրութիւն ես կը խնդրեմ
Սիրելի Հայաստանին.
Կարել այս ձայն չէ՛, չէ՛ կարող
Սոսկումը գերեզմանին:

Ա. ՀԱՅԿՈՒՆԻ

No· 102

ՀԱՅ ՄԵՌՆԻՆՔ

Ո՛չ, եղբարք․ ո՛չ․ օտարէն չըկա՛յ յոյս․
Մի՛ աչւընիդ--մի՛ դարձնէք յոյս յայն կոյս,
Օտարն թէև զձեզ սիրէ հիւրաբար՝
Օտարն՝ ա՜հ, միշտ է օտար։

Օտարն ձեր վիշտ կը դիտէ անդորով․
Ի՜նչ փոյթ, որ դուք թափէք արցունք արիւնով․
Ով որ հայ չէ՝ հայու ցաւեր ան չըզգա՛ր,
Ի՞նչ կը խորւիք անդադար։

Մի՛ դուք ձեր յոյս մի՛ աւանդէք օտարին,
Մի՛ խոր վէրքերըդ ցուցընէք անգութին․
Արդահատա՞նք կը յուսաք՝ օգնութիւն –
Ձեր կը ծաղրե՜ն մերկութիւն։

Գիտեմ, ձեր բեռը ծա՜նր է, ծանր, ո՛վ հայեր,
Բայց կը կարծէ՞ք զայն վերցընեն օտարներ․
Թողէ՛ք զօտար, տըւէ՛ք եղբայր եղբօր թև,
Եւ զօրացէ՛ք անդեդև։

Բախտը դարձեր է ձեզի դէմ թըշնամի
Մի՛ վհատիք, ցուցուցէ՛ք սիրտ հայեցի․
Չէ կարող բախտ յաղթել ազգին այն քաջի,
Որ բախտին դէմ մարտնչի։

Ձեր հայրերուն՝ ո՛չ շղթայք, ո՛չ սուսերներ
Չը կարացին ընկճել ո՛չ միտք, ո՛չ սըրտեր․
Ինչո՞ւ ձեր սիրտ այսօր դողայ տըկար, հէք․
Ի՞նչ, այն քաջաց որդիք չէ՞ք։

Չէ՞ք դուք որդիք այն դիւցազանց աննըման,
Որ հայրենեաց ճենճերեցան ի սեղան......
Չէ՞ք դուք որդիք այն մեծ հայոց, որոց կեանք
Են մարդկութեան իսկ պարծանք։

Դո՛ւք որ ունիք ձեզ պատմութիւն մ'ազգային,
Որու վըրայ մեծ ազգեր իսկ նախանձին՝
Ինչո՞ւ այսօր մոռցած զԱնցեալ ձեր փառաց՝
Երանի՜ տաք օտարաց։

Օ՜ն, ով կ'զգայ ի սիրտ եռանդ և հոգի՝
Թողո՛ւ զօտար և մեր նախնեաց հետևի․
Մեր կեանքը հո՛ն է, ուր կրօնից մեր սեղան—
Այն է հայոց փառարան։

Աչէնուդ սիրտ՝ ըզգայ նոյն սէրն հայրենեաց·
Ամէնուդ միտք թռչի յօդուտ համազգեաց,
Ու ձեր յետին եղբօր ու ցաւ՝ միշտ
Ըզգացէք ձեր իբրև վիշտ:

Օտարին հաց մեզի սընունդ չէ՛ բնաւ·
Օտարին ջուր՝ ո՛չ, չի մարեր մեր ծարաւ·
Մեզի կենաց տըւող և մեր պահապան՝
է Աւազանն Հայկական:

Այն աւազանն՝ այն հայութեան կընքատուն,
Ո՛հ չուրանա՛նք, եղբա՛րք, յուսովք ղաղփաղփուն·
Եւ թէ մեր շունչ պիտի մարի վերջապէս՝
Թո՛ղ մարի յայն սուրբ կրկէս:

Թո՛ղ ամէնքս ալ ընդունի նոյն գերեզման,
Վասն զի նո՛յնն էր ամէնուս ալ օրրան...
Հայ ծնանք մենք, հայ ապրինք, հայ և մեռնինք—
Օ՛ն, հայ մտնենք և յերկինք:

ԽՈՐԷՆ ԵՊԻՍ· ՆԱՐ–ՊԷՅ

Քանի որ մարդուս արդիւնքն այս եղերին մէջ
Ուրիշ բան չէ, բայց միայն հոգով տանջուիլ կամ հոգի տալ՝
Գոհսիրտ ան է, որ աշխարհէս շուտ գնաց,
Երջանիկ ա՛ն, որ բնաւ չեկաւ այս աշխարհ:

ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄ

Թո՛ղ ընկեր իմ, այս դըժնադէմ, չար ձըմեռ,
Որպէս դահիճ անշարժ հըսկէ մեր դըռան·
Թո՛ղ անդալար, անջերմ սահին մեր օրեր,
Եւ մեր ուղին աչքից ծածկեն բուք բորան...
Մեր սըրտումն է մեր գարուն...

Թո՛ղ չարագոյժ ու սեւաթոյր այս ամպեր
Մեր հէգ կեանքին սպառնան ամպրոպ ու կայծակ·
Թո՛ղ բարձրանայ մեր շուրջ գիշեր մահաբեր
Եւ մեր աչքից ծածկէ ոսկի արեգակ...
Մի՛ վհատիր... Անվախ նայիր դու վերև...
Մեր սրտումն է մեր արև....:

Ա· ԾԱՏՈՒՐԵԱՆ

No. 103

ԱՂԱՍՈՒ ԵՐԳԸ

Սար ու ձոր ընկած, մէկ չոր թփի տակին,
Գետնին նայելով մնացել եմ նստած.
Ձեռըս ծոցումըս, գլուխս՝ մէկ լեռ քարին՝
Ցրւած՝ լալիս եմ, օրըս խաւարած։

Ամպերն առաջիս, սարերն ետևիս,
Քեզ մըտիկ տալով, ա՜յ իմ քաղցր Մասիս,
Աղի արցունքով էրւած, խորովւած՝
Երեսիդ նայեմ, մընամ քարացած։

Ծնող, ազգականք հեռու ինձանից,
Լուսնին նայելով, ձեր սէր յիշելով՝
Եա՛րաբ, ե՞րբ կ'ըլի՝ որ ես ձեզանից
Իմ կարօտս առնեմ՝ ձեզ ջա՛ն ասելով։

Եա՛րաբ, ձեր ճրաղը մէկ օր է՞լ կ'ընկնեմ,
Եա՛րաբ, ձեր երես մէկ օր է՞լ տեսնեմ.
Եա՛րաբ, ծունկ ծունկի տւած ձեզ կ'ասե՞մ,
«Ա՜յ, իմ խեղճ ծնողք, ձեր ջանին մեռնեմ։»

Աչքըս ծով դարձաւ ճամբին նայելով,
Մէկ ղուշ որ գլխիս պտուտ ա գալիս՝
Թէ ե՞րբ մէկ խաբար հասնի ինձ բարով,
Հոգոց հանելով, ասում եմ՝ լալիս.—

Եա՛րաբ, գետնի վրայ դեռ սո՞ւգ էք անում,
Ձեր կորած որդուն կարօտ մընալով.
Թէ հողի տակը մըտած՝ դինջանում,
Ինձ թողիք տանջւեմ, ա՛խ, ո՛խ քաշելով։

Եա՛րաբ, ձեր ամաղն ինձ հալա՞լ արիք,
Եա՛րաբ, սուրբ բերնով ձեր՝ ինձ օրհնեցի՞ք.
Ծերունի՛ իմ հայր, տարաբա՛խտ իմ մայր,
Էլ իմ հաւարիս ե՞րբ հասնի աշխարհ։

Էն սուրբ անարատ կաթին ես ղուրբան,
Ձեր լիս ձեռներին, ձեր անուշ լեզւին.
Մէկ բուռն հողի էլ ե՞րբ կ'ըլիմ արժան,
Որ գամ ձեր հողումն քընեմ ձեր միջին։

Էն ի՞նչ օր էր, որ ձեր քաղցըր ծոցին,
Գլուխս ձեր դոշին, աչքըս խուբ կամ բաց,
Ձեր սուրբ ձեռի վրայ, երեսըս բարձին՝
Կամ խաղում էի կամ մընում քընած։

Էն ի՛նչ օր էր, որ մէկ ծառի տակի՝
    Ճօճում ձեռներըս ձեր ճրովը գըցած·
    Ձեր սուրբ երեսին ես համբոյր տայի,
    Նանիկ ասելով թողնէիք քընած։

Ո՞ւր են շըւաքը, էն ջրի կանաչ ափը,
    Էն խոտն ու ծաղիկ, էն դաշտն ու տափը,
    Ուր ձեր առաջին անմեղ խաղայի,
    Ու ձեր բարի սիրտը խաղով բանայի։

Լալիս՝ դուք լայիք, ինձ հետ ցաւելով·
    Ծիծաղս տեսնելով, կամ ձէնս լսելով՝
    Կանչէիք· «Արի՛ մօտս, Աղասի ջան,
    Երեսիդ մեռնեմ, քո ջանի՛ն ղուրբան»։

Ա՜խ, էն խօսքերը ինձ կրակ են դառել,
    Լերդս ու թոքս հիմիկ էրում, խորովում·
    Ի՛նչ կ՚ըլէր, ես էն վախտն էի մեռել՝
    Ձեր շուաքի տակին, ա՜խ, քնել էն հողում։

Մէկ բուռն հողի էլ կարօտ եմ մնացել,
    Թարափից թէ ցած՝ կամ ջուրը ընկնեմ,
    Ձեր սուրբ երեսը դեռ որ չեմ տեսել,
    Ի՞նչպէս ես հանգիստ էս հողը մըտնեմ։

Նազլո՛ւ իմ Նազլու, աննըման Նազլու,
    Սիրտըս խորովլի անունդ յիշելով·
    Նազլո՛ւ, իմ Նազլու, հրաշալի՛ Նազլու,
    Աղասին քեզ տայ իր վերջին բարով։

Սարերի դօշին, ձորերի միջին՝
    Վա՛յ գըլխին տալով քո խեղճ Աղասին,
    Երեսիցդ զըրկուած, քո սիրովը մաշուած՝
    Տատրակի նըման՝ փըշի վրայ նստած՝

Լիզեմ հող, գետին, այրւեմ, ողբամ,
    Կամիմ օր առաջ, ա՜խ, որ հոգիս տամ·
    Երբ մահն մօտենայ սառը թևերովը,
    Հոգիս պահանջէ, որ տանի շուտով։

Էս դառն աշխարհիցը մի ինձ ազատի,
    Ոսկերքս գազանաց կերակուր անի·
    Կամ, երբ գետի ափը նստած շըւարած,
    Աչքերս նուաղին թմրած, սասանած,

Գլորւեմ կատաղի գետի փրփրի մօտ,
    Հոգոց քաշելով՝ պարզեմ ես իմ ոտ·
    Կամիմ գերեզմանս որ էս ջուրն ըլի,
    Էս սառը պատանն ինձ հողը տանի...

Կամ մէկ քարափի բաշից նայելով,
    Աչքս մեր տան ծուխն յանկարծ տեսնելով՝
    Քո անուշ երեսն ինձ փակ մնալով,
    Նազլո՛ւ, իմ Նազլու, անուշիկ Նազլու,

Թեքւեմ ու հանդարտ գայ ինձ քուն մահւան,
Երբ որ աչքիս՝ թէ անդունդը խոր
Մօտ է ինձ գրկել տանել իր լէն ձոր...

Նազլո՛ւ, իմ Նազլու, մէկ շունչս ա մնացել,
Ոսկերքս քըրքըրւել, աչքըս խաւարել
Թող մէկ շունչս տանեմ, յետոյ հող մըտնեմ.
Դժոխքն էլ տանեն, ես հանգիստ կ'ըլեմ:

Քեզ եմ մնում, քե՛զ, քո ջանին մեռնեմ,
Հող ու գերեզման ես իմ վրէս ունեմ.
Քանց իմ սառն մարմին՝ էլ ի՞նչ գերեզման,
Ինձ պէտք չկայ նորան, երեսիդ ղուրբան:

Արի՛, սատըրդ առա՛, ինձ թաղի՛ր,
Բե՛ր իմ երեխէքս ու վըրաս կանգնի՛ր...
Մէկ նորանց տեսնեմ՝ աչքըս խըփելիս,
Մէկ նորանց սեւ՝ լեզուս լուելիս. —
Մնաք բարո՛վ, որդի՛ք, ազիզ սիրական,

Է՛լ չէք տեսնիլ ինձ, ա՛խ, դուք յաւիտեան:
Ձեր անբախտ հօրը հոգին յիշեցէք,
Մնաք բարո՛վ, իմ քաղցր, սիրուն երեխէք.
Ձեր հօր տեղակ՝ ձեր խեղճ մօրն յիշեցէք,
Ու իմ ողորմին ժամն կատարեցէք...

Խ · ԱԲՈՎԵԱՆ

No 104

ԱԽԱՐԱՑՐԻ ՆԱՀԱՏԱԿՔ

Թէ հայրենեաց պըսակադիր
Գողթնի քընարք լըռեր են,
Երկնից թող գան անմահ հոգիք
Հայոց քաջերն պըսակել:

Մասեաց գագաթ թող գան բազմին
Երկնից գունդ-գունդ հրեշտակներ,
Աստուած իջեր ի Հայաստան
Հայոց արիւն հոտոտել:

Փախէ՛ք ամպեր Շաւարշանէն,
Ալ մի՛ ցօղէք ձեր ցօղը.
Շաւարշանը ոռոգւած է
Հայոց քաջաց արիւնով:

Եւ կը ծըլին ու կը ծաղկին
Այն դաշտին մէջ ոչ խոտ, վարդ.
Այլ Վարդանայ ինկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հաւատ:

Ծագէ արև քոյդ ճառագայթ,
Խաղտեաց լեռներ, մութ խորշեր,
Այնտեղ ինկաւ քաջ Հըմայեակ,
Այնտեղ պառկեր Նահատակ:

Լուսի՛ն, լուսին, աչքովդ անքուն
Պահէ հայոց ոսկորներ,
Եւ մայիսի գըւարթ ցօղով
Ցօղէ անոնց շիրիմներ:

Արծիւք, բազէք Հայաստանի,
Եւ արագիլք ամրան հիւր,
Դո՛ւք հըսկեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք հայոց տուն:

Մոխիրներու վըրայ նըստէք,
Աւերակներ շինէք բոյն.
Ու ծիծեռնակ գայ ու երթայ,
Մինչև Հայոց գայ գարուն:

Գ · Վ · ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

No. 105

ՄԱՀԱՄԵՐՁ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԸ



2. Հեռանում եմ, անգին ընկեր,
Չըր գնահատուած ոչ ոքից,
Բայց հաւատաւ անձնանուէր
Ազգիս մըշակ կը հաշուիմ:

3 Ազնի՛ւ ընկեր, չը մոռնաս,
Անդաւաճան ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ հայրենիք—
Գրնա՛ ու դու նոյն շաւղով:

4. Խեղճութիւնը հայոց ազգի
Կարեկցաբար մըտածի՛ր,
Ոսկէ գըրքոյկն Եղիշէի
Քաջ առաջնորդ քեզ ընտրի՛ր:

5. Այնտեղ սուրբ կրօն, ազգ միարան՝
Ազատ կամքով ու խըղճով,
Այնտեղ Վարդան. անմահ Վարդան՝
Իր խըմբերի քաջերով:

6. Հայրենի՛ք — Սեղան Սրբութեան՝
Ե՛ս Աստուծոյ առաջև
Շատ կ'աղաչեմ, շատ կարօտեմ,
Որ ծագէ քեզ նոր արև:

7. Իմ մըտերիմ, մահս մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգով,
Որովհետև խիղճս արդար է,
Ճըշմարտութեան ջատագով:

Մ. ՇԱՀԱԶԻԶ

No. 106

ՄԱՐՇ

Մնացէ՛ս բարեաւ, սէր իմ սէր.
Հրաւէր մարտին որոտաց,
Թէ չեմ քաջաց ես ընկեր՝
Զըկայ բաժին ինձ փառաց:
Մի՛ լար հոգւոյս իմ հատոր,
Գուցէ դառնամ — ո՛հ, մի՛ լար.
Թ'անկայց մարտին ես ի գոռ,
Տեսցուք յերկինս մեք զիրար:
Եղբայրադաւ չէ նախանձ,
Որ բորբոքեալ յիս վառի.
Ի սուրբ հողոյ Հայկազանց,
Բառնամ զլուծ օտարի:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

No. 107

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆ ԱՌ ԾԻԾԵՌՆԱԿ



2. Բայց երանի՜ քեզ, բիւր երանի՜
Կըրնաս թըռչիլ՝ թեթեւ
Թեւոցդ ի ծայր ընդ սար ու ձոր.
Իսկ հոս՝ արեւուն նշոյլն աղօտ
Մութ բանտիս է անթափանց,
Եւ ոչ մեղմ հովիկ մ՚ալ կը փչէ,
Որ տանի ձայնն իմ սիրելեաց:

3. Գէթ դուն գնա՛ գըտնել սիրելիս,
Սլացի՛ր արագ, սակայն
Դարձիր նորէն մօտ չըւարիս,
Եւ հոս հանգչէ այս իրիկուն,
Լե՛ր դու վըկայ տըխուր մահուանս,
Եւ շիրմիս վըրայ ճըռճըռալով՝
Գէթ դու յիշէ զիս անմոռաց:

ԳՐՕՍՍԻ

No. 108

ՕՐՕՑՈՑԻ ԵՐԳ

Քո՛ւն եղիր, պալաս, աչքըդ խուփ արա՛,
Նաշխուն աչքերուդ քուն թող գայ վըրայ.
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի,
Իմ Տիգրանիկի քունը կը տանի:

Ոսկի խաչ վիզիդ՝ քեզի պահապան,
Նարօտ կապել է ծարէն տէր-պապան.
Օր օր եայլն:

Մավի յուլուններ կախել իմ ես ալ,
Նազար չիս առնուլ, քո՛ւն եղի՛ր, մի՛ լալ.
Օր օր եայլն:

Աս քանի՞ մօրըդ անքուն աչքովը
Անցել է օրեր օրօրոցիդ քովը.
Օր օր եայլն:

Օրօրոցդ օրրիմ, օրով բոյ քաշես,
Մըղկտան ձանով սիրտըս չի մաշիս.
Օր օր եայլն:

Դո՛ւն ալ քուն եղիր, ինծի ալ քուն տո՛ւր,
Սուրբ Աստուածամայր, Տիգրանիս քուն տուր.
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի,
Իմ Տիգրանիկի քունը կը տանի:

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ.

No. 109

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳ

Երբ ես մեծացայ, տղամարդ դարձայ,
Ու սիրտըս զրնգաց սիրով վառ-վառման,
Ուզեցի սիրել աղջիկ սեւաչեայ.
Բայց դու գիրկս ընկար, անգի՛ն հրացան։

Ու բոց կարօտով գըրկեցի ես քեզ,
Սըղմեցի կըրծքիս, անգի՛ն հըրացան.
Իմ սրտի տէրը, — հարսնացուս դարձար,
Աննենգ ընկերս, իմ սէր հըրացան...

Երբ թշնամու դէմ կռւի եմ վազում,
Դո՛ւ՝ կրծքիս սղմած՝ անբաժան հետս ես.
Դո՛ւ ես միշտ սըրտիս մըրրիկը յայտնում,
Քեզնով եմ հնչում, որոտում վրէժ...

Եւ երբ դադըրած գլուխս դնեմ,
Կըռւի դաշտերում, կ՚ուզեմ որ փորեն
Քեզնով ինձ մի փոս՝ կըռւի ընկերներ,
Քեզ հետս թաղեն, իմ հա՛րս, իմ ընկե՛ր..

⁂

Սալնոյ ձորերում, կռւի ձորերում
Հայդուկն է ընկեր՝ խոր վէրքը սըրտին,
Վէրքը վարդի պէս բացւած կարմըրուն,
Ու ձեռն է գցեր կոտրած հրացանին։

Արնոտ դաշտերում ծըղրիթն է ծըղրում,
Հայդուկն է ընկեր մահւան խոր քնով
Հայդուկը հողում երազ է տեսնում, —
Հայրենի աշխարհն ազա՛տ, ապահո՛վ...

Տեսնում է... արտում հովն է շընկշընկում,
Փայլուն գերանդին գնգում է անուշ.
Ու փոցխ են քաշում սիրուն աղջկունք՝
Հայդուկի վրայ երգելով անո՛ւշ...

Սալնոյ ձորերով ամպեր են անցնում.
Հայդուկի վրայ արծիւն է գալիս.
Ա՜խ, սեւ աչերը արծիւն է հանում,
Հայդուկի վրայ ամպերն են լալիս...

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

ՐԱՖՖԻ

Խօսիլ Րաֆֆիի մասին՝ կը նշանակէ նիւթ առնել հայ վերածնութեան ամէնէն ցայտուն շրջանը — հայ գիտակցութեան արթնացման, ազգային ոգիի և յեղափոխական դաստիարակութեան պատկերը ներկայացնել։ Դժբախտաբար, մեր ծրագրէն դուրս է այդչափ ընդարձակ տեսութիւն մը կազմելը։

Աբովեան, Նազարեան, Նալբանդեան, Շահազիզ, Գ.–Բաթխըա –ռուսահայ մեծ մտաւորականները «հնութեան փոշիներից» դուրս հանելով ազատութեան հրաշագեղ դիցուհու ջախջախուած անդրիներ՝ անոնց բեկորները հաւաքելով, շունչ ու կենդանութիւն տալով քարացած սրտի նեարդերուն՝ կը ցուցադրէին թմրած հայ մտքին դիւթական տեսիլը ծագող գեղեցկութեան, որ պիտի տանէր իր ետևէն մրրկային թափով մը սերունդներու երկար բանակներ դէպի լոյս, դէպի քաղաքացիական ազատ ու վայել կենցաղավարութիւն։ Սակայն այդ բոլոր մեծ տաղանդները միայն կրցան վառել գիտակցութեան հրդեհը Պրոմէթէոսի աստուածային կայծերով. անոնք պատրաստեցին հայ զգացումները նոր և սրբազան աշխատանքին համար. բայց Րաֆֆին միակն եղաւ, որ գործնական հողի վրայ դնել ջանաց այդ տիտանական աշխատանքը — Րաֆֆին եզակի եղաւ և պիտի մնայ իբրև հայ յեղափոխութեան դրական շրջանի ամենամեծ ուսուցիչ, ամենէն հզօր ու պաշտելի վարպետ. Րաֆֆին եղաւ հայ յեղափոխականներու իսկական կարապետը, նոր Յորդանանի մէջ նուիրագործող հայութեան է՛ն ընտիր տարրերը։ Մենք ամէնքս — մեր գերագոյն ձգտումներու, իտէալներու և ամէն ազնուացած, բիւրեղացած յատկութիւններու վրայ, ինչ չափով որ ալ ունինք, Րաֆֆիի ազդեցութիւնը կը կրենք։

Բնիկ պարսկահայ, Սալմաստ գաւառի Փայաջուկ գիւղին մէջ 1835-ին ծնած՝ իսկական անունով Յակոբ Մելիք Յակոբեան՝ բաւական բարեկեցիկ վաճառականի մը զաւակն էր։ Իր նախնական կրթութիւնը աւելի բարձր չէր, քան իր իսկ այնքան վարպետօրէն նկարագրած Տէր-Թօդիկեան դաստիարակութիւնը, փալախկայով, սաղմոսով, անողորմ ծեծով, յայսմաւուրքով և ընդհանրապէս հնադարեան «ուսման» ամէն այլանդակութիւններով։ Բարեբախտաբար, իր անձին վրայ շատ չկրեց այդ ուղղութեան ներգործութիւնը և Թիֆլիս գալով՝ կրցաւ պետական գիմնազիա (միջնակարգ վարժարան) մտնել, ուր և մնաց քանի մը տարի, և չորրորդ դասարանէն ուսումը կիսկատար ձգելով՝ 1857-ին հօրը պահանջին վրայ՝ գնաց անոր քով։ Հայրը որ անոր ուսումէն այնքան օգուտ կը սպասէր, որքան անհրաժեշտ էր միջակ հարստութեան տէր վաճառականի մը հաշիւներուն համար՝ Յակոբը իր գործերով պտըտցուց Տաճկա-Հայաստանի քանի մը նահանգները։ Այդ ուղևորութիւնները ցնցող ազդեցութիւն ըրին ապագայ վիպագրի երևակայութեան վրայ։ Իր միտքը պարզեցաւ, աչքերը պայծառացան այն ահռելի տառապանքներուն հանդէպ, որոնց ենթակայ էր թիւրքահայ զանգուածը և որոնք այնքան ծանօթ չէին իրեն առաջին անգամ։ Քաղաքական այդ դժոխային պայմաններու տապալումը, բանի ուժով ազատ կեանքի մը տիրանալը և այդ հեռանկարի կարելիութիւնը տարակուսանքէ դուրս կը մընային անոր մտքէն։ Եւ ինքզինքը այդ ուղղութեան նուիրելու, ճանապարհ

հարթելու գործին յանձնելու դիտաւորութեամբ՝ հօրմէն բաժնելով, ամէն նիւթական միջոցներէ զուրկ՝ կուգայ Թիֆլիս, ուր և կը սկսի ապրուստը ապահովելու համար ընտանիքներու մէջ դասատուութեամբ զբաղիլ։ Անտարակոյս, քիչ չտառապեցաւ իր դրամական այդպիսի անապահով վիճակին մէջ. բայց բարեբախտաբար՝ «Մշակ»-ի խմբագիր Գրիգոր Արծրունին գնահատելով այդ համեստ երիտասարդի հազւագիւտ արժանիքները, քաջալերեց զայն, միջոց տալով անոր իր գործերը հրատարակելու, և կարելի եղածին չափ լաւ (հայ հեղինակին համար, հասկնալի է) վարձատրելով։ Իր մեծ աշխատութիւններէն՝ Րաֆֆին «Սամուէլ»-ը հրատարակեց Արգար Յովհաննիսեանի «Արձագանք» շաբաթաթերթի մէջ. մնացած խոշոր գործերը գրեթէ միշտ յատուկ հատորներով հրապարակ հանած է։

Բացի «Կայծեր»էն, «Ջալալէտտին»էն, «Խենթ»էն՝ որոնք հայ յեղափոխական երիտասարդութեան ուղեցոյցն ու աւետարանը եղան՝ Րաֆֆիի միւս ստուար հատորները թէև ժամանակակից կեանքէ տարբեր շրջաններէն առնուած նիւթերով՝ բոլորն ալ նոյն ոգին կը կրեն, – կրթիչ, դաստիարակիչ – ըմբոստութեան ու բողոքի հզօր գրգիռներով՝ բռնութեան ու անիրաւութեան դէմ։ Հոգեբանական խոր, մանրազննին վերլուծումէ հեռու կը մընար անոր գրիչը, բայց անըմնականօրէն վարժ էր սքանչելի պատկերներ տալու իր ընտրած տեսարաններէն. բնութեան նկարագրութիւնները աննըման են. խնկարկու էր կանացի գեղեցկութեան և գիտէր սիրային արկածները պատկերացնել զուտ արևելեան փարթամ գոյներով. դեռ մեր մէջ ոչ ոք չէ գրած այնպիսի վէպեր՝ որոնք Րաֆֆիի ոճի անուշութիւնն ու թովչութիւնն ունենային։

Իր երկերէն մասնաւորապէս բարձր արժանիքներ ունին՝ բացի վերոյիշեալներէն՝ նաև «Դաւիթ-Բէկ»ը, «Խամսայի Մելիքութիւնները», «Հայ կինը և հայ երիտասարդութիւնը»։ «Ոսկի աքաղաղ»-ի, «Մինը այսպէս, միւսը այնպէս»ի և ուրիշներու նիւթը վերցուած է կովկասահայ կեանքէ, որոնց մէջ խստօրէն կը ձաղկէ հարուստ դասակարգի մոլութիւնները։ Գեղեցիկ են նաև «Հարէմը», «Ղարիբ Մշեցի» և ուրիշ վէպիկները։

Մեռաւ Րաֆֆին 1888, ապրիլ 18-ին Թիֆլիսի մէջ. իր յուղարկաւորութիւնը կատարուեցաւ անսովոր շքեղութեամբ. հարիւրաւոր պսակներով ծածկուած դիակառքեր կը հետևէին թափօրին։ Համազգային սուգի մեծ արտայայտութիւնը առաւելապէս ճնշիչ էր այն հանգամանքով, որ հայութեան մեծ վիպագիրը կը մեռնէր տակաւին առոյգ և երիտասարդ, իր հանճարի բարձրագոյն ցոլացումին չհասած, դեռ իր վերջին խօսքը չըսած։

Րաֆֆին չերգեց իր «Կարապի երգը»։

ՐԱՖՖԻԻ ԴԱԳԱՂԻՆ ՎՐԱՅ

Քանի դու մեր մէջ կեանքով լի էիր՝
Դու միշտ հալածուած, ատելի էիր.
Բայց հէնց առ հարըս գնացիր, հեռացար՝
Դու մեր ազգային հանճարը դարձար։
Հայքըս, որ հոգով վաղուց ենք մեռած,
Միշտ դիակներ ենք մեր կեանքում սիրած.
Սուտ չէր խօսքը մեր սաստ պապերէն.—
«Գընա՛, դու մեռի՛ր—արի՛ քեզ սիրեմ։

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ.

No· 110

ՎԱՆԱՅ ԾՈՎԱԿ

Ամէն տեղ տիրած խորին լռութիւն,
Կարծես թէ մեռած լինի բնութիւն·
Նստած սըգաւոր, պանդուխտ, միայնա՛կ,
Ո՜հ, քեզ եմ տեսնում, ո՛վ փայլուն լուսնակ։

Աշխարհի սկիզբից դու մինչ ի վախճան
Երկնակամարով առնում ես շըրջան,
Ո՜հ, դու տեսե՞լ ես հայ ազգ բարեփառ,
Արդեօք տեսնո՞ւմ ես նորա ցաւն անճար։

Արդեօք դու ես խըղճալոյս նըման,
Տեսած Հայաստան ժանտ ոտից կոխան՝
Թափո՞ւմ ես աչքիցդ աղի արցունքներ,
Եւ սըրտիդ միջում ցըցւում են նետեր։

Քար է քո սիրտը, և խիղճդ մեռած,
Քանի՛ արիւններ, քանի՛ կոտորած
Տեսար՝ լռեցիր և դարձեալ պայծառ
Հայ երկնի վըրայ կապում ես կամար։

* * *

Ձա՛յն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես,
Ողբակից լինել չը կամի՞ս դըժբախտիս·
Շարժեցէ՛ք, զեփիւռք, ալիքը վէ՛տ–վէ՛տ,
Խառնեցէ՛ք արտասուքս այս ջըրերի հետ։

Հայաստանի մէջ անցքերին վըկայ,
Սկիզբից մինչև ցայժմ, խընդրեմ, ինձ ասա՛·
Միթէ միշտ այսպէ՞ս կը մնայ Հայաստան,
Փշալից անապատ, երբեմն բուրաստան։

Մի՞թէ միշտ այսպէս, ազգը խըղճալի,
Կը մընայ ըստրուկ օտար իշխանի·
Մի՞թէ Աստուծոյ աթոռի մօտին
Անարժան են հայն ու հայի որդին։

Արդեօք գալո՞ւ է մի օր, ժամանակ՝
Տեսնել Մասիսի գըլխին մի դրօշակ,
Եւ ամէն կողմից պանդուխտ հայազգիք
Դիմեն դէպ իրենց սիրուն հայրենիք։

* * *

Յանկարծ ծովակի երեսին մի լոյս—
Ջըրից դուրս եկաւ նազելի մի կոյս·
Մի ձեռքումն ունէր նա վառւած լապտեր,
Իսկ միւսում՝ քընար, փայլուն փըղոսկեր։

Արդեօք հիւրի՞ էր, հրեշտա՞կ աննըման։
Ո՛չ, հայ մուզաների մի տիպ աննման։
— Հայոց ճակատագիրը կարդա՛, ո՛վ մուզա,
Ներկայ և գալոց գուշակի՛ր, ասա՛։

Աստղ Երկնային այն Ոգին խօսեցաւ·—

«Աւետիք տամ քեզ, նըժդեհ պատանի,
Սրբի՛ր աչքերիդ արտասուքն աղի·
Կը գան նոր օրեր, օրեր երջանիկ,
Երբ տիրոջ կամքով, ազատ ու արդար,
Կը թագաւորէ կրկին ոսկեդար։»

«Հայոց մուզաներ կը զարթնեն կրկին,
Հայոց Պառնասը կը ծաղկի վերստին,
Եւ Ապոլլոնեան կառքը լուսարար
Կ՛ բոլորէ հայոց թուխ երկնակամար։»

«Մենք ևս քեզ պէս, երբ խորին գիշեր
Պատեց Հայաստան՝ սըգաւոր օրեր
Շատ ենք անցուցել· այժմ, սի՛րելի,
Մենք ևս հաշտութեան ստացանք ձիթենի։

«Սրբեցէ՛ք քնարի լարերը ժանգոտ,
Ելէ՛ք Հայաստան երգով եռանդոտ,
Զարթեցրէ՛ք հայոց աշխոյժը մեռած·
Լըցւեցաւ կամքը, հասաւ ժամանակ·
Օրը կը բացւի, ահա Արուսեակ—
Ձեզ յայտնի նըշան» — ասում է Աստուած։

Կըրկին մըթնեցաւ... Չըքացա՛ւ պատկեր·
Երկար ժամանակ դիւթական ձայնը
Լըսւում էր խառըն՝ ալիքների հետ·
Օդին տիրել էր բուրումն հոտաւէտ։

Ախորժելի՛ լուր, աւետի՛ք քաղցրիկ,
Որպիսի՛ հըրճւանք, մուզա՛յդ գեղեցիկ,
Աստ՛ մեզ, մեկնի՛ր, արդեօք՝ է՞ հնարին
Մի մեռած մարմնի կեանք տալ վերըստին։

ՐԱՖՖԻ

No· 111

ՀՐԱՒԷՐ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ



2· Արևելք, արևմուտք, հարաւ և հիւսիս,
Դղըրդաց ու թընդաց քաղցըր աւետիս.
Հայկայ քաջ զաւակաց առիւծ կուրծքերից
Ազատութիւն հընչեց ամէն կողմերից:

3· Խումբ խումբ հայեր դէպի ազատ Հայաստան՝
Փըրկութեան աւետիք առած ի բերան,
Դիմում են ցընծութեամբ՝ իբրև հարսանիք՝
Ուխտած սուրբ արիւնով փըրկել հայրենիք:

4· Ազատ հայրենիքը ոտքի է կանգնում,
Վատ ըռնաւորից վրէ՛ժ, վըրէ՛ժ է կանչում.
Արիւնով ներկւում են բոլոր դաշտերը,
Արիւն են լակ հոսում բոլոր գետերը:

5· Թըշնամին՝ զարհուրած՝ փախուստ է դիմում
Անթիւ աւար և գանձ իր յետին թողնում.
«Յաղթութի՛ւն, յաղթութիւն», գոչենք միաձայն,
Թըշնամին պարտւած է. կեցցէ՛ Հայաստան...:

No. 112

ՏԱԼԻՈՐԻԿՑԻ ԿՏՐԻՃԸ



ՏԱԼՒՈՐԻԿՑԻ ԿՏՐԻՃԸ

Շարաւանակեան



2· Երբ իմ աչեր բացի յաշխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար·
Մինչև փակեմ աչքըս խաւար՝
Պիտ չի կոխէ հոս ոտք օտար։

Իմ մամ ծընաւ գիս պալու ծոց,
Ընկուզի կոճղ մ'եղաւ օրրոց,
Տըկլոր ծընած՝ մեծցայ տըկլոր,
Կեանքիս բաժինն է՝ կռիւ ու բոց։

Ցորդորակ

3· Ոտքըս բոպիկ, սիրտըս միշտ բաց,
Ի՛նչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մընաց·
Իմ մօտ մէկ է—արև, բուք, ցուրտ,
Բա՛ւ է չիշխեր հոս թուրք կամ քիւրտ։

Իմ կեանքըս խիստ է և չարքաշ,
Փափուկ կեանքի վայլեց չեմ վարժ,
Բընակարանս է ապառաժ,
Ընկերս՝ մըրրիկ ու երկրաշարժ։

Ցորդորակ

4· Թող այլք բնակին հովիտ ու դաշտ,
Վատ անդութին հետ լինին հաշտ·
Ես պիտ' մընամ միշտ աննըւաճ,
Թէև վըրաս գայ քըսան վաշտ։

Իսկի չքաշեմ բանի մ'կարօտ,
Քանի ունիմ գընդակ, վառօդ·
Ազատ ապրիմ, մեռնիմ ազատ,
Սասնոյ որդին եմ հարազատ։

Ցորդորակ

5· Ցորենի տեղ՝ կ'ուտեմ կորեկ,
Երկաթ ծեծեմ գիշեր ցորեկ·
Շինեմ փէտատ, խոփ, խաչ-երկաթ,
Ծանր է դատումս, բայց եմ ազատ։

Հարըստութիւն, ուսում, հանճար,
Պատիւ և փառք չեն ինձ համար·
Բա՛ւ է ունիմ տէգ, թուր, խանչար,
Բնաւ չի կոխեր հոս ոտք օտար։

Ցորդորակ

6· Ջէնքն է միակ իմ խաղալիկ,
Կ'ատեմ հանդարտ կեանք խաղաղիկ,
Կը սիրեմ որս, կըռիւ, աւար,
Կը սպասեմ երբ ընկնի հաւա՛ր։

Գիշերն ալ զէնք վըրաս քընեմ,
Երազիս մէջ կըռիւ կ'ընեմ.
Կըռիւն ինծի մօտ խաղալ է,
Կըռւով մեռնիլը հալալ է։

Ցորդորակ

7· Կըռւի մէջը մեռաւ իմ պապ,
(Այդ կերպ մահն է անուշ մըրափ)·
Կ'ուզեմ ես ալ մահ մէջ կըռւի,
Որ իմ անուն անմահ դըրւի։

Այս քարուտ տեղ խիստ դըժուարին
Իմ քաջ պապեր երբ ընտրեցին,
Ըսին՝ ապա՛ս որդոց որդի
Քաջանց սերունդ թո՛ղ հոս ապրի։

Ցորդորակ

8. Եւ իմ խելօք Ջոջ պապ Ցարէ
(Աստուած հոգին լուսաւորէ,)
Ինձ կ'ըսէր միշտ. «Աղքատ ապրէ,
Բայց մի՛ ծռէ վիզ, հարկ մի՛ վճարէ։

Սակայն միթէ կըրնա՞յ աղքատ
Կոչուիլ այն մարդ որ է ազատ.
Միթէ կա՞յ բան մ'աւելի թանկ՝
Քան անիշխան և ազատ կեանք։

9. Տալւորիկն է սև սև սարեր,
Խոր, մութ ծործորք, սեպսեպ քարեր.
Վերև ջուխտակ ծեր Մարաթուն,
Հոգիս մատա՛ղ մեր Մարաթուն։

Մեզնով պարծի այսօր Սասուն,
Մենք ենք խրախոյս հայոց նըկուն,
Տալւորիկ սար, ժէռուտ Ջէյթուն,
Տա՛ն իրարու ազա՛տ ողջոյն։

Հա՛յ աղբըրտիք, ճա՛ն աղբըրտիք,
Տալւորիկի զաւակ եմ քաջ,
Ազատութեան սիրուն համար
Եկէք դէպ ինձ յառա՛ջ, յառա՛ջ։

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

No. 113

ԶԻՆՒՈՐԻՆ ԵՐԳԸ

Զինւորին երգերը, եղբա՛յրք, լըսեցէ՛ք,
Աշխարհիս բաները լաւ ճանաչեցէ՛ք։

Մէկն ունի մեծ տըներ, միւսը գիւղ ունի,
Միայն խեղճ զինւորը ոչինչ բան չունի։

Շորերը թանկագին, փորը միշտ քաղցած,
Տո՛ւր ձիուն միշտ գարի, ինքըդ կե՛ր չոր հաց։

Թէ քաջ պատերազմես՝ կը տան մեծ պարգև,
Թէ ոտքդ կորցընես՝ կ'ասեն «մնա՛ս բարև»։

Ուր գընամ ես մենակ աշխարհիս վըրան,
Ահա՛ քեզ վաստակըդ քանևմէկ տարւան։

Թարգմ. Գ. ԴՈԴՈԽԵԱՆՑ

No. 114

LA MARSEILLAISE



La Marseillaise

Allons enfants de la patrie,
Le jour de gloire est arrivé !
Contre nous de la tyrannie
L'étendard sanglant est levé ! (bis)
Entendez-vous dans les campagnes
Mugir ces féroces soldats ?
Ils viennent jusque dans nos bras
Egorger nos fils, nos compagnes.
Aux armes, citoyens !
Formez vos bataillons !
Marchons ! Marchons !
Qu'un sang impur
Abreuve nos sillons !

Que veut cette horde d'esclaves,
De traitres, de rois conjurés ?
Ces fers dès longtemps préparés ? (bis)
Français ! pour nous, ah ! quel outrage !
Quel transports il doit exciter !
C'est nous qu'on ose méditer
De rendre à l'antique esclavage !
Aux armes, etc.

Quoi ! ces cohortes étrangères
Feraient la lois dans nos foyers !
Quoi ! ces phalanges mercenaires
Terrasseraient nos fiers guerriers ! (bis)
Grand Dieu ! par des mains enchaınées
Nos fronts sous le joug se ploiraient !
De vils despotes deviendraient !
Les maitres de nos destinées !
Aux armes, etc.

Tremblez, tyrans ! et vous, perfides,
L'opprobre de tous les partis,
Tremblez, vos projets parricides
Vont enfin recevoir leur prix ! (bis)
Tout est soldat pour vous combattre,
S'ils tombent, nos jeunes héros,
La France en produit de nouveaux,
Aux armes, etc.

Français, en guerriers magnanimes,
Portez ou retenez vos coups !
Epargnez ces tristes victimes,
A regret s'armant contre nous. (bis)
Mais ces despotes sanguinaires,
Mais ces complices de Bouillé,
Tous ces tigres qui, sans pitié,
Déchirent le sein de leur mère !..
Aux armes, etc.

Amour sacré de la patrie,
Conduis, soutiens nos bras vengeurs !
Liberté, Liberté chérie,
Combats avec tes défenseurs ! (bis)
Sous nos drapeaux, que la victoire
Accoure a tes mâles accents !
Que tes ennemis expirants
Voient ton triomphe et notre gloire !
Aux armes, etc.

Nous entrerons dans la carrière
Quand nos ainés n'y seront plus;
Nous y trouverons leur poussière
Et la trace de leur vertus. (bis)
Bien moins jaloux de leur survivre
Que de partager leur cercueil,
Nous aurons le sublime orgueil
De les venger et de les suivre !
Aux armes, citoyens !
Formez vos bataillons !
Marchons ! Marchons !
Qu'un sang impur
Abreuve nos sillons !

ROUGET de I isle

No. 115

ԼԱ ՄԱՐՍԷՅԵԷԶ

Արի՛ք, որդիք դուք հայրենեաց,
Հասեալ է արդ մեզ օր փառաց.
Դրօշ բռնութեան յարիւնթաթաւ
Կանգնի ընդդէմ մեր դիմագրաւ:
Լուա՞յք ի դաշտ պատերազմաց
Զահեղ գոչիւն վայրագ զօրաց,
Գան խողխողել ի գիրկըս ձեր
Զորդիս, կանայս ձեր ի սուսեր:

Հա՛պ՝ օ՛ն, ի զէն, քաղաքացի՛ք,
Կազմել ըզգունդ քաջամարտիկ.
Օ՛ն, դիմեցուք տալ ի յաղուրդ
Դաշտաց մերոց զարիւն անսուրբ.

Զի՞նչ կամի այդ հրոսակ գերեաց,
Մատնիչ, դաւող թագաւորաց.
Ո՞ւմ այդ անուր ւ՚ անարգ շղթայ,
Ո՞ւմ ի վաղուց պատրաստեալ կայ:
Զի՞նչ, նախատի՛նք մեզ, Փրանսացիք,
Ցորպիսի՞ յոյզս վառիլ պարտիմք.
Մատնել ըզմեզ վասն յանդըգնին
Ի գերութեան անդ ի նախկին:
Հա՛պ՝ օ՛ն, ի զէն, քաղաքացի՛ք, ևն:

Զի՛նչ, ժըպըրհի՞ն այդ վաշտք օտար
Լինել երկրիս հրամանատար.
Զի՛նչ, այդ վարձկան փաղանգ անսաստ
Զգոռ մեր մարտիկս արկցե՞ն տապաստ:
Այլ աղէ՛, Տէ՛ր, ձեր ըստրկաց
Արկցե՞ն զմեօք ըզլուծ չարեաց.
Եւ տիրապետք՝ անարգք անդրէն՝
Լիցի՞ն բաղդից մեր տընօրէն:

Հա՛պ՝ օ՛ն, ի զէն, քաղաքացի՛ք, ևն:

Դողացէ՛ք բռունք և դուք դրուժանք,
Կուսակցութեանց մեծ անարգանք.
Զի ձեր խորհուրդք հայրենասպան
Վարձս ընկալին զիւրեանց արժան:
Համակ՝ զինի դէմ ձեզ ի մարտ,
Թէ դիւցազունք մեր անկցին արդ,
Վեր կենցաղէ զայլըս երկիր՝
Մըղել ճակատըն վրէժխնդիր:

Հա՛պ՝ օ՛ն, ի զէն, քաղաքացի՛ք, ևն:

Նըւիրական սէր հայրենեաց,
Օգնեա՛ ի վրէժ՝ մեր կուռ բազկաց․
Ազատութի՛ւն, մեզ կաթոգին,
Ընդ քո պաշտպանս մարտի՛ր ուժգին։
Արդ՝ յաղթութեան ընդ մեր դրօշու
Հասցէ՛ ի ձայն քո քաջազդու․
Եւ թշնամիք քո ոգեսպառք
Տեսցեն զմեր փառս, քո զյաղթանակ։
Հա՛պ՝ օ՛ն, ի զէն, քաղաքացիք, ևն։

(Թարգմ․) Պ․ Խ․ ԹԷՐԶԵԱՆ

No. 116

ԿՌԻՒ ԿՈՉ
(Լա Մարսէյէզի եղանակով)

Յառա՜ջ, հայեր, հայրենիքի
Ազատութեան ժամն է հասեր․
Չէ՞ք տեսներ, բռնաւորն մեզի
Դէմ արնոտ դրօշ է պարզեր։
Չէ՞ք լսեր դեռ Հայաստանի
Ժողովուրդի հառաչանքներ․
Քիւրտեր, թիւրքեր հայ գիւղերու
Մէջ կը մորթեն մեր եղբայրներ։
Զէնքեր առէ՛նք, հայե՛ր,
Շուտով կազմենք գունդեր,
Քալենք յառա՜ջ, թող թըշնա-
Ջընջւի անարգ անուն։[մուն

Սոսկացէ՛ք, ո՛վ բռնաւորներ,
Եւ մատնիչներ Հայաստանի,
Սոսկացէք, զի ժամն է հասեր
Որ վրէժ առնենք ձեր գործերի։
Ամէն հայ ձեզ դէմ պիտ կըռուի,
Մեռնողին տեղ՝ մեր հայրենիք
Նոր զաւակներ մեզպէս կը ծնի․
Եւ չենք հանգիր՝ մինչև մեռնինք։
Զէնքեր առնենք և այլն։

Կռուին մէջ մեր մեծ եղբայրներ
Թէ մեռնին՝ մենք հոն կը մտնենք․
Կ'երթանք գտնել անոնց հետքեր
Ուր քաջաբար մեռնիլ կ'ուզենք։
Մեր եղբայրներ երբ մեռած են,
Մենք ալ կ'երթանք մեռնիլ անահ․
Այդպիսի դառն կեանք մեզ պէտք չեն,
Մենք ուխտած ենք վրէժ՝ կամ մահ։
Զէնքեր առնենք և այլն։

Ո՛վ դու, սուրբ սէր հայրենիքի,
Վեր վերցո՛ւր մեր թոյլ բազուկներ․
Ազատութի՛ւն մեր պաշտելի,
Զօրացո՛ւր քո հայ պաշտպաններ․
Թո՛ղ յաղթութիւն լսէ քո ձայն
Եւ վազէ գայ մեր դրօշին տակ․
Թո՛ղ բռնութիւն սուլթանական
Տեսնէ քո փառք՝ մեր յաղթանակ։
Զէնքեր առնե՛նք, հայե՛ր,
Շուտով կազմենք գունդեր,
Քալե՛նք յառա՜ջ, թող թշնա–
Ջընջւի անարգ անուն։[մուն

Մ․ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

No. 117

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՐՍԷՅԵԷԶ

Անցեալին տանք հրաժեշտ յաւէտ,
Թա՛փ տանք ոտքի փոշին հետ.—
Ատում ենք խիստ Մամոնան վատ,
Ինչպէս նաև ցարի պալատ։

Երթա՛նք չարքեր եղբարց տանջւող,
Երթա՛նք դէպի քաղցած ամբոխ,
Թշնամուն ստոր, աշխարհաւեր՝
Ուղղենք գոռոզ մարտահրաւէր։

Ելէ՛ք, խռնուէ՛ք, գործաւորնե՛ր,
Բռնութեան դէմ՝ քաջ, անվեհեր,
Ազգի բողո՛քդ՝ քինախնդիր՝
Դէպի առա՛ջ, առա՛ջ սլացիր։

Քո հանդիսան է լոկ գերեզման,
Ուր էլ չես տայ տուրք անսահման.
Ցար-վամպիրը ճզմում է քեզ,
Քամում արիւնդ տըզրուկի պէս։

Զինւոր կուզէ զօրքի համար—
Զաւակներըդ տո՛ւր անհամար.
Պալատ կուզէ քէֆ-վայելքի—
Կառուցի՛ր գնով քո քրտինքի։

Ելէ՛ք, խռնուէ՛ք, գործաւորնե՛ր,
Բռնութեան դէմ՝ քաջ, անվեհեր,
Ազգի բողո՛քդ՝ քինախնդիր՝
Դէպի առա՛ջ, առա՛ջ սլացիր։

Հարուստների ագահ ոհմակ
Պոկում է քո ծանըր վաստակ,
Որկրամոլներ պարարտանում
Քըրտինքովըդ՝ պատառըդ խլում։

Քաղցած մնա՛ որ՝ հըրճւի հարուստ,
Քաղցած մնա՛ որ՝ տայ ի կորուստ՝
Բօրսայում իր խիղճ, պատկառանք,
Վերջն էլ թափէ վրադ անարգանք։

Ելէ՛ք, խռնուէ՛ք, գործաւորնե՛ր,
Բռնութեան դէմ՝ քաջ, անվեհեր,
Ազգի բողո՛քդ՝ քինախնդիր՝
Դէպի առա՛ջ, առա՛ջ սլացիր։

Բաւական չէ՞ մեզ վիշտն անվերջ,
Ուրեմն, նետւե՛նք շուտ կռւի մէջ,
Դնէպրից մինչև Ծովը Սպիտակ,
Վոլգայից մինչ Կովկաս շիտակ։

Կղեր, հարուստ՝ ջարդի՛ր անխնայ,
Նենգ ցարի վրայ էլ շուտ գընա՛,
Զա՛րկ խուժանն այդ անիծապարտ,
Մինչ յաղթանակ հասնի հըպարտ։

Ելէ՛ք, խռնուէ՛ք, գործաւորներ,
Բռնութեան դէմ՝ քաջ, անվեհեր,
Ազգի բողո՛քդ՝ քինախնդիր՝
Դէպի առա՛ջ, առա՛ջ սլացիր...։

Կելնէ արնոտ արշալոյսին
Արդարութեան, սիրոյ արփին,
Թէև կը տանք մեր հայրենեաց
Երջանկութիւնն՝ արեամբ գընած։

Եւ պիտ հասնին օրերն ազատ,
Փըտտին չարի, սուտի արմատ,
Ի մի ձուլւին գիրկ ընդ գըրկւած
Բոլոր մարդիկ եղբայրացած։

Ելէ՛ք խռնուէ՛ք, գործաւորներ,
Բռնութեան դէմ՝ քաջ, անվեհեր,
Ազգի բողո՛քդ՝ քինախնդիր,
Դէպի առա՛ջ, առա՛ջ սլացիր։

Թարգմ. Ա. Ա. ՄԵԼԻՔ

No 118

ՍԻՓԱՆ ՍԱՐԵՐ

Լօ՛, լօ՛, լօ՛... Սիփանայ սէգ սարի վերայ
Կըտրիճները շտապով գալիս են–մխանում.
Այնտեղ անմահ որդիք անյաղթ հըսկայ լերան
Ջէնք ու զրահի են ընթանում: (Կրկնել)
Ի՞նչու վառւում են, զինւում,
Սանձակոծ ձի հեծնում անհամբեր,
Արիւնը նոցա բորբոք սրտի մէջ եռում,
Թռչում, անցնում անհամբեր,
Քանց Սիփանայ պինդ քամին՝
Սլանում են դէպի ցած, դաշտի մէջ է թշնամին...
Նա է վառում նըրանց վըրէժ անմոռաց:
Ահեղ կռուի մէջ վատ թշնամին
Հատու սուսեր է հանել, ցեղապետին ըսպանել,
Նա էր վառում քաջերին:
Բոլոր ցեղն այժմ ոտքի է կանգնած՝
Թշնամու ընդդէմ, մահու մարտի է կանչում.
Արեան մեծ վըրէժ է թշնամուց պահանջում.
Եւ թշնամին պարտըւած՝
Թողնում փախչում սարէ սար,
Յետ է ձըգում մեծ աւար: (Կրկնել)
Արիւն փօթեցին, արիւնի փոխան՝
Արիւն խըմեց ծարաւի սուսեր.
Նըրան յագեցած՝ դըրեցին պատեան:
Ելնում են հիմա սէգ Սիփանն ի վեր.
Սէգ Սիփանայ կանաչ գըլխին
Յաղթող ցեղն անում է մեծ խընդում,
Եւ ամպերի բարձրութեան միջից
Հսկայ Սիփանն է երեւում.
Էլ չի գալ մեզ մօտ թշնամին,
Սուր տեսաւ մեր պողպատին: (Կրկնել)

No. 119



Francis Scott Key, 1814.

Solo or Quartette.



STAR SPANGLED BANNER

(Continued)



ԱՍՏԵՂԱԶԱՐԴ ԴՐՕՇԱԿ

Կրնա՞ս տեսնել արշալոյսին ընդ աղօտ,
Որ մութին մէջ ողջունեցինք մենք նուաղկոտ.
Եւ շողշողուն աստղերն անոր կռուին մէջ
Պատնէշներէն դէտ կեցանք ցնծութեամբ մը անշէջ:
Եւ մթին մէջ պայթող ռումբեր, շէկ հրթիռներ
Կը յայտնէին թէ մեր դրօշն դեռ հոն էր.
Ա՜հ, ծածանի՞ դեռ աստղազարդ այդ դրօշակ
Քաջերու այս ազատ երկրին վրայ շարունակ:

Թուխ մշուշէն ընդնշմարուած ծովափի, ուր
Ոսոխին գոռոզ բանակն ահաբեկ հանգչի լուռ՝
Ի՞նչ է այն որ դարվարին վրայ ապուխդին
Մեղմիկ փչումով բացուի, գոցուի մերթ կիսովին:
Առաւօտեան ճաճանչներով վեհ ցոլացուն,
Հոսանքին վրայ հիմա փայլի այն շողշողուն...
Աստեղազարդ դրօ՜շն է այդ, ո՜հ, փայլի յաւէտ
Քաջերու այս ազատ երկրին վրայ վէտ ի վէտ:

Եւ ո՞ւր է այն պարծենկոտ խումբ որ երդնուց
Թէ աւերներըն պատերազմին այս հոգեցունց
Պիտ խլէին հայրենիքը մեր սիրուն.—
Հետքն իրենց պիղծ լուաց իրե՛նց իսկ յորդ արիւն։
Գերիք, վարձկանք փըրկութիւն չը գըտնեն
Ո՛չ փախուստի, ո՛չ ալ մահուան սեւ սոսկումէն...
Եւ աստղազարդ կը ծածանի դրօշն յաղթական
Քաջերու այս ազատ երկրին վրան մըշտական։

Այսպէս ըլլա՛յ ազատ մարդիկ երբ կանգնին
Վառն հայրենեաց՝ ընդդէմ մարտի արհաւիրքին,
Յաղթող, խաղաղ մեր այս երկիր երկնապարգեւ
Գովէ այն ոյժըն որ պահեց մեր ազգն յարատեւ։
Յաղթող ըլլանք երբ մեր դատըն է արդար,
Ու միշտ ըսենք թէ — «յԱստուած է յոյս մեր յար».
Եւ աստղազարդ դըրօշն յածի պիտ յաղթական
Քաջերու այս ազատ երկրին վրայ մըշտական։

Թարգմ. X.

No. 120

NATIONAL SPIRIT

ՀԱՅԱՍՏԱՆ

Հետեւողութեամբ «America» ազգային երգի

1. Իմ Հայաստան, իմ մայր,
Երկիր դրախտավայր՝
Կ'երգեմ զքեզ։
Մեր հարք քու մէջ ծընան,
Քեզի համար մեռան,
Եւ ես յօտարութեան
Կարօտ եմ քեզ։

2. Ի՛մ հայրենիք, օրրան
Եղար ազատութեան
Զոր կը պաշտեմ.
Քու ծաղկուէտ սար-լեռ,
Բերրի հող, ջուր-գետեր,
Պայծառ ու ջինջ եթեր
Պիտի գովեմ։

3. Թո՛ղ քու հովտաց քամին
Անտառներուդ ծոցին
Փըչէ ազատ։
Ազա՛տ մեծն ու փոքրիկ՝
Հըրճուին ամէն ոգիք
Թըռչնոցն իսկ դայլայլիկ
Հընչէ՛ ազատ։

4. Մեր հարցն օրհնեալ Աստուա՛ծ,
Պաշտպա՛ն մեր իրաւանց,
Ա՛րդ կը դիմեմ,
Պահէ՛ իմ Հայաստան—
Երկիրն արդարութեան,
Ազա՛տ միշտ անսասան,
Քե՛զ կ'աղաչեմ։

Պատ. Ա. Մ. Ի.



ՍԵՐՈԲ-ԱՂԲԻՒՐ

No. 121

ՍԵՐՈԲ–ՓԱՇԱՅԻ ԵՐԳԸ



2. Կամ կռուելով մեռնենք–անցնենք,
Կամ զէնքով փրկութիւն տանինք.
Կռուելով փրկենք Հայաստան–
Ազնիւ մտածողը թող գայ։

3. Մերթ Սասնոյ մէջ, մերթ Սիփան,
Միշտ կռիւ մղենք անխափան,
Կռուելով փրկենք Հայաստան
Այս յոյս ունեցողը թող գայ։

4. Այս հինգ դար է՝ մեզ կը սպանեն,
Բռնի մեզ կրօնքէ կը հանեն,
Մեր կին, աղջիկներ կը տանեն,
Պատիւ ունեցողը թող գայ։

5. Բարէ հողի երկաթէ մարդ
Հալածէ թող քիւրտը նամարդ,
Անվախ քարի տակ չոքողը,
Անսխալ խփողը թող գայ։

6. Վերջապէս մենք ունինք կռիւ,
Զէնքով մաքրենք պիտ մեր հաշիւ,
Մեր հայրենեաց փառքն ու պատիւ–
Սերոբին սիրողը թող գայ։

No. 122

ՀԱՅԴՈՒԿԻ ՍԻՐՈՒՀՈՒ ԵՐԳԸ

Ես հանեցի սուրը պատեանից,
Արտասուքովս օծեցի.
Տըրտմաւ անուշ սիրեկանս՝
Երբ իմ ողբըս կարդացի

Նա երդուեցաւ իմ սիրովըս
Չը խնայել վաս թըշնամուն.
Այս պայմանով աշխոյժ քաջին
Սուր, հըրացան յանձնեցին։

Աստուած սիրէք, հայ աղջիկներ,
Եկէ՛ք ուխտենք միասին
Այսուհետեւ էլ չը սիրել
Կռուից փախչող վախկոտին։

Խիստ զըզուելի կերպով նայենք
Ոսկու սիրով մեռնողին,
Համբոյրի տեղ թոյն կամենանք,
Թըշնամուց վրէժ չառնողին։

Ոգեւորուած կանչեց քաջը,
«Ո՞ւմ կ'սպասենք, վայ մեզի»,
Նա հեռացաւ մըռընչալով,
Ինչպէս կորիւն առիւծի։

No. 123

L'INTERNATIONALE.

(ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԸ)

Paroles de
Eugene Pottier.

Musique de
Adolphe Degeyter.

Marche.



2

Il n'est pas de sauveurs suprême,
Ni Dieu, ni César, ni tribun,
Producteurs sauvons-nous nous-mêmes!
Decrétons le salut commun!
Pour que le voleur rende gorge,
Pour tirer l'esprit du cachot,
Soufflons nous-mêmes notre forge,
Battons le fer quand il est chaud! Ref.

3

L'Etat comprime et la loi triche,
L'impôt saigne le malheureux;
Nul devoir ne s' impose au riche,
Le droit du pauvre est un mot creux,
C'est assez languir en tutelle,
L'Egalité veut d'autres lois:
"Pas de droits sans devoir, dit elle,
"Egaux, pas de devoir, sans droits! Ref.

4

Hideux dans leur apothéose,
Les rois de la mine et du rail,
Ont-ils jamais fait autre chose,
Que dévaliser le travail?
Dans les coffres-forts de la bande,
Ce qu'il a créé s' est fondu.
En décrétant qu'on le lui rende,
Le peuple ne veut que son dû. Ref.

5

Ouvriers, paysans, nous sommes
Le grand parti des travailleurs;
La terre n' appartient qu' aux hommes,
L'oisif ira loger ailleurs.
Combien de nos chairs se repaissent?
Mais si les corbeaux, les vautours
Un de ces matins disparaissent,
Le soleil brillera toujours! Ref.

ԷՆԹԷՐՆԱՍԻՕՆԱԼ

(ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԸ)

I

Ելէ՛ք, ո՛վ երկրի տառապեալներ,
Ելէ՛ք քաղցի թիապարտնե՛ր,
Կը գոռայ միտքն յուր խառնարան՝
Ժայթքումն է սա վերջնական:
Դէ՛հ, ոտքի ել, դո՛ւ ըստրուկ ամբոխ,
Քանդե՛նք բոլոր կարգե՛րը հին.
Աշխարհ փոխուի պիտ՝ հիմնովին.
Մենք գերի՛ ենք — ըլլանք ազա՛տ:

Յարդարակ

Պայքա՛րն է սա վերջնական,
Խմբուինք, և ապագային՝
Միութիւն մեր բանւորական
Պիտ՛ըլլայ ազգ մարդկային: (Կրկնել)

II

Չի՛ կայ ոչ մէկ փրկիչ գերագոյն, —
Աստուած, կեսար կամ տրիբո՛ւն, —
Արտադրողնե՛ր, մենք մեզ փրկենք,
Հանրութեան փրկո՛ւմ վըճռենք:
Մեր հընոցը մե՛նք իսկ արծարծենք,
Եւ երկաթը ծեծե՛նք տաք-տաք,
Որ յանձնըւի վատն աւազակ,
Եւ ազատի միտքն իր բանտէն:

Յարդարակ

III

Պետութիւնն ու օրէնք կը ճնշեն,
Տուրքն ալ քամէ դժբախտ արդէն.
Հարուստը ունի և ո՛չ մէկ պարտք,
Վարձքն աղքատին — բա՛ռ դատարկ։
Բա՛ւ է հիւծիլ յաւէտ հըպատակ,
Հաւասարութիւնն ուզէ այլ կարգ:
«Չկայ իրաւունք՝ առանց պարտքի,
Հաւասար, չի՛ կայ պարտք՝ անիրա՛ւ:»

Յարդարակ

Պայքա՛րն է սա վերջնական,
Խմբուինք, և ապագային՝
Միութիւն մեր բանւորական
Պիտ՛ըլլայ ազգ մարդկային: (Կրկնել)

IV

Ժանտատեսիլ՝ իրենց փառքերով,
Թագաւորներն հանքի, ճամբու,
Ո՛րևիցէ գործ ըրի՞ն երբեք՝
Աշխատանք լօպկելէ՛ զատ:
Արկղներուն մէջ դարշ վոհմակին
Հալեցաւ՝ ի՛նչ որ ըստեղծեց.
Արդ, հատուցում վըճռագրելով
Ազգն ուզէ լոկ ի՛ր իրաւունք:

Յարդարակ

V

Մե՛նք ենք, գիւղացի՛ք և բանւո՛րներ,
Աշխատողաց կուսակցութիւն.
Երկիրն է լոկ մարդե՛րու վայել,
Թո՛ղ ծոյլն մարդն այլո՛ւր բնակի:
Քանինե՞ր մեր մարմնով սընանին,
Բայց, ագռաւներն ու անգղներ,
Առաւօտ մը երբ չըքանան՝
Արևը միշտ պիտի փայլի:

Յարդարակ

Պայքա՛րն է սա վերջնական,
Խմբուինք, և ապագային՝
Միութիւն մեր բանւորական
Պիտ՛ըլլայ ազգ մարդկային: (Կրկնել)

Թարգմ. Ա. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

No· 124

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

ՅԱՏԿԱՊԷՍ ՋԱՅՆԱԳՐՒԱԾ ԹՒՐՔԻՈՅ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ, «ՀԱՅՐԵՆԻՔ-ԵՐԳԱՐԱՆ»-Ի ՀԱՄԱՐ, ՊՕՍԹԸՆԻ ԵՐԱԺՇՏԱՊԵՏ Mr. EBEN H. BAILEY-Ի ԿՈՂՄԷ։



ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն)



2. — Լուսազգեստ է ազատութիւն՝
Բոսորագոյն զոհին արիւն.
Այդ արիւնով օծուած անմեղ
Ազատութիւնն է փառայեղ:
Ազատութիւն կ'ուզենք սակայն
Իմաստուն, լուրջ, հայեացքով լայն.
Արդարութեան հզօր բազուկ
Մեր իրաւանց ըլլայ նեցուկ:

3. — Արեւելքի ազգեր ենք քոյր,
Թո՛ղ հալածի նախանձը կոյր.
Ձեռք ձեռքի տանք, ա՛լ հաշտուինք,
Եղբայրութեան կընքենք դաշինք:
Հայրենիքին մի եւ ազատ
Օսմանցիներ ենք հարազատ.
Ձեռք ձեռքի տանք եւ աշխատինք,
Այս սուրբ ուխտին վըկայ երկինք:

No. 125

ՀԱՅՑԵՐՈԽՍ ԲԱՂՁԱՆՔԸ

Ա՛խ, ի՛նչպէս կուզեմ տեսնել մեր հային
Ազատ, ապահով, կըրթեալ, ինքնագոհ,
Ամէն հայի տուն — դըրախտ երկնային…
Լոկ այդ բանն ինձնից չուզենար մէկ զոհ:

Ա՛խ, ի՛նչպէս կուզեմ տեսնել Հայաստան
Մի օր ազատուած թըշնամու ձեռքէն,
Հայի երկիրը հայի սեփական..
Լոկ այդ չի բաժնէր ինձ իմ կօպէկէն:

Ա՛խ, ի՛նչպէս կուզեմ որ մեր հայերուս
Արծարծուէր սէրը ուսման, գիտութեան,
Հայի մէջ չի մնար մի հատիկ անուս…
Լոկ հեռու ինձնից թուղթ ստորագրութեան:

Ա՛խ, ի՛նչպէս կուզեմ որ հայ պատանիք
Դէպ համալսարան խըմբով վազէին,
Եւ Զուիցերիա երթար հայ աղջիկ…
Լոկ ինձնից նոքա կօպէկ չուզէին:

Ա՛խ, ի՛նչպէս կուզեմ, որ մեր Զէյթունցին
Միթռայլեօզ, շասպօ, ռըմբկէն ունենար,
Զարդ ու բուրդ անէր քուրդ ու չէրքէզին…
Լոկ ինձնից զէնքի նա փող չուզենար:

Երբ մեր հայրենիք հրաշքով ազատուէր,
Մերոնք էլ ազատ կեանք-օր վարէին,
Ա՛խ, ի՛նչպէս, ի՛նչպէս, լաւ բան կը լինէր՝
Երբ հայք ինձ իրանց իշխան ընտրէին:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ.



ԱՆԴՐԱՆԻԿ

No. 126

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԵՐԳԸ

Կովկասի քաջե՛ր, խմբեր կազմեցէ՛ք,
Բաջ Անդրանիկին օգնութեան հասէք.
Առած իր շուրջը գինուորներ ութսուն՝
Մաքրէ ճանապարհ նա դէպի Սասուն.
Սուլթանն սարսափած, ճարը կտրըւած՝
Հազար ոսկի է գըլխին խոստացած:

Հայ պատանինե՛ր, շուտով շարժւեցէ՛ք,
Երբեք մի՛ վախէք, սուրեր շարժեցէ՛ք.
Հասել է ժամը սուրբ ազատութեան,
Սպասելու ժամ չէ, առաջ քայլեցէ՛ք.
Սիրենք միութիւն, չանենք վատութիւն,
Ձեռք բերենք, հայե՛ր, մեր անկախութիւն:

Օտար հողի մէջ էլ չը մնանք, հայե՛ր
Հերիք է հային այս պանդըխտութիւն,
Թո՛ղ չը ծայրէ մեզ անգութ թըշնամին,
Մինչև մենք հասնենք մեր նըպատակին.
Սիրենք միութիւն, չանենք վատութիւն,
Ձեռք բերենք, հայե՛ր, մեր անկախութիւն:

Կովկասի քաջե՛ր, առիւծի ճուտեր.
Սըրէ՛ք սուսերներ, առէ՛ք հրացաններ,
Հայ օրիորդնե՛ր, պըճնեալ աղջիկներ,
Ծախէ՛ք ձեր զարդեր, առէ՛ք գընդակներ,
Ազգա՛տ, քո լուման տո՛ւր հայրենիքին,
Փըրկելու քո խեղճ, կարօտ ընկերին:

Դէ՛հ, հայ եղբայրնե՛ր, հեծէ՛ք ձեր ձիեր,
Բաց թողէ՛ք սանձեր, անցէք սար, ձորեր,
Ահա՛ կըռւի դաշտ, ահա՛ թըշնամին,
Մեր ձայնն թող հընչէ բռնութեան անհաշտ —
Թող մեզ խրատ լինի ամէն վայրկեանին,
Կամ ազատ մի կեանք, կամ մահ անարատ:

No. 127

ՇՈՒՇԱՆՆ ՇԱՒԱՐՇԱՆԱՑ

Կուսա՛նք հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:
Պայծառ պատկեր կուսանաց
Հայոց պըսակ պարծանաց.
Ճակատն ի քօղ խորոտիկ,
Ի հով տըւած խոպոպիք,
Տարակ տատամբ մանրուքայլ
Ման գայ ի դաշտ ցօղափայլ.
Մեղըր կաթէ շըթներուն,
Փայլկըտան աչքըն սիրուն:
Կուսա՛նք հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:

Հիւսիսային մեր աստղիկ
Հայաստանեայց գեղեցիկ,
Արեւնըման հայելի,
Արքայդըստրիկ նազելի
Սիրասընունդըն Սանդուխտ,
Որու արեւ ելքն ու մուտ՝
Փափաքէին սրտամաշուք,
Հա՛րսն է ելեր շնորհաշուք:
Կուսա՛նք հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:

Քանց զարուսեակ պսպըղուն
Ի մէջ մանտրիկ ամպերուն,
Քանց վարդալոյս արեւակ
Ի խնծորի տերեւակ,
Քանց Երասխայ նունուֆար
Գլխիկն ի ցօղ շարուշար,
Քանց զամենն ա՛յլ գեղեցիկ
Նազի Սանդուխտն բամբշիկ:
Կուսա՛նք հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:

Սիպտակ սարերն յայնոր տես
Հալին լինին կարմրերես,
Ծառք ու ծաղկունք տան պըպլուկ
Խօսի ամէն պըլպըլուկ.
Նարկիզ՝ աչեր բիւր հանէ
Ուր որ Սանդուխտ անցանէ.
Յայնոր չընչէն հաւասար
Ծածկին ծաղկով ձոր ու սար:
Կուսա՛նք հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:

Բարձրապըսակ ճակատներ
Հըղու հաւասար են եկեր.
Ոսկի գոհար հատ ցանած
Զորն են լերին հասուցած,
Եւ մարգըրտէ բարկ աւազ,
Ուր որ անցնի հեզանազ
Հայոց օրիորդըն Սանդուխտ՝
Տոտանց հետքին գան ի յուխտ:
Կուսա՛նք հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:

Թագւորորդի կորիճներ
Ընդ դարպասնին դուրս ինկեր,
Ի յԱլանաց մինչ Պարսիկ,
Մինչ ի Հռովմ մինչ ի Հընդիկ՝
Բերանաբաց կու նային,
Երնեկ տալով փեսային՝
Որ զօրիորդն այն հայոց
Յիւրըն տանի տուն և ծոց:
Կուսա՛նք հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:

Բայց Սանդըխտոյ արժանի
Չըկայ մին տեղ արքունի.
Յայնոր աչացըն կամար՝
Ցած գայ երկիրս ու խոնարհ.
Երկինքն ասէ. իմ դահի՝
Սանդուխտ պիտէ՛ր թագուհի.
Ծով՝ իմ ծփանցըս ծիրան՝
Սանդուխտ պիտէր տայր հրաման:
Կուսա՛նք հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:

Բայց կայ մի մեծ քան զերկիր,
Լայն՝ քանց ծովուն ծըփան ծիր,
Եւ քան զերկին բարձր անհուն,
Պայծառ քանց լոյս արեւուն,
Կայ մի ահեղ թագաւոր
Որում չըկայ չափ սինոր
Այն, և միայն այն պիտի
Փեսայ կուսին Սանդըխտի.
Կուսա՛նք հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:

Իւր լոյս դարպասն է պատրաստ,
Կարմիր կանաչ առագաստ,
Եւ աստղազարդ կապուտակ
Տարակ տատանցն է յատակ.
Ճապուկ ճորտերն են հրեղէն,
Ուր որ նային՝ կայծ թափեն.
Ինչ որ խօսին՝ երգ է այն,
Խնդում ու սէր ամենայն.
Կուսա՛նք հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:

Ի Սանիրայ սուրբ սարէն
Փութայ փայլեկըն Թադէն,
Երկնախօսիկ փեսաւէր
Օրիորդին տայ հրաւէր·
«Տէրն այն երկնուց և երկրի
Զոր պաշտէ քո մեծ քեռի՝
Սիրեց ըզքեզ, սիրի՛կ կոյս·
Ե՛կ հարսնացիր ի Յիսուս»։
Կուսա՛նք հայոց, նոր չուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։
Սանդուխտ եղաւ դարպասէն·
Ապշեց հայոց տունն ամէն։
Սանատրուկ հայրն որ լըսեց՝
Ցասկի թախտէն վայր վազեց·
«Սանդո՛ւխտ, սիրուն իմ դստրիկ,
Ուրանա՞ս դու զքո հայրիկ·
Ուրանա՞ս դու զԱնահիտ,
Պաշտե՞ս զաստուածն Հըրէից։
«Աչացըս լո՛յս ոսկեթել,
Դեռ աչքս արցունք չէր կաթել.
Քեզ համար՝ դուստր աննըման,
Գետեր յաչերս ի վայր գան...
Սանդուխտ, ուզէ՛ ինչ կ'ուզես,
Արամազդա՛, քեզ տամ ես·
Թէ Հայաստանս է պըզտիկ՝
Զէնքս ու զօրքերս են հերիք·
Թէ հրամես դուստր իմ աղուոր,
Հայրիկդ ըլլամ քեզ զինուոր·
Առնում աղեղս ու երթամ
Բոլոր աշխարհս քեզ որսամ·
Զխաքա՞նն ուզես թէ զԿեսար,
Բռնեմ բերեմ քեզ հաւասար·
Թէ ծովուն մէջն ուզենաս՝
Բիւրեղ կանգնեմ քեզ դարպաս։
«Սանդո՛ւխտ, քու հայր քու գերի,
Լուկ ի Հրէէդ կա՛ց հեռի·
Լըսէ՛ ինձ դուստր իմաստուն,
Լոյս իմ աչացս արեւուն,
Օտար հաւատք մի՛ պաշտեր,
Քու հօր գլխու սև մ'ուզեր·
Սանդո՛ւխտ, դստրիկ իմ սիրուն
Ողորմէ՛ հօրդ աչերուն»։
Կոյսըն կեցաւ լուռ յուշիկ,
Հապա հառչեց անուշիկ·
«Հայր, քանց զքեզ սիրելի
Զըկայ ոքիկ մ'ինձ յերկրի·
Բայց երբ զԱստուածն իմ ճանչցայ,
Սէր՝ քան զամէն մեծ գըտայ։
Պաշտէ՛ զԱստուած քո քեռուն,
Հապա չերթամ ես հեռուն։
«Ամ թէ տես դու զՅիսուս
Որ կեանք բերաւ մեր հոգուս,
Թէ զիս չուզես քրիստոնեայ·
Թէ այլ խօսիս զԱնահտայ,
Սանդուխտ այլ չէ քո դստրիկ,
Սանատրուկ չէ իմ հայրիկ·
Յիսուս՝ իմ հայր իմ փեսայ·
Այս իմ վերջին խօսք ըլլայ»։
Զայս վերջին խօսքն երբ լըսեց,
Սանատրուկ՝ դէմքըն ծածկեց·
Փերթ մը փըրթաւ իր սըրտէն,
Եւ հեռացաւ Սանդըխտէն·
Կանչեց Նըման առիծու,
Երդուաւ լուսնի ու արեւու·
Զէտ ըզկայծակ սև ամպուն
Բերնէն փըչեց բոթ մահուն։
Դողաց սարսեց Հայաստան·
Սանդուխտ վազեց ի զընդան·
Կարծըր կոճղիկն ըրաւ գահ
Զարդերն ամէն փայլեն մահ·
Կուսական քօղն սեւակ
Սպիտակ ճակտին վայլէր թագ·
Բիւրեղ բազկացն ապրանջան
Պողվատ շըղթայք շըրընչան։
Սանատրկոյ սև հրաման
Հնոցի ծըխայն գայր Նըման,
Կըծէր աչաց բարկ արտասունք,
Լային կուսանք և հարսունք։
Ի մօր գըրկին տըղայն լայր,
Մայրըն լալով յետ դառնայր·
Կըտրիճ տըղայ ծե՞ր հալւոր,
Լայր ամէն հայ սըգաւոր։
Կուսա՛նք հայոց, նոր չուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։
Ամենք կանչեն, «Թադուհի՛՝
Ողորմէ հայ աշխարհի·
Քո թագաւոր հօրդ արեւուն,
Քո աննըման լուսերուն,
Ապրի՛ր Սանդուխտ, ե՛կ ապրիր,
Մի՛ բերեր մութ, մի՛ մեռնիր·
Սանդուխտ, ամէնքս քեզ գերի
Ողորմէ հայ աշխարհի»։
Սանդուխտ երկնուց լըսէ լուկ
Եւ լացերուն կայ անհոգ։
Լալով զինուորքն յառաջ գան,
Զէնքերն ի յուս կու դողան·
Շատ լարեցան աղեղունք·
Շատ թափեցան դիակունք։
Բայց չըդըպաւ մահ տեղի
Ի գեղեցիկ Սանդըխտի·
Կուսա՛նք հայոց, նոր չուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան։

Նըման ծաղկանց կարկտահար՝
Երբ նա գիտեց զօրս հազար
Զիրար զարկած և ընկած
Ու զմահ իրմէն սարսափած,
Ցարժեց զճակատըն սիրուն
Արտասունք ածեց աչերուն,
Եւ հառաչեց առ Յիսուս,
«Տէ՛ր իմ, հրաման տուր հոգուս»:
Երիտասարդ մի յանկարծ
Կայծակնաթափ սուր շողաց...
Ուսկի՞ց արդեօք էր եկեր,
Դահի՞ճ, թէ տաք սիրոյ տէր.
Երկի՞նք թէ հա՞յրն էր ղըրկած.
Ոչ ոք գիտէ զայս գիտուած:
Սուրըն շողաց ու զարկաւ...
Շուշան Սանդուխտ՝ վարդ ընկաւ:
Սուրըն շողաց մէկ մի փայլ
Սանդուխտ ծաթեց իրեք այլ.
Կարմիր կաթէր ի կըրծքէն
Վարդեր բուսան չորք դիէն.
Աչքըն կոկոն մանուշակ.
Ամ՝ ի՛նչ նայուածք անուշակ.
Ափկիցք շուշանք կիսափակ.
Մէջ շրթներուն ի՛նչ կըրակ:
Ի ծայր լերին Սանատրուկ
Հրեղէն կառքեր տեսնէ՞ք դուք.
Հոն երկնաւոր թագւորն այն,
Հոն Սանդըխտոյ է փեսայն.
Զօրիորդն հայ աշխարհի՝
Նախ քան զամէն վկայուհի
Ընտրեց իւր հարսըն կարմիր
Հանեց թըռուց յերկնուց ծիր:
Կուսա՛նք հայոց, նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան:
Թերթեր ճերմակ ու կարմիր
Ներկեր երկինքն են և երկիր.
Ելէ՛ք կուսանք, ժողվեցէք,
Վարդն ու շուշան զուգեցէք.
Դըրէք դալար զայն մարմին
Թաղէք հետ ի շիրմին:
Սանդո՛ւխտ, հայոց կոյս քընքոյշ,
Հանգչէ ի հողս այս անոյշ:
Կուսա՛նք հայոց, քեզ շուշան
Բերեն ի դաշտ Շաւարշան: —
Ո՛հ, թէ քանի՛ երջանիկ
է Հայաստան հայրենիք՝
Որ հանց բերաւ բոյս կուսան՝
Ուսկից հազար կոյս բուսան:
Երկինք կապուին երկրի հետ.
Քեզ ի՞նչ երգէ Նահապետ,
Սանդո՛ւխտ, անմահ թագուհի
Իմ Հայաստան աշխարհի
Կուսա՛նք հայոց, նոր շուշան
Բերէք ի դաշտ Շաւարշան:

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

Թուխ երկինքէն կէս-գիշերին
Նեղ մահիկի կենտ աչքն է ծուռ,
Որ անքըթիթ խորագըննին
Աչքերուս մէջ կը նայի լուռ.

Ու ժպիտով մը չոր հեգնոտ
Ինծի ըսել կ'ուզէ կարծես.
«Նիւթի՛ փըշրանք, ի՞նչ կ'ընես հոս
Գիտե՛մ, մե՛ծ գործ կը մտածես...»

ՇԱՆԹ

No. 128

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Արի, գութան, վա՛րի գութան,
Օրն է եկել, ճաշ դառել.
Առը ջուր տուր, խոփիդ ղուրբան,
Օրհնեալ է Աստուած, հօրովէ՜լ։

Քաշի՛ր, եզը, ուսիդ մատաղ,
Քաշիր՝ քաշենք, վար անենք.
Ճի՛պտին արա, քըշիր հօտաղ,
Մեր սեւ օրին ճար անենք։

Պարտքատէրը գանգատ գընաց,
Քեօխուէն կը գայ, կը ծեծի.
Տէրտէրն օրհնեց, անվարձ մընաց,
Կը բարկանայ, կ'անիծի։

Էն օրն եկան թօվճի արին,
Հարկ են ուզում տէրութեան.
Ի՞նչ տամ կոռին ու բէգեարին...
Վարի՛, վարի՛, իմ գութան։

Ձեռքըս պակաս, ուժըս հատած,
Հազար ու մի ցաւի տէր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ։

Արի՛, գութան, վարի, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել.
Առը ջուր տուր, խոփիդ ղուրպան,
Օրհնեալ է Աստուած, հօրովէ՜լ։

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

No. 129

ՀԱՍՕՅԻ ԵՐԳԸ

Ահա ծագեց կարմիր արեւ,
Տաք եւ պայծառ է օրը,
Դէ՛հ, քաշեցէք, սիրուն եզներ,
Առաջ տարէք արօրը։

Վարը վարենք, ակօս փորենք,
Խոր ակօսներ հողի մէջ,
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
Ցորեն դիզենք կալի մէջ։

Կը գայ ձմեռ, մենք վախ չունենք,
Ուրախ կ'անցնի մեր օրը.
Ուտելու միշտ պաշար ունենք,
Լի եւ կուշտ է մեր փորը։

Դէ՛հ, քաշեցէք, սիրուն եզներ,
Շուտով վարենք արտերը.
Թո՛ղ չասեն մեր դրացիներ—
«Ծոյլ են Հասոյի եզները»։

ՐԱՖՖԻ

No 130

ԱՆԿԱՏԱՐ ՑԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտն ի վեր կամկար գութան կը քաշէր,
Ունայն բաղձանքով հոգին կը մաշէր.—
«Ցորենըս–հունտըս, որ պիտ տամ արտին՝
«Զի լինիլ կոխան ոտից չար քըրդին.
«Ոսկէ հասկերըս սուր սուր մանգաղով
«Պիտ արժանանամ հընձել իմ ձեռքով.
«Ցորենըս կասել եւ ալիւր դարձնել,
«Բաղցած ընտանիքս հացով կըշտացնել...
«Չէ՛, այսքան բարիք չունիս դու, Աստուա՛ծ,
«Թէպէտ քեզ մարդիկ կ'ասեն ողորմած»։

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ

No. 131

ԵՐԳԻՉԸ

Տաւիղն առաւ ու զարկեց նա ոգեշունչ լարերին,
Եւ թրթռուն նըւագներ բորբոքեցին մեր հոգին.
Գարուն և սէր էր երգում, երկնից կապոյտն ու աստղեր,
Եւ սոխակի դայլայլիկ և պուրակի զով ըստուեր:
Նորա մատաղ սըրտի մէջ դեռ գարունն էր փըթթած,
Նորա համար քաղցր էին դեռ վայելքները կենաց.
Եւ երազներն էր երգում նա մեր ծաղիկ հասակի,
Եւ օրհնում էր պտուղներն արդար, խաղաղ վաստակի:

Անցան օրեր, և ահա խաւարեցաւ մայիսեան
Գեղաժըպիտ առաւօտ. երգչի գըլխին կուտուեցան
Մըռայլ ամպեր, և հոգին խըռովեցաւ թախծալից.
Եւ թօշնեցան անուրջներ ու հեռացան առաջից
Վառ պատկերներ մանկութեան... Եւ լալաձայն հառաչներ
Հասան նորա ականջին. տեսաւ որ կեանքն էլ այն չէր,
Ինչ կարծել էր երազկոտ, անփորձ անհոգ օրերին...
Եւ վըշտաբեկ նա հոգով նոր շունչ տուաւ լարերին:

Եւ բարձրաձայն աղաղակ թընդացըրեց մեր աշխարհ
Կարծես ամպրոպ ճայթեցաւ ու պատռեց սև խաւար,
Մընա՛ք բարով, անուրջնե՛ր, կո՛յս աչագեղ ու գարո՛ւն,
Էլ հընչելու չէ տաւիղ՝ զմայլուած անուշ ձեր սիրուն:
Եւ նա երգեց մերթ տըխուր, ինչպէս մըրմունջ սըգաւոր,
Մերթ պոկելով զայրագին չարի դիմակ նենգաւոր.
Մէկ էլ հուժկու հարուածով ասես թափում էր կըրակ —
Այն անվեհեր մի մարտի ղօղանջում էր զօռ կոչնակ:

Եւ սթափուեցանք մենք քընից, ականջ դըրինք վըրդովուած,
Հըզօր ձայներն անծանօթ մենք լըսեցինք կախարդուած...
Եւ ինչպէս մութ գիշերով հեռու ճըրագ ճամբորդին,
Նա դիւթական զօրութեամբ քաշեց դէպ ինք մեր հոգին:
Իբրև մարտիկ՝ չղթաներ թէ խորտակել չըկարաց,
Ազատ կեանքի մարգարէ դարձաւ իր խեղճ հայրենեաց,
Եւ բռնութեան թըշնամի՝ ըստրուկ եղբօրն ախոյեան՝
Ազատ երգով պանծալի փակեց շըրթունքն յաւիտեան:

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Օդածաւալ ովկիանում
Մէգի միջով լողում են
Անառագաստ ու անղէկ,
Պերճ հոյլերը լուսեղէն:
Դաշտերի մէջ անշաւիղ
Լայնատարած եթերի
Ճամբորդում են խումբերը
Քուլա-քուլա ամպերի.

Հանդիպելիս, զատուելիս՝
Չեն բերկրանում, չեն տըխրում,
Ապագայի չունին իղձ,
Եւ անցեալի զըղջացում:
Դըժբախտութեան ժամանակ
Նորանց միայն միաքըղ բեր,
Եղի՛ր անվիշտ նոցա պէս,
Դէպի աշխարհն՝ անտարբեր:

ԼԵՐՄՕՆՏՕՎ

No. 132

ԾՈՎ

Ծո՛վ, եկ բացուինք մենք իրար.
Ու կը կարծեմ ես ու դուն
Պիտի սիրենք անպատճառ
Իրար յոյզն ու տրտմութիւն։
Քեզի ես շուտ հասկցայ.
Վեհ ամենէն բնութեան
Կապոյտ սիրտն ես դուն հսկայ.
Սի՛րտ՝ իմ սըրտիս յար-նման։

Դուն ալ ունիս, ինծի պէս,
Դժգոհութեան վայրկեաններ,
Երբ կընճռոտ կը ճողրիս
Խիճոտ, սեղոտ ափն իվեր.
Ալիքներըդ ծալիծալ
Կը տըրտընջան, կը չաչեն,
Հեգնութեան մը պաղ ծիծաղ
Դուրս կը ցայտէ քու լանջէն։

Մերթ սաղերուն կը քըծնիս
Խաղի կ՚ելնես լուսնին հետ,
Եւ յուզումէդ կ՚առկայծես,
Սարսուռ կ՚անցնի ջիղերէդ.
Դո՛ւն ալ փառաց այդ պահուն
Կը փաթթըւիս յոյզերուդ,
Որոնք ժըպտով մը անհուն
Կ՚իջնեն ծոցըդ քու ծըփուտ։

Այլ՛և անչափ անծըպտուն
Ամէն բանի անտարբեր՝
Մեռելութիւն մ՚ունիս դուն,
Որ իմ կըրծքէս ես ելեր.
Չե՛ս խըլրտիր, չե՛ս խորհիր
Եւ ոչինչ ալ չե՛ս ըզգար.
Անխորհուրդ է ամէն իր
Այդ վայրկեանիդ ցաւագար։

Մերթ ալ յանկարծ փըրփըրուն,
Ցասումով մը մոլեգին,
Կը գալարիս ժայռերուն
Ու կը թքնես երկընքին։
Ըսէ՛, ինչո՞ւ այդ զայրոյթ,
Մի՞թէ դո՛ւն ալ կապուած ես.
Միթէ և քո՞ւ ուժերուդ
Ազատ գործել չեն տար քեզ։

Ու վըրէժի չեչաերով
Ո՞վ կը կանչես, ապագա՞ն,
Երբ կըրծքիդ տակ ցաւ, գորով
Ոյժ ու բաղձանք են կուգան.
Մեծ բընութեան դէմ-հանդէպ
Ա՞ռ կ՚երգես դուն զայրագին,
Թէև ժայռերն են բոսէպ
Լոկ ունկընդիր մեր երգին։

ՇԱՆԹ

Այս շրջանակին, որ պարունակն է մեր մուտքին ու ելքին՝
Ո՛չ սկիզբը, ոչ վերջը յայտնի է։
Ո՛չ մէկը՝ այս աշխարհէս մէջ՝ կ՚ըսէ մեզի ճշմարտօրէն,
Թէ ո՞ւրկէ կուգանք կամ ուր կ՚երթանք։

* * *

Մեր սաեղծողը, երբ բնութեան ընթացքը սահմանեց՝
Ինչո՞ւ ենթարկեց զայն նուազումի ու փճացումի։
Եթէ ազեղ դուրս եկաւ ան, ո՞վ է պատասխանատու իր կերպարանին համար.
Եթէ գեղեցիկ դուրս եկաւ, ինչո՞ւ թոյլ տրւեցաւ կորուստի երթալ։

ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄ

ԽՐՃԻԹՈՒՄ

Մանուկները գոռում-գոչում,
Լալիս էին աղեկէզ
Նանի՛, նանի՛, հաց ենք ուզում,
Վե՛ր կաց, նանի՛, հաց տուր մեզ:
Հիւանդ նանը տեղի տակին
Ծանըր տընքաց տըխրալի·
— Մենք հաց չունինք, ես ձեզ մատաղ,
Ապին գընաց հաց բերի:
— Չէ՛, խաբում ես, սուտլիկ նանի,
Դու ասացիր՝ քարափին
Երբոր զարկի շողքն արեւ
Հաց կը բերի մեր ապին:
Արեւն եկաւ, անց էլ կացաւ,
Մենք սոված ենք դեռ էսպէս·
Նանի՛, նանի՛, հաց ենք ուզում,
Վե՛ր կաց, նանի, հաց տուր մեզ:
— Հաց չի գալ ձեր ապին դեռ,
Տուն չի գալի սեւերես·
Քիչ էլ կացէք, իմ բալիկներ,
Հիմի այնտեղ կ'երթամ ես...
Մի մեծ ապի կայ երկընքում,
Նա շատ ունի այնտեղ հաց...
Նա ձեզ այնքան շա՛տ է սիրում...
Նա չի թողնի ձեզ սոված...
Կ'երթամ այնտեղ, նըրան կ'ասեմ,
Որ սոված էք, էմ բալէք,
Ձեզ համար շա՛տ-շա՛տ հաց կ'ուզեմ,
Որ դուք ուտէք, լաց չըլէք...
Ասաց, սեղմեց սովալըլուկ
Ձագուկներին իր լանջին,
Ու չըրթներին վըրայ դալուկ
Սառեց համբոյրը վերջին:
Կըռներն էլ ետ չը բացուեցան
Բազմաչարչար մայրիկի·
Աչքը փակեց ու յաւիտեան
Գընաց, որ հաց ուղարկի:
Մանուկները գոռում, գոչում,
Լալիս էին աղեկէզ·
— Նանի՛, նանի՛, հաց ենք ուզում,
Վե՛ր կաց, նանի՛. հաց տուր մեզ:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

No· 134

ՊԱՏՐԱՆՔ

Շուրջիս տափակ ցամքած կեանքէն զայրացկոտ`
Կանչեցի ես իտէալըս կենսածին․
Բայց եւէս կըծու ծաղրով անամօթ`
«Է՜, ան միայն գըրքի մէջն է» պոռացին․
Ես ալ գիրքը ինծի ընկեր ընտրեցի —
Ես պատրանքը սիրեցի։

Մենութեան մէջ լուռ մութընչող սենեակիս`
Չիրագործող երազներու մէջ թաղուած`
Հեռո՜ւ ու վեր սաւառնեցաւ միշտ հոգիս—
Հո՜ն, ուր կեանքիս գոհար յոյսերն են մաղուած․
Ես, մօր մը պէս, անուրջները գըգուեցի--
Ես պատրանքը սիրեցի։

Երբ գեղեցիկ, թարմ աղջիկը ժըպտեցաւ`
Սիրտըս դողաց յուզումով մը ներդաշնակ,
Սիրեցի ալ, միայն ոչ ան, որ անցաւ,
Այլ անոր սուրբ, յափըշտակիչ դէմքին տակ
Նոր էակ մը, որ մըտքէս հոն անցուցի—
Ես պատրանքը սիրեցի։

Հայրենիքի հուր կարօտը բընածին
Երբ բըռընկցուց յուզուած լանջըս անդորրէն,
«Դուն հայրենիք, դուն հող չունիս» հըծծեցին․
Ես դառնացայ․ բայց ալ ուժգին այդ օրէն
Իմըս չեղող հայրենիքըս պաշտեցի—
Ես պատրանքը սիրեցի։

Ինծի համար այն ժամերը թանկ եղան,
Երբ ներշընչուած բանեղծեցի միշտ անդոյ`
Բայց անձնուրաց ազնիւ դէմքեր սիրեկան․
Երբ իրական աշխարհի մէջ միշտ դըժգոհ
Իտէալի կեանքէն երգել ուզեցի —
Ես պատրանքը սիրեցի։

ՇԱՆԹ

No 135

ԱՅԴ ՄԵՆՔ ԵՆՔ ԳԱԼԻՍ

Այդ՝ մենք ենք գալիս —
Մաշուած բաճկոններ, խղոտ ու մրոտ,
Տրորուած գլխարկ, աղտոտ մազերով —
Մեծ մասամբ դեղնած, գրճուճ ու բոկոտ՝
Երբեմն ուժգոյն, երբեմն անխռով,
Երբեմն քաղցի, լուռ տառապանքի
Եւ կնճիռները անջինջ կնիքով,
Երբեմն ըմբոստ արհամարհանքի,
Անզուսպ զայրոյթի — վրէժի թոյնով.
Դեռ վաղ ծերացած հոգեմաշ ցաւից,
Լոյսի, թարմ օդի տենչանք դէմքերնիս —
Ու մարդավայել ապրելու յոյսից՝
Դեռ խո՛ր վէրքերի կսկիծ սրտերնիս —
Այդ՝ մե՛նք ենք գալիս...
Մե՛նք — բանուորներս՝ տըգած փորերի,
Շերտաւոր ճարպի, ոսկու դէզերի —
Անվարձ մշակներ...
Մե՛նք — բանուորներըս՝ վըշտի, արցունքի,
Կիսաքաղց կեանքի, բանտ ու աքսորի
Անբաժան ընկեր..
Մե՛նք — բանուորներըս՝ ապրելու ահից
Կեանքի շուկայում — ըստոր վաճառքից —
Էժան ծախուածներ...
Ո՛, մեծ տըզրուկներ, մարդկային կեանքի
Ստեղծագործութեան անարգ խեղդիչներ.
Դո՛ւք՝ փարթամութեան, անառակ կըրքի
Քընած տենչերով — թըմրած խըլուրդներ.
Դո՛ւք՝ ամօթապարտ գերեզման փորող
Գորշ գաճիճներըդ սուրբ ազատութեան,
Ձեր նըմանների արիւնը լափող,
Բողբոջ յոյսերի՝ գեւեր հոգեհան —
Գուցէ չե՞նք չոյում մեր տանջուած դէմքով
Ձեր նուրբ ջիղերը — հոգով քաղցածնե՛ր՝
Դուք, կո՛ւշտ մարմիններ։
Չէ՞ որ մեր արեան մի-մի կաթիլով,
Թափած քըրտինքի՝ աղի ու լեղի,
Ու արցունքների անվերջ հեղեղով,
Մեր բազուկների հուժկու, ժըրաջան,
Կոր թիկունքների, հոգու տագնապով,
Մեր գըլխին պատրաստ ամէն մի վայրկեան
Չարաբախտ մահուան անլուր սարսափով —
Սընունդ էք առնում՝
Ապրում, խաղ կապում...

Եւ վաստակներնիս չընչին փշրանքներ
Դըժգոհ շըպըրտում քաղցած ամբոխին՝
Կանես մարդկութեան մենք խորթ զաւակներ —
Դուք վայելչութեան, անարդար կեանքի
Ընտիր ըմբիշներ...
Հա՛ — մե՛նք ենք գալիս —
Դարեւոր վըշտի, զըրկանքի բովից,
Հալածանքների, գորշ ըստրկութեան
Մոռցած խաւերից։
Կըրծքով փըշրելու՝ փառքը ոխրողին,
Բըռնութեան գահը — ըստրկի շըղթան՝
Նոր ուղի հարթել մեր նմաններին —
Արժանի կոչման — հաւասարութեան —
Այդպէս ենք գալիս...

ՇՈՒՇԱՆԻԿ ԿԻՒՐՂԻՆԵԱՆ

No· 136

ՋԱՂԱՑՊԱՆԻ ՆՆՋԱՐԱՆԸ

Երեք–չորս հատ ջաղացաքար
Կարգով շարուած պտըտւում են,
Իրանց ահեղ դոռդըռոցով
Ամբողջ շէնքը դըղըրդում են.

Ջախչախների չըխչըխկոցից
Մարդի ականջ խըլանում է,
Իսկ ջաղացպանն ալրաթաթախ՝
Խոր քունն ընկած խըռըմփում է։

Բայց ջաղացը եթէ յանկարծ
Կըտրէ ձայնը, լըռէ, սառչի,
Ինչպէս մի թունդ թընդանօթից՝
Ջաղացպանը վեր կը թըռչի։

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

Ճըշմարտի և պատրանքի մէջ երբեմն՝
Ամէն մի սիրտ կասկածում է և դողում,
Ու երթարկւում այն սոսկալի զօրութեան,
Որ դատելով, իբրև արթուն պահապան,
Անմեկնելի, անհասնելի, անքըննին,
Մեր վիճակի սև կըծիկըն է հիւսում,
Արեգական լոյսից ծածկւած բընաւին,
Տեսանելի միայն սըրտի խորքերում։

ՇԻԼԼԵՐ

No. 137

ՎԱՍՏԱԿԵԱԼՆԵՐԻՆ

Վառ արշալոյսին բոյրե՛ր ու երա՛գ,
Ու նոր տենչերի չըքնաղ հորիզոն…
Որ աւետում են լոյսեր վերահաս —
Լոյսե՛ր յաղթական ու կեանք երազուն…

… Ու դո՛ւք, խարխըլած, մութ նըկուղներում,
Բեկըւած շունչերով ողբացո՛ղ մայրեր.
Որ սառ դիակներ ձեր սառ գըրկերում,
Արտասւում էիք ամբողջ այս գիշեր…

Ու դո՛ւք, որ օրւայ մեծ հոգսերի տակ
Ընճկուա՛ծ, անզօ՛ր երազում էիք
Խաղաղ գիշերին մոռնալ ցաւ ու հոգ,
Բայց որ խաւարում է՛լ աւել լացի՛ք…

Եւ դո՛ւք, խաւարի ուժերից պարտուած,
Ու հալածական հոգիներ չըքնաղ,
Որ մութ բանտերում անզօ՛ր, շղթայուա՛ծ,
Այս գիշերն ամբողջ տըքնեցիք խաղաղ…

Եւ դո՛ւք, ծովերում՝ դառ, մըրրըկապատ,
Նաւաբեկեալնե՛ր, որ մըրրիկներին
Պարզած անվեհեր ձեր ըմբոստ ճակատ՝
Տարւում էիք դէպ անյայտը խորին…

Եւ դո՛ւք, որ ուժեղ, անխախտ հաւատով
Թախծոտ աչքերնիդ սեւեռած դէպ վեր,
Այսքա՛ն գիշերներ անհուն կարօտով
Երազում էիք վառ արշալոյսներ…

Համր ու ամայի դաշտերում ընկած.
Եւ դո՛ւք, վիրաւոր հերոսներդ արի,
Որ հեւում էիք մենա՛կ ու լըքուա՛ծ,
Խաւարների մէջ արնոտ գիշերի…

Որ փնտռում էիք ցաւոտ ու տրտում,
Ձեր հառաչներով խո՛ւլ, անարձագա՛նք,
Մի լո՛յս… գէթ մի ա՛ստղ մըռայլ երկնքում,
Բայց որին, աւա՛ղ, երբէք չըգտաք…

Եկէ՛ք դուք, բոլոր հոգիներըդ մունջ,
Ու բոլո՛ր, բոլո՛ր դուք արիւնաքամ
Տառապածներըդ միշտ համր, անմռունչ,
Եկէ՛ք նոր կեանքով հպա՛րտ այս անգամ…

Հպա՛րտ… թո՛ղ կորչին ձեզնից խաւարի
Ու անյուսութեան սարսափներն անհուն,
Եկէ՛ք, նոր օրուան աւետի՛ք ձեզի,
Արշալոյսներից ձեզ ողջո՛յն, ողջո՛յն…

Վառ արշալոյսի բոյրեր ու երազ,
Ու նոր տենչերի չըքնաղ հորիզոն…
Որ աւետում են լոյսեր վերահաս —
Լոյսեր յաղթական ու կեանք երազուն…

ՀՐ. ՖԱԼԵԱՆ

Nº 138

ՏՐՏՈՒՆՋՔ

Է՛, մընաք բարով, Աստուած և արև՝
Որ կը պըլպըլա՛ք իմ հոգւոյս վերև...
Աստղ մ՚ա՛լ ես կ՚երթամ յաւելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ՝ եթէ ոչ անբիծ
Եւ թըշուառ ոգւոց անէ՛ծք ողբագին,
Որք թըռին այրել ճակատն երկինքին.
Այլ այն Աստուծոյն՝ չանթերո՛ւ արմատ՝
Ցաւելուն զէնքերն ու զարդերն հըրատ...:
Այլ, ո՛հ, ի՛նչ կ՚ըսեմ... չանթահարէ՛ զիս,
Աստուա՛ծ խոկն հսկայ, փըշրէ՛ հիւլէիս՝
Որ ժայռէի ձգտիլ՝ սուզիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուխքն անալի...
Ողջո՛յն քեզ, Աստուա՛ծ դողդոջ էակին,
Շողին. փըթիթին, ալւոյն ու վանկին,
Դու՝ որ ճակտիս վարդն ու բոցն աչերուս
Խըլեցիր թըրթռումս չըթանց՝ թափիչն հոգւոյս,
Ամպ տըւիր աչացս, հեւք տըւիր սըրտիս,
Ըսիր մահւան դուռն ինձ պիտի ժըպտիս,
Անշուշտ ինձ կեանք մը պահած ես ետքի,
Կեանք մը՝ անհուն շողի, բոյրի, աղօթքի.
Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս՝ մառախուղի մէջ՝ համր անշշունչ,
Այժմէն թո՛ղ որ չանթ մ՚ըլլամ գալկահար,
Պըլլիմ անուանդ, մոռնչեմ անդադար,
Թո՛ղ անէծք մ՚ըլլամ ու կողըդ խըրիմ,
Թո՛ղ յորջորջեմ քեզ. – «Աստուա՛ծ ոխերիմ»:

Ո՛հ, կը դողդոջե՛մ, տըժգոյն եմ, տըժգո՛յն,
Փըրփըրի նե՛րսս դըժոխքի մ՚հանգոյն...
Հառա՛չ մ՚եմ հեծող նոճերու մէջ սև,
Թափելու մօտ չոր աշնան մէկ տերև...:
Ո՛հ, կա՛յծ տըւէք ինձ, կա՛յծ տըւէք, ապրի՛մ,
Ի՛նչ, երազէ վերջ գըրկել ցուրտ շիրի՛մ...
Այս ճակատագիրն ի՛նչ սև է, Աստուա՛ծ,
Արդեօք դամբանի մրուրո՞վ է գըծուած...
Ո՛հ, տըւէք հոգւոյս կրակի մի կաթիլ,
Սիրե՛լ կ՚ուզեմ դեռ, և՚ապրիլ ու ապրիլ.
Երկնքի աստղե՛ր, հոգւոյս մէջ ընկէ՛ք,
Կա՛յծ տըւէք, կեա՛նք՝ ձեր սիրահարին հէք։

Գարունն՝ ո՛չ մէկ վարդ ճակտիս դալկահար,
Ո՛չ երկնի շողերն ժըպիտ մ՚ինձ չեն տար.
Գիշերն միշտ դագաղ, աստղերը՝ ջահեր,
Լուսինն յար կուլայ խուզարկէ վըհեր.

Կ'ըլլան մարդիկ որ լացող մը չունին,
Անոր համար է նա դրաւ այդ լուսին.
Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան. —
Նախ՝ կեանքը, վերջը՝ լացող մ'իր վըրան։
Իզո՛ւր գրեցին աստղերն ինծի «սէ՛ր»,
Եւ ի զո՛ւր ուսոյց բուլբուլն ինձ «սիրել»,
Ի զո՛ւր սիւքեր «սէ՛ր» ինձ ներշընչեցին,
Եւ զիս նօրանի ցուցուց ջինջ ալին,
Ի զո՛ւր թաւուտքներ լռեցին իմ շուրջ,
Գաղտնապահ տերեւք չառին երբեք շունչ՝
Որ չը խըռովեն երազքըս վըսեմ,
Թոյլ տուին որ միշտ ըղձէ երազեմ.
Եւ ի զո՛ւր ծաղկունք՝ փըթթիթներ գարնան՝
Միշտ խընկարկեցին խոկմանցըս խորան...
Ո՛հ, նոքա ամենքը զիս ծաղրեր են...
Աստուծոյ ծաղրն է աշխարհ ալ արդէն...։

Պ. ԴՈՒՐԵԱՆ

No. 139

ՎԵՋԱԼՈՅՍԻՆ

Եւ հեռո՜ւ, այնտեղ, արիւնոտ կեանքի
Խաւար դաշտերում թաղւած են յաւէտ
Ըմբոստ մարտիկներն, որ հառաչանքի
Ողբերն երգելով չըքացան անհետ,
Եւ խոր սուզւեցին դաժան, բռնաւոր
Ժայռերին զարկած փըշուր ու ջախջախ
Յորձանքների մէջ։ Եւ լո՜ւռ մեր բոլոր
Ու անհուն ցաւի երազներն անվախ
Թող հանգչին նըրանց նիրհած գանգերին,
Եւ սուրբ բարկութեան կարմիր հընոցում
Թող միշտ շիկանան, որ այն օրերին
Երբ կուլի պապակն իր խորունկ ծոցում
Մեր սերունդների մըրըրկւած հոգին
Նորից գալարէ, ակայծեն յանկարծ,
Եւ լուսաւորե՜ն ժայռերը մըթին,
Ջրերը խաւար, ճամբէքը անդարձ։

Հ. ԱՆՈՒՇԵԱՆ

No. 140

ԲԱՆԱՍՏԵ՛ՂԾ, ԼԱՒ ԲԱՆԵՐ ԳՐԷ՛

Դու մի՛ զարմանար, որ (ռուս) Սլաւեանք
Պատմութեան համար դարձան նոր պարծանք,
Մեծ գոհեր բերին, ջանք, ճիգ թափեցին,
Ըստրկի շղթան վայր թօթափեցին.
Հայքըս սարսեցանք հրացանէ, թըրէ,
— Բայց դու, բանաստեղծ, լաւ բաներ գըրէ՛։

Հաստ կաշի ունինք ու չենք կարմըրում,
Երբ որ մեր եղբարց ըստրուկ ենք տեսնում.
Կըշտապինդ, թըմբրած, անհոգ ու անդորր —
Այսպէս անցնում ենք մեր կեանքն ամէն օր.
Քուրդը հայի կուրծք թո՛ղ սըւին խըրէ,
— Բայց դու, բանաստեղծ, լաւ բաներ գըրէ՛։

Փորերըս դարձել է գինու տակառ,
Էլ չունի օտարն դէպի մեզ պատկառ,
Ազգը կորչում է, ու մենք չենք լալիս,
Մեզ ապտակողին մենք գլուխ ենք տալիս.
Թո՛ղ մեզ օտարը անպատուէ, մըրէ,
— Բայց դու, բանաստեղծ, լաւ բաներ գըրէ՛։

Տասնըիններորդ որդիք ենք դարուն,
Դեռ չենք մոռացել մեր հին դըժաութիւն,
Հայ հալածելիս՝ վագր ենք համարձակ,
Օտարի առջև՝ փախկոտ նապաստակ.
Հայը հայի վրայ դանակ թո՛ղ սըրէ,
— Բայց դու, բանաստեղծ, լաւ բաներ գըրէ՛։

Նոր ձև չի հագուիլ մենք խիստ կ՚ամաչենք,
(Ճշմարիտ խօսենք՝ չունևոր խօ չենք)
Խաչեր գնելու էլ ախորժակ ունինք,
Միայն հայ գործի համար ստակ չունինք.
Հայը օտարի արտը թո՛ղ ջըրէ,
— Բայց դու, բանաստեղծ, լաւ բաներ գըրէ՛։

Գանգատւում ենք մենք՝ մեզ լըսող չի կայ,
Աղերսագրերըս կարդացող չի կայ,
Հայի դըպրոցը դարձաւ մաքսատուն,
Զունի և ո՛չ մի վարժապետ գիտուն.
Մեր մեծ արեղան սին կեանք թող վարէ,
— Բայց դու, բանաստեղծ լաւ բաներ գըրէ՛։

Ուր և աչք դարձնես՝ անըսփոփ պատկեր —
Հայ սուրբ մամուլըն է կաշառակեր,
Ամբիոնէն պիղծ քարոզչի բերան
Անէծք է թափում գուսանիս վըրան.
Ո՞ւր փախչինք-պահուինք անզուսպ լըրբերէ...
— Բանաստեղծ, դու միշտ լաւ բաներ գըրէ՛։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

No 141

ԽԵԼՔԻ ԱՇԵՑԷ՛Ք....

Անմիտ ճրնճղուկը բաղէի ճանկից
Ուզում է որս խլել, խելքի աշեցէ՛ք.
Կարծես ձանձրացել է գլխից ու կեանքից,
Պատերազմ է մըտել, խելքի աշեցէ՛ք:

Խելքին զօռ տալով հիմա ամէն բան՝
Ցիմարն էլ իմաստուն է կարծում իրան.
Նիհար հաւը պարարտ մեծ սագի նըման
Ուզում է ձու ածել, խելքի աշեցէ՛ք:

Աղնիւ մարդը անարգւում է գէշի հետ,
Երիվարը լուծ է քաշում էշի հետ,
Երկու տարւայ հորթը՝ ցուլ-գոմէշի հետ
Բերել կամ են լըծել, խելքի աշեցէ՛ք:

Գայլը իր վրայ ոչխարի մորթի առած՝
Գառների պահապան հըսկող է դառած.
Աքլորը քարոզչի վերարկու հագած՝
Ամբիոն է ելել, խելքի աշեցէ՛ք:

Ուղտը մետաքսագործ, եղը նաւավար,
Գայլը հովիւ դառած՝ կարածէ ոչխար,
Աղուէսը հաւնոցի դրանն յուշարար—
Ի՞նչ հըսկող են դըրել, խելքի աշեցէ՛ք:

Փափուկ ճէնալմէն է հաստ գռեհիկը,
Ամբոխի գիտունն է խելքից բոպիկը
Կենաց մէջ ծառ չը տեսած ռամիկը
Այգեպան է եղել, խելքի աշեցէ՛ք:

Երեխան ձեռքն առած փըտած հին լարը՝
Բըռնել կամի դարձող ջրաղացի քարը.
Փաճաճ մուկը չըջել կուզէ մեծ սարը,
Կողքը դէմ է տւել, խելքի աշեցէ՛ք:

Ուրացողը խիղճ չունի ամենեւին,
Չը զգալով՝ սպիտակ ասում է սեւին.
Կոյրը չը տեսնելով լոյսը արեւին՝
Աշխատում է սըտել, խելքի աշեցէ՛ք:

Աւել հոգսը փուս կուտայ իր վըզին,
Ուրիշի ցաւերը առնելով վըզին,
Գայլը յօշոտել է մարդացեց մէկին,
Խենթը սեւ է հագել, խելքի աշեցէ՛ք:

Գործը մեծ պարոն է տաքուկ ջրհորին,
Դուրս ելաւ՝ բաժինն է վիշապի փորին.
Իրար հետ սուտ կռուել են ձին ու ջորին,
Էշը մէջն է ընկել, խելքի աշեցէ՛ք։

Ժըլատն աշխատելու է շատ ընդունակ,
Իր հացը ուտելու չունի ախորժակ,
Խեղճ անձր գըրկելով դիզել է սըտակ,
Ուրիշն է վայելել, խելքի աշեցէ՛ք։

Ցանցաւոր հարուստը ուրախ խընդալով՝
Մեղքից ազատուել է մեծ գումար տալով.
Խեղճ մարդը սխալմամբ մի հաւ գողնալով՝
Բանտի մէջն է փըտել, խելքի աշեցէ՛ք։

Մարդ կայ՝ գերդաստանը պահում է ցամաք,
Կերթայ դուրսը՝ կուտէ մեղր, սէր ու կարագ,
Այլոց համար կանէ ձայնով պատարագ,
Իրեն ժամ չի անիլ, խելքի աշեցէ՛ք։

Մի նոր քաղաք տեսայ ժամի սիրահար,
Բնակիչները հայ, մօտ քըսան հազար,
Իրենք սընունդ չունին ուտելու համար,
Հինգ հատ վանք են շինել, խելքի աշեցէ՛ք։

Ինչ կենդանի որ կուզէ լինել չանտատակ՝
Կերթայ ու կը մըտնի ծանրը բեռի տակ.
Նապաստակը առիւծի դէմ համարձակ
Կռիւ է սկսել, խելքի աշեցէ՛ք։

Ցորենը մի անգամ լինելով տըկար՝
Այնպէս բոյս չեն գըտել, որ անեն նըշխար.
Կորեկ հացը իրեն կարծելով յարմար՝
Սեղան է բարձրացել, խելքի աշեցէ՛ք։

Մեծամեծ մարդիկը հեռու են կանգնած,
Ասպարէզը համբակներին են թողած,
ՋԻՒԱՆՆ էլ իր կաղ էշով կարաւան մ,տած՝
Բանաստեղծ է դարձել, խելքի աշեցէ՛ք։

Ծաղիկ այն ծաղկին ասեմ, որ օձու բերանն է բուսեր.
Լուկ մարդ, ի յօձուն ահուն, զայն ծաղկին հոտն չէ առեր.
Մանուկ մի Հոռմանց է ելեր, գարեւուն թարթիկն է առեր,
Ջօձիկն արեւէն հաներ, ու զծաղիկն բերնէն առեր։

Ն. ՔՈՒՉԱԿ

No. 142

ՄՇԱԿ

Շլինքը արևառ, քըրտինք երեսին, բեռը շալակած,
Ղարիբ Մըշեցին մայդանին միջին կանգ առաւ յոգնած

Կոշտացած ձեռքը երեսին տարաւ, քըրտինքը սըրբեց,
Բայց երբ որ աչքը շորս կուման դարձուց՝ ծանըր ա՜խ քաշեց,

Տեսաւ նա շըքեղ մեծ մեծ դարբասներ գոյնըզգոյն ներկած,
Պատշգամբի վըրայ գօզալ հայ կանայք շար 'ի շար նըստած.

Ղումաշ հովհարով մարմար թըշերին հով ու զով տալիս,
Փըրփուր շորերը թեթև քամիէն փըրփըռան գալիս:

Ջուխտակ արտասունք ջուհար ակի պէս աչքին ցոլացին.
«Մըշակ, չիլի՞ թէ միաքըդ բերիր քու կարօտած եարին»:

Մըշակը լուռ էր, նա ինձ չի տուեց ոչինչ պատասխան,
Դարբասը թողած՝ աչքերը դարձուց նա դէպի մայդան.

Երկլուծ ձառքի մէջ տեսաւ թէք ընկած մէկ նիհար տըղայ,
Զաշմակը աչքին, բերնին նարգիլէ՝ գինչ թուրքի աղա.

Մըշակի շըրթին աննըշմարելի մէկ ժըպիտ խաղաց,
«Մըշակ, այդ ի՞նչ էր, որ սիրտըդ խօսեց՝ ծա՞ղըր, թէ նախանձ».

Մըշակը ինծի պատասխան չի տուեց, տես թէ լալ էր
Բայց հոգեբանը խիկոյն կ'իմանար հոգին ի՞նչ հալն էր:

Մայդանը թողած՝ նա աչքը դարձուց լայն մեծ փողոցին,
Ոչ ոք չիմանալ թէ այն րոպէին ի՞նչ խօսեց հոգին

Գունդ գունդ գալիս էր ձիով ու հետի սպառազէն լաշքեար,
Առջևը առած հարիւր ու հազար թըմըկահար, փողար.

Ցընծալիր երգով զօրքը տօնում էր իր յաղթութիւնը.
Վա՜յ քեզ, եեղճ... քանդել էր քու ազգի տունը...

Մըշակը լուռ մունջ մէկդի քաշուեցաւ, դողդոջուն ոտքով
Իր ճամփան գընաց՝ ծանըր տընքալով, կամաց երգելով.

> Բահարն էկաւ՝ ծառը ծիլ ծիլ ծաղկեցաւ,
> Ձիւնը փախաւ, երբ արևը ծագեցաւ.
> Երնե՜կ արևն կամ բահարը մեր հային
> Խելք, միաք, նոր բարք եա քի նոր վարք շնորհէին:
>
> Հա՜յ, բա՜ց աչքըդ, քու կորուստը մօտիկ է,
> Ձիմանաս, որ տըրին-տարին ղարիկ է,
> Եալփաղանը, ղումաշ շորը քու եարին
> Զանգուլներէդ շատ հազարներ դուս տարին:

Ի՞նչ լարար, որ կընկան փէշը կարճ ըլլայ,
Տափն աւլելու համար տանն՝ աւել կայ,
Բան կ'առէ՞ի քեզ անօրը չորի դէմ,
Երբոր եարիդ բուդը չերևնար տակէն։

Քեզ ո՞վ ասաց, որ ուսումը հագուել է,
Օխտն օտարի հետը գաղտուկ պագուել է.
Թէ որ ատ էր՝ տայիր զաւակըդ Ջուլօին,
Նա քեզ մուֆթա կը հասցնէր քու մուրազին։

Աս ի՞նչ տեսնամ, — սէլավ կուգայ հիւսիսէն...
Հա՛յ մարդ, թէզով ժողվէ՛ քու փաս ու փուսէն,
Ա՛ռ գըլօխըդ, քօչէ՛ դէպի քու աշխարհ,
Քանի օրէն տունըդ բունըդ չես ճանչնար։

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ.

No. 143

ՏՈ՛ՒՐ ՁԵՌՔԴ, ԸՆԿԵ՛Ր....

Տո՛ւր ձեռքըդ, ընկեր, — այս ծանր օրերին
Թո՛ղ գործի սիրով յուզւին մեր սրտեր.
Նայի՛ր, մեր առջև չա՛տ նեղ է ուղին,
Մեր չուրջը — աժգոյն, սրտամաշ պատկեր...

Դեռ խոր թըմրութիւն հայրենի երկրում,
Ազգը ծարաւի ուսման, գիտութեան.
Ազգային ղեկը անշարժ ձեռքերում,
Եւ իշխող ոգին յետադիմութեան...

Վառ մըտքի առաջ փակւած ասպարէզ,
Թըզուկին պահած, և՛ գործ, և՛ դափնիք.
Օ՛, ընկեր, կարծես, մեր կեանքն է կըրկէս՝
Ուր քաջ վըխտում են խեղկատակ մարդիկ...

Տըգէտը՝ գիտուն, անգործը՝ մըշակ,
Ազգային հացով նա՛ է կշտանում՝
Ով հոգով աղքատ, երեսին դիմակ,
Հայրենի արտում որոմն է ցանում...

No· 144

ՃԱԽԱՐԱԿ



2· Զէթ եմ ածել ականջներդ,
Նոր շինել եմ չրթուլիկ,
Դէ՛հ, շո՛ւտ շարժիր լայն թեւերդ,
Ոստեր շինիր սըրուլիկ։

3· Մանի՛ր. մանի՛ր, ի՛մ ճախարակ,
Լիսեռնիկըդ պըտտիր,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Իլկիդ վըրայ փաթաթիր։

4· Տիգրանիկըս գուլպայ չունի,
Հանդ է գնում ոտաբաց,
Գաբրէլըս չուխա չունի,
Միշտ անում է սուգ ու լաց։

5· Մանի՛ր, մանի՛ր իմ ճախարակ,
Մանի՛ր սիպտակ փաթիլներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր։

6· Ջըւալ չունինք, չաթու չունինք,
Ոչ սամոտէն, ոչ պարան,
Այսպէս աղքատ դեռ եղած չենք,
Կըտրըւել է ամէն բան։

7· Դեռ հարս էի, որ գործեցի
Քանի կարպետ խալիչա,
Բայց դըրանցից շուտ զըրկւեցի,
Հիմա չունիմ մի քեչա։

8· Կարմիր օրըս երբ սւացաւ
Եւ պարտք մընաց թէև քիչ,
Պարտատիրոջ սիրտն էլ սւցաւ —
Եկաւ տարաւ ամէն ինչ։

9· Մանի՛ր, մանի՛ր ի՛մ ճախարակ,
Մանիր սիպտակ քուլաներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր։

Ղ· ԱՂԱՅԵԱՆՑ



ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

1851 մայիս 20-ին ծնած, Կ. Պոլսոյ Իւսկիւտարի Եէնի-Մահալէ թաղին մէջ աղքատ ապքատ երկաթագործի մը զաւակն էր Պետրոս Դուրեան:

Զորս տարեկան հասակին մէջ՝ իր ծնողները կիսակիրթ մէկու մը կը յանձնեն Պետրոսը կարդալ սորվելու, և երկու տարի ետքն ալ Իւսկիւտարի ճեմարանը, ուր իր դասընթացքը կ'աւարտէ 1867-ին: Սասնձնապէս չքեղ կրթութիւն մը չէր կրնար ստանալ Դուրեան ժամանակակից մանկավարժական սիստէմի յոռի յատկութիւններուն պատճառով. սակայն իր բնածին ձիրքը, արտասովոր ընդունակութիւնները կատարելապէս լրացուցին դըպրոցական շրջանին մէջ ստացածը՝ մշակելով անոր մէջ մեծ բանաստեղծի մը յատուկ կողմերը: Եւ Դուրեան՝ իրապէս՝ հայութեան գրական ամենամեծ ներկայացուցիչներէն մէկը պիտի համարուի, տաղանդ մը՝ որով կրնան պարծենալ մեզմէ շա՛տ աւելի քաղաքակիրթ ազգեր:

Արդէն դպրոցին մէջ՝ գրեթէ մանուկ՝ Պետրոս սկսած էր բանաստեղծութիւններ գրել և տասներեք տարեկան առեն իր ընկերներու և ուսուցիչներու ուշադրութիւնը կը գրաւէր, թէև վերջը, խիստ յանդիմանութիւններ կ'ընդունէր վերջիններէն այդ «յանցանք»-ին համար: Վերջը միայն կ'սկսէր գնահատուիլ՝ դէթ մասամբ: Թէև գործնականօրէն չքաջալերուած՝ Պետրոս կը շարունակէր գրել, հակառակ անոր՝ որ գրագէտ մը ըլլալու իր տենչանքին կը հակադրէր իր խեղճ ծնողներու կացութիւնը, որոնց համար ստիպուած էր հոգ տանիլ: Դուրեան՝ ծնողաց ստիպումին վրայ՝ փորձեց գրագրութիւն ընել պայի մը քով և մէկ տարի ետքը ձգեց պաշտօնը, անընդունակ համարելով ինքզինքը այդ կոչումին: Հարուստ ընտանիքի մը մէջ ալ դաստուութիւն ըրաւ՝ չնչին վարձատրութեամբ, և քանի մը ամիս ետքը այդ գործն ալ ձգեց: Կարիքի ճնշման տակ՝ հարկադրուեցաւ նոյն իսկ դերասանութիւն ընելու Յակոբ Վարդովեան անունով մէկու մը խումբին մէջ՝ 300 ղուրուշ ամսականով. այդ գումարին գէշ վճարումի հետեւանքով, ինչպէս նաև «պպա»-յի հետ ունեցած հակառակութեան՝ ստիպուած եղաւ դերասանութեանն ալ իր «Ճնաս բարով»ն ըսել, արհեստ մը, որ՝ իր ժամանակի հասկացողութեամբ՝ ամէնէն անպատուաբերներէն էր և ինքը՝ Դուրեան՝ զըզուանքով կը խօսէր անոր մասին:

Այս անողոք քաշկռտուքը նիւթականի պատճառով՝ մաշեց, հիւծեց ի բնէ աշխոյժ, գեղեցիկ և ուրախ բնութեան տէր Պետրոսը. թոքախտը որջացաւ անոր՝ տակաւին կեանքի նուազագոյն հաճոյքները չվայելած կուրծքին մէջ, և արագօրէն տարաւ զայն դէպի գերեզման. մեռաւ Դուրեան 1872 յունվար 21-ին:

Դուրեանի մահը ցնցեց Պոլսի, մանաւանդ Իւսկիւտարի հայութիւնը: Զորս հազար հոգիէ աւելի բազմութիւն մը, գլխաւորապէս երիտասարդներ՝ ներկայ եղան անոր յուղարկաւորութեան, որ կատարեցաւ հաղւադէպ չքեղութեամբ մը: Իր անունը բերնէ բերան անցաւ. յատուկ յանձնախումբ մը ժողովարարութիւն կատարելով՝ հանգանակած գումարով յուշարձան մը կանգնեցուց բանաստեղծի գերեզմանին վրայ և հրատա–

բակութեան տուաւ անոր գործերը։ Մահէն եաքը միայն սկսաւ ան գնահատուիլ, անգամ մըն ալ արդարացնելով «Գնա–մեռիր, եկո՛ւր սիրեմ» ժողովրդական ասացուածքին խորունկ իմաստը։

Դուրեանի գործերու գրական արժէքը չափազանց մեծ է՝ իբրև խակական բանաստեղծի մը. ան՝ զգայուն, որպէս եթեր, ջինջ ու մաքուր՝ մանկան սրտի մը պէս, խոհականներու, երազներու ինքնատեղծ աշխարհի մը թիթեռ՝ հեռու մնաց կեանքի ազդեցութիւններէն, չը հասկցաւ զանոնք, չը ճանչցաւ ու չըմբռնեց գոյութեան պայքարի բո՛ւն արտադրիչ աղբիւրը, և թէև ինքը զոհ գնաց մարդկային կեանքի այլանդակ հիւանդութեան — մեծագոյն չարիքին՝ աղքատութեան, սակայն գրեթէ շատ քիչ հետաքրքրուեցաւ անով։ Ինքը երազուն կրքերու, «Նա»–ի և սիրոյ երգիչը միայն եղաւ, տեսակ մը Պայրընականութեան կնիք կրելով իր վրայ։

Իր թատերգութիւնները առանձնապէս մեծ արժանիք մը չեն ներկայացըներ, աւելի եւս սուեր կը ձգեն բանաստեղծի մեծ համբաւին վրայ։ Իր չափածոյ գրուածներէն գլուխ–գործոց կը համարուին՝ ի միջի այլոց՝ «Թըրքուհին», «Տրտունջ»ը, «Ի՞նչ կ'ըսեն» և այլն։

Բանաստեղծին պատկերը, որ գետեղած ենք մեր ներկայ հրատարակութեան մէջ՝ ընդօրինակութիւնն է անոր մահէն եաքը գծուած նկարի մը, ըստ իր մտերիմներու վկայութեան՝ չա՛տ նման. փաղամեռիկ երգիչը, դըժբախտաբար, թողուցած չէ ու է կենդանագիր։

No. 145

ԻՄ ՄԱՀԸ

Եթէ տըժգոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնէ իմ դէմ,
Շողխանան ցաւքս ու հոգիս,
Գիտցէ՛ք՝ որ դեռ կենդանի եմ։

Եթէ սընարս իմ տխպար
Սամ մը վըտիտ ու մահադէմ,
Ո՛հ, նըշուլէ ցուրտ ճառագայթ,
Գիտցէ՛ք՝ որ դեռ կենդանի եմ։

Եթէ ճակտովս արտօսրաթօծ
Ձիս պատանի մէջ ցուրտ գիրդ վէմ
Փաթթեն, դընեն սև դագաղը,
Գիտցէ՛ք՝ որ դեռ կենդանի եմ։

Եթէ հընչէ տըխուր կոչնակ՝
Թըթռուն ծիծաղն մահու դըժխեմ,
Դագաղս առնէ իր համբըր քայլ,
Գիտցէ՛ք՝որ դեռ կենդանի եմ

Եթէ մարդիկն այն մահերգակ,
Որք սև ունին ու խոժոռ դէմ,
Համասըփռեն խունկ ու աղօթք,
Գիտցէ՛ք՝ որ դեռ կենդանի եմ։

Եթ՝ յարդարեն իմ հողակոյտ,
Եւ հեծեծմամբ ու սըգալէն
Իմ սիրելիքը բաժնըւին,
Գիտցէ՛ք՝ որ միշտ կենդանի եմ։

Իսկ աննըշան եթէ մընայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
Եւ յիշատակս ալ թառամի,
Ա՛հ, ա՛յնատեն ես կը մեռնիմ...։

Պ. ԴՈՒՐԵԱՆ

No· 146

ԻՄ ՀՐԵՇՏԱԿԻՆ

Թամամ աշխարհում չկայ մին, աննման ջան, քեզի պէս,

Ճակատը մէյդան քեզի պէս,
Ունքերը քեաման քեզի պէս,
Աչքերը մաստան քեզի պէս,
Պռօշը մարջան քեզի պէս,
Սուրահի-կեարտան քեզի պէս.

Կին ո՞նց կարող է ծընանիլ մարալ ու ջէյրան քեզի պէս:

Քեզ տեսնողն ասում է. — «Սա հողեղէն չէ, հրեշտակ է

«Կերպարանքն արեգակ է,
«Հուր-թուշն մի լուսնակ է,
«Աչքերն վառուած ճրագ է,
«Լեզուն դըժոխքի կրակ է,
«Բողազն մեղր ու կարագ է».

Որքան վարավուրդ եմ անում, չկայ էլ ինսան քեզի պէս։

Երեսիդ մըտիկ անողն ասում է. «Քաշած պատկեր ես,

«Ոտից գլուխ գլխի սէր ես,
«Ամէն բանից վեր ի վեր ես,
«Իմաստալից գըլխի տէր ես».
Արարիչդ թէ կը սիրես՝
Սխալմունքս պիտի ներես.

Որ կամենում եմ ասել, չկայ էլ միհրիբան քեզի պէս:

Ինչ տեղով որ անցնում ես՝ ասում են. — «Եարաբ սա ո՞վ է.

«Հանդերձն դիփ կարմիր մով է,
«Երեսն մախմարի խով է,
«Հանդարտութիւնով մի ծով է,
«Բերա՛ն պէտք է որ գովէ—
«Անպատմելի շնորքով է»:

Կենացս մէջ չեմ տեսել սուլթան ու խոզան քեզի պէս:

Գեղեցկութիւն բաժանողից շատ փայ ստացողը դո՛ւ ես,

Միշտ ուրախացնողը դո՛ւ ես,
Ամագ խմացողը դո՛ւ ես,
Դատաստան անողն դո՛ւ ես,
Մարդոց ջան առնողն դո՛ւ ես,
ՍԷՅԵԱԴ սպանողն դո՛ւ ես.

Քեամանդարների միջում չկայ մի որսկան քեզի պէս:

Պ. Տ. Ց. ՄԱԴԱԹԵԱՆ (ՍԷՅԵԱԴ)

ԾԱՆՕԹ.— Քեաման-աղեղաձև. մաստան վառվռուն. սուրահի-կեարտան-երկարավիզ. վարավուրդ անել-դիտել, նայել. միհրիբան-արեգակ. դիփ-ամբողջովին. մով-մետաքսի խաւ. մախմար-թաւիշ. խով-շուք. խոզան-տիկին, տիրուհի. քեամանդար-նշանառու, նետաձիգ:

No. 147

ԻՄ ՓԷՐԻՆ

Կէս գիշերին գետի ափին
Ես նըստած եմ սիրավառ.
Գետն հոսում է, և հոսանքին
Ես նայում եմ միալար:

—Ո՞վ է խաղաղ մէջ-գիշերին
Քընած գետը վըրդովում,
Ալիքները խըփում ժայռին—
Մերուկ ժայռը լըւանում:

—Ո՞վ է աստղոտ զով գիշերին
Լուսնի շողով զարդարում,
Շուշան-կըրծքին, սև մազերին
Գոհար ցօղեր սըրսըկում:

—Ո՞վ է չըքնաղ բարի-լուսին
Ծաղիկները համբուրում,
Մըշուշային փըրփուրի մէջ
Արշալոյսին ողջունում:

—Նա հեզ գետի լուռ փէրին է,
Ցընորքներիս սիրելին,
Նա իմ սըրտի դիցուհին է—
Վառ երգերիս նազելին....:

Եւ մինչև լոյս գետի ափին
Ես նըստած եմ քարացած...
Գետն հոսում է, և հոսանքին
Ես նայում եմ շուարած...:

No. 148

ՍԻՐԵԼ

Բոյլ մը նայուածք, փունջ մը ժըպիտ՝
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ։
Ես ուզեցի լուռ մենանալ,
Սիրել փըթիթք, խորշեր թաւուտ,
Սիրել կայծերն երկնի կապուտ,
Առաւօտն չաղն՝ իրիկուան բալ,
Ճակատագրիս սև գիծ կարդալ՝
Խոկալ, սուզիլ, ըղձայիլ սուտ։

Ո՜հ, խուրձ մը վարս՝ եդեմ մը շունչ՝
Շըրջազգեստ մը շըրջեց իմ շուրջ։
Ես ուզեցի լոկ ու մինակ
Սըրտակցիլ ջինջ վըտակին հետ,
Յիշատակի չունի նա հետ,
Սիրտ մ'որոյ մինչ սուզիմ յատակ,
Գըտնեմ զիս հոն տըժգոյն յըստակ,
Գաղտնի՛ք մ'ունի — այն՝ անթիւ վէտ։

Եթեր մը տրոփ սրտի լսեցի,
Հծծեց. — «Կ'ուզե՞ս սիրտ, ե՛կ ինծի։»
Ես ուզեցի սիրել զեփիւռ
Որ երկինքէն թըռչի բեկբեկ,
Նա չը սիրեր խոցել երբե՛ք,
Հոգի մ'որոյ գաղտնիքն է բոյր,
Գիտէ չոյել երազներ բիւր,
Երկնի բոյրն յուշ կ'ածէ առ հէք։

Ո՜հ, փունջ մը բոց փըսփըսաց ինձ
— «Կ'ուզե՞ս պաշտել հոգի մ'անբիծ։»
Ես ուզեցի քընարով մի
Լոկ սիրել հոս՝ հոս դալկահար,
Պաշտել, գըրկել միայն քընար,
Սիրող էակ ճանչնալ զանի,
Ըստ իմ քըմաց լարել աղի,
Եւ սըրտակցիլ սիրողաբար։

Նէ մօտեցաւ յուշիկ՝ ըսաւ.
— «Քնարդ է ցուրտ սիրտ, և սէրըդ՝ ցաւ։»
Թոթուեց թեւերն հոգիս մոլար,
Ճանչեց ըզնէ, գեղ ու կըրակ,
Սիրտն անապա՛կ՝ ինչպէս վըտակ,
Անմե՛ղ՝ ինչպէս սիւգ դալկահար,
Հաւատարիմ՝ ինչպէս քընար,
Հրաժեշտ տըւաւ կեանքի մենակ։

Բոյլ մը նայուածք, փունջ մը ժըպիտ՝
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ։

Պ. ԴՈՒՐԵԱՆ

No· 149

TU PUR VERRAI !
ԴՈՒ ՉԵՍ ԱԶԱՏՈՒԻԼ

ԱԴԱ ՆԵԳՐԻ

Նա ինձ հարցրեց.

— Ինչո՞ւ գունատուած, վախկոտ, դողդոջուն
Գըրկում ես դու ինձ ու կըրծքիդ ճընշում,
Ինչո՞ւ համբոյրը այրող շուրթներիդ
Հառաչանքի պէս տըխուր է հնչում։

Ինչո՞ւ աչերըդ նըման գիշերի
Անթարթ դիտում են հեռաւոր վայրեր,
Կարծես որոնում ուրուականների
Կորած ու անյայտ մոլար ստուերներ։

Ինչո՞ւ քո սըրտին մեր մատաղ սէրը
Բերկրանք չի ազդում, — այլ ճիչ յուսահատ,
Կարծես բեկանուած սրտիդ թելերը
Լացի աղբիւր են ծորում յորդառատ։

Ինչո՞ւ երբ մեղմիկ փարւում ես կըրծքիս՝
Ցընցւում ես յանկարծ, անվերջ սարսըռում.
Սարսափն է խօսում քո աչքերի մէջ,
Ասա՛, ի՞նչ ցաւ է քո հոգին այրում։

Պատասխանեցի.

— Օ՛, երբ գըրկումըդ հանգիստ եմ առնում
Երբ մանուկ կուրծքըս սեղմում ես, ճըմլում,
Այդ ժամ տեսնում եմ անթիւ ստուերներ,
Որոնք մութի մէջ ինձ են երեւում։

Ուրուականներն են օրիորդների,
Մատաղ ու սիրուն այն դըժբախտների,
Որոնք ողջ կեանքում կարօտ մընացին
Եւ ծաղիկ սիրոյ և ուրախ օրի։

Նըրանց վարսերը թաւիշ հիւսերով
Շողշողում էին արեգակի տակ,
Սակայն համբոյրի կարօտ մընալով՝
Գերեզման իջան առանց յիշատակ։

Ուրուականներն են այն խեղճ մայրերի,
Որոնց վիճակուեց սեւ օրեր տեսնել —
Մահը ամուսնու և զաւակների
Եւ մընալ անյոյս ու յաւէտ անտէր։

Շարժւում են նոքա, երերուն քայլում
Ու ամենուրեք ինձ են հետևում,
Ընկնում են գըլխից սև սաւանները,
Ճերմակ գանգերով մութի մէջ փայլում:

Ու նայում են ինձ... յամառ, այլանդակ,
Նըրանց նայուածքից արիւնս է սառչում.
Ճըչւում է հոգիս... և այդ ժամանակ
Քո կըրծքին ամուր, ամուր եմ կըպչում:

Ուրուականները գընում են–գալիս,
Ու նայում են ինձ որպէս ժանտ տեսիլ.
Եւ երբ քո գըրկում հըրճւում եմ սիրով,
Նոքա կրկնում են՝ «դու չես ազատւիլ»:

Թարգմ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ

No. 150

ՆԷՐԱ ՀԵՏ

Համբոյ՛ր մ'առի նէրանէ,
Համբո՛յր մ'անհուն գորովի,
Երբ կարմիր շողք մարէին
Հորիզոնին վերևի:

Ձեռքըս տարա կուրծքին՝ հոն
Սիրոյ երկին մ'որոտար,
Թօշնեցայ գիրկն ես իբրև
Համբոյր մ'անհուն դալկահար:

Նէ գլխ իր քով նըստեցուց՝
Գորգի վըրայ դալարեայ.
Հուսկ ճաճանչ մը պըլպըլար
Նէրա դիմացը վըրայ:

Թօթովեցի... դողացի...
Առի համբոյր անհամար,
«Խօսինք», ըսաւ, — ո՛հ, խօսիլ
Հատնի՛լ է լոկ ինձ համար:

Աչերու բոցն երբ մարի,
Դադրի տրոփըն երբ սըրտին,
Լոկ այն ատեն հարկ է որ
Անզօր շուրթերըն խօսին:

Հուր հորիզոնն մարեցաւ,
Երկինքն աստղեր փըթթեցան.
Համբոյր մ'առի դարձեալ ես
Ցանուն աստեղց ցիր և ցան:

Նէ թողուց որ վարսքն ազատ
Սիւգը դէպ յիս բերելով
Միշտ հովահրէ բըռընկած
Ճակատըս դով բոյրերով:

Ո՛հ, այն ժամը ոսկեզօծ
Անշուշտ սահած, թըռած է
Ճակատագրին անողորմ
Սև ձեռքերէն երկաթէ:

Մեր համբոյրներն պահեցին
Տերևներն խարշափմամբ,
Եւ շողերու տըւին շուք
Աստղերն երկնից այն անամպ:

Ձեռք վերցուցինք աստղերուն,
Սէր ուխտեցինք իրարու,
Դողդողացին աստղերն ալ
Մեր երդումէն ահարկու:

Լըսեց երկինք մեր ջերմ ուխտ,
Աստղեր սըրսկեց ի գորով,
Բընութիւնն եղաւ պսակիչ՝
Մեզ պըսակեց աստղերով...

Պ. ԴՈՒՐԵԱՆ

No. 151

ԴԱՐԴՍ ԼԱՑԷՔ....



2. Երկինք–գետինք գըլխուս մըթնան,
Անտուն, անտէր կուլամ ես...
Եարիս տարա՛ն, ջանիս տարա՛ն—
Հոնգո՛ւր–հոնգուր կուլամ ես,..:

3. Ա՛խ, եարըս ինձ հանեց մըտքէն,
Անճար թողեց ու գընա՛ց,
Սըրտիս սուգէն, խորունկ եարէն
Անդեղ թողեց ու գընաց:

4. Դարդըս լացէ՛ք, սարի սըմբուլ,
Ալուան–ալուան ծաղիկներ,
Դարդըս լացէ՛ք, բաղի բըլբուլ,
Ամպշող երկնուց զով հովեր...:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

No. 152

ՋԱԽԱԽԹԻ ԴՈՒՍՏՐԸ

Էն տեսակ կին
Ես իմ հոգին
Թէ աշուղն էլ ունենար՝
Առանց գէնքի,
Առանց զօրքի,
Շահերի դէմ նա կը գընար:

Սիրոյ հընոց՝
Կըրակ ու բոց՝
Էնպէս աչեր թէ ծըպտան՝
Մարդու համար
Օրւայ պէս վառ
Գիշերները լոյս կը տան:

Վարդի թերթեր
Էնպէս շուրթեր
Թէ յաղթութիւն քեզ մաղթեն՝
Էլ քեզ ո՛չ Շահ,
Ո՛չ ահ ու մահ,
Ո՛չ գէնք ու զօրք կը յաղթեն:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

No. 153

Ջ Ն Է Պ Ա Շ Տ Ե Մ

Ճառագայթի ու վարդի
Փըթթումներով վեհապանծ՝
Ես չը սիրեմ սա դէմքը՝
Սիրոյ ժըպտով մը օծած:

Ես չը սիրեմ՝ երբ կուսի
Մ'աչերը գիս բուրվառեն,
Ջերմ հուր ամպոց զոյգ մը հիւս
Ցօնիցը տակ մեղմօրէն:

Գիսաստղի պէս հերարձակ՝
Ես չը սիրեմ սա վըճիտ
Կոյսն, որ դէմքէն կը փըթթին
Լուսնի դալուկն ու ժըպիտ:

Ես չը սիրեմ՝ հանդիպիմ
Երբ կոյսի մը հեզանազ,
Որ եդեմ մը կը բուրէ,
Վառէ երկինք մը երազ:

Ես չը սիրեմ սա կապոյտ
Զոյգ մ'երկինըներն գինովցած՝
Որ մէկուն մէջ պաշտի նա,
Եւ միւսին մէջ ալ Աստուած:

Ես չը սիրեմ սա օտար
Ժըպիտները յուսաշող՝
Որք ծաղիկներ են սուտ սուտ
Սըրտի անդունդը ծածկող:

Ես կը պաշտեմ զիմ Պ...
Ինձ կը բաւէ իր սըրտին
Մէկ ճառագայթը միայն,
Եւ մէկ վարդն իր ժըպիտին:

Թէև սև աչքն հեղեղեն
Անթիւ աստեղց միշտ բոյլեր՝
Իր սև յօնից շուքին տակ՝
Ջորս ութ օրն է նա գըծեր:

Լուսինը ո՛չ նէրա վարսն,
Եւ ո՛չ ալ վարդը ունի
Ճառագայթումը նէրա,
Ճառագայթո՛ւմ սիրողի:

Ես դողդողամ իր վըրայ,
Նէ իմ վըրայ գորովի,
Իսկ թէ մեռնայ գիս օր մը՝
Ա՛հ, այն օրը քա՛ր կըտրի...:

Պ. ԴՈՒՐԵԱՆ

No. 154

Թ Ր Ք Ո Ւ Հ Ի Ն

Երեկոյ է․ բոցավառ է հորիզոն,
Կառք մը կ'անցնի դադաղի պէս յամրընթաց,
Գեղուհի մը ընկողմանած տրտմէ հոն․
Վերջալուսի աղջի՞կ մ'է նա, ո՛վ Աստուած․
Եթէ նայի՝
Կ'ըսես — «Հի՛մա կը մարի։»

Մեղրամոմէ անդրիանդի մ'է հանգոյն,
Ի՛նչ դալկահար… կարծես հաջաղը վառէ․
Պատան մ'է նուրբ նէրա վարդիցը ալժգոյն,
Աստուած ըղնէ զոյգ մ'աչերուն կը վառէ․
Եթէ ժպտի՝
Կ'ըսես — «Ո՛հ, հիմա կ'անցնի։»

Նայիլ կ'ուզէ, բայց աւելի կ'նըւաղի,
Սիրտը խունկի պէս կը մըխա՛յ սիրավառ․
Նէ չողերու, բոյրերու է թագուհի,
Խոնջ թիթեռնիկ մ'որ կը խնդրէ ծաղկէ թառ․
Եթէ շարժի՝
Կ'ըսես — «Հի՛մա կը թռչի։»

Լանջն է յուզեալ ովկէանի մը նըման,
Կ'ուզէ սիրե՛լ… համբոյրի մ'հետ նըւաղիլ,
Մաշիլ, խամրիլ, խոնջած ընկնիլ գերեզման,
Քամել սիրոյ կրակէ բաժկին հուսկ կաթիլ․
Եթէ շիկնի՝
Կ'ըսես — «Հիմա կը բռնկի։»

Սըրտի մեղո՛ւ, ինչպէս կոչեց Լամարթին,
Որուն ծըծած ծաղիկը՝ սիրտ, մեղրն է սէր,
Ես կոչեմ զնէ կո՛յս՝ որուն սիրտն է երկին
Անհուն սիրոյ որ հորիզոն չունի դեռ․
Եթէ խօսի՝
Կ'ըսես — «Հի՛մա կը հատնի։»

Նէ կը վառի, մի՛շտ կը վառի, չի հատնիր՝
Տընանկ կընոջ՝ տաճարն վառած ճրագին պէս,
Աստղերու նման՝ գիշեր սիրէ փողփողիլ,
Կրակ մ'է փըրթած կողէն սիրոյ բոցակէզ…
Իսկ թէ մեռնի՝
Կ'ըսես — «Հի՛մա կը ծընի։»

Պ. ԴՈՒՐԵԱՆ

No. 155

ՀՈՎԵՐՆ ԱՌԱՆ



2․ Կաթիլ-կաթիլ ամպն է ցօղում
Սև ու պըղտոր երկընքէն․
Մաղիկ-մաղիկ վէրքս է ծորում
Իմ անգուման, սև սրտէն․
Լա՛ց, մէրիկ ջան, որ էլ չե՛մ գայ,
Վէրքըս խորն է, ճար չը կայ․․․։

3․ Անգութ կեանքում վէրքը ստացայ
Սրտանց սիրած ընկերէս․
Անխիղճ կեանքում վէրքը ստացայ
Անո՛ւշ սիրած քուրիկէս․․․
Լա՛ց, մէրի՛կ ջան, որ էլ չեմ գայ,
Աշխ բալէդ է՛լ չը կա՛յ․․․

Ալ․ ԻՍԱՀԱԿԵԱՆ

No· 156

ՍԷՐ ԵՒ ԳԻՆԻ

Բերէ՛ք շիշը, բերէ՛ք բաժակ
Քանի խումի կայ ախորժակ·
Որսա՛նք րոպէն զուր բերկրանքի
Յաւերժական չէ մարդուս կեանք:

Առանց գինու փուճ է կեանքը,
Սէրն տալիս մեզ բերկրանքը·
Սէր ու գինի, գինի ու սէր —
Ա՛յս է կեանքի մեր սփոփանքը:

Խմենք գինի կընոջ կենաց,
Կընկան սիրենք անկեղծ սրտանց·
Տըղամարդուն գինի ու կին
Ընծայել են Նոյ և Աստուած:

Լցրէ՛ք բաժակ փըրփըրադէզ,
Բերէ՛ք իմ մօտ կին բոցակէզ·
Խմեմ, գըրկեմ ու համբուրե՛մ —
Այնուհետև իմ կեանքը ձեզ:

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ.

No· 157

ՀՈՎԻԿ

Ահա ելաւ լուսինն արծաթ
Մութ ամպերու ստուերէն,
Ահա նաւակն ալ գեղազարդ
Դուրս սահեցաւ ժայռերէն
Անո՛ւշ հովիկ, փըչէ՛ յուշիկ,
Ու դէպ ինձ բե՛ր բիւր բիւր ալիք·

Նաւակին մէջ իմ գեղուհին,
Փռուած՝ անփոյթ՝ լուսնի տակ,
Կը ձայնակցի իր կիթառին,
Հընչուն ձայնով մի յըստակ:
Անո՛ւշ հովիկ, փըչէ՛ յուշիկ,
Ու դէպ ինձ բե՛ր երգն անուշիկ:

Ձայնով կ՚երգէ սէր ու գգուանք,
Համակ յուզում ու սարսուռ·
Ալ թո՛ղ, աղջիկ երգդ ու նուագ
Բոց աչքե՛րըդ ինձ դարձուր:
Անո՛ւշ հովիկ, փըչէ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր սէրն անուշիկ:

ՇԱՆԹ

No · 158

ԽԱՒԱՐԵԼ ԵՄ ՈՐՊԷՍ ԳԻՇԵՐ....



2 · Այնտեղ թըչւառ, անբախտ մայրեր,
Որդեկորոյս ծընողներ,
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր
Թափում են յորդ արցունքներ:

3 · Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր,
Ես շատ ու շատ փոխուել եմ,
Ա՛ռ թաշկինակդ, սրբի՛ր աչերդ ·
Ես քեզ սիրել կարող չեմ:

4 · Մընա՛ս բարեաւ, իմ աչքի լոյս,
Սէրըդ լինի ինձ խրախոյս,
Արդ արտասուք ես պիտ թափեմ
Որ իմ ցաւերս ըսփոփեմ:

No · 159

ՄԱԿՈՅԿԸ

Մակոյկն է խըրած
Օրօրուն ափին,
Անձնատուր եղած
Իր ամուր կապին:

Առագաստը թոյլ
Կախուած մեղկօրէն՝
Կը դողայ անդուլ
Հովի սարսուռէն:

Թիերն ալ յոգնած
Դադարէն երկար,
Բայց ծովուն դիմաց
Կը նային իրար ·

Ու դըժգոհ խոհուն
Թեք կայմը ամուր՝
Կը դիտէ հեռուն
Կարօտով տըխուր:

Ու կ'ըմբռնեմ ես ·
Նաւն ալ կայմ, անահ,
Անձկոտ սըրտիս պէս,
Բայց ծով կը ցանկայ ·

Կ'ուզէ սաստկակոծ
Կեանք ու փոթորիկ,
Մինչ ափին անգործ
Կ'երերայ լռիկ...

ՇԱՆԹ

No. 160

ՍԻՐԵՑԻ ՔԵԶ

Շաղի, շողի ժամ.ք էին,
Վարդից հըրդեհ կար յերկինն՝
Փոխան ամպոց հուր հիւսքի
Տեղա՛ր մարգրիտ և ոսկի:

Թաւուտքի մը խոր ծաղկոտ
Ընկողմանած նուաղկոտ՝
Կը հեւայիր դու տըժգոյն,
Ամրան սիւգի մը հանգոյն:

Աչերդ սիրոյ Ատրուշան...
Եւ մատներովդ զերդ շուշան
Կը փետէիր ծաղիկ մի,
Ցաւած շողից աչքդ երկնի:

Հիանայի թէ ի՞նչպէս
Փետել թերթեր վարդին վէս,
Եւ թափթըփել ի քո գիրկ
Զօրէին մատունքըդ գիրդ:

Եւ նըւաղկոտ այդ աչեր
Նըշուլէին նո՛ր եթեր,
Եթե՛ր մ՚աստեղց, ուր փոխան
Հրաշէկ սըլաքք կը շողան:

Ըրիր աչացդ մէկ կայծին
Եւ մէկ վանկիդ զիս գերին,
Շըղթայեցիր զիս, ա՛նգութ,
Նշոյլներովդ վեհ հոգւոյդ:

Թո՛ղ սիրտս, ինձմէ՝ գնա՛ հեռի,
Զուգեմ հոգւոյս թագուհի,
Քեզ՝ որոյ կուրծն վարդի թերթ
Այլ կրանիտ սիրտըն է գէթ:

Դու որ գիտես լոկ բուրել,
Գիրգ սըրտերու վէրք փորել,
Եւ կը սիրես՝ երբ կարի՛
Քեզ պաշտող սիրտն արիւնի:

Թաւուտքի մը շուք նըսեմ
Երբ որ մենիկ արտասուեմ,
Հոն ես դու, կը գըտնես զիս,
Տերեւներէն կը խօսիս:

Երբ առուակին մէջ փափուն
Կ՚ուզեմ մոռնալ դէմքըդ, դուն
Դարձեալ հոն կը գըտնես զիս,
Ալիներէն կը ժըպտիս:

Երբ կը փախչիմ ժայռ ու սար՝
Ջախջախել սիրտս ու քընար,
Հովին մէջէն միշտ մինչեւ՝
Թէ բընաւ զիս սիրած չես:

Գըրկեմ սրտովս արդ ցուրտ հող,
՚Ի ալ չը դիպիմ քեզի թող,
Կոյս մ՚է նաև գերեզման...
Կա՞յ խորունկ սիրտ մ՚անոր նման:

Պ. ԴՈՒՐԵԱՆ

Գիշեր ու ցորեկ կուլամ, աճափ իմ եարն կու լսէ՞·
Այնչափ ողորմուկ կուլամ, աչերուս արիւն կու կաթէ·
Ա՜յ, իմ հեռացած եարէն ով ինծի խապար մի բերէ,
Հաշուէ զիմ ելած հոգին դարձուցեր ՚ւ ինծի կու բերէ:

Ն. ՔՈՒՉԱԿ

No· 161

ՀՕ՜Յ ՆԱԶԱՆԸՄ....



2․ Աղջի՛, մազերդ թուխ է,
Էս ի՞նչ բարութի մուխ է,
Մուխ անողը քոռանայ,
Ինձի, քեզի մոռանայ:
Հօ՜յ նազանըմ էյլն:

3․ Մեխակի ծառ եմ տընկել,
Քեզ համար հիւանդ ընկել,
Օխտը տարի տեղումըս
Ես մի կըչտի եմ պառկել:
Հօ՜յ նազանըմ էյլն:

4․ Գիւլըս գիւլում ա դառել,
Եարըս լէյլում ա դառել,
Ո՞նց ասեմ որ հասկանաք—
Մի հատ զուլում ա դառել:
Հօ՜յ նազանըմ էյլն:

5․ Թեւդ թեխս մօտեցնեմ,
Ձեռըդ ձեռիս կըպցնեմ,
Մի կերպ դուրս արի՛ դուռը,
Բալքամ թագուն թըռցնեմ:
Հօ՜յ նազանըմ էյլն:

ՍՊԱՆԻԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԷՆ

Ամէն տեղ որ քովըդ կուգամ
Հայց կը գնեմ ու կը կըշտանամ,
Որ չըսէ մայրդ, թէ երբեք ես
Պատրուակով թէ տեսնեմ քեզ՝
Հայց ուտելու միայն կուգամ:

No. 165

ԵՐԳ

Ո՛ւր էր թէ զեփիւռիկ
Ըլլայի թափառիկ,
Ոսկեթել մազերուդ
Տայի համբուրիկ։

Ո՛ւր էր թէ վարդ գոհար
Ըլլայի վառ ի վառ,
Ընտրէի ինձ բազմոց
Կուրծքըդ ձիւնափայլ։

Ո՛ւր էր թէ քնարիկ
Ըլլայի ես թռչնիկ,
Թռչիլ գալ ու շոյել
Դէմքըդ գեղեցիկ․

Կամ երազ խուսափուկ
Որ գայի մենակուկ
Քունիդ մէջ խռովել
Քու սիրտըդ փափուկ։

Ի՛նչ ըրի ես քեզի
Որ ցաւոց այդպիսի
Եւ անբոյժ հարւածոց
Ըլլամ արժանի։

Հրեշտակ էր թըռաւ,
Երազ էր որ անցաւ,
Այդ քու սէրըդ փափուկ
Շուտով թառամեցաւ։

Մ․ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

No. 163

ԵԱՐԱԼԻ ԲԼԲՈՒԼ

Նպատակիս գէթ մի մասը կատարւէր —
Եարալի բըլբուլ եմ,
Հայրենիքս ազատ տեսնեմ ու մեռնեմ,
Եար արի՛, տուն արի՛, շուտ արի՛, բըլբուլ եմ,
Սարերի գիւղն եմ։

Ա՜խ, իմ դարդս շատացել է, չեմ կարող,
Եարալի բըլբուլ եմ,
Դարդի ձեռքից ո՞ր ջուրն ընկնեմ, ազատւեմ․
Եար արի՛, տուն արի՛, շուտ արի՛, բըլբուլ եմ
Սարերի գիւղն եմ։

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

Շնորհիւ Պն. Արշակ Չօպանեանի՝ Նահապետ Քուչակի անունը մոռացութեան փոշիներէն հանելով՝ հրատարակութեան ծանուցուեցաւ 1902-ին «Նահապետ Քուչակի Դիւանը» անուն կրող անզուգական հատորով մը, որուն հետեւեցան կարգ մը ուսումնասիրութիւններ՝ «Անահիտ»ի այլեւայլ թիւերուն մէջ: Չօպանեանէ առաջ՝ իրաւ է թէ եղած են յիշատակութիւններ Քուչակի մասին, սակայն շատ ծանծաղ ու անցողակի, եւ այդ՝ սիրոյ ամենամեծ հայ երգչի անունը հրապարակութեան ծանօթացնելու ամբողջ փառքն ու գմայլելի աշխատութեան հրապոյրը միմիայն «Անահիտ»ի խմբագրին կը պատկանի:

Սակայն ո՞վ է Քուչակ: Իրապէս ո՛չ ոք գիտէ: Չօպանեանի, ինչպէս նաեւ կարգ մը ուրիշ քերթողներու ունեցած նիւթերը՝ Քուչակի անձնաւորութեան մասին՝ բացարձակապէս իրար կը հակասեն, եւ դժուար է ճշդիւ որոշել Քուչակի թէ՛ ծննդավայրը, թէ՛ իր ծննդեան եւ նոյնիսկ ապրած շրջանի տարիները: Կան ենթադրութիւններ թէ ան Ակն ծնած ըլլայ, ինչպէս նաեւ թէ ան Վանի Խարականիս գիւղէն է, եւ ապրած մօտաւորապէս ԺԶ.-րդ դարու սկիզբները: Ոչինչ յայտնի ըլլալով Քուչակի կեանքի մասին՝ Պն. Չօպանեան «Արձագանք» լրագրի 1891 տարւոյ մէկ թիւէն փոքրիկ աւանդավէպ մը կու տայ անոր մահուան մասին. «Խրիմեան Հայրիկը ըսած է թէ Քուչակը աւելի «Ջիչակ» անունով ծանօթ է Խարականիսի մէջ, եւ անոր մահուան մասին պատմած է աւանդութիւն մը, որ մինչեւ ցարդ պահպանուած է տեղացւոց մէջ. այդ աւանդութեան համեմատ՝ Խարականիսի մօտ, բլրակի մը վրայ գտնուող Ս. Թորոս եկեղեցիին կատարը կ'ելլէ օր մը Քուչակ, եւ իր հետ եղողներուն կ'ըսէ. «Ինքզինքս տակէ վար պիտի նետեմ. ուր որ իյնամ, այնտեղ փորեցէք գերեզմանս»: Եւ իրօք, ինքզինքը վար կը նետէ. ինկած տեղը կը փորեն գերեզմանը, որ կը մնայ մինչեւ հիմա, եւ ուխտավայր է դարձած: Այս աւանդութիւնը շատ սիրուն է. ան մեզի ցոյց կու տայ Քուչակի մահը այնքան ինքնատիպ, որքան ինքնատիպ է անոր գործը:»

Գրական մեծ արժէքը, որ ունին Քուչակի «Սիրոյ Տաղերը» չի կրնար այլեւս ոեւէ քննական տարակուսութիւններով կասկածելի դառնալ: Քուչակը ամենէն քաղցրախօս հայ բանաստեղծն է, որ երգած է սէրը. ամենէն քնքոյշ սիրահար սոխակը, որ գալարուեր, տանջուեր, լացեր եւ ուրախացեր է սիրոյ յաւիտենական, անմահ յոյզերուն մէջ. հայ Աստղիկի ամենէն ջերմեռանդ երկրպագուն, խնկարկուն Քուչակն է անպայման: Աներնականօրէն քնքոյշ ու վճիտ իր յափշտակութիւններուն մէջ իր «եարին» հանդէպ, ըղձային ու տպաւորուող հիւանդոտութեան տարփման՝ Քուչակ՝ իր աստուածուհւոյն պաշտամունքը գիտէ ձեւակերպել այնպիսի սքանչելի գոյներով, որ անոր կրնան հաւասարիլ եւ թերեւս նսեմանալ՝ Ալֆրէտ տը Միւսէն, Հայնէն, Փեթրարքան եւ ուրիշ աշխարհի ու մարդկութեան պարծանքն ու հպարտութիւնը ներկայացնող հանճարեղ արուեստագէտները: Քուչակ կը դադրի սովորական աշուղ մը ըլլալէ. ան՝ ինչպէս իրաւացիօրէն կը նկատէ Չօպանեան՝ աւելի հայ ցեղի, հայ ստեղծագործութեան հաւաքական մտքի, երեւակայութեան ու զգացումի խտացումն է, որ անհունապէս պատուաբեր է Քուչակը արտադրող ժողովրդին համար: Ասոր շքեղ ապացոյցն է այն

խանդավառ ընդունելութիւնը՝ որուն արժանացաւ Քուչակի տաղերու ֆրանսերէն թարգմանութիւնը։ Այդ հոյակապ գործը -- Զօպանեանի գրչի արդիւնք — այնպիսի հիացմամբ ողջունեցաւ Ֆրանսացի ամենէն լուրջ հանդէսներու և բանասէրներու կողմէն, որ իրաւամբ հաստատեց Քուչակի գիրքը, կերպով մը միջազգայնացնելով անոր նշանակութիւնը։

Թողունք սակայն, որ Զօպանեան ինքը խօսի Քուչակի գրական դերին վրայ.

«Սէրը, զոր Քուչակ կ'երգէ, հոգեբանական նրբութիւններով, իմաստասիրական կնճռոտութիւններով բարդացած զգացում մը չէ, ոչ ալ կեանքի ցաւէն հանգչելու համար զով բարձը՝ ուր տիեզերքի խորհուրդէն ջախջախուած միտքը կը թաղէ պահ մը, (ինչպէս Խայեամի մը կամ Վինեիի մը համար)։ Քուչակի աչքին, սէրը ամբողջ կեանքն է, ամբողջ ցաւը, ամբողջ երջանկութիւնը և ամբողջ խորհուրդը. տաք պարզ, առողջ, վճիտ, բընական հրայրքն է որ արուն կը մղէ դէպի էգը՝ անոնց մէջ վառելով տենդերուն ամենէն նուիրականը. և այդ պարզ և անհուն զգացումին արտայայտութեանը մէջ չեմ գիտեր բանաստեղծ մը որ աւելի մեծ ըլլայ քան Քուչակը. սիրոյ ամբողջ վէպը, իր բոլոր այլազան դրուագներով, երգած է ան լայնօրէն, անզուգական զօրութեամբ մը զգացման ու ձևի։ Հոն, Սատին ու Հաֆըզն իսկ կը նսեմանան մեր աշուղին քով, որովհետև անոնց մէջ դիտումնաւոր նրբութիւնը, արուեստի ճարպկութիւնները, հմտութեան ու ներշնչման մշտական խառնուրդը, վերջապէս «սորվուած»ին տիրապետութիւնը, կը պղտորեն ու կը ծանրացնեն յաճախ այդ լայն ու խորունկ ու մերկ զգացումին գեղեցիկ պարզութիւնը։ Քուչակի սիրերգը հառաչանք մըն է՝ իր թեթև, աննիւթական, գրեթէ օդային փափկութեանը մէջ սեւեռուած, խունկի բարակ, ոլորուն ու կապոյտ շրջագծերով՝ երբ երանաւէտ հեշտանքի պահ մըն է երգուածը, հիւանդ արիւնի տմոյն կարմրութեամբ մը տոգորուն ու արցունքի մանր շիթերով աստեղազարդ՝ երբ յուսախաբութեան րոպէ մըն է ողբացուածը, կամ գիշեր ատեն գերեզմաններու խաւարին մէջէն դողդղալով շողացող շրջմոլիկ հուրերու ժանգոտ նըշոյլովը գունաւորուած՝ երբ անդարձ բաժանումներուն կսկիծն է մրմնջուածը։» («Ն. Քուչակի Դիւանը», Նախաբան)։

Իսկ «Անահիտ»ի մէջ Պն. Զօպանեան հետևեալ դիտողութիւնները կը ներկայացնէ։

«Քուչակի տաղերը տարօրինապէս յստակ են, լիալիր, «աւարտած». կ'ըսեն ամբողջապէս ու պայծառապէս՝ ամէն ինչ որ կ'ուզեն ըսել. ու տաղաչափութիւնը, լեզուն իսկ հրաշալի են, շատ յաճախ անթերի, միշտ գիտակից, որոշ, ամենանուրբ արուեստով մը յղկուած, արուեստագէտի մը, «մարդու» մը մատը կը զգացուի հոն միշտ։»

«Տաղերուն» մէջ պատահող օտար և գաւառական բառերու բացատրութիւնները նայիլ գրքին կցուած յաւելուածին մէջ։

No· 164

ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐ

Այս աստըւորիս վըրայ քանի քու ձայնիկըդ կուգայ․
Այլ աւազանի ծընունդ չի սիրեմ երբ զքեզ տեսեմ.
Մեռնիմ 'ւ ի յանդէնն երթամ, քեզ ի հոն տանիմ թէ կարեմ,
Ի յանանցական հըրոյն զիս դէմ տամ ըզքեզ խալխեմ :

Քանի՛ սարերուղ երթաս, օր մի յիմ ափըս տի ընկնիս,
Երբ օր մի յիմ ձեռքն ընկնիս, բան անեմ որ խոստովանիս․
Երթամ ես ի յան կարմուձն որ իժիր դու բաժդող կ'անցնիս,
Առնում զայն որ անցեր ես, առնում զայն որ դեռ տի անցնիս :

Գընա՛, մի հայիր ի յիս՝ այդ խուռնի աչերդ որ ունիս,
Ցերէկ նայեցար ի յիս, նա հիւանդ եղայ քո դերիս․
Խըղճէս 'ւ արենէս ունիս թէ չելնես ու զաս մօտ ի յիս․
Ջերեսդ երեսիս դընես՝ զինչ պիտոյ է աստըւորիս :

Կանա՛նչ կապուտ մանչո՛ւկ, եղնավի՛զդ՝ ի՞նչ խօշ կու նայիս·
Դարձի՛ր մէկ մ'ընդ յիս նայէ, կուլակիդ խապա՛նն իմ հոգիս :
Թէ մարդ ես ու սէր ունիս՝ նա ծառայ մեռնիր կուլակիս․
— Ծառայ Ստեղծողին մեռնիմ, տայ զկուլակն ու սէրն ալ ի յիս :

Ծըռա՛գ, քեզ երնէկ կուտամ, իմ եարին առջև կու վառիս․
Գէմ չաս մի Փառահ է քո, իւր յերեսն ի վեր կու նայիս․
Ծըռա՛գ, քեզ ականջ պիտէր՝ լըսէիր զիմ գանգատընիս,
Երթիր իմ եարին ասիր․ խռով է՝ հաշտէր հետ ի յիս :

Ծըռա՛գ, քեզ երնէկ կուտամ, պահ մ'երիս պահիկ մ'անցանիս·
Արե՛կ, զդերիս նայէ՛, որ անցաւ պատրոյգն ի լերդիս․
Ասի թէ հանեմ ըղնա, ցաւ կուտայ ինքն ի մէջ սրտիս·
Մակար զինքն ընդ յինք թողում որ երի և սենայ կաշիս :

Այս ամէն ալամ գիտէ որ տըղայ եմ ըզքեզ սիրեր,
Բըռներ եմ սըրտիդ ականջն ու ձեռօքըս զօղն անցուցեր․
Քու սէրն է իմ մօրըս կաթն՝ ծուծ եղեր 'ւ ոսկերքս է մըտեր·
Ջըկայ բաժնելու ճարակ· զայդ ի քո միտըդ մի՛ ձըգեր :

Ես տըղայ ու դու տըղայ, սիրուելու տանն է հիմայ·
Մէջկունքդ ի յաղեղ նըման· քանի յիս քաշեմ նա կուգայ·
Քո ծիծդ է խաղող նըման որ առեր կըծոցդ ի վերայ․
Քո ծոցդ առաւօտ նըման, քանի յետ բանամ նա լուսնայ :

Եկո՛, քեզ նուռ մի տամ կարէ՛, տե՛ս քանի՞ հատ ունի․
Ամէն հատի պագ մի տո՛ւր, աւելին հարամ թէ պիտի
—Գընա՛, ծօ՛ տըղայ տըխմար, ես քեզ խելօք գիտէի․
Ամէն հատի մէկ պա՛գ տամ․ ո՞ւր եղեր կամ ո՞ւր տի լինի :

Այս աստըւորիս վերայ երկու բան ողորմ ու լալի․
Մէկ որ սիրոյ տէր լինի․ մէկ մ'ալ զայ Գրողն ու տանի․
Մեռածըն դէմ չէ լալի, որ ունի զիւր խոցն ալանի·
Եկէ՛ք, զողորմուկս տեսէ՛ք․ ո՛չ մեռած է, ոչ կենդանի :

Այս գիշեր ի դուրս ելայ. թուխ ամպ էր 'ւ անուշ կու ցօղայ.
Զիմ եարն ալ պառկած տեսայ ու կանանչ եօղղան ի վըրան.
Ոտկունքս առուդիր արի թէ մըտնում ի ծոցըն նորա
Գլխարկն ալ ի վեր ինկալ. թուխ աչօքն արաւ թէ՝ գընա՛.
Սև օձ կայ ի յիմ ծոցիս, որ չելնէ ու զատափ ջանայ
Հառաչելով ի յետ դարձայ, թէ զավե՛մ զսուրաթըն նորա։

Շատ պատկերն ի քո սուրաթդ, աննըման դէդ քուկըն չի կայ.
Հանց աղւոր պատկեր ունիս որ կ'ասեն թէ տէրն է Մըսրայ.
Ունքերդ դէդ եկեղեցոյ կամար ի վեր քաշած է.
Աչերդ ի կանթեղ նըման ի կամարն ի վար կախած է։

Զինչ եղէգն ի չամբրին միջին կու ծօծայ՝ այն քու անձըն է.
Քո մէջքդ է բարակ 'ւ երկան և պօյիկդ է ասլէի բոյան
Ջուրն անմահութեան կ'ասեն՝ այն ի քո ծոցըն կու բըխէ.
Երնէկ ես անոր կու տամ՝ որ դընէ զբերանն ու խըմէ.

Զիմ եարն յիմէ զատեցին, թառմեցայ զէտ վարդի տերև,
Տարին այլ երկիր հանին, չի ցաթեց իմ սիրտըս արև.
Երթամ աղաչեմ զԱստուած որ տայ ինձ աղաւնու թև.
Թըռչիմ ու հաւան ելնում իմ եարին երդիցն ի վերև.
Աչացս ալ արցունք թափեմ զէտ թաթաւ ու զէտ ըզանձրև։
Իմ եարս ալ ի դուրս ելնու կարմըրած զէտ վարդի տերև,
Իջնամ ու պագիկ մ'առնում ըզդընչին ներքևն ու վերև։

Գէմ չեմ Ցուղայի ծընած կամ հօրն ու մօր անիծած.
Ես եմ կօզալի բերած ու հազար նազով սընուցած.
Ես ինձ տարտեր շատ ունիմ. կամ սիրէ՛ կամ թո՛ղ գլխ ի բաց.
Զըգէ խիղճ ի քո մըտիդ, կամ յիշէ՛ աւուր մ'աղուհաց։
Գամ կանգնիմ ի քո դիմացդ, լամ՝ լալով անեմ քեզ իմաց.
Ընծի գէմ սէր չէ պակաս. կամ ի քո սիրուդ կարօտած.
Սև սըրտիկս ըզքեզ ուզաց, այլ ընծի խօշ եար չը պիտաց։

Ա՜մ, ո՞վ որ հաներ վարեր ըզիր եարն որ ես վարեցի,
Տարի ու անհուն լեռներն անցուցի ու շատ մի լացի.
Դարձայ սարերուն ասի, ձորերուն ապըսպրեցի,
Ուր երթաս՝ բարով կենաս, ես լալով զիմ կեանքս անցուցի։

Հա՛յ մեր մահալի մօրճո՛ւկ, մեր աղբիւրն ի ջուրն ես եկեր.
Լուսինն ի ծոցէդ աղբըրին ի յակն է ցաթեր.
Երնէկ ես անոր կու տամ որ գիշերն ի ծոցդ է պառկեր,
Գըկիկ կուռ միջացդ ածեր ու զբերնիդ բոլորն է պագեր։

Կօզա՛լ, քեզ բանիկ մ'ասեմ, քո ահուն չեմ իշխեր ասել.
Անոր համար չեմ ասեր՝ դուք հարուստ էք ու մեք տառպել.
— Ծօ՛, ասա՛ և մի՛ վախեր. շատ հարուստ է տառպելացեր,
Անչափ հարըստի դըստրիկ տառպելի ծոցիկ է պառկել։

Դաւի՛թ մարգարէ՛. իմ յո՛յս, շատ մեղկունք ունիմ, թէ թողուս.
Նարուկ մի սիրեր եմ ես պարապար հետ երկու լուսոյս.
Հընցկուն աղւորիկ նարուկ թէ խուցդ գայ նա թողուս,
Ցորեկըն սաղմոս ասես՝ լօք գիշերն ի ծոցիկդ առնուս։

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

No· 165

ՍԵՒՈՐԱԿ ԱՉԵՐ

Սեւորակ աչեր, աչեր սեւորակ,
Ձեր մէջ փայլում է մի վառվառ կայծակ·
Դուք իմ սըրտիս մէջ կրակներ էք թափում,
Դո՛ւք էք իմ տէրը, ես ձե՛զ եմ պաշտում։

Աչե՛ր սեւորակ, սեւորա՛կ աչեր,
Ձեր մէջ տեսնում եմ մի երկնային սէր·
Դըրանց սիրելու եմ մինչեւ իմ դագաղ,
Դոցա պէտք է ես լինեմ զոհ, մատաղ։

Դուք՝ սիրո՛ւն աչեր, դուք՝ քնքո՛յշ աչեր,
Սեւ էք դուք դարձրել իմ պայծառ օրեր·
Դուք մաշում էք ինձ անողորմագին,
Եւ չէք խնայում իմ ծաղիկ հասակին։

Շողում էք սիրով մինչ ի մահ գրաւիչ,
Լըցւած էք չնորհով հոգեկան, աչեր·
Ինչո՞ւ ձեր միջից այդպէս կախարդիչ
Թափում են տաք-տաք բոցեղէն կայծեր։

Քանի՛ ըսպանիչ ցանում էք վիշտեր
Սըրտիս մէջ անփորձ եւ դեռածաղիկ,
Քանի՛ տըրտմութիւն, քանի՛ դառն վէրքեր
Ազդում էք նորան անբուժ, թափանցիկ։

Թափեցէ՛ք, ուրեմն, բըռնաւոր աչեր,
Ձեր ողջ թունաւոր նետերն իմ վըրայ·
Թող այրեն, ուտեն իմ կեանքիս թելեր,
Երջանիկ վայրկեան ինձ համար չըկայ։

Բայց կը մոռանաս, կոյս դու նազելի,
Այն խաղաղ, պայծառ ժամեր սիրելի,
Երբ մենք ձեռն ի ձեռն, լուսնակ գիշերով,
Զրոյց էինք անում անուշ խօսքերով։

Երբ ուսիս վրայ գլուխըդ խոնարհած՝
Իբրեւ մի քընքոյշ, սըրտակից ընկեր՝
Համբուրում էինք մեմեանց ցնորւած,
Խոստանալով սէր եւ ոսկի յոյսեր։

Դեռ չէ թառամել քո վարդն ինձ տըւած,
Ի նըշան անմեղ գըրկախառնութեան·
Ինձ դու մոռացար, անգութ, անաստւած,
Այո՛, մոռացար եւ՛ պարտք սըրութեան։

Ս· ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

No 166

ԿԱՊՈՒՏԱԿ ԱՉԵՐ

(Սէր-Հար Սայլօրթը)

Ահա սուրհանդակի սայլակը
Ուղիղ ճամբով է դուրս թռչում,
Եւ Վալդայի տխուր զանգակը
Կամարի տակ է ղօղանջում:

Արթուն սայլորդը գիշերւայ դէմ
Իր վիճակի վերայ տխրեց,
Եւ սիրուհւոյ աչաց կարօտը
Նա տխրագին ձայնով երգեց:

«Կապոյտ աչեր, կապոյտ աչեր,
Կտրիճիս կեանքը մաշեցիք.
Ինչո՞ւ, ինչո՞ւ, դո՛ւք չար ոսոխներ,
Ինչո՞ւ սրտերս բաժնեցիք:

«Մընաս բարեաւ իմ տուն հայրական,
Մընաս բարեաւ իմ սիրական,
Ես կը հանգչիմ՝ զերդ բոց կըրակին՝
Այս անընակ դաշտի միջին:

«Արևիս լոյսը խաւարել է,
Այս աշխարհումն էլ որբ եմ ես.
Սըրտիս կարօտը՝ աղջկայ տեսնելից՝
Մինչև ի մահ զըրկւած եմ ես:»

Այս որ ասաց՝ շարժեց մըտրակը,
Երեք ձիանց մէջքին խըփեց.
Իր սիրուհւոյ պարզ յիշատակը
Այսպէս երգով նա փարատեց:

No. 167

ԱՍՈՒՊ ՄԸ

Այդ աղջիկը երէկ տեսայ,
Հէ՛ղ մը միայն, ա՛ն ալ վերջին.
Կարծես ասուպ մը դիւրասահ,
Որ կը կորչի աչքիդ առջին:

Հազիւ գողցայ՝ ակնարկ մը վառ
Սև աչքերէն իր տենչարծած,
Ու ժպի՛տ մը, որ յայտէն վար
Ինծի նետել ուզեց յանկարծ:

Հազիւ դիպայ քնքուշ թաթին
Հըրաժեշտի պատըրւակով,
Ու ըզգացի քայլ մը անդին
Սըրտէս բան մը մընաց իր քով:

ՇԱՆԹ

No. 168

ԴՈՒՆ ԿԱՂՕԹԷԻՐ ...։

Դուն կ'աղօթէիր յուզուած, դողահար՝
Կոյս ննջարանիդ առանձնութեան մէջ.
Ջինջ արցունքիդ տակ ժպիտ կը խաղար,
Մինչդեռ բնական շարժումով մը մեղկ՝
Մերկ լի թևերդ կը հիւսէիր իրար։

Գըլխու ամէն մի թեթև ցընցումիդ
Կապէն ազատուած մազերըդ առատ,
Ինչպէս ոսկեզօծ առուակ մը ոլրամիտ,
Կը հոսէր ուսէդ կոհակ ու կոհակ
Դէպի ձիւն-փըրփուր գիրկը անկողնիդ։

Ի՞նչ կ'աղօթէիր, ինչո՞ւ. չը գիտե՛մ.
Միայն կը յիշեմ որ քու փըղոսկրէ
Կիսաքօղ կուրծքիդ ալիքներուն դէմ
Ըզգացի տենչ մը Աստուած լինելու,
Որուն կ'աղօթես դուն ամէն ատեն։

ՇԱՆԹ

No. 169

ԽՈՒՆԿԸ

Խունկը կը ծըխի խորանին առջին
Բուրվառին մեղմիկ ճօճումովն արծաթ.
Մուխի վարանք մը պըլլըւած խաչին՝
Մըշուշով կ'օծէ սուրբերուն ճակատ։

Պաղատանքներու սարսուռներ երկայն
Կամարներուն տակ կը մարին տակաւ,
Մոմերու սըժգոյն բոցերը լալկան
Քըթթող աչքերով կը հեւան կարգաւ։

Սուրբ սիւներուն մօտ շըղարշ մը ճերմակ
Գաղտուկ հեծքերու դողով կ'երերայ,
Սիրտ մը փաթըթուած սուգերով համակ
Խունկին պէս լուռ հըրայրքով կ'եռայ։

Խունկը կը ցընդի բուրվառին ծոցէն
Ու եթերն ի վեր կ'ելլէ խոյանքով,
Նիւթ էր, բայց կ'ըլլայ լափուելով բոցէն
Իր կեանքը ցօղուած լոյսի երանգով։

Հէք կնոջ սիրտն ալ որ հոն կը մըխայ,
Պիտի չապաւի իր պատեանէն կուռ,
Մինչև որ հալի, լուծւի, տարրանայ՝
Լափուելով բոցէն տենչերուն մաքուր։

ՍԻՊԻԼ

No· 170

ԼՃԱԿ

Ինչո՞ւ ապշած ես , լըճակ ,
Ու չեն խայտար քու ալեակք ,
Միթէ հալւոյդ մէջ անձկաւ
Գեղուհի՞ մը նայեցաւ :

Եւ կամ մի՞թէ կ'դմայլին
Ալեակդ երկնի կապոյտին ,
Եւ այն ամպոց լուսափթիթ
Որք նմանին փրփուրիդ :

Մելամաղձոտ Լըճակ իմ ,
Քեզ հետ ըլլանք մտերիմ .
Սիրեմ քեզի պէս ես ալ
Գրաւիլ , լռել ու խոկալ :

Ո՛րքան ունիս դու ալի՝
Ճակատս ա՛յնքան խոկ ունի .
Որքան ունիս դու փրփուր՝
Սիրտս ա՛յնքան խոց ունի բիւր :

Այլ եթէ գոգդ ալ թափին
Փայլքն աստեղաց երկինքին ,
Նմանիլ չես կրնար դուն
Սրտիս՝ որ է բոց անհո՛ւն :

Հոդ ամպերը չե՛ն մեռնիր ,
Ծաղիկները հոդ չեն թոռմիր ,
Ամպերն չե՛ն թըրջեր հոդ ,
Երբ խաղաղ էք դու և օդ :

Լըճա՛կ , դու ես թագուհիս ,
Զի թ' հովէ մ'ալ խորշոմիս ,
Դարձեալ խորքիդ մէջ խըռով
Զիս կը պահես դողդըղալով :

Շատերը զիս մերժեցին
«Քընար մ'ունի սոսկ»— ըսին .
Մին՝ «Դողդոջ է , դոյն չունի» ,
Միւսն ըսաւ . «Կը մեռնի» :

Ոչ ոք ըսաւ . – «Հէգ տըղայ ,
Արդեօք ինչո՞ւ կը մըխայ ,
Թերեւս ըլլայ գեղանի ,
Թէ որ սիրեմ , չը մեռնի :»

Ոչ ոք ըսաւ . – «Սա տըղին
Պատռենք սիրտը տըրտմագին ,
Նայինք ինչե՛ր գրւած կան . . .»
— Հոն հրդեհ կայ , ո՛չ մատեան :

Հոն կայ մոխիր . . . յիշատա՛կ . . .
Ալեակքդ յուզի՛ն թող Լըճա՛կ ,
Զի քու խորքին մէջ անձկաւ
Յուսահատ մը նայեցաւ . . .

Պ . ԴՈՒՐԵԱՆ

No· 171

ԱՐԱԶՆ ԵԿԱՒ . . . .

Արազն եկաւ լափին տալով ,
Ժէռ քարերին , ափին տալով ,
Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը ,
Զոր գըլուխըս տափին տալով :

Ա՛յ իմ Արազ , ջուրըդ վարար ,
Սիրուն եարիս եարար տեսա՞ր .
Ես չը հասայ իմ մուրազին ,
Արազ , եարաբ կարօտս առա՞ր :

Ամպերն ընկան Մասիս սարին ,
Կարօտ մնացի ես իմ եարին ,
Աստուած սիրես , էրւած սըրտիս
Զուդար բերես էկող տարին :

Գիշերն անքուն գիր կը գրեմ ,
Արտասուքըս գետ կը շինեմ ,
Արա՛զ , ծէգը ջըրիդ շաղած՝
Իմ սև դարդը քեզ կը բերեմ :

Կասես շողքը քարին ընկաւ ,
Կրակը սըրտիս մէջն ընկաւ ,
Կամար ունքից , թուխ աչքերից ,
Ցաւն իմ ջիւան ջանիս ընկաւ :

Աւ . ԻՍԱՀԱԿԵԱՆ

No. 172

ՄԻ՛ ԼԱՐ ԲԼԲՈՒԼ....



2. Կ՚անցնեն օրեր, կուգայ կըրկին
Մի նոր գարուն վարդաբեր,
Եւ մոռացած քո վիշտը հին՝
Նորից կ՚երգես վարդի սէր:

3. Բայց վա՜յ կեանքին այն խեղճ երգ-
Որ վաղաժամ որբացաւ. [չի,
Իր սիրելի խօսուն վարդին
Սառը հողի մէջ տեսաւ:

4. Երգչի համար գարուն չը կայ
Ո՛չ էլ նոր վարդ կը սիրէ.
Նա պէտք է լա՛յ, պէտք է սըգայ
Մինչ յաւիտեան կը լռէ:

No. 173

ԻՄ ՑԱՒԸ

Սուրբ տենչերով լոկ ծարաւած՝
Ցամաք գըտնել աղբերքն յամայր:
Ցամքիլ ծաղիկ հասակի մէջ,
Ո՜հ, չէ այնչափ ցաւ ինձ համար:

Ջերմ համբոյրով մը դեռ չայրած՝
Սա ցուրտ ճակատս դալկահար
Հանգչեցունել հողէ բարձին,
Ո՜հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Դեռ չը գըրկած էակ փունջ մը
Ժպտէ, գեղէ, հուրէ շաղեալ,
Գըրկել սա ցուրտ հողակոյտը
Ո՜հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Քաղցր երազով մ՚յղի մըրափ մը
Զանգուրրած գըլուխս մըրըրկահար՝
Ննջել հողէ վերմակի տակ.
Ո՜հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Հագնիլ հիւղին մուր-անունը,
Ծըծել նորա մրուր-օղն յար,
Մխա ցաւիլը միանգամայն.
Ո՜հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Հէգ մարդկութեան մէկ սոսը գօս՝
Հայրենիք մը ունիմ թըշուառ,
Զօդնած անոր՝ մեռնիլ աննշան.
Ո՜հ, այս է սոսկ ցաւ ինձ համար:

Պ. ԴՈՒՐԵԱՆ

No. 174

ԱԽԹԱՄԱՐ

Ծիծաղախիտ Վանայ ծովի
Փոքրիկ գիւղից առափնեայ
Ծովն է մըտնում գաղտնագողի
Ամէն գիշեր մի տըղայ :

Ծովն է մըտնում, առանց նաւակ,
Բազուկներով առնացի
Ջուրը ճողփում, լող է տալի
Դէպի կըղզին դիմացի :

Խաւար կըղզուց պարզ ու պայծառ
Մի լոյս կանչում է նըրան,
Մի վառ փարոս նըրա համար,
Չը մոլորի իր ճամբան :

Սիրուն Թամարն ամէն գիշեր
Այնպէս կըրակ է անում,
Եւ ըսպասում է անհամբեր
Այնտեղ՝ մօտիկ դարանում :

* * *

Ծըփում է ծովն ալեծածան,
Ծըփում է սիրտը տըղի.
Գոռում է ծովն ահեղաձայն,
Նա կըռւում է կատաղի :

Եւ Թամարը սըրտատըրոփ
Արդէն լըսում է մօտիկ
Ջըրի ճողփիւն, ու ողջ մարմնով
Սիրուց այրւում է սաստիկ :

Լըռեց : Ծովի խաւար ափին
Կանգնեց սեւ-սեւ մի ստուեր...
Ահա և նա .. իրար գըտան...
Կասկածաւո՞ր լուռ գիշեր...

Միայն ալիքը Վանայ ծովի
Մեղմ դիպչում են ափերքին,
Հըրհըրելով հեռանում են
Շըշունջներով անմեկին :

Նըրանք սեւս փըսփըսում են..
Ու աստղերը կամարից
Ակնարկելով բամբասում են
Լիրբ, անամօթ Թամարից...

Բամբասում են կուսի սրտում...
Ժամ է արդէն... ու կըրկին
Մինն ալեկոծ ծովն է մըտնում,
Միւսն աղօթում եղերքին...

* * *

Բայց մի անգամ չարկամ մարդիկ
Նըրանց գաղտնիքն իմացան,
Լոյսը հանգցրին սեւ ու սաստիկ
Մի մութ գիշեր գիւղական :

Մոլորւեցաւ խաւար ծովում
Լուղորդ տըղան սիրահար,
Ու բերում է հողմը, բերո՜ւմ
Հառաչանքներն — «Ա՜խ, Թամա՜ր...»
Մօտ է ձայնը. խոլ խաւարում,
Ժայռերի տակ սեպացած,
Ուր ամեհի ծովն է կոծում
Մերթ կորչում է խըլացած
Ու մերթ լըսւում ուժասպառ
«Ա՜խ, Թամա՜ր...» :

* * *

Առաւօտեան ծովը ծըփաց,
Ափը ձըգեց մի դիակ,
Նըրա շուրթին՝ պաղ, կարկամած,
Ասես, մեռած ժամանակ
Սառել էին երկու բառ.
«Ա՜խ, Թամա՜ր...» :

Այն օրւանից սըրա համար
Կըղզին կոչւեց «Ախթամար» :

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

No. 175

ՍԻՐՈՅ ՋՈՀԵՐ

Լըճի մէջ նաւակը
Մեղմ հովով կը տանի.
Նորա մէջ նըստած է
Սիրահար պատանի:

Պատանին ձեռքն ունի
Կիթառա և կ'երգէ,
Իսկ քամին կը փախցնու
Նաւակը եզերքէ:

Լըճակի մէջը կայ
Քարաչէն մի ամրոց,
Սիրուհւոյ բնակարան,
Հանապազ փակ ու գոց:

Պատանւոյ նաւակը
Դէպ ամրոց կը վազէր,
Ուր նորա անձկալին
Սրտատրոփ կը սպասէր:

Մեղմ հովը ուժլի,
Ուժլի սաստկացաւ,
Երկինքը թուխպ պատեց,
Փոթորիկ բարձրացաւ:

Ալիքի լեռները
Գոռալով կը ծփան,
Պատանին աներկիւղ
Կը նուագէ կիթառան:

Լուսինը ամպերու
Տակէն երևցաւ,
Սոսկալի աղէտի
Պատկերը բացուեցաւ:

Կէս ճամբուն ալիքը
Նաւակին խըփուեցան,
Նաւակը փըշրեցին—
Յոյս չկայ փըրկութեան:

Պատանին աչքերը
Լուսնեակին բարձրացուց,
Կիթառի լարերը
Նա ուժգին հընչեցուց.

«Տա՛ր վերջին խօսքերըս
«Անձկալւոյս, ո՛վ լուսին,
«Որ քաղցրիկ անունըդ
«Յիշելով՝ կը մեռնիմ»:

Դադրեցաւ փոթորիկ
Ու ալիք պառկեցան.
Ջըրի վըրայ կըտորտանք
Նաւակի երևցան:

Սիրուհին սըրտատրոփ
Նայեցաւ լըճակին,
Հասկըցաւ դառնութիւն
Իր անբաղդ վիճակին:

«Իրարմէ բաժնեցին
«Մեզ աշխարհ և այս կեանք,
«Գէթ մահով այսուհետ
«Ջըրի տակ միանանք»:

Ասաց և աղաղակ
Բարձրացուց նա ուժգին,
Գըլորուեց, զոհ եղաւ
Անկըշտում ծովակին:

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ.

ՍՊԱՆԻԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԷՆ

Ամէն առեն, երբ կ'երթաս ժամ՝
Ծածկէ՛ դէմքըդ թանձըր քօղով.
Եթէ չ'ընես՝ սուրբերն յայնժամ,
Բոլոր սուրբերն, ինչքան որ կան՝
Իրենց բարձունքը թողնելով
Քեզ մօտ, քե՛զ մօտ պիտի իջնան:

No. 176

ՓԵՍԱՆԵՐ

1.

Տո՛ւր ինձ սիրտըդ, ո՛վ հայ աղջիկ,
Ես երջանիկ քեզ կ՚անեմ,
Ազգ ու ազինք կը նուաճեմ
Ու ոտքիդ տակ կը դընեմ.
Քո սիրուն ես կը կողոպտեմ
Պարսկին, քիւրդին, տաճիկին.
Աշխարհք անցնես՝ դու չես գըտնիլ
Երջանիկ քեզ նըման կին.....*)

2.

Ինձ տո՛ւր սիրտըդ, ո՛վ հայ աղջիկ,
Ես երջանիկ քեզ կանեմ,
Գոհարի մէջ կը թաթախեմ,
Կանանոցըս կը տանեմ.
Գիշեր ցերեկ խունկ, հալուէներ
Քու առջևը կը ծըխին,
Վարդաջըրի շատրուաններ
Ոտերիդ տակ կը բըղխին.
Ձես անջատուիլ դու իմ գըրկէն,
Ջերմ համբուրով այրեցած,
Ու նաժիշտներ քու ակնարկին
Կը դիտեն միշտ սարսեցած:

Ձէ՛, թուրք փեսայ, այդ բաները
Երբէք ես չեմ ախորժալ.
Քու այդ ամէն երջանկութիւնն
Թո՛ղ վայելէ թուրք գօղ-լ:

3.

Տո՛ւր ինձ սիրտըդ, ո՛վ հայ աղջիկ,
Ես երջանիկ քեզ կանեմ,
Շինիօն, ռօթօնդ, մանթօ, թուռնիւռ
Քեզմէն անպակաս կանեմ.
Տօն օրերը, կէսօրէն յետ,
Ուղիղ երթանք Բալ-Մաբիլ,
Կուշտ կը պարես թռանըլան, քանքան,
Վալս, մազուռքա ու քադրիլ:
Ուրախ կ՚անցնի մանկութիւնըդ,
Կ՚ապրիս ինչպէս թիթեռնիկ,
Դարձո՛ւր երեսդ հայութենէ,
Ապրէ՛ մեզ պէս երջանիկ:

Ցրանսիացի՛, այդպէս կեանքին
Հայ աղջըկունք սէր չունին.
Կեանքի այդքան մեծ բարիքին
Հասցո՛ւր դու քու մատմազէլին

4.

Ինձ տո՛ւր սիրտըդ, ո՛վ հայ աղջիկ,
Ես երջանիկ քեզ կանեմ,
Երշիկ, ապուխտ ու գարեջուր
Քեռնէդ անպակաս կ՚անեմ:
Իմ տան մէջը դու կը լինիս
Իսկական մայր, տանտիկին, —
Ամբողջ օրը վաֆլի կեփես,
Ծիծ կուտաս դու մանկիկին:
Պահարանըդ, սընդուկներըդ
Կը լըցնեմ ճոխ աւարով,
Ցրանսիայէն գողցած, թալնած
Արծաթեղէն իրերով:

Թեւթոն փեսայ, այդպէս կեանքին
Ես ախորժակ, սէր չունիմ,
Այդ խոստացած քու բարիքին
Հասցո՛ւր դու քու ֆրէյլէյնին:

5.

Ձեռքըդ ինձ տո՛ւր, իմ նազելի,
Թողնենք այս Նոր Ժուժաստան
Հայոց ազգիս. գաղթենք դէպի
Վանը, — մեր բուն Հայաստան:
Այնտեղ թէև մեզ չի մընում
Անդորրութիւն, կեանք փափուկ,
Գէթ չենք սախպուիլ ուրի՛շ զգացումը
Պահել սըրտի մէջ ծածուկ.
Հայ լինելէ չենք ամաչիլ,
Անտէր, նըժդեհ չենք մընալ,
Մէրն օտարին (գարշելի բեռ)
Կեղծ ժըպիտով չենք մուրալ:
Կեանքի կէսը բարուկ եղանք
Գէթ կէսն լինինք մենք ազատ,
Ազատութիւն կուտայ մարդուս
Լոկ իր հողը հարազատ:
Թուցէ այնտեղ մեզ կըսպասէ
Բանտ, թոյն, աքսոր ու տանջանք,
Ի՞նչ փոյթ, երբ հայ հողի վըրայ
Մահն էլ կ՚լինի մեզ պարծանք:
Տո՛ւր, ուրեմըն, ինձ քու ձեռքը,
Թողնենք այս Նոր Ժուժաստան
Հայոց ազգիս. գաղթենք դէպի
Վանը, — մեր բուն Հայաստան:

Ա՛ռ իմ ձեռքը, ա՛ռ իմ սիրտը,
Հայ պատանի իմ անգին,
Զինակից եմ, քեզ ընկեր եմ,
Մինչ քու մէջ կայ հայ հոգին:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ.

(*Ըսողը Ռուսս փէսան է. շարունակութիւնը մեզ անյայտ:

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ
(ՀԱՅ ԳՈՒՍԱՆ)

No· 177

I

ՄՈՒԹ ՊԱՐՏԻԶՈՒՄ....

Մութ պարտիզում սըրտատըրոփ, սիրատենչ
Իմ նազելուն ըսպասում էի այս գիշեր.
— Շըշուկ ընկաւ ահա վարդի, ծաղկանց մէջ,
Շուրջըս փըռուան արբեցումի զա՛ռ փէշեր.
Իմ նազելուս քընքուշ շունչը ինձ շոյեց.
Կարօտավառ հըպարտ կըրծքին փարուեցի.
Ծով-մազերի անո՛ւշ բոյրը ծաւալուեց.
Աստղ-աչերին համբոյրներըս վառեցի.
Շըրթունքներէն ջե՛րմ արիւնը կաթկաթեց,
Ե՛ւ բաղդաւոր, և՛ երջանիկ լացեցի...
—Վա՛յ քեզ, թըշուա՛ռ, երազների խեղճ տըղա՛յ,
Ոչ ո՛ք չըկայ, ոչ ո՛ք չունիս՝ քեզ մօտ դայ...

No 178

II

ՔՆՔՈՅՇ ՏԱՏՐԱԿՍ....

Քընքո՛ւշ տատրակըս, դու անծանօթի,
Դու օտարի պէս մօտովըս անցար.
Ի՞նչ եղաւ քեզի, որ վառ կարօտի
Ծով-արցունքներըդ այդպէս շուտ մոռցար:
Գընա՛, մոռացի՛ր, և բաղդը քեզ հետ,
Ո՛ւմ հետ որ կ՚ուզես, թըռի՛ր ու գընա՛,
Շինի՛ր քու բունը, ում հետ որ կ՚ուզես,
Թո՛ղ տունըս մընայ տըխո՛ւր, վերանայ:
Թո՛ղ օճախիս մէջ կըրակ չը շողայ,
Մարած տանըս մէջ թո՛ղ ոռնայ քամին.
Թո՛ղ վայէ քամին շոր գըլխուս վերայ, —
Ես չե՛մ հաւատում կընոջ երդումին...

ԱՒ· ԻՍԱՀԱԿԵԱՆ

No· 179

ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐ

Ժամիկ մ'աչերուդ ի դատ երբ կացի նա գլխ մոռացար·
Ասիր դուն ի քո մըտիդ թէ՝ գընաց, այլ խիկի չի գար՝
Գէմ անդէնըն չի գնացի որ չլինայ ինձ դառնալու ճար·
Հազար եար փոխան կուտան՝ չեմ առնոյր ու քեզ չեմ ի տար:

Ա՛յ իմ որոգայթ ու չար, ուստի՞ եկիր ինձ հանդիպեցար·
Աչերդ զէտ ճըրագ ի վառ, 'ւ ընքվընուդ ճոթըն կայ ճուհար·
Առեալ մարգարիտ ու լալ ու կարել զպըռկիդ չողակալ·
Ատով ես առել զիմ շունչս ու զհոգիս այլ յիս չես ի տալ:

Ո՞ւր էիր ո՞ւմկից եկար, քան զամէն ծաղիկ դու պայծառ·
Եկիր 'ւ ի հոգիս մըտար, չես ի տար պահիկ մի դադար·
Սըրտիս մէջն ի ժուռ եկար, 'ւ ելնելու ճարակ չի գըտար·
Զարկիր ի գլխուս վերայ 'ւ աչերուս ի վար թափեցար·

Աստեղք դուք հարիւր հազար, մէկ ի վայր եկէք հաւասար·
Ցորտեղ կայ խելօք Միկար՝ իմ խոցուս արէք դեղ ու ճար·
Եղեր եմ խեւ սիրու տէր՝ անմատամթ ու անցեննեհար
Զկարեմ հոգուս տամ դադար, կու պահէ զանձիկս ի խըսար:

Ա՛յ, գըմա՛, չը պիտիս դուն ինձ, յուկ պեզար իմ սիրտ ի քենէ·
Ջերա խոցեցիր դուն զիս, լոկ վերցաւ սրտիկս ի քենէ
Թէ զան ու զքեզ ջուր աւեն կամ ջըրին ճարակն ի քենէ,
Տարեկ մի ծարուած կենամ՝ չի խըմեմ կաթիկ մի քենէ:

Ադուոր, զքեզ Աստուա՛ծ ստեղծել, մայրդ օրհնեա՛լ որ զքեզ բերել է·
Ոչ լուս կայ ի քեզ նըման, ոչ արև որ դեռ կու ծագէ.
Ջօհալ աստղիկ քեզ նըման որ ամէն առաւօտ կ'ելնէ·
Կ'երթայ ի Հոռումք ի վար, լուսն ի մութն ի հոն բաժանէ:

Աչերըդ դու հանց ունիս՝ աջ երէ, ձախըն խորովէ,
Ունքերըդ դու հանց ունիս՝ որ Շիրազն ի հիմնէ քակէ·
Հալապ ու Դըմէշխ քաղաք ով որ զքո ձայնըդ լըսէ,
Տըւել զարեւուն ըզթարկն՝ հասրաթով ըզքեզ կու տեսնէ:

Ասես թէ կտրած ես դու ի ճերմակ որթոյն խաղողէն·
Վանց ըզքո մահպուպ սուրաթդ ի վարդին սուլթան տերեւէն.
Ես ըզքեզ սիրել կամիմ՝ թող ճօշան զիս երկիրս ամէն·
'Ի ի ծոցըդ մտնուլ կամիմ թէ հազար թուրք ես 'ւ անօրէն:

Աչերդ է ծովէն առած ու ունքերդ ի թուխ ի ամպէն·
Այդ քո պատկերքըդ և սուրաթդ ի վարդին կարմիր տերեւէն.
Ուր որ դու կանգնած լինիս՝ չէ պատեհ վառել մոմեղէն.
Ծոցուդ լոյսն դուրս ծագէ, դէմ ելնէ մեռելն ի հողէն:

Հա՜յ իմ ճերմակ ծոց բաղայ, ճերմակ ծոց ու ծիծն ի վըրայ.
Քո բունդ է անտառ մօրին, 'ւ արծըւին աչիկն ի վըրայ.
Երթամ քաջ արծիւ լինամ, գամ կըռւիմ մինչ որ լուսանայ.
Թէ ապրիմ նա անուն հանեմ. թէ մեռնիմ՝ հաշվեմ թէ չեղայ:

Ահա կու գընամ, հոգե՛կ, լուկ ուրախ կացիր և խնդա՛.
Նա դու բարձր անցիր 'ւ ասա՛ թէ բարով ես խալըսայ.
Թուխ ամպ եմ դէմ քո աչիցդ. պահ մի որ աս ամպս վերանայ,
Այնժամ ես քեզ պխտենամ՝ մինչև գայ խելքունքդ ի վերայ:

Եկին ու բերին խաբար թէ քո եարն եղեր հարեղայ.
Փուշարմացքըն գիս պատեց թէ նա ո՞նց եղաւ հարեղայ.
Բերնիկն էր շաքրի սովոր, աճապ ո՞նց կերաւ նա բակլայ,
Անձնիկն էր շապկի սովոր, աճապ ո՞նց հագաւ նա վալայ:

Ոնց որ գիրկ ու ծոց էաք, նենգաւոր հաւըն խօսեցաւ.
Դանակ ու չամփուր ան հաւին, բարկ կըրակ որ գինքն խորովէ.
Առնունք գինք լեռկունքն ելենք, գինք տիքամ տիքամ բաժանեմք,
Ջինք տիքամ տիքամ բաժանեմք՝ ես ու իմ եարըն մէն ուտենք.
Ոսկորքն ալ տաճար չինենք, իր թեպուրն ան տաճրին աճար:

Մէկ մարդ մի զփետատն ունի և զվարդին տակըն կու փորէ.
Պըլպուլն ի վարդին սիրուն զիր վըզիկըն դէմ կու բերէ.
Վարդն ալ ի թըփին միջին սուտ ի քուն ու ձայն կու լըսէ,
Դարձեալ պատասխան երետ՝ քո աղէկն Աստուած վըճարէ:

Կօզա՛լ, մի՛ հագնիր կապուտ, մի՛ խաղար ու տար թեւերուդ,
Մի՛ գար 'ւ ի դռնակն անցնիր, մի՛ ճօճար, կօզա՛լ, արևո՛ւդ.
Քո հարն ալ չատ վարձք արեր, չատ կարմունճ կապեր գետերուն.
Դու ալ մէկ վարձկունք մ'արա՛, պադ մը տուր դընչիդ մօտերուն:

Իմ եար, ի քո չատ սիրուդ արծըթէ ղալամ չինեցի.
Ջադ քո ըռանա սուրաթ ի յաջոյ թեւըս դըրեցի,
Ցորեկն ի վրան հայէի, քո սիրովդ կըշտանայի.
Գիշերն երեսիս դնէի ու բարով ի լուսն ելնէի:

Մարդն որ սիրու տէր լինի ու սիրուն ճարակ չի լինի,
Թող երթայ փորէ տապան ու ի ներս մտնու կենդանի.
Դէմ սրտին ծակ մի թողու որ ելնէ բոցըն ծիրանի,
Ով տեսնու նա ղայն ասէ՝ Սիրու տէր մարդըն կու վառի:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

No. 180

ԱՐՏԱՍՈՒՔ ԿՈՒՍԻՆ

Լա՛ց, ո՛ կուսիկ, զի արտասուք
Կուսին ի բիբ են մարգարիտ.
Լա՛ց, ո՛ կուսիկ, զի տրտմասուգ՝
Զըքնաղ ևս են աչկունք վըճիտ:

Ըզփափկամէջք սիրեմ ծաղիկ
Որ ի դաշտին կայ պատկառուկ.
Ըզնա գիշերց պըճնէ ցօղիկ,
Արտօսր ըզգլուխ առնէ կախուկ:

Սիրեմ ըզշողս լուսարփի
Որ ի նամէտ ծոցոյ ամպոյն
Ի ծով ծաւալ փայլ ըզփայլ
Ոսկիհերացց ցոլան հանգոյն:

Զանմահ փափուկ սիրեմ հրեշտակ
Որ ըզգիմօքն ածեալ թեւեր,
Մատունք ի քնար ըլխրահուշակ,
Լայ ըզմարդկան 'ւ երկրի ցաւեր:

Լա՛ց, ո՛ կուսիկ, և Գթութիւն
Ոչ սրբէ զայն չիթս անուշիկ,
Այլ կայ յակճիռ և ըզմայլուն,
Այնքա՛ն, թէ լաս, ես գեղեցիկ:

Լա՛ց, ո՛ կուսիկ, մինչև յերկնից
Իջցէ դալար Երջանկութիւն
Եւ զըզուեսցէ զայտերդ ամբիծ
Եւ ըզգըլխիկդ այն գըգասուն,

Թուխ աչերդ տացէ համբոյր՝
Զարտօսր անտի սրբել ի սպառ.
Եւ իբր ի բոց անուշաբոյր
Հալեալ ցընդին չիթք լուսավառ:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

No. 181

ՎՐԱՑՈՒՀԻՆ

Վկայ է աստղը կէս գիշերային,
Վկայ են ելքն ու մուտքն արևի՝
Որ ոչ մի իշխան պարսից աշխարհի
Չէ տեսել համբոյր այդպէս աչերին.
Ո՛չ մի ժամանակ կէսօրեայ տապում
Հով շատրւանը Շահի հարէմում
Չէ զովացրել այդպիսի հասակ՝
Մարգարտանըման ցօղով իր փայլուն.
Քանի որ դրախտը աշխարհից գընաց՝
Երդւում եմ, բընա՛ւ, ո՛չ մի ժամանակ
Այդպէս գեղեցիկ մի կոյս չէ ծընած
Հարաւի երկրի արեգակին տակ:

ԼԷՐՄՈՆՏՈՎ

No. 182

TORQUATO TASSO

ԿԻՆԸ

(«ԵՐՈՒՍԱՂԷՄ ԱԶԱՏԵԱԼ»)

(Թարգմանութիւն)

Կը բանեցնէ ամէն հնարք՝ որպէսզի
Իր ցանցին մէջ նոր սիրահար մը որսայ.
Ոչ ամէնուն հետ, և ոչ միշտ կը պահէ
Միևնոյն դէմքը, շարժումներն ու կերպերն,
Այլ կը փոխէ ժամանակին համեմատ:
Մերթ ամօթլեած ակնարկն իր մէջ կ'ամփոփէ,
Մերթ կը շըրջէ զայն թափառոտ և յայրատ,
Եւ խարազանն ու սանձը ձեռքը առած
Աս կը մղէ սիրելու, ան կը սանձէ:
Երբ տեսնէ մէկն որ իր սէրէն ետ քաշէ
Սիրտն, ու գըսպէ մըտածումներն՝ անվըստահ,
Քընքուշ ժըպիտ մը ցուցնելով՝ կը շըրջէ
Անոր վըրայ աչքերը ջինջ ու զըւարթ.
Մըտրակելով այսպէս տենչերն հեղգ 'ւերկչոտ,
Երկմիտ՝ տարտամ յոյսին խրախոյս կը շընչէ,
Եւ տարփանքները վառելով սիրահուր՝
Կը հալէ սառը երկիւղէն կուտակուած:
Իսկ երբ ուրիշ մ'առաջնորդուած զաչացու
Յոխորտ պետէն՝ յանդըգնօրէն չափն անցնի,
Աչուըներէն աղուոր, քաղցրիկ խօսքերէն
Կը զըրկէ զայն, կ'ազդէ երկիւղ՝ մեծարանք:
Սակայն նըշոյլ մը գըթութեան կը փայլի
Այնու հանդերձ իր բարկացած դէմքին վրայ,
Որով դէմինը վախնայ իսկ, չի կըտրեր
Յոյսը, և որչափ ալ նէ խրոխտ երևայ,
Միւսն աւելի կը պակշոտի կաթոգին:
Երբեմըն քիչ մ'առեն մէկդի կը քաշուի,
Եւ ցաւագին ձև մը կու տայ իր դէմքին
Ու կեցուածքին. և կը հանէ սուտ արցունքն
Աչքերուն վրայ և յետոյ ներս կը մըղէ:
Եւ կը ստիպէ՝ այս նենգաւոր հընարքներով՝
Արտասուելու միամիտ բիւր հոգիներ.
Սիրոյ սլաքները գըթութեան կըրակով
Կը ջըրդեղէ՝ որ կուռ զէնքէն մեռնի սիրտն.
Յետոյ կարծես այն մտածումները վանած
Եւ նոր յոյսեր արթընցած իր սըրտին մէջ.
Սեղեխներուն կ'ուղղէ իր ոտքն ու խօսքերն.
Եւ ցընծութեամբ կը զարդարէ իր երեսն.
Եւ փայլակել կուտայ զերդ ջուխտ մ'արեգակ՝
Ցաւին տըխուր և դէզաղէզ ամպին վրայ

Ձոր նախ անոնց սըրտին չորս դին էր կուտեր՝
Վըճիտ Նայուածքն ու իր ժըպիտն երկնային։
Այսպէս անուշ խօսքով, անուշ ժըպիտով
Կը գինովցնէ զգայարանքներն անոնց,
Անոնց կուրծքէն գրեթէ հոգին կը քեցէ,
Այն անսահման հեշտանքներուն դեռ անվարժ։
Ո՜հ, անգութ Սէր, որ միապէս կը սպաննեն
Մեղրն ու օշինդրը զոր մեզի կը բաշխես.
Եւ միապէս ամէն առեն մահաբեր
Կու գան քենէ սպեղանիներն ու ցաւերն։
Այնքան ներհակ տրամադրութեանց, սառոյցի
Եւ կըրակի, արտասուքի՝ ժըպիտի,
Վախի՝ յուսոյ մէջտեղը ա՛յն խաբուհին
Կը խաղցնէ զանոնք մահի վրայ առած.
Ու մէկն եթէ համարձակի դողդոջուն՝
Տըկար ձայնով իր քաշածներն ակնարկել,
Կարծես անվարժ դեռ սիրոյ մէջ՝ կը կեղծէ
Խօսքերուն մէջ հոգին յայտնի չըտեսնել։
Կամ բռնելով պարկեշտօրէն աչուին վար
Կը զարդարուի համեստութեան շիկնումով.
Այնպէս որ թարմ՝ ձիւն շուշանները քընքուշ
Անուշ դէմքին վարդերուն տակ կը ծածկէ,
Այդպէս տատուն կանուխկեկ զով ժամերուն
Կը տեսնըւի արշալոյսն իր փըթթելուն։
Ցաւման կարմիրը միասին եկելով
Շիկնումին հետ կը խառնըւին իրարու։
Բայց երբ մէկուն չարժումներէն կըռահէ
Որ կը փորձէ յայտնել իր բոց բաղձանքներն,
Երբեմըն խոյս կու տայ, երբեմն առիթ
Որ խօսիան, և նոյն առեն կը սանձէ.
Այսպէս բոլոր օրն ընդունայն պատրանքով
Կը յոգնեցնէ, յոյն ալ կըտրել կու տայ հուսկ.
Ան կը մընայ որսորդին պէս որ քըշած
Կենդանւոյն հետքն իրիկուան դէմ կորսընցուց։

Թարգմ. Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ

Այն սէրը՝ որ բարեխառն է՝ փայլ չունի.
Կիսամեռ կրակի նման՝ տապ չունի.
Սիրահար ա՛յն է, որ ամ ու ամիս, ցայգ ու ցերեկ՝
Դիւր ու դադար, կեր ու քուն չունի։

ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄ

Ուր արև՝ այնտեղ և՛ սուեր։ ՆԱԴՍՕՆ

No. 183

ՍՐԱՋ



2. Կարկաչահոս աղբիւրն այնտեղ
Թաւալում էր մարգարիտ,
Նա յստակ էր, որպէս բիւրեղ—
Այն երազ էր ցնորամիտ։

3. Եւ մեղեդին տխուր մայրենի՝
Ցիշեց մանկութեան օրեր,
Մօրըս համբոյրն ես ըզգացի—
Ա՜խ, ափսոս որ երազ էր։

4 Կըրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերը սըրբեց — շատ թաց էր,
Բայց արտասուք գնում էին...
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր։

Ս. ՇԱՀԱԶԻԶ

-•-

No. 184

ԻՆՁ Կ'ԸՍԵՆ

Ինծի կ'ըսեն. — «Ինչո՞ւ լուռ ես.» —
Ո՛հ, միթէ բառ կամ խօսք ունի՞
Արշալոյսը՝ որ կը բռնկի,
Ջի անհուն է այն ալ ինձ պէս»։

Ինծի կ'ըսեն. — «Միշտ տըխուր ես.»
Ի՞նչպէս չըլլամ. մէկիկ մէկիկ
Թօթափեցան գըլխուս ատղիկք,
Արշալոյս մը չանցա՛ւ սըրտէս։

Ինծի կ'ըսեն. —«Կըրակոտ չես,
Լըճակի մը պէս ես մեռած,
Դալկահար՝ դէմքդ ու հայեցուած։»—
Ո՛հ, յստակն են իմ փըրփուրներ։

Ես ինձ կ'ըսեմ. —«Ժամդ է հասեր,
Քու երկրորդ սեւ մօրդ գընա՛ գող,
Գերեզման՝ հոն գըտնես դու գող,
Վարդեր՝ թըրթռում թռիչ ու աստղեր

Պ. ԴՈՒՐԵԱՆ

No. 185

ՍԻՐՈՅ ՏԱՂ

ՀԱՖԸԶ

Ի՞նչ է, եարա՛բ, սիրողներիս ի՞նչ եղաւ որ սէր չկայ,
Սիրուող կոյսին ի՞նչ եղաւ, որ կոյսերից է՛լ խէր չկայ:
Ո՞ւր ես, ո՞ւր ես, ո՛վ սուրբ Խըտըր, կենաց ջուրը սևացաւ,
Արիւն կաթեց վարդի ոստից, զեփիւռը ե՞ր ուշացաւ:
Այս ի՞նչ բան է—գարունն եկել, բացուել են վարդ թէ ծաղիկ,
Ո՛չ բլբուլ կայ, ո՛չ հազարան, ո՛չ խօսում է դեղձանիկ:
Արևի շող, անձրևի ցօղ, դըրանց տեսնես ի՞նչ եղաւ,
Որ հանքերը ազնըւութեան դեռ մի գոհար դուրս չեկաւ:
Այս ի՞նչ բան է, գինին լիքն է, ոչ ոք գինու սէր չունի.
Ասող չըր կայ, որ սիրողը պէտք էլ ունի սիրուելու.
Քաջ երաժիշտն ածում չէ սազ, սազն երևի ձէն չունի.
Որ իրաւունք չի ճանաչում՝ սիրողն ո՞ւմն է դիմելու:
Մէջտեղ ձըգուած է գընդակը վեհանձնութեան, քաջութեան,
Ոչ ոք չըր կայ՝ գայ ասպարէզ — ձիաւորներն ի՞նչ եղան:

Լըռի՛ր՝ Հաֆը՛զ, մարդ չի գիտում գաղտնիքները Աստըծու,
Էլ ո՞ւմն ես դու այդ հարց տալիս — թէ վերջն ի՞նչ է լինելու:

Թարգմ. Պարսկերէնից Մ. ՎՐԴ. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

Պագնեմ ըզքո լայն ճակատդ, որ աչեր ունիս ղազալէ,
Գըրկեմ զքո ուռ միջկունքդ, որ հագեր ես շատ կապանի.
Քանի՛ ու քանի՛ ասեմ՝ զիմ եարին կապան կարեցէ՛ք,
Արեւն իւր երեսք արէ՛ք, զլուսընկան աստառ ձեւեցէ՛ք.
Թուխ ամպն ալ բամպակ արէ՛ք 'ւ ի ծովէն դերձան քաղեցէ՛ք.
Աստղերն ալ կոճակ արէ՛ք, զինք ի ներս օղկիկ անցուցէք:

Ն. ՔՈՒՉԱԿ

Եթէ գարնան եղանակին՝ հուրիակերպ էակ մը
Դալարիքի մը եզրը՝ գաւաթ մը լեցուն գինի տայ ինծի՝
—Թէպէտ ամենուն խօսքս կոշտ թուի—
Շունէն ցած ըլլամ՝ եթէ այլեւս արքայութեան անունը տամ:

ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄ

No 186

ԵՐԳԵՐ

ՍԱԱՏԻ

Սիրելիս մի օր ինձ մտերմաբար
Բաղնիսում տուեց քաղցրաբոյր մի կաւ․
Հարցրի դրան՝ Մո՛ւշկ ես թէ ամբար,
Որ հոտիցդ այդպէս սիրտս ըզմայլեցաւ․
Դա պատասխանեց․ «Ես կաւ եմ չնչին․
Միայն հարեւան եղել եմ վարդին,
Որի հոտն անուշ իմ վըրայ անցաւ․
Այո՛, թէ չէ՝ ես հող եմ, հող չնչին։»

Ջանձրացայ ձեզնից, ո՛վ բարեկամներ,
Դուք յոռի կողմերս լաւ էք ցոյց տալիս,
Թերութիւններս՝ իբր անգին արժանիք,
Փուշըս՝ իբրեւ յասմիկ, վարդ էք ցոյց տալիս․
Ո՞ւր ես աներես, անվախ թըշնամի,
Ցանցանքներս միայն դո՛ւ ես ցոյց տալիս։

Չէ՞ որ մեր մէջ կար թէ՛ ուխտ թէ՛ խոստում,
Ի՞նչ շուտ մոռացար, ինձ վըշտացըրիր․
Աշխարհում սիրտս ես քե՛զ նուիրեցի,
Իսկ դու ինձանից երես դարձըրիր․
Ո՛հ, թէ այժմ էլ դեռ ուզենաս հաշտուել,
Ե՛կ, է՛լ աւելի սրտիս տէր դարձի՛ր։

DANTE ALIGHIERI

ՖՐԱՆՉԷՍԿԱ ԴԱ ՌԻՄԻՆԻ

(«ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ»)

Ըզբօսանքի համար մի օր կարդայինք
Լանսըլօյին տարփանքներու պատմութիւնն,
Միայն էինք, անխէթ՝ առանց կասկածի։

Այն ընթերցում շատ հեղ դըրդեց մեր աչերն
Իրար նայիլ ու տըժգունեց մեր գոյներ․
Մեզ յաղթողը եղաւ կէտ մը միայն։

Երբ կարդացինք որ տարփածուն խանդակաթ
Իր սիրուհւոյն անոյշ ժըպիտն է պագեր,
Սա՝ որ ինծմէ չը բաժնուի պիտի բնաւ՝

Պագաւ բերանս բոլորովին դողդոջուն։
Գիրքն ու գրողը եղան մեր Կալէհօն,
Նոյն օրն այլեւս չը կարդացինք այն գըրքէն։

No. 187

ԵՐԳ

(Թարգմանութիւն Ֆրանսերէնէ)

Մինչեւ մահուան անյիշատակ ի շիրիմ
Մընամ քո սիրոյդ ես հաւատարիմ·
Կըրնայ ըլլալ որ դուն, աւա՜ղ, մոռնաս զիս,
Բայց ես հաստատ եմ միշտ իմ խոստմունքիս:

Ո՜վ իմ հրեշտակ, յո՜յս իմ միակ նազելի,
Քեզի կեանք ու բաղդ բոլորն ալ տըւի
Իմ մանկութեան տիոց դու սէր նախընծայ,
Սիրտըդ գերել միշտ ես փափաքեցայ:

Սակայն ափսո՜ս, երջանկութիւնն այն փափուկ
Մահուան ժանտ ձեռքով ըլլայ վաղանցուկ·
Այս է վըճիռ զոր գրեց ճակտին մեր՝ երկինք,
Պէտք է իրարմէ անդարձ բաժնըւինք:

Սակայն իմ սիրտ քուկին սրտէն անբաժան,
Քեզմէ չի զատուի մինչ ի գերեզման·
Սիրոյս յետին բաղձանք՝ յետին նըշանակ,
Քու քովդ է հանգչիլ մահուան քարին տակ:

Սոխակն երգել իւր դայլայլիկ գիշերին
Նստի ի վերայ մեր ցուրտ դամբանին,
Մինչ երկուքնիս մենք ի տեղւոյն այն դադար
Մահուան գըկաց մէջ ննջենք անդադար:

Վըկա՜յ ըլլան աստեղք երկնից կամարաց,
Ըզքե՛զ յաւիտեան սիրեմ անմոռաց,
Զի դադրիմ պիտի երբեք ըսել քեզ՝
«Ես քուկդ եմ յաւերժ սիրով բոցակէզ»:

Ո՜հ, ի՛նչ ընեմ, ըսէ՛, սըրտիս իմ հատո՜ր,
Արի՞ւնըս կ՚ուզես՝ թող վազէ բոլոր·
Բայց թէ անով ալ գոհ չըլլաս, ո՛վ անգութ,
Կեանքըս այս ես զոհ կուտամ քու սիրոյդ:

Պիտի սիրես զիս յետ մահուան՝ գիտեմ ես,
Բայց անօգուտ տեղ արցունքներ թափես,
Շիրմիս վըրայ անմըխիթար ողբալով
Այն սիրելիդ որ կորուսիր շուտով:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

No 188

ԵՐԳ
ՀԱՖԸԶ

Արի՛ հովիկ, խապրիկդ անոյշ, գալըդ լինի մեզ բարի.
Սիրողներիս սիրտն էրուած է կարօտովը մեր եարի.
Ա՜խ, ո՞ւր է, ո՞ւր, անգին եարըս, անոյշ եա՛րըս երկնառաք,
Եւ դուք, ը՛նկերք, և դուք, դրա՛ցիք, ո՞ւր էք, ո՞ղջ էք թէ մեռաք.
Մեր տեսութեան ողջ վայրերը ձեզնից թափուր են մնացած,
Մինչդեռ գինին կարասներում ձեզ է սպասում լըճացած։
Առանց ձեզ իմ համեստ տնակըն է անապատ ամայի.
Մի լուր բեր ինձ, սիրու՛ն հովիկ, դրանց վիճակից մի առ մի.
Սըփռեց գիշերն իր ստուերը, և գիշերը բաժանման,
Էլ ո՞ր քարի տամ իմ գլուխն ես ողբերս գիշերուան
Սիրու կեանքի պատմութիւնն է և՛ անընդհատ և՛ անվերջ.
Հարուստ, աղքատ, ուրախ, տըխուր՝ մի մաս ունին նըրա մէջ։
Մի եար ունինք մենք սիրողներս, նա էլ գոռոզ մեր բախտից,
Ա՜խ, դրա անգութ արարքները անցան չափ ու սահմանից։
Բարե՛ւ, հո՛վիկ, բարե՛ւ, հովիկ, անուշ եարիս դու բանբեր.
Արի՛, արի՛, քեզ հովանի, քեզ պահապան լինի Տէր։
Բայց մինչև ե՞րբ, ա՜յ խեղճ Հաֆըզ, սիրես, տոկաս, կողկողես...
Սիրողների լացն անոյշ է. լացի՛ր ինչքան կարող ես։

Թարգմ. պարսկերենից՝ Մ. ՎՐԴ. ՄԱՔՍՈՒՏԵԱՆՑ

No 189

ADA NEGRI

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՀԱՄԲՈՅՐԸ

Սիրում եմ ես Ջըլյուա, ուժեղ բազուկները բանւորի,
Եւ յաղթանդամ վէս հասակը, ալ գոյնը թուխ այտերի.
Ձընաչխարհիկ երջանկութեան յոյս է նա ինձ խոստանում,
Սէրը նըրա կըրքոտ, անգուսպ հուր-հոսանքի նըմանում։

Նա կուրծք ունի՝ ժայռից ամուր, անմատչելի ախտերին,
Իր անաղարտ սըրտի համար սիրելի է չարերին,
Չունի ոսկի, բարձըր կոչում և իր հագին թանկ շորեր,
Ինչո՞ւ ապա ցանկանում ենք նըրան մերը համարել։

Որովհետև այդ թաւ կրծքում անզուսպ կըրքով առնական
Սէրն է շրնչում, ապրում, յուզւում, որպէս վայրի մի գազան,
Նըրա գըրկում կը մոռացուի և բասրանքը խուժանի —
Համեստութիւնն այրուած կըրքից չի կարմըրիլ այդ ժամին։

N· 190

ԱՆՈՒՇ ՈՒ ՍԱՐՕՆ

Բազմած լուսնի նուրբ շողերին
Հովի թևին՝ թըռչելով՝
Փէրիները սարի գըլխին
Հաւաքուեցին գիշերով:

«Եկէ՛ք, քոյրե՛ր, սէգ սարերի
Զըքնաղազեղ ոգիներ,
Եկէ՛ք, ջահէլ սիրահարի
Սէրը ողբանք վաղամեռ:

Օխտն աղբիւրից ջուր է առել,
Կոյս սափորով, լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրոյ վարդեփունջ:

Ջուրն ու ծաղիկ տատրունք դըրել,
Խընդիրք արել աստղերին,
Փափագ սըրտով խընդիրք արել՝
Բարի ժըպտան իր սէրին...:

Ափսո՛ս, Անո՛ւշ, սարի ծաղիկ,
Ափսո՛ս իգիթ քու եարին,
Ափսո՛ս բոյրդ թելիկ-մելիկ,
Ափսո՛ս էդ ծով աչերին....»:

Ու նըրանց հետ ցօղ-արցունքով
Լըցուած սըրտերն ու աչեր՝
Սարի ծաղկունք տըխո՛ւր սիւգով
Հառաչեցին էն գիշեր:

«Վո՛ւշ-վո՛ւշ, Անուշ, վո՛ւշ-վո՛ւշ, քուրիկ,
Վո՛ւշ քու սէրին, քու եարին,
Վո՛ւշ-վո՛ւշ, Սարօ՛, վո՛ւշ-վո՛ւշ, իգի՛թ,
Վո՛ւշ քու սիրած սարերին....:

«Եկէ՛ք, քոյրե՛ր, սէգ սարերի
Զըքնաղազեղ ոգիներ....»
Ու փէրիներն այսպէս տըխուր
Երգում էին ողջ գիշեր:

Կանչում էին հըրաշալի
Հընչիւններով դիւթական,
Ու հէնց շողաց ցոլքն արևի՝
Անտես, անհետ չըքացան:

Խոր սուզուեցին ակն աղբիւրի,
Մըտան կաղնին հաստաբուն,
Ու լեռնային վըտակների
Ալիքները պաղպաջուն:

Կըժերն ուսած՝ Թըւըռալով
Ջուրն են իջնում աղջիկներ,
Խընդում իրար ուսի տալով,
Երգը գընդում սարն ի վեր:
—Ամպի տակից ջուրն է գալի,
Դօշ է տալի, փըրփըրում.
Էն ո՞ւմ եարն է նըստած լալի
Հօնգուր–հօնգուր էն սարում:
Ա՜յ պաղ ջըրեր, գուլալ ջըրեր,
Որ գալիս էք սարերից,
Գալիս՝ անցնում հանդ ու չօլեր,
Եարս էլ խըմե՞ց էդ ջըրից:
Եարըս խըմե՞ց, եարըս հովցա՞ւ
Վառւած սիրտը էն եարի,
Եարըս հովցա՞ւ, եարըս անցա՞ւ
Անքուն ցաւը ջիգեարի....:
—Աղջի՛, քու եարն եկաւ անցաւ,
Վառւած, տարւած քո սիրով,
Էրւած ջիգեարն եկաւ անցաւ,
Չը հովացաւ պաղ ջըրով...

ԱՆՈՒՇԻ ԵՐԳԸ

Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պէս,
Մընում էր եարին,
Ու չեկաւ նա տես.
Խեղճը դողալով՝
Անյոյս կըռացաւ,
Դարդից չորացաւ,
Ուռենի դարձաւ.
Ջըրերի վըրայ
Գըլուխը կախած
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց:
Ու ամբողջ տարին
Մի միտք է անում—
Թէ եարը եարին
Ո՞նց է մոռանում...:

ՍԱՐՈՅԻ ԵՐԳԸ

—Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, էդ ի՞նչ ես ասում,
Բա դու չե՞ս լըսում—
Էն՝ որ լանջերին խաղեր եմ ասում,
Ո՞ւմ հետ եմ խօսում.
Էն՝ որ գիշերով շըհու եմ փըչում,
Էն ո՞ւմ եմ կանչում.
Էն՝ որ մոլորւած նըստած եմ մընում,
Ո՞ւմ հետ եմ լինում.
Էն՝ որ հառաչում ու ա՛խ եմ քաշում,
Էն ո՞ւմ եմ յիշում....

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

No. 191

ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐ

Ան առաւօտուն լուսուն ձայնըն գայ գարնան ձագերուն,
Ա՛յ իմ փոքրիկ ձագեր, ձայն անուշ է քանց ամենուն.
Ձագ մի կայ՝ պուլպուլ կ'ասեն, զինչ կ'ասէ՝ ամէնըն սիրոյ,
Ձայնիկն ականջս ընկաւ, չի դադրիր աչերս ի լալու:

Ա՛յ իմ նուռ ու նուշ բերան, նուռ ու նուշ ծաղիկ 'ւ ըռահան,
Դու հազրեվարդի նման, կու բանաս դու մարդու մաստան
Պուկունքդ է լիմոն նըման, մարըն չէ բերել քեզ նման.
Լեզուդ է պլպուլ նման, կը գովէ զինչ գարնան նման:

Հա՛յ իմ փոքրիկ չամամ, քո ծոցուդ, ա՛մ, ե՞րբ տիրանամ.
Քո ծոցդ է ի ծով նման. ծովն գեղ կ'ասեն ի ջերման.
Փոքրիկ մաերմիկ լինամ ու մտնում ի ծոցդ ու լողամ.
Ծովերուդ ալ ի դուրս ելնում՝ ունկերուդ չուքն քնանամ:

Կարօտ կարօտովդ էի, հասրաթովդ ի ժուռ կուգայի.
Ա՚ կարծ ինծի դէմս ելար՝ ես ասոր կուման չունէի.
Զինչ մէկ մ'որ ծարված լինի 'ւ ինքն ի պաղ աղբիւր հանդիպի,
Դընէ զդնչիկն ու խըմէ որ սրտին թաւլուքն անցընի:

Աչերս երեւէս ի վար լօք գանգատ արաւ ի սրտիս,
«Երթաս սիրոյ տէր լինիս, գան հազար չարի ածեն գլխ».
Սրտիկս աչերուս ասաց. «Կուրանամ թէ սուտ կու խօսիս,
Ինչ որ աչք չի հաւնէր, չի խարէր հազար լեզու գլխ».

Լուսի՛ն, պարծենաս, ասեն, «Լուս կուտամ աստղերիս»
Ահա հողեղէն լուսին ի գրկիս 'ւ երեսն երեսիս.
Թէ չես աւտալ այս գերուս, յետ տանիմ ըղփէչ կապայիս.
Վախեմ սիրոյ տէր լինիս, լուս պակաս տաս աստղերիս:

Սուտ է որ կ'ասեն, եղբա՛րք, թէ ընտանի կաքաւ չի լինի.
Մէկիկ մ'ես երէկ տեսայ, էրնէկ է զիր տէրն որ ունի.
Իր օնքն էր ղալմով քաշած, իր բերանն շաքրով ի լի.
Զմեռեւն ալ ի գիրկն առնու՝ ի ծոցուն է կենդանի:

Ջո՛ւր, զլգլալէն կուգաս, գետի թոր ակնէն կուգաս,
Երթաս այդ ձորերըդ ի վայր, ձայնըդ կայ ու դու չերեւաս.
Գիտեմ՝ սիրու տէր ես դուն, ի օտար աշխարհ կու գնաս.
Երթաս ու սիրուդ հասնիս, գիշերն ի քուն չի լինաս:

Թուխ աչք ու թուխ ունք ունիս, թուխ մազեր, կուլակդ ի հոգիս.
Շալայ կարճկըտուր լինիս թէ չի գաս գիշերն ի մօտիս.
Թէ գաս գիշերն ի մօտիս, դընեմ երեսդ երեսիս,
Երեսդ երեսիս դնեմ որ դպնու քու չունչդ իմ շնչիս:

Գիշերս ես ի քուն էի՝ իմ սրտիս ականջն էր ի բաց.
Սիրու հաւն ի ձայն էած, լօք լսեց սրտիկս ու դողաց.
Կու թուէր իմ եարին լեզուն ան հաւին բերանն էր դրած.
Ո՞վ իմ սրտիս գանգատին ան հաւուն հասկցուցած:

Ի՞նչ անեմ կամ ի՞նչ լինամ երբ նայիմ որ դուն չերևիս․
Սրտիս ալ ո՛նց տամ համբեր յերբ լեզուովդ ի յիս չի խօսիս․
Կուլամ նա կուտաս ճուղապ՝ «Սապր արա, սիրուս հասանիս․»
Սև սապր, ա՜մ, քանի՞ անեմ, եփեցաւ ճիկարս ի փորիս։

Ո՞ւր էիր, ո՞ւսկից եկար, անծանօթ, ըզխիս սիրեցիր․
Կրակն ի թէզնիքդ ունիր, ի ծոցիդ ի վար թափեցիր․
Քու սէրդ ալ ոսկի արիր, իմ սրտիս քուրան հալեցիր
Դարձար զան հալխայ արիր 'ւ իմ սրտիս ականջն անցուցիր։

Սուրաթ ու ճրագ դրիր, զիս ի քո լուսըդ ձէնեցիր․
Ջէդ ի քո ծովուդ եկի, լօք գարկիր ճրագն անցուցիր․
Ա՞ռ էր քո ամէն ումէտն, ա՛յ հոգեկ, որ ինձ կուտայիր,
Ճրագդ, ա՜մ, ա՛լ ի՞նչ փառած՝ երբ բազկիս ուժն հատուցիր։

Կարմիր ու սպիտակ երես, ա՜մ, քանի զիմ սիրտս աշըրես․
Կ'երթաս ի թուխ ամպն ի ներս, ամպու գոլ կ'աննես զիս կ'էրես․
Կոճկիկդ ալ արձակ այնես ու ճերմակ ծոցդ ցուցանես,
Անկի զիս մահրում հանես, թող զփողուն ձայնն չի լսես։

Կարմիր ու կանանչ հագնիս, զէդ նըռան հատիդ նմանիս,
Այնժամ ինձ աղվոր թվիս՝ երբ ի ձեր դուռն կանգնիս․
Դուռն ալ կխաբրաց անես, ցած հայիս մանր ծիծաղիս,
Աչօքդ ունովդ անես, զիմ տխմար խելքս կու տանիս։

Ադու՛ր, իմ հազա՛ր աղուոր, դրախտին բեհեշտի խնծոր,
Շաքրէ եղէգին մէջ ես քաշած քանց զլատիֆդ աղուոր․
Ջուներդ ես աղեղ արել, ու աչերդ ուղօչ նետաւոր․
Սով խոցեցիր դու զիս, ես ղարիպ եմ, երթամ ի ընդո՞ր։

Իմ հին սէր 'ւ առջի յորդոր, իմ արև և իմ աստուոր,
Իմ մանկութենէ սիրած, մի՛ կենար ինձ հետ նենգաւոր․
Երթամ թուխ ու քուրձ հագնիմ, ի սարերդ ընկնիմ սևաւոր․
Ջինչ ես եմ՝ թող դու լինաս, սիրտդ սև ի բաղդէդ մոլոր։

Հա՜յ իմ մազդ ուռի մորճիկ, չորանա՛ս թէ զիս մոռանաս․
Փուտ ու ճիճվի կեր դառնաս՝ թէ ծոցիկդ այլ մարդու բանաս․
Ահա քեզ գիշեր կուգայ, երազին մէջ դէչ տեսանես․
Ամէն առաւօտք լուսնին զինք թողուս 'ւ ի յիս դառնաս։

Ես երկու եար կու սիրեմ, չեմ գիտեր թէ հաւնիմ որո՛ւն․
Մէկն է ի լուսին նման, մէկ նման է բարկ արևուն.
Լուսի՛ն, ես քեզ չեմ սիրել, դու սովոր ես խոռ կենալու․
Արև՛, զքեզ կու սիրեմ, որ ծագիս հետ լուսանալուն։

Թուխ աչք ու ունքեր ունիս, լայն ճակատ ու կարմիր երես,
Այդ ճերմակդ որ դուն ունիս, զշամամ ծիծերդ որ ի ներս,
Մեռնիս այլ անդին երթաս՝ զայդ ճերմակ ծոցիկդ ի՞նչ առնես․
Ջամէն որդերն ուտեն․ դու է՞ր զիս մահրում կու պահես։

Ա՜յ սարեր, ա՛յ ձորեր, գիտացէք եար եմ կորուսել․
Ա՜յ քարեր, ա՛յ թփեր, աճապ ի ձեզ չէ՞ եկել․
Ա՜յ քարէ կարմընջնի, ի ձեզ չէ՞ անցել․
Զիս ի քուն թողեր ելեր գնացեր։

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

No. 192

ԴԵՒԻ ԵՐԴՈՒՄԸ

ԼԵՐՄՈՆՏՈՎ

Երդւում եմ ստեղծման առաջին օրով,
Երդւում եմ վերջին օրովը նորա,
Երդւում եմ անկման դառըն խայթերով
Նաև յաղթութեան ցնորքով կարճօրեայ.
Երդւում եմ մեղքի անարգ պարտութեամբ
Եւ յաղթանակով սուրբ ճշմարտութեան,
Երդւում քեզ հետ քաղցըր տեսութեամբ
Եւ ըսպառնացող ժամով անջատման.
Երդւում եմ զօրքով քաջ ոգիների,
Եղբարց վիճակով ինձ ըստորադաս,
Սրբերովն անկիրք քերովբէների,
— Իմ ոսոխների աննինջ հանապազ, —
Երդւում եմ երկնով, երդւում դըժոխքով,
Քեզնով և ամէն սրբութեամբ երկրի.
Երդւում եմ աչքիդ վերջին հայեացքով,
Առաջին չիթով քո արցունքների,
Անչար շըրթունքիդ արտաշընչութեամբ,
Մետաքս գանգուրիդ չարք, չարք ծուփերով,
Երդւում եմ վըշտով և երջանկութեամբ,
Երդւում եմ, Թամար, երդւում իմ սէրով, —
Հրաժարւում եմ ես դառը մըտքերից,
Հրաժարւում եմ իմ ոխիցը նախկին,
Այսուհետև նենգ միտքըս թոյնալից
Չի մոլորեցնի ոչ ոքի հոգին.
Փափաքում եմ ես հաւատալ բարւոյն,
Ուզում եմ սիրել, աղօթել նորից
Եւ երկընքի հետ կընքել հաշտութիւն:
Զըղջման արցունքով ես իմ երեսից
Կը ջընջեմ հետքերն երկնային հուրի,
Որ իմ պատկերը դառնայ քեզ արժան.
Եւ թո՛ղ, առանց ինձ, մարդկութիւնն երկրի
Անդիտութեան մէջ ծաղկի յաւիտեան:
Ո՛հ, հաւատա՛ ինձ, ցարդ ես միայնակ
Հասկացել եմ քեզ և գընահատել:
Ընտրել եմ քեզ ինձ սրբութիւն միակ,
Իշխանութիւնըս ոտքիդ տակ դըրել:
Տենչում եմ սիրոյդ որպէս բարիքի,
Եւ ակընթարթին՝ դարեր քեզ կը տամ.
Սիրոյ մէջ, Թամար, որպէս չարիքի
Մեծ եմ, հաւատա, և հաստատակամ,
Կ'առնեմ եթերքի ես ազատ ոգին,
Քեզ գերաստեղեայ աշխարհն անսահման,
Եւ տիեզերքի եղիր թագուհին,
Իմ ընկերուհին յաւիտենական.

Առանց խըղճալու և կարեկցութեան
Կը նայես երկրին քո ոտքի ներքև,
Ուր երջանկութիւն չը կայ իսկական,
Ուր գեղեցկութիւն չը կայ յարատև.
Ուր փոքրիկ կըրքեր միայն սընուում են,
Ուր մեղք և պատիժ լոկ ունին տեղի,
Եւ ուր չէ կարող մարդը հողեղէն
Սիրել կամ ատել առանց երկիւղի:
Մի՞թէ չը գիտես, թէ ի՞նչ է արդեօք
Մարդկային ազգի սէրը անկայուն, —
Մատաղ արիւնի մի վաղանց բորբոք—
Անցնում են օրեր, պաղում է արիւն:
Ո՞վ է դիմանում արդեօք անջատման,
Նոր գեղեցկութեան հրապոյրի դիմաց,
Ձանձրոյթի առաջ և յոգնածութեան
Կամ ցընորքների ինքնահաճ քըմաց:
Ո՛չ, չէ քեզ համար, էա՛կ գեղեցիկ,
Գիտցի՛ր, վիճակը ճակատագրական՝
Անհուն չըջանում թառամել լըռիկ,
Իբրև մի ըստրուկ խանդոտ կուսութեան.
Ապրել փոքրոգի, պաղ և կեղծաւոր
Ընկերների մէջ և ոսոխների,
Ապրել վախի մէջ, յոյսի ապարդիւն
Եւ ծանր ու ամուլ աշխատանքների:
Անկիրք և տըխուր չը պիտի խամրես
Փակուած պատերով այս բարձրակառոյց,
Աղօթքների մէջ, հաւատարապէս
Հեռու երկընքից և հեռու մարդուց:
Ո՛հ, ոչ, ի՛մ քաղցրիկ, գեղանի ընկեր,
Վիճակուած է քեզ ուրիշ մի վախճան.
Ըսպասում է քեզ տառապանք տարբեր,
Վայելքը մի այլ խորին բերկրութեան:
Թօթափի՛ր քեզնից իղձերըդ նախկին,
Զըգի՛ր իր բախտին աշխարհը թըշուառ,
Եւ վեհ գիտութեան անդունդը խորին
Ես ի փոխարէն բանամ քեզ համար:
Ինձ ըսպասարկու ողջ ոգիներին
Ես կ'առաջնորդեմ դէպի քո ոտքեր,
Նաժիշտներ թեթև և գերմարդկային
Քեզ կը պարգևեմ, ո՛վ գեղեցկահեր:
Ճակատիդ համար պըսակը ոսկեայ
Կը խըլեմ աստղից ես արևելեան,
Կ'առնեմ ծաղկունքից շաղը գիշերուայ
Եւ այդ գոհարով կը ցօղեմ նորան.
Ես վերջալոյսի բոցագոյն շողից
Նազելի մէջքիդ կը հիւսեմ գօտի
Եւ կը համակեմ հոտով բուրալից
Ամէն մի շունչը քեզ պատող օդի:
Նուագածութեամբ քաղցր ու դիւթալից
Կը շոյեմ յաւերժ ես քո լըսելիք.

Կը հրաշակերտեմ սաթ ու փիրուզից
Պալատներ շքեղ և չքնաշխարհիկ·
Ես կ'իջնեմ ծովի անդունդը մինչև,
Ես կը սլանամ ամպերից վերև,
Ես քեզ կ'ընծայեմ ամէն, ամէն բան,
Սիրի՛ր ինձ միայն...

Թարգմ. Յ. ՄԻՐԶԱՅԵԱՆՑ

❦

Եւ նա հանդարտիկ, եռանդուն բերնով
Մօտեցաւ դողդոջ նորա շրթունքին,
Եւ հրապուրական անուշ խօսքերով
Պատասխանում էր նորա խնդիրքին·
Նորա քաջազօր, ազդու հայեացքը
Կուսին աչքի մէջ սաստիկ նայում էր,
Նորան այրում էր,
Դաշոյնի նման փայլատակում էր....:
Եղո՛ւկ, չար հոգին արդէն յաղթել էր...
Մահաբեր թոյնից նորա համբոյրի
Խորասուզուեցաւ Թամարի կուրծքը...
Մի ձայն վըշտալի և սարսափելի
Խախտեց գիշերուայ անդորրը հանգիստ,
Եւ այդ ձայնի մէջ կար ամենայն ինչ—
Սէր, կիրք, նախատինք և աղերս վերջին,
Եւ անյոյս ողջոյն հըրաժարական
Դեռահաս կեանքին....:

Թարգմ. Մ. ՍԱԴԱԹԵԱՆ

❦

Տարածութեան մէջ կապոյտ եթերի
Քերովբէներից մէկը լուսաւոր
Թռչում էր փայլով ոսկեայ թևերի
Եւ գըրկած տանում ոգի մեղաւոր:
Եւ ըսփոփանքով քաղցր ու յուսալից
Նորա կասկածը նա փարատում էր,
Եւ արտասուքով՝ նորա երեսից
Ջընջում էր վըշտի ու մեղքի հետքեր:
Արդէն հեռաւոր ձայներ դրախտային
Հասնում էին նոցա ականջին թեթև՝
Երբ յանկարծ ազատ կտրելով ուղին՝
Դևը անդունդից սըլացաւ վերև...
Բոցափայլ էր նա կայծակի նըման,
Հըզօր էր որպէս մրրիկ կատաղած,
Եւ յանդգնութեամբ իր ամբարտաւան՝
Խելագարի պէս «Դա իմն է»՝ գոռաց:
Աղօթքով ահը վանելով սըրտից,
Ամուր՝ հրեշտակի կուրծքին պահապան
Կըպաւ Թամարի հոգին մեղսալից·—
Վըճռւում էր արդ նորա ապագան·

Դարձեալ նորա դէմ Դևը կանգնած էր.
Բայց նորան, երկի՜նք, ո՞վ կը ճանաչէր…:
Ի՜նչպէս նայում էր աչքով չարաշող,
Ի՜նչպէս նա լի էր թոյնով մահաբեր…
Եւ ատելութեամբ՝ վախճան չունեցող,
Եւ ի՜նչ սառնութիւն գերեզմանական
Փըչում էր նորա պատկերից դաժան:
—«Կորի՛ր, կասկածի ոգի դու խաւար»—
Պատասխան տուաւ նորան քէրովբէն.
«Հերիք է, ո՛րքան յաղթանակ տարար…
Արդ՝ դատաստանի հասել է րոպէն,
Եւ կամքն Աստուծոյ սուրբ է և բարի.
Փորձութեան օրերն անցել են անհետ.
Ընկաւ սորանից կապանքը չարի՝
Մարմնի հողանիւթ փուշ կեղևի հետ:
Ըսպասում էինք վաղուց մենք սորան.
Այսպիսիներից է սորա հոգին,
Որոնց ողջ կեանքն է ակընթարթ միայն
Անհասանելի բերկրութիւնների
Եւ անտանելի տառապանքների:
Հիւսել է ազնիւ եթերից Աստուած
Սոցա մէջ կեանքի իւրաքանչիւր լար.
Սոցա համար չէ աշխարհը ստեղծուած
Եւ ոչ էլ սոքա աշխարհի համար:
Իր կասկածանքը և իր յանցանքներ
Սա սարսափելի արժէքով քաւեց…
Սա սիրեց անկեղծ, կրեց տանջանքներ,
Եւ սիրոյ առաջ Եդեմը բացուեց…»:
Եւ սուրբ հրեշտակը սաստող աչքերով
Բանսարկուի վրայ նայեց խըստագին,
Եւ ուրախ-ուրախ թևահարելով
Բարձրացաւ դէպի լոյսը երկնային:
Եւ յաղթուած Դևը սրտով մաղձալից
Նըզովեց բոլոր իր խենթ ցընորքներ,
Եւ ամբարտաւան՝ մընաց նա նորից
Տիեզերքի մէջ՝ մենակ, անընկեր,
Ինչպէս էր առաջ՝ անյոյս և անսէր…:

Թարգմ. Յ. ՄԻՐԶԱՅԵԱՆՑ

Մի՛ լար, Եւա՛, արցունքդ սրբի՛ր,
Պատիժըդ ա՛ռ յօժարակամ,
Գնա՛ նըրա հետ և միշտ յիշի՛ր
Որ ո՛ւր բնակի էրիկդ—Ադամ՝
Քո հայրենիքն է այն երկիր:

ՄԻԼՏՕՆ

No· 193

ADA NEGRI

ԲԱՆԻՈՐ

Մանում է թելը, պըտըտւում արագ,
Մինչ ես տասն և ութ հասած գարունքիս՝
Ունիմ հուր աչեր, սէր ու ճախարակ,
Ապրում եմ անհոգ, երգը շըրթունքիս:

Ու թէ հերարձակ փողոցի միջով
Անցնում եմ մենակ օրը ցերեկով,
Տեսնողը ասես սիրուց խենթացած՝
Վազում է ետքիցս, գըմայլւում ինձանով:

Բայց ես ծաղրով եմ լոկ պատասխանում
Նրանց հըրապուրիչ պակշոտ խօսքերին,
«Նըրա» համար եմ միայն պահպանում
Գարնան ծաղիկըս — սըրտիս ընկերին:

Եւ գիտէ՞ք ով է իմ սըրտի սիրած՝
Դարբինը հըսկայ — իր սալի նըման.
Նըրա քաջառողջ հասակի դիմաց
Ես երևում եմ մանուկի նըման:

Երբ կըրակի մօտ երկաթ է ծեծում,
Թափով զարկ տալիս մէկ-մէկու ետքից՝
Երբ նըրա վըզին քըրտինք է պատում
Ու կըրակ ցայտում խոշոր աչքերից՝

Այդժամ նըրանով ես հըպարտացած՝
Պատրաստ եմ փըռուել նըրա մերկ կըրծքին,
Սիրել անբաժան աշխարհ մոռացած,
Դրախտ դարձնել կուրծքըս, ապրել իր սըրտին:

Բայց երբ իմ տանը ժամադիր եղած,
Որոշուած ժամից անցնում է վայրկեան,
Ո՜րպէս տանջւում է այդժամ իմ հոգին —
Կարծես քար լինի ընկած իմ կըրծքին:

Յանկարծ լըսում եմ դըրսից ոտնաձայն,
Շտապ-շտապ սենեակիս նա դուռն է բաղխում,
Վազում եմ առաջ յուզուած ու անձայն,
Դողում են ձեռքերս, սիրտըս բաբախում:

Յոգնած բանելուց՝ մըրոտ երեսով
Մըտնում է դարբինս, ժըպիտը դէմքին,
Եւ մի վայրկեանում ուժեղ թևերով
Տեսնում եմ, փըռուեց նա իմ հուր կըրծքին...

Այդպէս միացած խոր հըրճուանքի մէջ՝
Զարկում են զոյգիս սըրտերը անվերջ...



ԱՒ. ԱՀԱՐՈՆԵԱՆ
(ՂԱՐԻԲ)

Վերջին տասը տարիներու ռուսահայ գրականութեան մէջ ամենէն պատուաւոր տեղերէն մէկը գրաւած է Աւ. Ահարոնեան, իբրև վիպասան–գրող: Ահարոնեան իր վէպիկներու և պատկերներու ստուարագոյն մասին համար իբրև նիւթ առած է տաճկահայ կեանքը, փախստական գաղթականները, «զուլում»ի աշխարհը՝ իր դժոխային սարսռեցուցիչ տեսարաններով, և այդ պատճառով ան իրաւամբ կրնայ թիւրքահայ ցաւերու մեծ երգիչը համարուիլ:

Ահարոնեան ծնած է Կովկաս՝ Իգդիր գիւղաքաղաքին մէջ՝ Սալմաստէն գաղթած պարսկահայ ընտանիքէ մը: Իր կրթութիւնը առնելով Էջմիածնի Գէորգեան ճեմարանին մէջ՝ քանի մը տարի զբաղած է ուսուցչութեամբ թէ՛ ծխական ուսումնարաններու և թէ մասնաւոր ընտանիքներու մէջ:

Իր առաջին գրուածքը՝ «Պուտ մը կա՛թ» խորագրին տակ՝ 1896–ին «Մըշակ»ի մէջ լոյս տեսած, ինչպէս նաև յաջորդ գործերը՝ իր վրայ դարձուցին հասարակութեան ուշադրութիւնը, և բարեկամներէն մէկ քանին անբաւարար գտնելով սկսնակ վիպագրի ստացած կրթութիւնը, նիւթապէս ապահովեցին զինքը Զուիցերիա երթալու՝ համալսարանական կրթութիւն ձեռք բերելու համար, յուսալով այդ կերպ հայութեան օգտակար գործօն մը պատրաստել: Եւ իրաւ, իր արտասահմանեան կեանքը՝ մտաւորական խոշոր կեդրոնի մը մէջ՝ մեծապէս զարգացուցին, մշակեցին երիտասարդ վիպագրի ձիրքերը: Ծանօթանալով եւրոպական գրականութեան հետ շատ մօտէն՝ ան իւրացուց գրելու արուեստի ամէն նրբութիւնները, որոնք կըրթութեամբ և բարձր զարգացումով միայն կրնան ձեռք բերուիլ, և որոնցմէ դժբախտաբար զուրկ են մեր գրագէտներէն շատերը:

Ահարոնեան իր գործերուն մէջ առանձնապէս նկարագրութիւններով և հոգեբանական բարդ երևոյթներու վերլուծումով կրցած է հաղւագիւտ հմայք ստեղծել — յուզիչ, ցնցող ոճով գրուած, յաճախ՝ թանաքի փոխարէն՝ կարծես մարդկային արիւն–արցունքով: Ան կը շշմեցնէ, իր գրչին կը ստրկացնէ ընթերցողի հոգին ու միտքը, կը հարկադրէ իր հետ միասին լալ ու հեծել իր նկարագրած հերոսներու և անոնց տառապանքներուն վրայ. անբացատրելի թախիծ մը կը համակէ մարդը, ծով ցաւի ու յուսահատութեան մէջ կ'իյնայ, ուրկէ փրկութիւն, ելք չկայ, ուր յաւիտենական, սիրտմաշուկ մրմունջը կը կրծէ, կը գալարի մարդ էակի կուրծքին մէջ — և գրեթէ խենթացնող յոռետեսութեան կը մղէ ան: Հայ ցեղի գլխուն անցած փոթորիկները մշակած են Ահարոնեանի մէջ գրական այդ ուղղութիւնը. կը զգայ մարդ՝ որ անոր գրած ամէն մէկ տողին մէջ հայի վէրքը, անոր քստմնելի հառաչը կը խօսի: Զափազանց զգայուն, ինչպէս իսկական բանաստեղծ մը՝ Ահարոնեան կը հիւսէ չքնաղ մանրամասնութիւններ թեթևակի սլացող երևոյթներէն, և վարպետօրէն իր տպաւորութիւնները քարի մը պէս կը դնէ երկրորդ անձի սրտին վրայ: Սակայն այն վիշտը, այն ողբը որ կը հեծկլտայ իր գրչին մէջէն՝ շատ հեռի է անախորժ ըլլալէ. այդպիսի տարրերէ միայն բաղկացած է հայ կեանքը դարերու ընթացքին մէջ, և չի կրնար մեր վրայ տխուր հիացումէ զատ ուրիշ ներգործութիւն մը ընել:

Ահարոնեան տուած չէ խոշոր երկեր. ինքը գրած է կարճ վէպիկներ ու պատկերներ և քանի մը երգեր, շատ սիրուն, գրեթէ կանացի սրտի մը պէս զգայուն: Սակայն իր գրուածները ի մի հաւաքելով՝ հատորներ կը կազմուին, որոնք չքեղ հարստութիւն կրնան նկատուիլ հայ գրականութեան համար:

Ներկայիս՝ Ահարոնեան Ներսիսեան դպրոցի տեսչութեան պաշտօնը կը վարէ Թիֆլիզի մէջ: Ցաւալի է ըսել որ հայ հասարակութիւնը մինչև օրս չը գիտցաւ իր տաղանդները ապրեցնել, ազատելով զանոնք ապրուստի մտահոգութեան բեռէն: Վնասուողը, անտարակոյս, այդ իսկ հասարակութիւնն է:

No· 194

ԲՕԼԳԱՐ ՄՕՐ ՕՐՕՐԸ

Քընի՛ր, բալիկ, հանգիստ քընիր ու խաղաղ·
Քո արիւնից մեր դաշտերը հազար ծաղկով վառւեցին,
Ամէն մի մայր ծաղիկ ունի, մինակ ես եմ անծաղիկ·
Քընի՛ր, բալիկ, հանգիստ քընի՛ր ու խաղաղ·

Մեր լեռների կատարներին ազատութեան բոցավառ
Խարոյկները կէս գիշերի սեւ խաւարը վանեցին:
Քընի՛ր, բալիկ, խաղաղ քընիր ու հանգիստ·

Արշալոյսի վառ ցոլքերով մեր հորիզոնն ողողեց,
Եւ արեւի շողքերի տակ մեր երկիրը Թունդ ելաւ:
Քընի՛ր, բալիկ, խաղաղ քընիր ու հանգիստ·

Կէս գիշերին մեր դըռնակը էլ չի բաղխում հարամին,
Մանուկները ահ ու դողով էլ չեն նայում հերթիկին·
Քնի՛ր, բալիկ, քընիր խաղաղ ու հանգիստ·

Հօտ ու նախիր լուսաբացին խայտալով են դաշտ վազում,
Հովիւների սըրինգ–շըւին ողջ ձորերն են Թունդ հանում:
Քընի՛ր, բալիկ, քընիր խաղաղ ու հանգիստ:

Ամէն չարաԹ երեկոյին ես այց կը տամ քո շիրմին,
Օրօր կասեմ, որ խոր քընես, մատաղ լինեմ քո հողին:
Քընի՛ր, բալիկ, քընիր···:

Բայց Թէ մի օր մեր լեռների մայրիները կորանան,
Եւ մեր գլխին հազար կողմից սեւ ամպերը դիզանան,
Թէ ժըպիտը նորից խամրի մեր կոյսերի շըրԹունքին,
Եւ մեր անմեղ մանուկները օրօրոցում դողդողան,
Այն ժամանակ նորից կը գամ, կասեմ, բալի՛կ, մի՛ քընիր,
Ե՛լ, ոտքի ե՛լ, սեւ ամպերը մեր լեռներին դիզացան,
Եւ փոԹորկի գոռ շընչի տակ, մայրիները կորացան՝
Վե՛ր կաց, մէկ էլ, հըսկայ զաւակ, ձըգւիր քո վէս հասակով,
Շարժի՛ր մէկ էլ յաղԹ բազուկդ, մատաղ լինեմ քո բազկին·
Ցետոյ նորէն հանգիստ քընիր, անուշ, անվերջ, խոր քընով···

Ա· ԱՀԱՐՈՆԵԱՆ

Բըժի՛շկ, երբ դու իմ երակըս կը նայիս՝
Եւ ըմբըռնես աղբիւրը իմ ցաւերիս,
Մ՚ըսեր երբէք իմ գաղտնիքը ընաւ անոնց՝
Որոնց սիրտը ունեցած չէ վըշտի խոց:

ՖԻԽՉՈՒԼԻ

ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐ

Խօշ եա՛ր, քեզ լալով սէլամ, ես ի քո քաղքէն կու գըտնամ.
Բեր պագնեմ ղաշերդ, ունքերդ, երբ երթամ՝ չի կարօտանամ։
Ցայս աստուածաշէն ծոցէդ՝ երեսէդ մահրում կու մընամ.
Բացվեր ես ի վարդ նըման, ես պըլպուլ՝ ի դէմ քեզ կու լամ։
Մարդ չեղնամ թ՚էլ եար սիրեմ, կամ ըզքո սէրըն մոռանամ,
Կամ զքո անուշիկ պագիկն թէ սրտէս հանեմ ուրանամ։
Թէ նուշ թէ շաքար ուտեմ, առանց քեզ իմ հալն է հարամ.
Ապրեր եմ քըսան տարի ու չարեր հազար տարոյ ղամ։
Ի՞նչ շահ է ինձ շատ ապրիլն որ առանց սիրուդ կը մընամ։
Ես ու դո՛ւն, հոգեկ, ես ու դուն, ես ու դուն, աշխարհ դօշկեկ ի քուն,
Ես ու դո՛ւն, աչկո՛ւնք, ես ու դուն՝ ես ու դուն՝ օթվան սարերուն,
Ջէդ սա՛ս, հոգեկ, զէդ սա՛ս, զաչքդ ուտեմ՝ ունքերդ իվերայ։

(Վերագրելի Նահապետ Քուչակի)

Գիշերս ես ի դուրս ելայ, թուխ ամպ էր 'ւ անուշ կու ցօղայ.
Ջիմ եարն ալ կանկնուկ տեսայ, զիւր կանաչ կապան կու թանայ։
Ջեռքըս բըռնեց տուն տարաւ, գդուռն եդիր՝ ըզփակն ի վերայ.
Մանուկ ես նորա կ՚ասեմ, որ առնու զբալնին ու բանայ.
Բանայ 'ւ ի պաղչան մտնի, վարդ քաղէ ու ցօղն ի վերայ.
Եւ փունջ մի եարոջըն տայ որ դընէ զերեսն ի վերայ։

*

Ծերմակ ծոց ու լայն ճուպա, ի ծոցիդ ի վայր սահեցայ.
Այդ խակ թեւերուդ մէջին գիրկ ածի պահիկ մ՚արգելցայ.
Ջեռկունքս ալ ի վեր կալայ, «Տէ՛ր, արա՛ զմահիկս ի հոսայ,
Ջմահիկս ու զմատղիկս արա՛ աղկեկան կրծոցն ի վերայ։

*

Այս սարըվորի շահէն, անշահէն ես ի՞նչ շահեցայ.
Առի զբազաս որս ելայ, թըռուցի, զինչ մաղպուն եղայ.
Բազա՛, տընաւեր բազա՛, գընացած տեղըդ ինձ սա՛ս,
Ես այլ հետ քեզի կուգամ, հանց հաչուեց թէ օր մի չեղայ։

*

Դիժար հիւընտուկ եմ ես, ա՛ռ խընծոր, արի՛ ե՛կ զիս տե՛ս.
Հազար զենեհար կուտամ որ օտար հաքիմ չը բերես.
Օտար հաքիմ ի՞նչ անեմ, իմ ամէն տարտըս դու գիտես.
Եկո՛ տամ ծոցուս բալնին, բա՛ց սրտիս դուռը մուտ ի ներս։

*

Նալամ եալալամ կ՚ասեմ, չեմ եկեր, քո սէրն է բերեր.
Քո սէրն իմ սրտին մէջին տուն շիներ 'ւ ի ներս կու կենայ։

No· 196

ՎԵՆԵՏԿՈՒՀԻՆ

Հերի՛ք մըրմընջես, պըղինձ սարսըռո՛ւն,
Այդ աշտարակի հըպարտ կատարէն.
Թո՛ղ որ ունկընդրեմ սըրտիս յոյզերուն՝
Զոր Սէրն ու Նըւագն հոն կը փոթորկեն...։

Ի՛նչպէս չերազե՛լ, չըսիրե՛լ աշխարհ,
Զապրի՛լ անմահի կեանքի մը համար՝
Երբ քովէդ կ'անցնի նէ վէս, լըռելեան,
Եւ վառվռուն աչքերն — աստղե՛ր անըմման.

Եւ իր պարզութեամբ՝ քընքոյշ վարդի պէս,
Մարմնացած է Սէրն իրեն մէջ՝ կարծես։
Էն պահ մը դիտմա՞մբ մարդոց մէջ իջեր՝
Իրեն կը ձըգէ սըրտե՛րն ու աչեր...։

* * *

Ա՜յ դո՛ւ, Սէր չըքնաղ, — տատրա՛կ անկայուն,
Գերին եմ ես քու հըրդե՛հ աչերուն.
Բայց ինչո՞ւ այդպէս հեռուն կը թըռչիս.
Զուգե՞ս թեւովդ մարել բոց սըրտիս...

Ա. ՏԽՐՈՒՆԻ

N 197

ԱՇՈՒՆ

Աշնան աւրող քարւանն եկաւ,
Երկինք, երկիր սև հագան,
Քամին դարդէն սարերն ընկաւ,
Աստղունք, լուսին սո՛ւս հանգան։

Խըշխըշալով նոճին կուլայ,
Լըճակըն ապուշ՝ ցոլք չունի.
Զըկա՛յ շուշան, կարմիր լալայ,
Երգն է լըռել թըռչունի։

Ես ի՞նչ եղաւ...իմ խենթ սըրտում
Մորմոք երգեր թընդացին,
Աշնան օրւայ շընչով տըրտում
Խորունկ վէրքըս եա բացին։

Չէ՛, դուք կեցէ՛ք, ինձ աշուն չէ,
Մի՛ լար, ի՛մ սիրտ — իմ բալա՛յ.
Դարդըլու աշուն ինձ հէ՛չ պէտք չէ —
Էնոր ձեռքէն ես չեմ լայ...։

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆԵԱՆ

No. 198

ՍԱՐԷՆ ԿՈՒԳԱՑ ՁԻԱՒՈՐ



No. 199

ԾԻԾԵՌՆԱԿԸ ԲՈՅՆ Է ՇԻՆՈՒՄ......

Ծիծեռնակը բոյն է շինում.
Ե՛ւ շինում է և՛ երգում.
Ամէն մի շիւղ կպցընելիս՝
Առաջւան բոյնն է յիշում։

Նա յիշում է անցեալ տարւան
Իր սընուցած ձագերին,
Որոնց շատերն յափշտակեց
Արիւնարբու Թըշնամին։

Մի անգամ էր նա բոյն շինել,
Շատ անգամներ կարկատել,
Բայց այս անգամ վերադարձին՝
Բոյնն աւերակ էր գըտել։

Բայց նա դա՛րձեալ բոյն է շինում,
Ե՛ւ շինում է և՛ երգում.
Ամէն մի շիւղ կպցընելիս՝
Առաջւան բոյնն է յիշում։

No. 200

ԳԻՇԵՐ ՈՒ ՑՈՐԵԿ...

Գիշեր ու ցորեկ ի քո տարտկան
Հառաչե՛մ, հառաչե՛մ.
Կ'ուզեմ զանունդ յայտնել—
Կ'ամաչե՛մ, կամաչե՛մ։
Ա՛յ անօրէն, միս ու ոսկոր եմ,
Գեմ քար չե՛մ, գէմ քար չե՛մ։

Ցայլ չեմ կրնար զադտուն ապրել,
Կու կանչե՛մ, կու կանչե՛մ.
Գիշեր ու ցորեկ քո սէրն արեր
Զիս վարա՛մ, զիս վարա՛մ։
Ա՛յ անօրէն, գէմ քար չեմ,
Չեմ դիմանա՛ր, չեմ դիմանա՛ր։

Գիշեր ցորեկ քունս է հատեր
Աչերու՛ս, աչերու՛ս.
Քո արեւուդ ականջ արա,
Քո գերո՛ւդ, քո գերո՛ւդ։

No. 201

Գ Ի Շ Ե Ր

Սիրո՛ւն պատկեր։ Պարզ գիշեր էր,
Եւ օդեղէն ովկիանում
Փայլում էին անթիւ աստղեր,
Եւ ուրախ էր սիրտըս զարկում։

Ամբրոսական ծաղիկներ վառ
Անուշութիւն էին բուրում,
Եւ երկընքի ցօղ կենարար
Բընութիւնն էր զովացնում։

Ես անխըռով երգում էի—
Իմ երգըս սուրբ և մաքուր էր.
«Ազատութիւ՛ն» էի երգում,
Հայրենիքի «պարծանք» ու «սէր»։

Ս. ՇԱՀԱԶԻԶ

No · 202

ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐ

Իմ հոգւոյս հոգեկ եա՛ր, ա՛մ, քանի որ քովէդ գընացի·
Հոգիս ի մարմնոյս ելաւ, ի մահուն դուռն գընացի
Առաւըւնօքն մինչ իրիկուն կուլայի ու դքեզ կ'ուզէի,
Գիշերն մինչև լուսանայր, քո սիրոյն ես քուն չըլնայի:

Կօղալն ալ ի խօսք ելաւ, իր եարուն գանգատներ արաւ,
— Հանց մի որ սիրես դու զիս, ինձ ասէ՛ որ ես գիտենամ:
Ես ալ քընար պիտէի, զօրն ի քո գիրկըն կենայի·
Կամ ապըրշըմէ գօտի, քո միջա՛ցըդ գիրկ ածէի·

Կամ ապըրըական ջըրիկ, գայի քո բերանդ մըտնէի·
Կամ գարնանային ցօղիկ, ես ի քո վըրադ ցօղէի·
Կամ ապըրշըմէ լարեր, քեզ հետ պէսպէս խօսէի·
(Ձականջըդ դու յիս արա՛ ու լըսէ ըզիմ գանգատնիս)·

Կամ քաղցըր նըռան գինի, զօրն ի քո շիշան կենայի·
Դէմ գայի զլեզուդ պագնէի,
Ես ծիծեռնիկ պիտէի, բունըս ի ձեր տունըն դընէի,
Զադ հանէի, ճըռվըռայի, ու սիրովդ կըշտանայի,

'Ի առաւընէն մինչ իրիկուն ի երեսդ ի վար հայէի·
Իրիկունը երբոր մթնէր, գայի քո ծոցըդ մըտնէի·
Գիշերն մինչ որ լուսանայր, ես ի քո ծոցըդ պառկէի·
Երբ որ առաւօտանայր, ես ի բունըս ճըռվըռայի·
Երբոր լուսըն լուսանայր, աշխարհիս վըրայ ժուռ գայի:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

«Կին, թէ քեզ ա՛յդ անուամբ պատշաճ է կոչել,
Զի երկրաւոր բանի դու չես նըմանիր,
Եւ Ադամի դուստրերուն մէջ ոչ ոքի
Երկինք այդքան լոյս չէ պարգեւած,

Ի՞նչ է խընդիրքըդ և ուրկէ՞ կուգաս դուն·
Ո՞ր՝ քո՞ւ կամ մեր բախտն՝ այդ քեզ հոս կը բերէ·
Գիտցուր ո՛վ ես, որ չը պակսիմ յարգանքիս
Մէջ, և եթէ հարկ է երկիր պագնեմ քեզ»:

ԹՕՐՔՈՒԱԹՕ ԹԱՍՍՕ

No. 203

ԵՐԳ ՍԻՐՈՅ

Առաւօտեան քաղցր և անուշ հովերըն
Մերձեալ հընչեն ձեղմով թըփոյդ քովերըն,
Արդ ծածանին աչացս լըցեալ ծովերըն.
Բացի՛ր բացի՛ր, իմ կարմիր վարդ պատուական,
Գեղըրդ նըման արեգական վառվառման:

Քանի ողբամ, նոր ի նորոյ խոցոտիմ,
Զփայլուն գեղըդ ի միտ բերեալ՝ բոցոտիմ,
Ցորդ արտասուօք ցայգ և ցերեկ թացոտիմ:
Բացի՛ր, են:

Զմեռն էանց՝ ես քեզ կարօտ մընացի,
Այրիմ, տապիմ որպէս ի հուր հընոցի,
Քեզ չատ օրեր ես ի ձեռաց գընացի:
Բացի՛ր, են:

Տեսեալ զծաղկունս՝ զամեն ինձ փուշ վարկանեմ,
Թեօք բաղխեալ զսիրտ իմ քնքուշ հարկանեմ,
Ցաւ իմ սըրտի ահա՛ քեզ յուշ արկանեմ:
Բացի՛ր բացիր, իմ կարմիր վարդ պատուական,
Գեղըրդ նըման արեգական վառվառման:

No. 204

ԲԼԲՈՒԼԻ ՀԻԴ ԼԱՑ ԻՍ ԷԼԻ

Բըլբուլի հիդ լաց իս էլի,
Վարթի նըման բաց իս էլի,
Վարթաջըրով թաց իս էլի,
Թաց իս էլի.
Չկայ քիզի նման, չկայ քիզի նման.
Քիզ նըման, քիզ նըման. —
Դո՛ւն իս աննըման:

Իրէսըդ է շամս ու ղամար.
Ջանըս դուս դու քայ քիզ ամար:
Մէշկիդ ունիս օսկէ քամար. —
Օսկէ քամար,
Չկայ քիզի նման, չկայ քիզի նման
Քիզ նըման, քիզ նըման. —
Դո՛ւն իս աննըման:

Սիրունութինդ էլաւ արբար.
Մազիր ունիս՝ սիմ ու չարբար.
Քի սազ դու քայ ղուշլու ղարբար. —
Ղուշլու ղարբար:
Չկայ քիզի նման, չկայ քիզի նման.
Քիզ նըման, քիզ նըման.
Դո՛ւն իս աննըման:

Հաքիդ զարըն՝ ալ իս արի.
Բըլբուլի հիդ լալ իս արի,
Բարկ էրէսիդ խալ իս արի, —
Խալ իս արի.
Չկայ քիզի նման, չկայ քիզի նման.
Քիզ նըման, քիզ նըման. —
Դո՛ւն իս աննըման:

Դարդըս սաիմ՝ կու լան սարիր.
Էս ի՞նչ բան էր, վուր դուն արիր. —
Սայեաթ-Նօվուն՝ ջունուն արիր, —
Ջունուն արիր.
Չկայ քիզի նման, չկայ քիզի նման.
Քիզ նըման, քիզ նըման.
Դո՛ւն իս աննըման:

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

No. 205

ՋԱՆ ԳԻՒԼՈՒՄ



Սարի թըրթընջուկ թաղա,
Ջուղ ու մեխակ քեզ մաղա·
Ինձ պէս նազանի աղջիկ
Քեզ պէս տըղին ո՞նց սազայ:
Ա՜յ տըղայ, եախէդ մօվ ա
Սուրբ Կարապետ քեզ գովա·
Ես քեզ խիստ շատ եմ սիրում·
Քո սիրտ ինձանէն հով ա:
Նախրատափին խընկի ծառ,
Խնձոր գըցեմ՝ արի տա՛ր,
Ուրբաթ-շաբաթ քեզ մօհլաթ,
Լոյս կիրակի արի տա՛ր:
Մեր տան առաջին դարան
Աղջկերք եկան եա դառան·
Կուռըս տարայ որ բռնեմ՝
Շարած մարգարիտ դառան:
Ա՜յ տըղայ, բաղի միջին
Ոտներըդ շաղի միջին,
Կանչի՛, կանչելուդ մեռնեմ,
Ես եմ քո խաղի միջին:
Մեր տան եռեր մառան,
Տըղերքն եկան յետ դառան,
Ձեռըս տարայ թէ բռնեմ՝
Դիփ լալ ու մարջան դառան:
Ես աղջիկ եմ, ալ կ՚ուզեմ,
Բողչէս ծալէծալ կ՚ուզեմ·
Երբոր եարի տուն երթամ՝
Գօտիկս քիրմա շալ կ՚ուզեմ:
Ամպել ա, ձիւն չի գալի,
Մթնել ա տուն չի գալի·
Էս անտէր բարձի վըրայ
Առանց եար քուն չի գալի:
Ա՛յ աղջի, սա՛, մսա՛,
Ծամերիդ ծէրը խաս ա,
Թուշըդ դէմն արա՝ պաչեմ,
Վաղի՝ գնա մօրըդ ասա:

Արխալուղըս կարել եմ,
Ոսկէ կոճակ չարել եմ,
Նանի ջան, դարդ մի՛ անիր,
Ես սիրածըս ճարել եմ:
Արտումըս ցանել եմ դարի,
Աստուած տայ նանիս բարի
Ինձ տուեց ջահէլ եարի·
Դարչին-մեխակ քահրբարի:
Բարդի ծառը բարձըր ա,
Սիրած եարը քաղցըր ա,
Գընամ մօրըս հարցընեմ,
Թէ որ չըտայ՝ փախցըրա:
Կանգնել ես բարձըր հովին,
Փըռփըռում դօշիդ մովին,
Էրնէկ ծոցիդ քընողին,
Շամամ ծըծերդ բռնողին:
Ես լիսաստղ եմ երկընքին
Շողքըս տըւած գետինքին,
Դեռ շատ կարօտ ման կը գաս
Էս իմ շալ աչք, կեռ ունքին:
Քաքուլիդ կալին մեռնեմ,
Երեսիդ խալին մեռնեմ·
Լըսել եմ կարդացոր ես,
Սաղմոսիդ ծալին մեռնեմ:
Ծառի տակը հով քամի,
Քաքուլըդ քամին տանի,
Բա դու սարում ու ձորում,
Իմ քունը ո՞նց կը տանի:
Ծիրան եմ քաղել նուշը,
Պըտղնցիս վարդի փուշը,
Փունջ կապեմ՝ ախպօրըս տամ,
Պաչ անեմ կարմիր թուշը:
Հա՛ դէդը գնա՛, դէդը գնա՛,
Մէջքիդ քիրմէն եա գընայ,
Դէմն արի, թուշըդ պաչեմ
Ունքամէջքըդ եա գընայ:

Մանուշակ երկու թերի,
Սիրողի տունը կէրի,
Ով իմ սիրածն ինձ չի տայ՝
Զը տւողի տունը էրի։
Սիրել եմ սերն երեսին,
Ռեհան թերըն երեսին,
Ով իմ սիրած ինձ չի տայ՝
Աստըծու կերն երեսին։
Զափարի տակ չափ կը տամ,
Քիսով ոսկի թափ կը տամ,
Էս իմ պըզտիկ տեղովըս
Քեզ պէս չատին խաբ կը տամ։
Զիթ եմ հագել—սաղով ա,
Գըլխիս մազը գաղով ա,
Հալըա՛թ ես էլ նազ կանեմ,
Երբ որ եարըս նազով ա։
Զիթ մինթան էդ հին մաշա,
Ունքերըդ ղալամքաշ ա,
Աղջի՛կ, ի՞նչ ես միտք անում,
Իմ ջանըս քեզ փէշքաշ ա։
Պուճուր աղջի՛կ, լաւ աղջիկ,
Դու ինձ համար ցաւ աղջիկ,
Ես քեզ թագուն սիրեցի,
Էս ո՞վ արաւ, չա՛ւ աղջիկ։
Սարերի սինձ ի՞նչ կանեմ,
Կաթով բըրինձ ի՞նչ կանեմ,
Թո՛ղ իմ սիրած ինձի տան՝
Ոսկի, արծաթ ի՞նչ կանեմ։
Սարերումը տուն ունեմ,
Միջին ոսկի սին ունեմ,
Ա՜յ չան տըղայ, քիչ խօսա,
Քեզ պէս հազար չուն ունեմ։

Կանգնել ես, կանչում էլ չես,
Բօյիցդ ամաչում էլ չես.
Եկայ՝ կըշտովդ անց կացայ,
Տէր ես՝ ճանաչում էլ չես։
Ամպելա ամպի տակին,
Ծունկըս ծընկանըդ տակին,
Ես քեզ ո՞րտեղ սիրեցի—
Մեխակի ծառի տակին։
Ա՜յ տղայ, դու հէրիս, մէրիս,
Ո՞ւր եկար կէս գիշերիս.
Տեղումըս քեզ տեղ չը կայ,
Գըլուխըդ դի՛ր կըռներիս։
Ծըրագ դնեմ լիսացու,
Կարմիր խաւէն քիսացու։
Ես քո մօրը հարսնացու,
Դու իմ մօրը փեսացու։
Աղջի՛կ, մազերդ հիւսէիր,
Թուշդ երեսիս քըսէիր,
Ելնէիր բարձիս վըրայ՝
Բիւլբիւլի պէս խօսէիր։
Աղջի՛կ, գընանք մեր բաղը,
Պոկեմ չամամիդ թաղը.
Էդ երեսիդ չաֆաղը
Հանելա սըրտիս դաղը։
Զուն դընեմ թաւէն՝ խաշեմ,
Գընամ կարօտը եաշեմ,
Եթէ եարըս գալիս է,
Զօքեմ՝ չէքմէքը քաշեմ։
Գիւլում գիւլում, գիւլ չիչակ,
Ես—դու մըտնենք մին դօշակ,
Մինչև լոյսը քըշփըշանք,
Լոյսից յետոյ կըչկըչանք։

Խիստ եմ կարօտցեր գիմ եարս, դուն աժես որ ես կարօտնամ.
Ով ըղքեզ մօտ յիս բերէ, նայ հանեմ զճիկերս իրեն տամ.
Զադ տաս՛, ճերմակ, զա՛դ տաս, ճերմակ ծոց ու ծինն ի վրայ։
Ապրեր եմ քառասուն տարի ու քաշեր հազար տարու ղամ.
Ի՞նչ չահ է իմ չատ ապրիլս երբ ի քէն կարօտ կու մընամ.
Տարուբեր քամեկ, տարուբեր, զգէշն տար ղաղէկն առ ու բեր։

Ն. ՔՈՒՉԱԿ

No 206

ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ,
Երբ միտքս էք գալիս՝ ասում եմ ես ա՜խ,
Հալւում եմ, հալւում օտարութեան մէջ,
Ա՜խ, սիրտըս խորւում, ցաւիս չը կայ վերջ:

Երբ կարմիր գինին բաժակումս ածած՝
Սեղանիս վըրայ առաջս է դըրած,
Աչքըս ակամայ վըրան եմ ձըգում,
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում.

Տեսնում եմ և, ա՜խ, միտքս է մոլորւում,
Դառն արտասուքով աչքըս պըղտորւում,
Կարծում եմ բոլոր աշխարհը մըթնեց,
Արեն էլ խաւրեց, էնդուր որ տըխրեց:

Հայո՛ց աղջիկներ, ձեր հոգո՛ւն մեռնեմ,
Ձեր սիրուն աչերն էլ ե՞րբ կը տեսնեմ.
Էն սև աչերը՝ սև ունքով պատած,
Կարծես՝ երկնային ղալամով քաշած:

Էն սև աչերը, որ շատին սպանեց,
Բայց շատերին էլ դըժոխքից հանեց,
Ես էլ կենդանի տեղըս եմ մեռած,
Առանց կըրակի էրուած, խորոված:

Էլ ե՞րբ կը տեսնեմ ես ձեզ ման գալիս.
Բաղ ու բաղչայում սէյրան անելիս,
Ինչտեղ ամօթից վարդն էլ է դեղնում,
Երբոր ձեր կարմիր թըշերն է տեսնում:

Բըլբուլն էլ՝ վարդից՝ ձեր ձայնը լըսելիս՝
Թըռչում է, թըռչում, ամպերում կորչում,
Եւ իր Արարչի տեսածն ասելիս՝
Փա՜ռք քեզ, Տէր Աստուած, փառք քեզ է կանչում:

Հայոց աղջիկնե՛ր՝ ի՞նչ անուն տամ ձեզ,
Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել,
Թէ մարդ անուանեմ՝ բէդամաղ կ՚անեմ,
Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորւած եմ ես:

Մոլորուած եմ ես օտար աշխարհում,
Հաւատն էլ օտար, օտար և՛ լեզուն,
Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նըման,
Հայոց աղջիկնե՛ր, դո՛ւք էք աննըման:

Ձեր սէրն է միայն սըրտումըս պահւած,
Ձեր սիրովն եմ ես միայն կենդանի,
Ձեր սէրը միայն էս կեանքըս մաշած
Օտարութեան մէջ դեռ կը պահպանի...:

ԳԷՈՐԳ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑ

No. 207

ՀԱԲՐԲԱՆ



ՀԱԲՐԲԱՆ

(Շարունակութիւն)



Հ Ա Բ Ր Բ Ա Ն
(Շարա-ն-կա-բէ-ն)



2. Հաբըրբան.
Ջան է ջան.
Մողնուայ ջուրը սառն ա,
Մողնի էթողն իմ եարն ա,
Թող էրթայ մուրազն առնի,
Եա դառնայ սիրածն առնի.

3. Հաբըրբան.
Ջան է ջան.
Ջուխտ դութան արտ կը բանի,
Շէկ աղջիկ հաց կը տանի,
Շէկ աղջըկայ ծամերը
Խելքս ու իմանս կը տանի:

4. Հաբըրբան.
Ջան է ջան.
Ալագեազը ձընել ա,
Եարըս տակին քընել ա,
Ձէն կուտամ՝ ձէնըս չառնի,
Էս ի՞նչ անուշ քընել ա:

No. 208

ԾՈՎՈՒՆ ԽԱՒՔ ՄԸ ԿԷՐ....

Ծովուն խաւք մը կէր, անունն էր արոր·
Վըզիկն էր էրկէն, սըրտիկ սեւաւոր·
Կապեմ պէչարէն, էրթամ խետ ինոր,
Էն իմ դարդ գիտե, ես էլ գէօ ինոր:
    Արե՛, եա՛ր, արե՛, խըռով մի՛ մընա,
    Աստըւորիս մալ ձիկ, քե չի մընայ:

Ես վէրի ոչխար վէր ցասման քարին,
Թըվանքավ զարկին պըրինտար արին·
Խապրիկ մը տարէք իմ սօնա եարին,
Թո՛ղ առնի դարման, գայ վէր իմ եարին:
    Արե՛, եա՛ր, արե՛, եյլն:

Պօստան մ' եմ դրե վէր էնա դարին,
Աստուած ախրէր էս տարուան տարին·
Ջէ՛լաւ մէկ շամամ օրօխկի եարին,
Շամամ թոռոմաւ, իմ եար խըռովաւ:
    Արե՛, եա՛ր, արե՛, եյլն:

Իգի մ'եմ տըկե—վարդ խազար ու բիւր,
Պախչէ մ'եմ տընկե—վարդ խազար թավուր,
Կանչեմ, եա՛ր արե՛—սարեր լացուցեմ,
Շատ կարիպ-կուրպաթ ճամխէն դարձուցեմ:
    Արե՛, եա՛ր, արե՛, եյլն:

Ծըծւերդ էր ուռե, ես ափ նուռ էր,
Արի ձեռ պարզեմ, դիւ ասիր ժուռ էր·
Թէ ժուռ թէ խասուն, մօտ ձիկ կապուլ էր:
Քաղցր լեզւին մեռնեմ— անուշ պըլպուլ էր:
    Արե՛, եա՛ր, արե՛, եյլն:

Էսօր ի՞նչ օր ի, պախսի, ուրբաթ ի,
Եարոջս մեռնեմ, կարիպ կուրպաթ ի,
Աղջի՛կ, քեո գըլուխ արծըթէ թաս ի,
Խորած վարդապետ կասի չըխասի:
    Արե՛, եա՛ր, արե՛, եյլն:

Ըստամբօլ քաղաք վէր Սեւ Ծովերաց,
Կարիպ եմ ճամխե իւե սարերաց·
Կարիպիս մեռնեմ իր ճամխներաց:
Կարօտ մընացի թուխ-թուխ աչերաց,
    Արե՛, եա՛ր, արե՛, եյլն:

Մըտեր ես իգին, խավող կը քեաղես,
Շամամ ծըծւերով շաքար կը մաղես,
Ալմաստ խանչալով սըրտիկս կը դաղես,
Աչքով, ընքերով դիւ ձիկ կը մաշես:
    Արե՛, եա՛ր, արե՛, եյլն:

Էլեր ես իգին, առուց ջուր կուգայ,
Քեաֆուր վարդ բացւե, անուշ խոտ կուգայ·
Իմ խէրանց իգին վարդ խաղար Թավուր,
Մէջ էն վարդերաց իմ վարդն ի քաֆուր:
Արե՛, եա՛ր, արե՛, և այն:

Էրկինքն ի ամպե, կուգեայ մարմար ձիւն,
Կուգայ կը թափի վէր մալուլ մարդուն·
Մէկ ե՞ս եմ մալուլ, թէ աշխարհ պիթուն,
Աստուած աւիրէր նամարտ մարդու տուն:
Արե՛, եա՛ր, արե՛, խըռով մի՛ մընա,
Աստըւորիս մ' ալ ձիկ քե չի մընայ:

No. 209

ԱԽՉԻ, ՔՈՒ ԳԼՕԽ....

Ախչի, քու գլօխն է դրած կարմիր ջըղայ,
Խերիք է, խըղ վըզնոցիդ մալուլ մը խաղա՛յ,
Ես ու դու արի՛ եար էղնինք խօրօտ Եազգուլ,
Բալալու աղջիկ իս դու, ես լէ՛ խեղճ տըղայ·
Իմ ու քու նանէի մէջ, թըխ Աստուած դատէ,
Եազգուլ ջան, մէ խրիշկելըդ ձիկ չատ է չատ,
Մօսկըցի՛, մը վա՛խնայ, քու անուշ եարն իմ,
Փաթոթւի՛, իմ վիզ գըրկէ· մի՛ աւի եատ է:
Քու խէրանց դուռ ու յէրդիս մենծ պար ու խաղաղէ,
Էդ սիվտակ դօշիդ խամար՝ իմ սիրտը դաղ է,
Զիմ սէֆիլ բալալու բաշ, խօրօտիկ Սավգուլ,
Զըմ գինա, յօրի՛ ըդման սիրտդ վըրէս պաղ է:
Պիտվական ու խօրօտիկ բըճեր իս խագի,
Լուսվընէ չուր իրիկուն ձըր.դուռն իմ չօքի,
Քու սէրուցի խաթեր խամար յըմէն լուս ու մութ՝
Վըր ծնկան ես չօքէչօք խօրդ ձեռն իմ պաքի·
Աշխըրրի դարդ-խասավաթ քըղի՞ է առած,
Բըթէ գիս գետին կու տըփիս, ա՛խ անաստուած՝
Քու սէրն էփեց ու վառեց, չիւար մացի,
Զընք գինէ, թը դու յինէ՞ էիր խռոված:
Քու ձեռնէն բրօրաւ սիրտս, էղա պարբէդար,
Քանդեցիր իմ տուն ու տեղ, քյեցիր չոր քար,
Հարի ե՞ր միամ բըինդար, չէ՞ քու Խուշ–Բն իմ,
Մեղք արի՛, խանչէ՛ քու քով, իմ ըէֆալու եար:
Կող ու կուչաս կպաւ գետնէն ճամբախարի իշելով,
Մեռայ ես չատ տըըպայ քու փէշ քաշելով
Զիս մոռցա՛ր, աղքըտի պէս դռնէ դուռ քըցիր,
Թօրկեցիր չիւար ու խեղճ, ա՛խ-վա՛խ քաշելով:
Մըռնիմ քու սըռսուռ ծամին ու բարակ բաժին:
Քու ծամերն ու թուխ աչքեր աշխարք կու աժին,
Իլլահի քու թելլու բօյն ու կեռ-կեռ ունքեր, ...
Ի՞նչ կէղնի ըդ քու մատներ հաղմ գլօխըս մաժին:

No. 210

ԼԷՖՕ, ԼԷ, ԼԷ



No. 211

ԼՈՐԻԿ

Պաղ աղբիւրի մօտ
Կանգնած հայ աղջիկ,
Սափորը ուսին՝
Ինքն էր գեղեցիկ։
Առաւօտուց թոնիր վառ,
Ես մայիլ եմ քեզ համար․
Նըման ես կարմիր խընձոր լորիկ,
Լորի՛կ, լորի՛կ, ջանըմ լորի՛կ։

Պաղ աղբիւրի մօտ
Կանգնած հայ տըղայ,
Հրացանը ուսին՝
Ինքն էր քաջ հըսկայ։
Առաւօտուց թոնիր վառ,
Ես մայիլ եմ քեզ համար
Նման ես կարմիր խնձոր, Լորի՛կ,
Լորի՛կ, լորի՛կ, ջանըմ լորի՛կ։

No 212 ՍԱՐԵՐԸ ՄԱՆ ԵՄ ԵԿԵԼ....

ԳՐԻ ԱՌԱՒ ՈՒ ԴԱՇՆԱԿԵՑ ԳՐԻԳՈՐ ՄԻՐԶԱՅԵԱՆ (ՍԻՒՆԻ)



ՍԱՐԵՐԸ ՄԱՆ ԵՄ ԵԿԵԼ......

(Ծարանակաթեան)



2. Ծաղիկ, վարդ իրար հիւսել, եարնայ... նանի ջան,
Դարդլու բալխս մի փունջ կապել, եարնայ, նանի ջան...

3. Բլբուլը կանգ է առել, եարնայ, նանի ջան,
Ու վարդենուն աչք է առել, եարնայ, նանի ջան...

4. Արիւն է սիրտը կապել, եարնայ, նանի ջան,
Ցաղ ու ջուխտ արցունք թափել, եարնայ, նանի ջան...

No. 213

ԿԱՊՈՅՏ ԵՐԿՆՔՈՒՄ....

Կապոյտ երկնքում
Աստղեր են փայլում,
Այլ և լուսնակը.
Ամենից սիրուն
Ամենից փայլուն
Է արեգակը։

Սիրուն աղջիկներ,
Ինչպէս ծաղիկներ,
Ամ էն տեղ շատ կան.
Բայց իմ ընտրածը,
Սրտիս սիրածը
Հրեշտակ է աննման։

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

No. 214

ՋՈՒԼՕՒ ԵՐԳԸ

Ես Ջուլօն եմ Մաստարեցի,
Հինգ օր արի՛, մեր տուն կեցի՛,
Դէմ ազօթրան եկեղեցի։
Արեւ ելաւ կամար-կամար,
Ջուլօն կապեց օսկէ քեամար,
Քեզի բերեմ ջանիս խամար։
Արեւ ինկաւ Խամուր բերդին,
Քո աչքն ինկաւ մէջ իմ լերդին,
Ես քեզ սիրեմ, թո՛ղ ձիկ քերթին։
Տընէն ընցայ, ճըրագն էր վառ,
Դու նըման ես զօղանի գառ,
Որբեւերցի՛, արի՛ ձիկ ա՛ռ.
Ջաղցի բոլոր հըմէն ուռ էր․
Աշխարհըն աւէր․ Ջուլօն ծուռ էր,
Մէջ իմ սըրտին լաւ ու դուր էր։
Թօնէր վառեր՝ էլեր ի մուխ․
Կապեր փաշին՝ թողեր ի պուխ,
Ունքերդ կամար՝ աչքերըդ թուխ։
Օր մը աղէկ՝ օր մը վատ էր, .
Կանանչ գըլուխ չէօլի բադ էր,
Է՛լլի խօսքով ձիկ կ'ատէր։
Տընէն ելայ՝ թափ քելիցի,
Լանգով զարկի՝ էրդիս բացի․
Եա՛րըս տուն չէր, նըստայ՝ լացի։
Թառ խորօտիկ ալլի զաղա՛.
Քո դարդ մէջ իմ սըրտին չա՛տ ա,
Քո ծոցն ինծի նըշխուն օդա։
Մեր տան խուե արտ մի եօնջայ,
Թըխեմ գաթա, ճամբեմ խօնչայ,
Առնեմ Ջուլօն, չըրջեմ Գեանջայ։
Շատ խօրօտիկ անմահութիւն,
Սիրելիս մ'աներ գէշութիւն,
Թողնեմ՝ էրթամ կաչիպութիւն։
Դու կայնել ես դէմ ամրոցին․
Ջուխտակ չամամ մէջ քո ծոցին,
Դու կը խաղաս խետ վըզնոցին։
Մեր տան խուե ջուխտ մը գերան,
Բոլոր իրեն՝ պըստիկ բերան,
Քո սիրողիդ տընիկ վերան։
Մեր տան խուե արտ մ'զարի,
Էրթանք՝ քեաղենք, տանք խիարի,
Ճամբեմ Ջուլօյին դիարի։
Պաղ ջուր պըրծե՝ կուգայ սարէն.
Դեռ չի սառցեր սըրտիդ եարէն,
Ես ի՞նչ անեմ իմ սեւ բախտէն։
Ջուրն է պըրծե՝ կուգայ սարէն,
Կու գըլգըլայ մարմար քարէն,
Եարն է դարձե իր իղրարէն։

Ջաֆար Աղի նըշխուն օդէն,
Նոր եմ էլեր Ջուլօի մօտէն,
Ձեմ կըշտացե անոյշ հոտէն։
Նըխշուն օդա՝ չինի քեասայ,
Նանէին, գնա՛, թաքուն ասա՛,
Էսօր Ջուլօյին թանհայ տեսայ։
Դու էլեր ես՝ կ'էրթաս ի բէր,
Ո՛չ բէրն էնի, ո՛չ բէրատէր,
Տօ՛ պըստիկ խալըս, նոր սիրու տէր։
Դու էլեր ես՝ կ'էրթաս իգին,
Դու ու քո ջուխտակ տեգեր կին,
Վո՛վ որ տեսնի՛ էնի խոզին։
Քո մօր անուն կ'ասեն Սառա,
Ես քո սիրուդ կըրակ վառայ,
Կըսմաթ չէլաւ՝ քեզիկ առայ։
Դու կայներ ես դարգեախի դուռ,
Մէջքդ նմանի խանչալի բուռ․
Ձիկ ըրեցիր սավդալի ծուռ։
Ամպերն եկան բութա-բութա,
Ջուլօն կապեր բալաք փութա,
Ես քեզ սիրեմ ասեն սուտ ա։
Տընէն էլար հալա-հուլա,
Ծիծերդ նմանի բամբկի քուլա,
Աչկունքս տեսան, սիրտըս կուլայ։
Առաւըտման բարի լիսուն,
Քո կոճկներըդ խարխուր խուն,
Ես կուրբան եմ էդ քո տեսուն․
Անունդ գիտեմ, ա՞խ չեմ ասի,
Մանիշակ խառնուե խետ քո վարսի,
Ձեռս տարայ ծոցդ՝ խոցերդ խասի։
Անունդ եմ ասեր զանազան,
Իսկի չի՛ կայ քեզի նըման,
Ծամերըդ էր ճիւղ-ճիւղ ռըհան։
Դու կը քէլիս եանա՛-եանա՛,
Մէրկանդ ասի՝ դուռը բանայ,
Իրար սիրենք՝ մարդ չիմանայ։
Մեր տուն ձեր տուն մէկ տառապով,
Էլնես մըտնես կանանչ կապով,
Իրար սիրենք՝ Աստուծն ապով։
Դու էլեր ես՝ կ'էրթաս կան դեալ,
Ծամերդ խուեդ խանդեալ-խանդեալ,
Քեզ սիրեմ՝ թող զարկեն չանկեալ։
Մեր տուն ձեր տուն դիմաց-դիմաց․
Խէրիք աչօքդ անես իմաց,
Մեր երեսի հայէն գընաց։
Աշխարհ՝ ալամ քեզ կու գովեն,
Օր մ՝ չէլար սէլլի խովէն
Ծամերդ քեաշած Վանայ ծովէն։

Մեր տան խուլ արտ մը մասուր,
Ձուլօն առնեմ մըտնեմ մըսուր,
Ձուլօն սիրեմ՝ Թորկեմ սկեսուր:
Հէլէ՛լ-վէլէ՛լ Մըսրա գոմէշ,
Իմ ձեռ Թալեմ Քեալաշի միէշ·
Ձուլօն էլնի ինծի փէշքէշ:
Մեր տան խուլ արտ մ՚պընդուկ·
Ձեր տան խուլ արտ մը պընդուկ,
Ձուլօն առնեմ՝ մըտնեմ սընդուկ:
Քամին եկաւ էրան-էրան,
Գընաց խասաւ Մըշու բերան,
Մըշու խաւեր Թեւաւորւան,
Քեալաշի տուն սեւաւորւան:
Մեր տան խուլ քառասուն կարաս,
Քառասուն կարսի գինին էր խաս·
Ոսկի գիւգիւմ՝ արծըԹէ Թաս·
Ամէն Թասին պագիկ մը տաս:

Ձուխտ մ՚ գուԹան դաշտ կու բանի,
Ձուլօ էլեր խաց կու տանի·
Մէկ կու քելէ, մէկ կու կայնի,
Աչքով՝ ընքով մարդ կու սպանի:

Մեր տուն ձեր տուն մօտիկ-մօտիկ,
Դու կապել ես կարմիր գօտիկ:
ԵրԹանք՝ քաղենք կանանչ խոտիկ,
Տեսնանք՝ վի՞ր եարն է խօրօտիկ:

Էկէ՛ք՝ էրԹանք գեարի պոկենք,
Խայլի բերենք՝ գըլուխ կոկենք,
ԵրԹանք՝ Ձուլօյի դրան չոքենք·
Բալքիմ Ձուլօն ընդուց պոկենք:

Մեր տուն ձեր տուն իրես իրես,
Ապըսպըրեմ՝ խայլխի բերես,
Արարիչ Աստուածըդ սիրես՝
Ձուլօխս անուն չաւիրես:

N· 215

Ա Ց Ծ Ե Ա Մ

Անհոգ՜ես, չը գիտես ի՛նչ կայ քո մասին,
Պտըտւում են քո խեղճ անձի վընասին,
Գամբըռներով, բարակներով միասին.
Փախի՛ր այծեամ, փախի՛ր, որսկանն է գալիս,
Ձագուկներըդ ոըխուր լալիս են, լալիս:

Որսկանը հըրացով քեզի ման կուգայ,
Կ՚ուզէ ձեռքը քո արիւնով լըւանայ,
Խըղճալի, քու տեղակ սար ու ձոր կուլայ·
Փախի՛ր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,
Ձագուկներըդ և այն:

Որսկանը գուԹ չունի, կ՚անէ կըրակը,
Կամ քեզի կը սպանէ կամ քո ձաւակը,
Ջուր չի անցնի հըրացանի գընդակը·
Փախիր, այծեամ, փախի՛ր, որսկանն է գալիս,
Ձագուկներդ են․:

Դուրս մի՛ ելիր խիտ անտառից դու բընաւ,
Քեզ կը վիրաւորեն՝ կը ստանաս մեծ ցաւ,
Դաշտումը չես ման գար, Թէ մըտածես լաւ,
Փախի՛ր, այծեամ, փախի՛ր, որսկանն է գալիս,
Ձագուկներըդ ոըխուր լալիս են, լալիս:

ՋԻԽԱՆ

No. 216

ԱՐԲԵՑՈՂԻ ԵՐԳԸ

Ուղիղ գինետունից ես տուն եմ գընում,
Փողոց, ա՜յ փողոց, էդ ի՞նչ եմ տեսնում.
Աջ գընաս թէ ձախ՝ ծուռ են երկուսն էլ,
Փողո՛ց, տեսնում եմ, դու էլ ես հարբել:

Լուսի՛ն ջան, ռէխըդ ինչի՞ է ծըռած,
Մէկ աչքըդ կապուել, միւսը կէս բաց.
Դո՞ւ էլ ես կոնծել, ա՜յ դու անամօթ,
Ամաչի՛ր ինձնից, վաղուցուայ ծանօթ:

Բա, էստեղ-էստեղ, — տե՛ս, լապտերներն էլ
Չեն կարող ուղիղ ոտքի վրայ կանգնել,
Մէկ պարզ են վառւում, մէկ՝ սաստիկ խաւար,
Կամ թէ՝ պատից պատ կըպչում անդադար:

Աղբէր՝ էս գիշեր ամենքն են հարբել,
Ի՞նչ բան է մենակ-մենակ ծոմ պահել,
Չէ՛, էդ կը լինի խստակ գըժութիւն
Ուրեմն նորից նոր դառնամ գինետուն:

ԳԷՈՐԳ ԴՈԴՈԽԵԱՆՑ

No. 217

ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Բաժակներ առնունք, եղբա՛րք,
Լիք-լիք բաժակներ գինով,
Կարմիր ու ճերմակ գինին
Մեզ լինի անուշ համով:

Արաքսայ ջըրով ցօղած,
Հայոց արևով հասած,
Հայոց աղջիկ է քաղել,
Քընքուշ ձեռներով քամել:

Բերներիս տանենք անվախ,
Չէ՛ դա խառնած կամ խարդախ,
Նեկտար է՝ և ո՛չ գինի,
Խըմենք, մեզ անուշ լինի:

Այս բերքն է հայոց երկրին,
Հայաստան ընկած Նոյէն,
Անմահ երկնային գինին
Նա խմեց, երբ իջաւ սարէն:

Այս անոյշ գինին խմողը,
Սըրտէն թող հանէ ոխը.
Ամենքս էլ ասենք ամէն,
Որ մեզի շատ տայ ամ էն:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ



Ղ. ԱԼԻՇԱՆ

Վենետիկի Մխիթարեանները տուած են Հայութեան մեծանուն ու հանրօգուտ անձերու շարք մը, բայց անոնցմէ և ո՛չ մէկը Հայր Ալիշանի տիտանական գործունէութիւնը ունեցաւ, և ո՛չ մէկը անոր չափ ժողովրդական ու անպայման սիրելի եղաւ: Իր անզուգական յատկութիւններով կրցաւ ան ստեղծել իրեն համար շատ բարձր դիրք մը, և դարեր պէտք է անցնին երկրորդ Ալիշան մը արտադրելու, և այն ալ՝ թերևս ո՛չ Ղևոնդ Ալիշան մը:

Ալիշանը բնիկ Պոլսեցի էր, ծնած 1820 յուլիս 20-ին: Հայրը միջակ հարստութեան տէր սեղանաւոր մը՝ բաւական ուշիմ ու զարգացած մէկը՝ շատ մեծ չափով օգնեց փոքրիկ Ալիշանին (այն ատեն Քերովբէ Մարգարեան) կրթուելու և զարգանալու, իր ունեցած հին դրամներու և գրքերու միջոցով իր զաւկին համար հետաքրքրական դարձնելով հայրենի հնութեան բեկորները:

Տասներկու տարեկան հասակին մէջ Քերովբէ Մարգարեան կ'ուղևորուէր Վենետիկ, Հ. Մկրտիչ Աւգերեանի պաշտպանութեամբ: Դպրոցը կ'աւարտէր մեծ յաջողութեամբ և քահանայ կը ձեռնադրուէր, իսկ 1840-ին Ռափայէլեան վարժարանի ուսուցիչ կը կարգուէր: Այդ շրջանին Ալիշան հրատարակեց իր 12 հատոր «Հայկարան» դասագիրքերը, տեսակ մը հանրագիտական բովանդակութեամբ: Սկսաւ աշխատակցիլ 1843-ին հիմնուած «Բազմավէպ» հանդէսին և վերջը անոր խմբագիրը եղաւ: Այդ շրջանին Հ. Ալիշան քանի մը ճամբորդութիւններ ըրաւ Եւրոպայի այլևայլ քաղաքներ, գրադարաններու փոշիներու մէջ փնտռելով իր հոյակապ գրքերու համար անհրաժեշտ նիւթերը: Այսպիսով լոյս տեսան «Այրարատ», «Սիսուան», «Սիսական», «Հայապատում», «Հայբուսակ», «Շիրակ» հատորները, որոնք հիացում և զարմանք կ'ազդեն մարդուն վրայ այն հսկայական աշխատանքին համար, որով հրաշակերտուած են անոնք: Այդ գրքերը ո՛չ միայն հայ հասարակութեան, այլ նաև Եւրոպայի գիտական աշխարհին կողմէ գնահատուեցան, բանասէրներու շրջանէն դուրս ալ ծանօթացնելով հեղինակին անունը:

Հայր Ալիշանը [illegible] պատմաբան ըլլալէ զատ՝ նաև տաղանդաւոր բանաստեղծ մըն էր, իր «Նուագ»ները կրօնական, բարոյախօսական և հայրենասիրական ուղղութեամբ գրուած՝ շատ սիրուն են ու խանդոտ. վերջինները առանձնապէս սիրելի եղած են հասարակութեան և հազիւ թէ գտնուի փոքր ի շատէ գրագէտ հայ մը, որու ծանօթ չըլլան Ալիշանի Աւարայրի հերոսներուն նուիրուած երկերը, «Տուչանն Տաւարչանի», «Հրազդան»ը և ուրիշ բազմաթիւ գողտրիկ էջերը: «Նահապետի», ինչպէս ինքը կը ստորագրէր՝ [illegible] բանաստեղծութիւնները չոր ընթերցման նիւթ ըլլալէ դադրելով՝ ժողովրդական երգերու փոխուած են և երկար պիտի ապրին անոնք, յիշեցնելով միշտ այդ տարօրինակ անձին անունը, տարօրինակ իր աշխատասիրութեամբ [illegible], բանաստեղծի զարմանալի խառնուածքով.

Մեռաւ 1901, նոյեմբեր 21-ին, 60 տարի անընդհատ գրքերու, հին դրամներու, մագաղաթներու և հնութեան այլ բեկորներու մէջ իր կեանքը բեղմնաւորելէն ետքը: Իր գործերը ամէն կոթողէ, ամէն պսակէ աւելի մեծ յիշատակներ են իր անմահութեան:

ՃԱՇԿԱՆ · Մ · Ր ·

Ո՞նց կաս իմ լուսնակ հեզիկ ու հանդարտ
Համասփիւռ լուսովդ ի լեռ, ձոր և արտ,
Եւ ի Նահապետս՝ որ մըտօք մոլար
Գիշերաժամիկ ժուռ գամ յԱւարայր,
Ուր քաջ ու աններման հարք մեր Հայկազունք
Ընկան դէտ հըսկայ, կանգնեցան զուարթունք.
Միթէ դա՞ս ըմփոփել ոսկերաց սրբոց
Զինափայլ ամպէդ ոսկեթել ծածկոց,
Թէ ճերմակ ճակտիդ՝ թէպէտ և պայծառ՝
Քաջացս արենէն կապե՞ս կարմիր վառ.
Թէ լըռիկ մընջիկ ափշի՞ս տակաւին
Թէ ի՛նչպէս ընկաւ Վարդանն ահագին,
Մահու սև ըստուերն ի սիրտ թըշնամեաց,
Զհոգին ձըգելով յերկին առ Աստուած:
Դու այլ ո՛վ Տըղմուտ սըրտում ու արիւնոտ
Որ լալով ոլրիս ի մէջ շամբերուտ,
Եւ հովիկդ որ գաս ի Մակուայ քարէն
Կամ ի ծեր Մասեաց սըրբազան գարէն,
Դու այլ ինձ նըման դողդող և երեր
Թոյլ թևօք անցնիս սարեր ու ձորեր,
Անտառէ անտառ, տերևէ տերև
Կոծկոծելով գաս ի դաշտիս վերև,
Զայս մաշած շընչիս վերջին հառաչանք
Ձըգել ի հայոց սըրտից արձագանգ:
Ո՛հ դու բարեկամ այրած սըրտերու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ՛ պըլպուլիկդ, երգէ՛ ի սարէդ,
Զանմահ քաջքն հայոց՝ երգէ՛ հոգւոյս հետ.
Թադէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սըրտիկս՝ որ ի խաչն էր կիպ՝ թունտ առաւ.
Ի խաչին թևէն թըռայ ու հասայ
Գըտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ.
Պըլպո՛ւլ, քեզ համար մեր հարքն ասացին
Թէ չէ հաւ՝ պըլպուլ մեր Աւարայրին,
Եղիշեայ հոգեակն է քաղցրաղըրուցիկ
Որ զՎարդան ի վարդըն տեսնու կարմրիկ.
Զըմեռն յանապատ կու գընայ կայ ի լաց,
Գարունն յԱրտազ գայ ի թուփ վարդենեաց,
Երգել ու կանչել յԵղիշէին ձայն՝
Թէ պատասխանիկ մ'արդեօք տայ Վարդան:
Թէ կիսահոգի պըլպուլս նըման
Զէնիկս հանի ձեզ, որդի՛ք Թորգոմեան,
Որդի՛ք, որոնց հարք քաջք ու առաքինիք
Լըցուցին զդաշտեր գըրքեր ու զերկինք,
Թէ ի ծով սըրտիդ կաթիլ մ'արիւնիկ
Կաթէ հայ աղբիւրըն կամ Պահլաւիկ,
Թէ զփառքն հայրենեաց ձեզ այլ գըրէք փառս,
Հետ Նահապետիս ելէք ի յԱրտազ:

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՀԱՅՐԻԿ

1820 Ապր. 4 — 1907 Նոյ. 11

Հայրիկի կեանքը ուրուագծել քանի մը տողով՝ կը նշանակէ ոչինչ ըսել այդ մեծ անձնաւորութեան ու անոր հսկայ ազդեցութեան մասին հայ վերածնութեան մէջ. հատորներ պէտք են զանոնք ներկայացնելու համար։ Դժբախտաբար, մեր ծրագրէն դուրս է այդ, մանաւանդ որ այդպիսի աշխատութիւն համահաւասար պիտի ըլլար 60—70 տարիներու հայ պատմութիւն գրելու, գործ մը որ ահագին ուսումնասիրութեան ու լուսաբանութիւններու պէտք ունի տակաւին։

Հայ ժողովուրդը շատ ունեցած է մեծ դէմքեր, սակայն և՛ ո՛չ մէկը այնչափ քնքշօրէն սիրուեցաւ ու խնկարկուեցաւ, որչափ Խրիմեան, և ոչ մէկը «Հայրիկ» անուան արժանացաւ. հայութիւնը միայն մէկ հատ Հայրիկ ունեցաւ, անզուգական ու անփոխարինելի հայր մը։ Հայրիկի այդպիսի մեծ ժողովրդականութեան գաղտնիքը իր պայծառ ու անխարդախ դէմօկրատէութեան մէջ պէտք է փնտռել, որ դիւթիչ ներդաշնակութիւն մըն էր իտէալական անձ մը յատկանշող բոլոր գեղեցկութիւններու. ան մարմնացումն էր հայ ցաւի, անոր պատմական տառապանքի, հզօր ու անխախտ հաւատքի՝ ապագայի հանդէպ. ան իր ժողովրդի սիրտն էր, անոր զգացումներու և լուսամիտ երազներու հնոցը — ան՝ բուն ինքը հայ ժողովուրդն էր։

Հայրիկը հայ վերածնութեան ամենամեծ կարապետն եղաւ, և հակառակ իր դասակարգի աւանդական յետամնացութեան ու խաւարամոլութեան — հաւատադէպ բացառութիւններով — իր ցեղի մտաւոր ու քաղաքական ազատագրութեան մէջ առաջին ռահվիրան յայտնեցաւ. մրրիկներու, տարերային խառնաշփոթութեան ու երկնաձայթ ամպրոպներու մէջէն, այդ նոր մարգարէն կը քալէր, իր ետևէն կը տանէր իր յուսաբեկ ցեղը, գաղափարի լուսեղէն սիւնը իր առջև, խորհրդաւոր՝ որպէս երկնքի անհունը։

Հայրիկի ազդեցութիւն հայ յեղափոխութեան նախավկաներու վրայ անհունօրէն մեծ է. ինքը պաշտուեցաւ իր զաւակներէն և մեր վիպասաններու, բանաստեղծներու և օրագրողներու մէջ չկայ մէկը, որ նուիրած չըլլայ անոր իր սրտի ամէնէն մաքուր զեղումները. Րաֆֆին, Դուրեան, Ջերազ, Աղայեան, Արծրունին, Մալումեան, Փորթուգալեան, ինչպէս նաև աւելի պարզ, ժողովրդական գրողներ ու աշուղներ այնքան շատ երգած են Հայրիկը, որ այդ բոլորը ի մի հաւաքելու և ո՛չ մէկ կարելիութիւնը կայ։ Մենք, ցաւալի է ըսել, բնաւ հնարաւորութիւն չունինք ամենաչնչին մասն իսկ ներկայացնելու Հայրիկեան երգերու, մեր հրատարակութեան սահմանափակ ծաւալին պատճառով. իսկ իր կենսագրութիւնը, որպէս ըսինք, չի կրնար քանի մը տողի մէջ ամփոփել՝ կը մնայ ուրեմն, որ ամէն անհատ, որ ծանօթ չէ անոր՝ մասնաւոր աղբիւրներու դիմէ, այդ պակասը լրացնելու համար։

ՀԱՅՐԻԿԻ ԵՐԳԵՐԸ

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Է՛ջ, խաղա՛ ի ստոր երկրիդ գնեա իշխանին խաւարասէր,
Մո՛ւտ ի տուն գանձու նորին, կապեա՛ զհզօրն աշխարհակալ,
Ա՛ռ աւարն ի գերողէն, դարձո՛ առ իս երամովին․
Եւ ես դընեմ ըզթշնամիսդ ի պատուանդան քոյդ ոտից․
Որ փոքր ինչ խոնարհ ցուցար քան ըզհրեշտակս առեալ մարմնովդ,
Բարձրացի՛ս քան ըզնոսա փառօք պատուով պըսակեալ․
Իշխա՛ն և թագաւոր լիցիս հանուր ձեռակերտաց,
Տիեզերք ամէն ընդ քո ոտիւք կացեալ՝ հնազանդեսցին․
Եւ տա՛ց քեզ մեծ անուն և քան զամէն անուն ի վեր,
Ում երկին-երկիր ողջոյն ծունր ի խոնարհ կըրկնել ելցեն։

ԼՈ՛ՅՍ

Ո՛չ, ո՛չ, ես յուսահա՛տ եմ, յուսահա՛տ․ զիս մի՛ ջանայք ըսփոփել․
Մի՞թէ կարծէք խաւար հոգիք փառք և պարծանք են դըժոխոց․
Ես համարիմ զնոսին անպէտ, անարգ անօթ տանն իմում։
Դուք մի՛ տըքնիք զխաւարային հոգիս բերել առ խաւարն․
Որչափ դոքա յաւելուն՝ այնչափ կըրկնին մեր տանջանք։
Ես խաւար եմ, լո՛յս խընդրեմ, զորդիս լուսոյ բերէ՛ք առ իս,
Զի՞նչ օգուտ ի խաւարէն, խաւարն արդէն մե՛րն է, մե՛ր։

ՀԱՅԱՍՏԱՆ

Առ քեզ արևելեան առ պերճ աշխարհըդ Հայաստան՝
Հրաւիրեմ ըզքոյդ մանկտիս որ արդ ի քէն կան հեռացեալ,
Ոյց, գիտեմ, յոյժ կարօտիս որպէս մայրըդ որդեկորոյս,
Նազելի դիմաց նոցին մնացեալ կարօտ քո ընդ երկար։
Առաւել և քան զմայրդ քեզ կարօտին և քո մանկունք,
Ոյք ահա թէ ոչ ոտիւք գէթ անձկայրեաց սըրտին սիրով
Գալ ճեմել ի հայրենւոյդ վայր տարփատենչ և վայելուչ
Իբր ի վարձու զիս զրաւեցին լինել նոցա ինձ առաջնորդ։

Հընչեսցի հարաւն ի քեզ և հալեսցին ձիւնքըդ դիզեալ,
Եւ ի հողոյդ քաջարգոյս ծըլլին ծաղկունք նորափըթիթ,
Բուրեսցին անոյշ հոտով և զմայլիցիս դու ի նոսին,
Առաւօտ նոր արևով ծագեսցի քեզ լուսանորոգ,
Մերժեսցէ զգիշերդ ի քէն և զւարճասցիս դու առ լուսով…
Շինեսցին քո աւերակք և կանգնեսցին վայելչապանծ….
Եւ ի հրոյն թագուցելոյ, զոր և ի քեզ ցարդ պահէ տէրն,
Լուցցին նոր վառ ի վառ ճրագունքդ և ջահքդ խաւարեալ․
Յայնժամ երկին արփաւոր ի մէջ երկրի երևեսցիս…։

No 219

ԱՐԾՒԻ ՄԱՀԸ

Ցաւատանջ հոգիս անհուն կարօտով
Թռչում է դէպի երկիրն հայրենի,
Ուր բարձր կամարից ողբակոծ ձայնով
Զանգն է ղօղանջում վեհ Էջմիածնի:

Դա մահուան զանգն է Ազատն Արծըւի·
Որ մեղմ հընչում է կամարի տակին,
Նրա թըրթիռները տըխո՛ւր, սըգալի՛,
Գալարւում, սեղմւում, հընչում են ուժգին:

Եւ սըլանում են հեռո՛ւն, շա՛տ հեռուն,
Շըլակած սուգի լուրը բօթաբեր·
Թէ Ազատն Արծիւ այլեւս չէ ապրում,
Է՜յ, դուք տարաբախտ Արծըւի խե՜ղճ ճուտեր·

Մայր Հայաստանի դաշտերն են դողում,
Անվերջ խըշշխինով Երասխն է լալիս·
Ալեհեր Մասիս ճակատն է կընճռում
Ալեհեր Արծըւի մահը լըսելիս:

Գեղջուկը դուլթան ձըգում է դաշտում,
Հօտաղը նախիր յետ քըշում սարից,
Դար ու դաշտերում աշխատանք դադրում,
Արծըւի ճուտերը ճըչում են ցաւից:

Եւ խըռնըւում են, խանդակաթ սիրով
Արծըւի ճուտերը ամէն կողմերից,
Թըռչում են գալիս հազար երամով՝
Հրաժեշտ առնելու ծերուկ Արծըւից:

Ծերուկ Արծիւը արդէն շատ վաղուց
Սըրբազան կըտակն արել է նըրանց.—
Հայրենի հողը մաքրել թըշնամուց,
Հայրենի հողը՝ արիւնով ներկւած:

Լուռ խոնարհւում են սըգաւոր գլուխներ,
Արծըւի անշունչ դիակի վերայ,
Ջերմ համբուրում են Արծըւի նըշխարներ
Ուխտում կատարել կըտակը Նըրա:

Մեղմ ղօղանջում է երգը զանգակի,
Արծըւի ճուտերը լալիս են, սըգում.
Հողին են յանձնում նըշխարհքն Արծըւի—
Հայրենի երկիր մեծ ցաւից տընքում:

ՍԱՀԱԿ ՁՁԵԱՆ

No· 220

ԱՌ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ



2· Մայիսն եկաւ սոխակներով,
Վարդի թըփիկ որոնեց,
Փոխան թըփի փըշեր գըտաւ –
Լալահառաչ ձայն հանեց։

3· Հայրիկն ասաց ․— «Իմ հայրենեաց
Փուշն անուշ է քան գըվարդ,
Ես այն փըշոց մէջը դարձեալ
Կը որոնեմ սիրուն վարդ։

4· «Այն սայրասուր փըշերն ամէն
Փունջ կապեցէք չարէ-չար,
Թողէ՛ք գըլխիս պըսակ կապեն,
Որուն ճակատս է յօժար»։

5· Հայրի՛կ, Հայրի՛կ, քո սուրբ ճակատ
Արիւն-արցունք են, ո՜հ միշտ,
Փըթթեալ վարդի կարմիր թերթեր
Կը պըսակեն փառօք զարդ։

No· 221

ՈՂԲ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ



2· Ա՜խ, բաւ է, հայեր, մինչ այսպէս գերի
Թողնել հայրենիք, գիմել օտարին·
Օտար սիրում է մեզ իբրև հիւրի,
Եւ մեր հացն ու ջուր դարձնում է աղի:

5· Վան փոքրիկ քաղաք իր գաւառներով
Լեցւեցաւ գիակ հարիւր հազարով·
Ներկւեցան դաշտեր հայու արիւնով,
Ձայն տուին երկինք, ամպերն ամպերով:

⁂

No· 222

«ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ»
(Արտասանութիւն)

Հաւաքւել էինք բազմաթիւ հայեր
Մի շատ կարևոր մեծ գործի համար.
Ժողովում Կեղծը մեզ նախագահ էր,
Լռութիւնը— հսկող, Ոխը — քարտուղար...
Եւ արկնթարթում մենք իրար անցանք,
Տեղ ունինք նոյն իսկ տուր ու դըմբոցին,
Վերջն էլ ժողովը թողինք հեռացանք՝
Մազի՜ չափ մի շահ չը բերած գործին...
Միայն դուրս գալիս՝ դըռան մօտ անձայն
Տեսանք մի էակ՝ վիզը ծուռ կանգնած —
Արդարութիւնն էր այդ հալածական,
Որին նախագահն ժողով չէր թողած...

Ա· ԾԱՏՈՒՐԵԱՆ

Ինչո՞ւ, ինչո՞ւ իտալացիք
Չէ թընդում քաղցըր երգեհոն.
Ինչո՞ւ, քընքո՛յշ իտալուհիք,
Թողել էք ձեր պիանօն:
Մոռացել են դոքա, ասես՝
Փափուկ սեռը կանացի.
Սըրտում վըրէժ, կըարիճի պէս
Դիմում են վրա՛նը ոսոխի.
Որպէս տան մէջ, նոյնպէս կըռւում
Կանգնած են հե՛գ և հպարտ.
Գընդակներին կուրծք են ուղղում,
Եւ չըրթունքից չէ՛ գնում վարդ:
Զարմանո՞ւմ էք, ինչ ասում եմ.
Թէ դուք նոցա տեսնէիք
Խաղաղ օրով, երբ քաղցրադէմ
Բըռնած կիթառն գեղեցիկ,
Փափուկ մատներն արծաթելար
Նուագարանին դիպչելով,
Պարտէզի մէջ ծաղկադալար, —
Դուք կը լսէիք անխըռով
Սիրոյ ձայնը, սիրոյ հոգին,
Հիւսած սըրտի թելերից.
Սիրե՛լ գիտէ իտալուհին,
Զըրկուած բոլոր աշխարհից:
Շուրջ ճակատով չուշանագեղ
Ծածանւում են թուխ մազեր.
Սև սաթի պէս յօնքեր շըքեղ,
Վառ աստղի պէս ջուխտ աչեր:
Դուք լըսեցէ՛ք, երբ գրւցում են—
Ամբողջ դըրախտ փափկութեան
Ձեր սըրտերը կախարդում են,
Որպէս տաւիղն Եօլեան:
Եւ ոսոխի գոռոզ հոգին
Մի՞թէ չպէտք է նուաճի,
Եւ յաղթութեան արմաւենին
Դոցա առջև տարածուի:
Իտալուհի՛ք, և ձեզ նման
Արևելքում մի անգամ,
Ձեր քոյրերը գինւորուեցան
Թշնամու դէմ անըզգամ.
Արեան գընով Հայաստանին
Գնեցին նոքա փըրկութիւն,
Եւ թաղեցին հողի ծոցին
Անմեղ ծաղկած կուսութիւն:
Մեռան նոքա. բայց կը մեռնի՞
Նոցա գործի յաղթանակ.
Դուք դէ՛պի դաշտ. մենք կենդանի
Ունինք նոցա յիշատակ:

Իտա՛լիա, աշխա՛րհ փառքի,
Դո՛ւ, քո կուրծքը զըրահով
Ամրապընդած, յաղթանակի
Կամիս պսակուել դափնիքով—
Մի՞թէ իպառ պէտք է հընչուի
Այդ ազգային զօրութիւն,
Եւ առուի պէս արիւնդ թափուի—
Հերոսներիդ սուրբ արիւն:
Մի՞թէ ձեռներն, մի՞թէ սըրեր
Քո ոսերիմ թըշնամու
Պէտք է բերեն քեզ նոր աւեր,
Եւ ստըրկանաս դարձեալ դու:
Ինձ ասացէ՛ք. ո՞վ ձեզանից,
Որի մէջ մարդու սիրտ կայ,
Չը խեղդուելով արտասուքից՝
Կարող է մնալ անըզգայ,
Տեսնելով այսքան ողբալի
Սըրածութեան աւերած,
Եւ սըրբութիւն իտալիայի
Նըշաւակով անարգւած:
Անիծում եմ չար ժամանակ,
Երբ Բուրբոնը գիշատիչ
Տընկեց այստեղ իւր դըրօշակ—
Ե՛ւ խաբեբա՛յ և մատնի՛չ:
Մի կա՛մք, մի շո՛ւնչ ձեզ օգնական.
Առէ՛ք սուսեր — և յառա՜ջ.
Դուք սիրտ ունիք ասպետական,
Յարձակուեցէ՛ք ձախ ու աջ:
Ազնիւ գործին ինքը Աստուած
Ուղարկում է իւր վահան.
Իտալիա՛, փա՛ռք անմոռաց—
Կը թընդայ ձայն փըրկութեան:
Նորից—նորից անուշահոտ
Կարձակուի քո մըրտենին.
Նոր արշալոյս, նոր առաւօտ,
Եւ աւետեա՛ց ձիթենին:
Եւ անցածիդ գեղեցկութիւն
Իւր դագաղից կը զարթնի,
Միայն աւե՛ր և պըղծութի՛ւն
Աւրատրիան կընդունի:
Իտալիա՛, դու զօրաւոր, —
Եւ կ՛եցցեն քո զաւակներ.
Իտալիա՛, ես հոգւոր
Բերում եմ քեզ իմ տաղեր.
Եւ հայի մէջ կայ կենդանի
Ազատութեան արձագանգ.
Եւ թող չասեն, որ հայն չունի
Ո՛չ ազատ կամք և ո՛չ կեանք:

Ս. ՇԱՀԱԶԻԶ

NO. 224

ԿՌՈՒՆԿ

Կռո՛ւնկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ·
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս։
Մի՛ վազեր, երամիդ շուտով կը հասնիս·
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Թողել եմ ու եկել միւլքերս ու այգիս·
Քանի որ ա՛խ կ՚անեմ, կու քաղուի հոգիս·
Կռո՛ւնկ, պահ մի կեցիր, ձայնիկդ ի հոգիս։
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս։

Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ·
Ձայնիկդ անուշ կուգայ քան զՋըրի տօլապ·
Կռո՛ւնկ, Պաղտատ իջնուս կամ թէ ի Հալապ,
Կռո՛ւնկ; մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս։

Սըրտերնիս կամեցաւ, ելանք, գընացանք,
Այս սուտ աստվորիս տէրտերն իմացանք,
Աղուհացկեր մարդկանց կարօտ մընացանք·
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Աստվորիս բաներն կամաց կամաց է՝
Մի՛թէ Աստուած լըսէ դըռնակն բացցէ,
Ղարիպին սիրտն է սուգ, աչերն ի լաց է·
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Աստուա՛ծ, քենէ խընդրեմ մուրվէթ ու քէրէմ·
Ղարիպին սիրտն է խոց, ճիկէրն է վէրէմ·
Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ·
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Ո՛չ ըզլուր օրն գիտեմ, ոչ ըզկիրակին,
Զարկած է գիս շամփուրն՝ բըռնած կըրակին·
Այրիլս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ·
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Պաղտատու կուգաս, կ՚երթաս ի սեհրատ·
Թըղթիկ մը գրեմ տամ քեզ ամանաթ·
Աստուած թող վկայ լինի քո վըրադ,
Տարեալ հասուցես զայդ իմ սիրելեաց։

Գըրեր եմ մէջ թըղթիս՝ թէ հոս մընացի·
Օրիկ մը օրեր զաչերս չը բացի·
Սիրելի՛ք, ձեզնէ կարօտ մընացի·
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Աշունն է մօտեցեր, գնալու ես թէպտիր·
Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր·
Ինձ պատասխան չը տուիր, ելար գընացիր·
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն գընա՛, հեռացիր։

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

No 225

ԾԻԾԵՌՆԱԿ

Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ,
Դո՛ւ, գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա՛,
Թռչում ես այդպէս արագ:

Ա՛խ, թռի՛ր, ծիծեռնա՛կ,
Ծընած տեղըս—Աշտարակ.
Անդ չինիր քո բոյնը—
Հայրենի կտուրի տակ:

Անդ՝ հեռու՝ ալեոր
Հայր ունեմ ես սըգաւոր,
Որ միակ իւր որդուն
Ըսպասում է օրէ օր:

Երբ տեսնես դու նորան՝
Ինձնից շատ բարև արա՛.
Ասա՛, թող նըստի լայ
Իր անբաղդ որդու վերայ:

Դու պատմէ՛, թէ ի՛նչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով՝
Կեանքս մաշուել, եղել է կէս:

Ինձ համար ցերեկը
Մութ է թըւում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտըս չի գալիս:

Ցուրտով սառ հողի տակ
Կը պառկեմ այստեղ մենակ,
Թողնելով հօրս սըրտում
Միշտ ցաւալի յիշատակ:

Դէ՛հ, սիրուն ծիծեռնա՛կ,
Հեռացի՛ր, գընա՛ արագ,
Դէպ'հայոց աշխարհը,
Ծընած տեղըս—Աշտարակ:

Գ. ԴՈԴՈԽԵԱՆ

No. 226

ՊԱՆԴԽՏԻ ՈՂԲԸ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
Իմ հայրենի՛ք, քեզ յիշելով՝ կ'արտասւեմ.
Չը կայ ծընող, չը կան որդիք, քոյր, եղբայր,
Չիք ամուսին, որ իմ ցաւերս մեղմանան:

Օտար երկինք, արև, աստղեր և լուսին՝
Թէև պայծառ՝ բայց ինձ խաւար կը թըւին,
Բնակարանըս՝ տըխուր պանդոկ օտարաց,
Օդըս օտար, ջուրըս օտար, օտար՝ հաց:

Հեռու ձեզանից, հայուհինե՛ր, տարադրած եմ ես,
Օտար աշխարհում, հայուհինե՛ր, պանդըխտած եմ ես.

Աստուած կը սիրէք, օրիորդնե՛ր, պահէք ձեր լեզուն,
Ազգ ու հայրենիք, օրիորդնե՛ր, և մեր հայոց տուն:

No. 227

ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԻՄ

ԴԱՇՆԱԿԵՑ ԳՐԻԳՈՐ ՄԻՐԶԱՅԵԱՆ (ՍԻՒՆԻ)

Adagio sostenuto. (cantabile.)



ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԻՄ
(Տարանակաբէն)



ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԻՄ
(Շարունակութիւն)



No. 228

ԱՂՔԱՏ ԿԻՆ

ԲԷՐԱՆԺԷ

Ցուրտը փչեց, ձմեռը սաստիկ,
Ձիւնը պատեց գետինը,
Ամենայն մարդ մըտաւ իր տուն՝
Պատըսպարուել ցըրտից։
Ժամի դըռնում դողդողալով
Կանգնած է մի աղքատ կին,
Նորա հանդերձ պատառ-պատառ,
Զունի չապիկ իր հագին.
Անհամարձակ նա իր ձեռքը
Պարզում է անց կացողին —
«Ողորմութի՛ւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին։»

Ձեզ, սիրելիք, ասեմ ո՞վ էր
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը տնարօրէկ
Կանգնած էր ժամի դռնումը.
Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա պատւով և փառքով
Ման էր գալիս փողոցներում
Իր սեփական կառքերով։
Այժմ վախով նա իր ձեռքը
Պարզում է անց կացողին —
«Ողորմութիւն, արէ՛ք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին։»

Թարգմ. Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Երբ անձրեւը կը կըտրի և ամպերն՝ ալ կը ցրուին՝
Գարնան արեւը ղուարթօրէն լոյս, խընդութիւն կը թափէ.
Ցայնժամ վարդ մը կը ժպտի. գո՛ւ ինքդ ես այն ժպիտը։
ԹԷՎՖԻԿ ՖԻԿՐԷԹ

No. 229

ԽԱԲՒԱԾ ԱՂՋԿԱՆ ԵՐԳԸ

Հանգիստ իմ անոյշ
Անցար գընացիր․
Միայն վէրք անբոյժ
Սըրտումս թողեցիր։

Սոխակ գեղեցիկ
Կանաչ պարտիզում,
Երգելով քաղցրիկ
Ինձ չէ գըրաւում։

Քեզանով միայն
Երջանիկ էի․
Տիկին ինքնիշխան
Ինձ կարծում էի։

Ցերեկը մենակ,
Փակուած սենեակում
Ողբում եմ անյագ—
Ոչ ոք չէ լըսում։

Գիշեր է գալիս —
Մահիճ եմ մըտնում․
Տըրտում է հոգիս․
Քունըս չէ տանում։

Մազեր թուխ, երկայն,
Աչեր գըրաւիչ․
Ի՛նչ հասակ, ի՛նչ ձայն
Ի՛նչ հոգի կըտրիճ։

Ո՛հ, սիրտըս այրուած
Ողջ քեզ է կանչում․
Ողջ քո անմոռաց
Անունդ է յիշում։

Անգո՛ւթ, ինձ խաբեց,
Ուրիշին սիրեց,
Ա՛խ, նա ինձ դեռ վա՛ղ
Պատրաստեց դագաղ։

Ս․ ՇԱՀԱԶԻԶ

No. 230

ՎԱՐԴՆ Ի ԲԱՑԻՒ

Վարդն ի բացւե Վանայ քաղքի էդէստար,
Աստուած սիրես, մէկ օրօխկի դու ձիկ տար․
Քեա՛ նազերով, քեա՛ խօրօտիկ, դու վի՞րն ես․
Աշխարհ գիտի, ալամ գիտի՝ դու իմն ես։

Վարդն ի բացւե, տռւտըման խաւ խուսոց,
Իմ եար պախչէն կայնե, երկու ձեռն ի ծոց․
Քեա՛ նազերով եյլն։

Վարդն ի բացւե տռւտըման չաղերով,
Իմ եար պախչէն վարդ կը քեաղի մաղերով։
Քեա՛ նազերով եյլն։

Վարդն ի բացւի Վարդէվըրւան կիրակին,
Քո սէր ինկե մէջ իմ սըրտի պուրակին․
Քեա՛ նազերով, քեա՛ խօրօտիկ, դու վի՞րն ես,
Աշխարհ գիտի, ալամ գիտի՝ դու իմն ես։

No· 231

ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐ

Երեսդ է լուսին նման ու զլըֆերդ ի ղատիր գիշեր·
Քնքեր բեհեշտի խնծոր 'ւ ի ծովուն տուած քեզ աչեր·
Ունէր կեռումեռ ունխս, թուխ աչեր, թարթիչդ է նետեր,
Բերանդ է լալէ փըղան՝ մէջն ի լիք է մարգարիտներ:

Քու ծոցդ Ադամայ դրախտ, մանուի խնծոր քաղէի·
Քո երկու ծըծին մէջին պառկէի ու քուն ըլլայի·
Քո գունովդ գինի պիտէր խմէի ու հարբենայի·
Հոգիս պարտըկան էի գըօղին, լօք թող գայ ու առնու տանի:

Սիրեմ զայդ սիրուն երեսդ, որ լուսին ի մօտն է գերի,
Պագնեմ զայդ բարկուկ պռկունքդ, որ չէքէրն ի մօտն է լեղի·
Թուխ աչք ու կամար ունքերդ քան զծովն կու զարնէ ալի·
Բերնիկդ է ի չիչ նման որ վարդին ջրովն է ի լի:

Աչկո՛ւնք, ծրարեմ ըզքեզ կրակով որ երթաս երխս·
Լեզո՛ւ, ա՛լ կտրեմ ըզքեզ սուր դանկով որ ա՛լ չի խօսիս·
Սրտի՛կս, ա՛լ դանակ ածեմ, արիւնին մէջն թապլտիս:
— Երբ սապռ ու համբեր չունիս, սիրոյ տէր ինչո՞ւ կու լինիս:

Իմ եար բարձրադնայ լուսին, յո՞ւր կ'երթաս գիշերդ անհուն,
Շատ յերդիք ի վար հայիս, կու տեսնես չատ կիւղէլ ի քուն,
Եւ զկոճիկս ալ արձակ արեր, լոյս գիպեր ի մէջ ծըծերուն,
Շառաւիղ յերկինս տուեր, խաւարեր լոյսն աստղերուն:

Այդ քո ստեղծողիդ համար, երբ քալես՝ զուներդ մի՛ չարժեր,
Այդ քո աչերուդ խնձերն չատ մարդու արիւն է խմեր,
Խօշ եար, արեւուդ համար, որբուկ եմ, զիս մի՛ լացներ.
Տղայ եմ, չեմ ի կենար, զի ի քո կրակդ մի՛ ձգեր:

Ա՜յ իմ նռնախալաս, որ եկիր ի մեր մահալլաս,
Եկիր ու նոր սէր բերիր, լուկ լցեր զկրակն ի վրաս·
Երթամ աղաչեմ զԱստուած, երբ եկիր նէ ա՛լ չերթաս·
Ջերեսս երեսիդ դնեմ, որ զեկած ճամբադ մոռանաս:

Երնէկ ես նրան կուտամ որ առեր իւր եարն է փախեր,
Ոնց որ զկամուրջն անցեր, ջուրն էլեր զկամուրջն է տարեր,
Ջնիկ, եղեմնիկ եկեր զռոմխուն հետքն է կորուսեր·
Առեր ի պաղչան մտեր, ցերեկով զդնչիկն է պագեր:

Ա՛մ, երեսդ է՞ր է դեղնել 'ւ երեսիդ գոյնն գնացեր·
Գէմ քո մանչն չէ մեռել կամ օտար երկիր գնացեր·
Թէ ես լամ նա հաղ ունիմ, որ գիտեմ ինչ եմ կորուսել·
Կորել է իմ հոգուս հոգին, 'ւ անհոգիկ ես եմ մնացել:

Քո ծոցդ է ճերմակ տաճար, քո ծըծերդ է կանթեղ ի վառ·
Երթամ ես ժամկոչ ըլլամ գամ լինիմ տաճրիդ լուսարար:
— Գնա՛, ծօ տղայ տղմար, չի վայլես տաճրիս լուսարար·
Երթաս դուն խաղով լինաս ու թողուս տաճարս ի խաւար:

Քանի մարն զիս բերեր, քանի չեմ խոստովաներ·
Ուրտեղ քահանայ տեսեր նա ծռեր ճամփուս ու էլեր·
Ուրտեղ մէկ աղւոր տեսել, գիրկ ու ծոց 'ւ ի դէմ գնացեր,
Ծոցիկն եմ ժամտուն արել, ծըծերուն եմ խոստովանել:

No · 232 ԿԱԼԻ ՀՈՌՈՎԵԼ (Լոռեցոց)

ԳՐԻ ԱՌԱՒ ԵՒ ԴԱՇՆԱԿԵՑ ԳՐԻԳՈՐ ՄԻՐԶԱՅԵԱՆ (ՍԻՒՆԻ)



No· 233 ՈՐՍՈՐԴԻ ԵՐԳԸ

Ar. K. M. VEBFR



ՈՐՍՈՐԴԻ ԵՐԳԸ

(Տարա-Նակա-Բէն)



Եւ այլն.

ՈՐՍՈՐԴԻ ԵՐԳԸ
(Շարունակութիւն)



No. 234 ԿԻԿՕՑԻ ՔԱՐՈԶԸ

Ականջ դըրէք իմ խօսքերուն ,
Քարոզ կուտամ ես արջերուն·
Ծօ՛ տիւք , անտա՛շ , կոշտ չինական,
Հէրիք չեղա՞ւ մընաք անբան:

Մէկ իրիշկէք ձեր քօլօղներ·
Նման են սարի սուրուխ ծէրեր ,
Ապա էստ քեադախկըներ ,
Ձե արեր են մէկ-մէկ տէվեր:

Ձիւմ իրիկուն կը ճենճըռտաք
Կուգեաք մոխրին մէջ բալկըռտաք·
Ծօ՛ , տիւք մանկեար է՞չ էք դարձե ,
Ձէ՞ Աստուած ձե մարդ ի ստեղծե:

Ճըներ կուտեն ձեր անուշ կաթ ,
Ձեր կըրածն ի անեղ կէօր-մաստ·
Է՛ , ի՞նչխ էլնի , պագի էլ թան ,
Պագի պինդթան , պագի չորթան:

Պախս օրեր խոտ , անխամ վըռօշ ,
Ինոր խամար կափէյդ ի պօշ·
Արտէն կ՚խանէք սըռսուռ ցորեն ,
Ձեր կերածն ի տարեկընէն·

Թ՛է որ խօճայ քիւրդմ՚ գայ ձեր տուն ,
Դառնաք առջեն թէօյլընկի չուն·
Հէ՛չ չէք սսե , որ մենք չէլնենք ,
Սև օր կուգեայ ինոնց գլխուն:

Թ՛է բռթընի խառնի կըռտան ,
Կը լըփըռտէք քանց գեղի չան·
Ձեր ոչխարներ կ՚ուտեն աղէք ,
Տիւք քանց ապուշ իշու կ՚նայէք:

Մարդ որ բըռթնի ձեր կուշտ նըստի ,
Կուլեա խոտու կը խեռըլլի·
Էշ կը թըրքի , կով կը կուլեի ,
Խոտն ինչի՞ ձեր մօտէն բիւրի:

Ձեր չապիկներ թէ չուն ծամի ,
Քառսուն տարի սիրտ կը խառնի ,
Վանայ մունտառ կեամու եղքեան
Քանց էն հաղար կաթ աղէկ ի:

Կ՚ասէք ըստեղ որ չարչարւենք ,
Առքեաութնին արժան կ՚էլնենք·
Արքեաութին ձե ի՞նչ , տաւա՛ր ,
Աստուած չարե իշու խամար:

Քրիստոս առջև ձեր կը քըֆրեն ,
Կ՚ասէք «Աստա՛մ , հա թո՛ղ խաճեն».
Ճուն իր տիրոջ թարաֆ կ՚էլնի ,
Քրիստոս ինչի՞ ձեր ումուր չի:

Ապա Քրիստոս էլ ի՞նչխ անի ,
Որ ձե չի տայ սադայէլի·
Ծօ՛ դըրախտ մանկեար անտէր չայիր ի
Որ էշն էրթայ մէջ թաւալի:

Հալա չատ բան պիտի ասի ,
Ամա՞ն իմ ջան գինի կ՚ուզի·
Քիչ մ՚էլ քեաւոր աղէն թէզի ,
— Էտ ի՞նչ պեղ ի , էտ ի՞նչ չէնք ի:

Որը թըռթան , որ կարմիր կեադ ,
Որն էլ ցից-ցից քանց խոզու մազ.
Էստա էլաւ չէ՞նք , էստա էլաւ հա՞լ ,
Գետին մըտնի էստա ձեր պաժ:

Մէկ իրիշկէք խոնց մազեր ,
Մանեն մէյմէկ խառնած կաժեր·
Ոճիլ մէջ՝ փայլէվան դարձե ,
Սանտըր , սապոն ե՞րբ ի տեսե:

Տ· ՍՄԻՐՋԱՆԵԱՆ

No. 235 ԱԼ ՈՒ ԱԼԻԱՆ ԵՍ ՀԱԳԵԼ

Ալ ու ալւան ես հագել ,
Կարմիր լալայ ես դառել ,
Սուրայի կըլոր մէջքըդ
Փամփուշտներով ես ծածկել:
Ախպէր ջա՛ն , քեզ ղուրբան ,
Դո՛ւ ես , դո՛ւ մեր դուման:

Ձեռքըդ թըվանք ես առել ,
Դուշմանի դէմ ես կանգնել ,
Ինձ ասա՛ , գըլխիդ մատաղ ,
Բինիշըդ ո՞վ է կարել:
Ախպէր ջա՛ն , քեզ ղուրբան ,
Դո՛ւ ես , դո՛ւ մեր դուման:

Առիւծ իշպէս կանգնել ես ,
Բեխերըդ ոլորել ես ,
Սև ; թուխ բեխերի՛դ մատաղ ,
Յաղթանակը տարել ես:
Ախպէր ջա՛ն , քեզ ղուրբան ,
Դո՛ւ ես , դո՛ւ մեր դուման

No 236

Դէ՛ ԳՆԱ՛, ԿԻԳԱՄ . .

Դէ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ չուտ կիգամ,
Նըխչուն միգարս առնիմ իգամ, չուտ կիգամ։
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Կարմիր սօլերս հագնիմ իգամ, չուտ կիգամ։
Դէ գնա՛ կիգամ, վա՛յ գնա կիգամ, չուտ կիգամ,
Խօրօտ բըճերս առնիմ իգամ, չուտ կիգամ,
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա կիգամ, չուտ կիգամ,
Գըլխուս լաչին առնիմ իգամ, չուտ կիգամ։
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Թափալիկներս առնիմ իգամ, չուտ կիգամ։
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Ապըռջաններս առնիմ իգամ, չուտ կիգամ,
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա կիգամ, չուտ կիգամ,
Միզրխ կապերն առնիմ իգամ, չուտ կիգամ։
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Էրեսոցներս առնիմ իգամ, չուտ կիգամ։
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Դեղ ու դեղգիրս առնիմ իգամ, չուտ կիգամ։

No· 237

ԼԷ՛ ԼԷ՛, ԵԱՄԱՆ. ԵԱՄԱՆ ԿՈԼԷ

Լէ՛, լէ՛, եաման, եամա՛ն, կոլէ՛,
Արե՛, էրթա՛նք մեր խաս պախչէն.
Ես վարդ քեաղեմ, դու ալուչէն,
Ես փունջ անեմ դու զարկ մախչէն։
Լէ՛, լէ՛, եաման, եամա՛ն, կոլէ՛,
Արե՛, էրթա՛նք սարն ի սէյրան,
Կարմրիկերես պլըդակս բերան,
Քո տարողի տընիկ վերան։
Արեն առե վէր խոր ծովուն
Ես քե սիրեմ աչնան խովուն,
Ջուրն ի փըռթե կուզեայ սարէն
Կուզեայ կաթի մարմար քարէն։
Էրեւանայ բերած խամեմ
Լեզուդ դիր մէջ բերնիս ծամեմ,
Քո սիրտ մէջ իմ սըրտին քեամեմ։
Վարդ կանաչ ի, քաղել չի գայ,
Եար պըզտիկ ի, սիրել չի գայ,
Շատ խօրօտ ի, թողնել չի գայ։
Դու բարակ ես, բարունակ ես,
Արեգական նըմանակ ես,
Մէջ իմ սըրտին անանակ ես։

No 238

ՊԱՌԱՒ ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ԵՐԳԸ

Թաք տանէին, տանէին
Ցախաւելը թագաւոր ընէին,
Թաք տանէին տանէին
Գոմէշը կէսրար ընէին,
Մատակը կէսուր ընէին,
Օսկու տեղ փուշ դնէին,
Իշու պոչը փիւսկիւլ ընէին,
Թընդրին չուլը քօղկ ընէին,
Նալերը պոզմախ ընէին,
Դալլէ չապիկ հագցնէին,
Իշու կաշին գուլպա ենէին,
Ջէջիմը խըրխայ ընէին,
Ծլոփը գոգնոց ընէին,
Փատէ պաշմաղ հագցնէին,
Թընդրին խուփը բարձ ընէին,
Իշուն չուլը դօշակ ընէին,
Թագ տանէին, տանէին,
Խըսիրը եօրղան ընէին,
Գոմշին կոտոշը զուռնայ ընէին,
Ալըրմաղը դըմպլիկ ընէին,
Էշը դաւուլճի ընէին,
Նախուր հարսնառ ընէին,
Կատուն սարկաւագ ընէին,
Խորոզը ժամկոչ ընէին,
Քուղան կոլոտ ընէին,
Խաչերկաթը խաչ ընէին.
Խոտի խալի փըռէին,
Խըսըրի տեղը դնէին,
Մէյմունի պէս խաղցնէին,
Վեց–օխա օր ծում պահէին
Օրը տասը ժում ծեծէին,
Թաք տանէին, տանէին:

No 239

ԱՐԻ ԷՐԹԱՆՔ ՍԱՐՆ Ի ՍԷՅՐԱՆ

Արի էրթանք սարն ի սէյրան,
Դու կընմանիս չօլի ջէյրան,
Սէֆիլ տղէն քեզի հէյրան,
Կայնի՛, սէյր անեմ, սէյր անեմ,
Ջամալ բօյիդ հէյրան եմ:
Դու ման կուգաս վէրի–վէրի,
Կրակն ինկել սիրտըս կէրի,
Քու մօրն; սաա՛ մէկն էլ բերի,
Կայնի՛, սէյր անեմ...
Դու ման կուգաս կըտրները,
Սադրի մաշիկ կըռընկները,
Գիւլաբաթին պըռընկները,
Կայնի՛, սէյր անեմ...
Դու էյեր ես կէրթաս ի բէր,
Ոչ բէրն էնի, ոչ բէրատէր,
Ինձի թողիր խեղճ ու անտէր,
Կայնի՛, սէյր անեմ, սէյր անեմ,
Ջամալ բօյիդ հէյրան եմ,
Դու կայներ ես լըւացք կանես,
Շամամ ծըծերդ բաց կանես,
Ինձ տեսնելիս սուս լաց կանես,
Կայնի՛, սէյր անեմ...

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

No. 240

ԾԻՏԸ ԵՒ ԲԱԶԷՆ

Ծիտը ծառին ծըլըլում է—
—Ծի՛ւ, ծի՛ւ, ծի՛ւ.
Բազէն գըլխին պըտըտւում է—
—Վու՛յ, վո՛ւյ, վո՛ւյ...
Ծիտը լըռեց, ծիտը փախեց—
—Վա՛յ, վա՛յ, վա՛յ...

Բազէ՛, թը՛ռռ, բազէ՛, թը՛ռռռ.
Բազէն թըռաւ,
Բազէն փախաւ,
Ի՛նչ լաւ էլաւ—
—Հէ՛—հէ՛—հէ՛...

Ծիտի՛կ, միտի՛կ, պիծի՛կ, միծի՛կ,
Պըտպըտուրի՛կ, չըլպըտուրի՛կ,
Դու լա՛ւ պըրծար չար բազէի
Սուր ճանկերից, հա՛—հա՛—հա՛:

Ղ. ԱՂԱՅԵԱՆ

No. 241

ԳԱՌՆԻԿ

— Ինչո՞ւ կու լաս դուն, գառնի՛կ:
«Խիստ ծեծ կերայ ես, մայրի՛կ»:
— Քեզ ո՞վ ծեծեց, իմ գառնիկ.
«Մէկ կախարդ ու ծեր կընիկ»:
— Ի՞նչտեղ ծեծեց քեզ, գառնի՛կ.
«Ծառին տակը գլխ, մայրիկ»:
— Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնի՛կ.
«Մեծ պասթօնով մը, մայրիկ»:
— Ո՞ր տեղդ զարկեց քեզ, գառնի՛կ.
«Ոտըներուս, իմ մայրիկ»:
— Ի՞նչպէս լացիր դուն, գառնի՛կ.
«Մէ՛, մէ՛, մէ՛, մէ՛, իմ մայրիկ»:

—

No. 242

ԱՔԱՂԱՂ

Աքաղաղը կանչում է,
—Ծուղրուղո՛ւ,
Ղու—ղու—ղո՛ւ.
Պառաւ նանը զարթնում է,
—Տա—տա—տ՛ա,
Պա—պա—պա՛...
Աքլա՛ր, ինչո՞ւ կանչեցիր,
Ինչո՞ւ նանին զարթեցրիր,
Ա՛խ դու—դո՛ւ,
Ա՛յ ջու—ջո՛ւ:
Ա՛յ նանի՛ ջա՛ն, նանի՛,
Մեզ մի՛ վեր կացնի,
Թո՛ղ մի քիչ էլ մնանք,
Քընից լաւ կըշտանանք:
Աքլարը շուտ է կանչում,
Աքլարը քեզ է խաբում.
Աքլա՛ր, ինչո՞ւ կանչեցիր,
Ինչո՞ւ նանին զարթեցրիր,
Ա՛խ դու—դո՛ւ,
Ա՛յ ջու—ջո՛ւ....

No 243

ԱՐՄԻԿ

Աղջըկէ՛ք, պ՛ար բըռնեցէք,
Արմիկի երես գովեցէ՛ք,
Ա՛յ երես, չարմա՛ղ երես,
Դու մեզ չը թողնես սեւերես:
Բարձըր սարէն պաղ ջուր կուգայ,
Արմիկի երես կը լըւայ.
Ա՛յ երես, արև երես,
Քո շափաղով մեր սիրտ կերես:
Աղջըկէ՛ք, պա՛ր բըռնեցէք,
Արմիկի աչեր գովեցէ՛ք
Ա՛յ աչեր, սիրուն աչեր,
Արևի պէս փայլուն աչեր:
Արմիկի աչերն արեգակ,
Մեզի կուտայ յոյս ու կըրակ.
Ա՛յ աչեր, նախշուն աչեր,
Մեզի համար հըսկուն աչեր:

Ղ. ԱՂԱՅԵԱՆ

No· 244

ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐ

Հիւանդ եմ ի քո սիրուդ, ա՛ռ խնձոր արեկ գլխ տես,
Արեկ նիստ ի բարձիս վեր, ու ձեռքդ տար ու գիմ սիրտն տես·
Զիմ ցաւուն դեղն դու գիտես, ինձ օտար հեքիմ չի բերես.
Թէ նեղ է նա դեղ արա, թէ չէ լից զնոր սէրդ ալ ի ներս։

Գիշե՛ր, դու յերկան կեցիր, թէ կարես տարեկ մի եղիր,
Իմ եարն ինձի հիւր եկեր, գէմ հազար տարու՝ թէ գիտես·
Առաւօ՛տ, դու ի գառ կեցիր, որ զմեր խաղն կ՚աւերես,
Գաս գլոյն ի վերայ բերես, զիս իմ եարէս բաժանես։

Ով որ ճերմակ ծոց ունի, թող կապուտ չապիկ հագնի,
Կոճակն այլ արձակ թողու, ով տեսնու՝ սրտիկն արունի·
Երթամ աղաչեմ զԱստուած՝ լեղակին հունտն հատնի·
Ոչ նա այլ կապոյտ հագնի, ոչ մանկան սիրտն արունի։

Ծառայ քո դնչին մեռնիմ, որ ճերմակ է զէտ կարագ եղ·
Երեսդ է կարմիր զէտ վարդ, պռունկներդ է պաղնելու տեղ·
Օնքերդ ես ի վեր քաշել ի վրայ բերել զէտ աղեղ
Աչուերդ է ի ծով նման, ուր հազար ձուկ կայ ի լեղ։

Սէրն երբ ի յաշխարհս եկաւ, եկաւ իմ սիրտս թառեցաւ,
Հապա իմ սրտէս ի դուրս՝ յերկրէ յերկիր թափեցաւ·
Եկաւ ի գլուխս ելաւ, և յըղեղս ելաւ թառեցաւ,
Աչիցս արտասունք ուղեց նա արին ի վար վաթեցաւ։

Այս առաւօտուս լուսուն, դայր ջրէն ձայնիկն զզզուն,
Այն իմ պէօֆայ եարին ձայն անուշ էր քան զամենուն·
Բարակ սիրոյ տէր մարդուն՝ ինքն ու եարն մէն ի քուն,
Պագ տան ու պագ առնուն, զօլայն էն մէկալ գիշերուն։

Այդ ո՞վ է որ երդիքս եկել որ օտար հողն կու սորայ,
Թէ իմն ես նէ վար արի, թէ օտար ծաղիկ նա՝ գնա՛։
— Ո՛չ քուկն եմ ի վար գալ, ոչ լերան ծաղիկ գնալու·
Եկեր եմ սիրուդ առեր, ո՛չ գալու եմ, ո՛չ գնալու։

Ես աչք ու դու լուս, հո՛գի, առանց լուս՝ աչքն խաւարի·
Ես ձուկ ու դու ջուր, հո՛գի, առանց ջուր՝ ձուկն մեռանի·
Երբ ձուկն ի ջրէն հանեն ջուր մըն ալ ձգեն նա ապրի·
Երբ զիս ի քենէ զատեն՝ քանց մեռնիլ այլ ճար չի լինի։

Եմ եա՛ր, դու յերդիկն ի քուն, ծոցդ լոյս տայ աստղերուն·
Կամ ա՛ռ զիս ծոցդ ի քուն, կամ տէսթուր տուր երթամ ի՛տուն·
— Ո՛չ կ՚առնում ի ծոցս ի քուն, ոչ տէսթուր տամ երթաս ի՛տուն·
Հանցեղ երերուն պահեմ, մինչ որ գայ լոյսն առաւօտուն։

Այս աստվորիս վերայ, դու մատնի, ես ակն ի վերայ.
Դոր որ պաղ աղբիւր մի կայ, դու կանանչ, ես ցօղն ի վերայ·
Խնծոր ես ծառին ճղին, ես կանանչ թփիկ ի վերայ·
Վախեմ թէ աշունն գայ, դքեղ քաղեն, թուփս չորանայ։

Ես մեռնիմ ի քո վերայ, դու զքո ծամդ կորես,
Կորես մաշալա վառես, ձեռքդ առնուս ու զիս փնտռես,
Կամ ի հողվերօքս անցանես, հետ ընուս զաչերդ ու թափես,
Գրկիկ մը վզիս ածես, զապառած վէմդ համբուրես։

Քանի՛ ու քանի՛ կ՚ասեմ թէ հերի՛ք ղահր տաս ուտել ·
Ձեռքունկս ի ծոցիկս ի վար քու տարտէդ արիւն է հոսել ·
Մըսիկս է լեղի դարձեր, շըներուն կու ձգեմ, չեն ուտել ·
Հիմա քո արեւդ ասեմ, քանի՛ դու մեզ ես պիտացել ։

Իմ եարն է քարամ արել ու խրկել զմեզ հարցուցել ·
Տէրտեր այս մեր շատ սիրուն, ա՜յ հոգեկ, ո՞նց ես դիմացել ։
— Իմ եա՛ր, քո արեւդ ասեմ, միս չունիմ, ոսկերքս է մաշել,
Կաթիկ մ՚արիւն ունիմ, քո սիրուդ ան ալ ցամաքել ։

Ա՜յ իմ նշենի ծաղիկ, դեղնեցար ու դարձար ի նուշ ·
Բերանդ է փոքրիկ անուշ, պռկներդ է ամպրաւ ու նուշ ·
Այն օրն ի մօրէդ ծընար, դուն լայիր ՚ւ ամէն խնդային ·
Հանց մաքուր ել ի յաշխարհէս, թ՚երկիր լայ նա՝ դու ծիծաղիս ։

Ամուր եմ քարիդ նման որ մուրճիկն ի յիս չի բանի
Բարձր եմ թուխ ամպիդ նման որ ոչ ով ի յիս չի հասնի ·
Աղեղն եղնենի լինի ու լարն ի վերայ դալենի,
Բաշողն քաջորդի լինի, հապա թէ իմ սիրուն հասանի ։

Պլպուլն ի ծովին միջին ի օձուն բերանն ու կ՚ասէր
— Թող ես եմ ի յայս հալիս, թող իմ վարդն գէշ չքաշէ ։
Վարդն ալ ի փշի միջին սուտ քուն էր՝ զայն կու լսէր,
Լուկ իւր շարեղէն շապիկն ի չորեք դիմաց կու խզտէր ։

Անցայ ու տեսայ իմ եարն ի վերայ խալուն նստած ·
Ասի՝ «կու սիրեմ զքեզ» · նա ալ իր պռունկն ի խած
— Կորիճ, կու սիրե՞ս դու զիս, մի՛ աներ շատ խալխի իմաց.
Թէ չէ նէ կ՚ելնես գլխուդ, արեւուդ ու ալ շատ իրաց ։

Փաղոցովդ ի վար կուգի ծուռումուռ հազար սօխախով,
Իմ եարս ինձ դէմս ելաւ լօք բարով երես հէճապով.
Գիրկ ածի ու պինդ պագի զիր աչերն ի խիստ կարօտով.
Կ՚երթար ու կ՚ասէր լալով թէ՝ «ի խաղք եղաք ցորեկով» ։

Վազվընէ քնից վեր ելայ, թէ երթամ յիմ եարն ի բարեւ.
Խօշ եարս ալ ի դէմս ելաւ, իւր երեսն էր վարդ ու տերեւ ·
Վարդն ալ խօշ լէզէթ ունի՝ վազվէնէքն երբ դպչի արեւ,
Հանէ զիւր կանանչ կապան, լուկ հագնի զկարմիրն ի վերեւ ։

Զայդ պագդ ի որ ի քո բերնէն դու տուիր քո սրտի կամով,
Հանցեղ անուշիկ պտուղ ո՛չ ցամաք երկիր կէր ՚ւ ո՛չ ի ծով ·
Նման էր այն պտղոյն որ Ադամ կերաւ խաբանօք,
Կերաւ ի դրախտէն ելաւ. ես ի քո ծոցոյդ կարօտով ։

Ծիրին է լեզուդ անուշ, պըռկներդ է ամրաւ ու նուշ ·
Բերանդ է փոքրիկ ՚ւ անուշ, չարկմիդ աչքն հազա՛ր փուշ ·
Իմ եարն ի յինէ գնաց, լեռ ու ձոր հաւսար հետըն լաց ·
Երկինք ու գետինք թնդաց, աստղունք մէկ մըն չը մնաց ։

Գիշերս ես ի քուն էի, քունս ի ներս սրտիկս երեւցաւ,
Եկին ու բերին խապար՝ «Քո սիրած եարն զքեզ մոռացաւ» ։
Մանկտի՛ք, ձեր արեւդ ասեմ, լսեցի՝ լեզուս կապեցաւ ·
Շունով դեղ ու ճար արէք որ չասեն թէ յանկուծմէն մեռաւ ։

Հանցքուն եմ ի քո սիրուդ զինչ ամպերն կ՚առնուն շառափ,
Զայդ երկիրն ամէն գիտէ · սիրոյ տէր եմ հետ քեզ խարապ ·
Այս իմ նենգաւոր աչերս չի կենար մէկ պահ մը պարապ,
Կուլայ զօրն զքեզ կ՚ուզէ, չի առներ այլ մարդու տալապ ։

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

No. 245

ԵՐԱԶ

Ո՛հ, լոկ երազ էր, մի՛ խռովէք ինձ,
Իմ մոլորութեան քա՛ղցր պատկերներ,
Ինձ չէ թոյլ տուած երկաթի կեանքում
Խընդալ, վայելել ոսկի րոպէներ:
Մի՛ յիշեցնէք, մի՛, այն զգացմունքը,
Որով լցուած էր սիրտըս ու հոգիս,
Որով շընչեցի, որով ապրեցայ,
Ինչպէս մի ծաղիկ զըգուած զեփիւռից:
Այդ մի երազ էր... կամ դէթ առաչօք,
Որ կըրակ ձգեց սըրտիս մէջ անմար...
Թըշնամի վըհուկ, երևի, կախեց
Աչքերիս վերայ բըժժանք անհամար....
Ինձ այն ժամանակ քանի՛ ու քանի՛
Երևեցաւ «Նա» այն ծառերի տակ,
Մինչ՝ լիալուսին խոր գիշերի մէջ
Երգում էր ուրախ, անհոգ, մայնակ:
Ես տեսայ «Նորան», բայց մի այլ տեղում —
Յաւերժահարսի ունէր կերպ ու ձև,
Թըռչում էր, շարժւում օդի մէջ, այնպէս,
Ինչպէս մի փետուր—առաւե՛լ թեթև:
Մի անգամ տեսայ - Աթենասի պէս,
Զըրահաւորուած զինուորի զէնքով,
Մի ամբողջ խըմբի տալիս էր հրաման
Իւր ձեռքի բռնած թեթև հրացանով:
Ես տեսայ դարձեալ, մի ուրիշ անգամ,
Մինչ անհոգ, ուրախ, խաղացած տեղից
«Նորան» բռնեցին, որպէս մահապարտ.
Ի՛նչ անմեղութիւն, ի՛նչ հայեացք աչքից...:
Մինչ ոտքից գըլուխ սպիտակը հագած
Դիմում էր տըխուր դէպի պատժարան,
Սաթի պէս մազեր անհոգ արձակած,
Արցունք թափելով հեղեղի նըման:
Մինչ գըրպարտողը խոստանում էր կեանք,
Միայն թէ հաճէր... լինել համաձայն՝
Այն ի՛նչ շընորհ էր, որ կաթեց մատից,
Որով ցոյց տուեց երկինք ժանտին այն:
Ո՛հ, մի այլ անգամ, ի՛նչպէս փըրկեց «Նա»
Աւազակներից մի անմեղի կեանք.
Առանց խօսելու, համըր նըշանով
Վըտանգի ժամը յայտնեց բացարձակ:
Ի՛նչ կարեկցութեամբ, ի՛նչ անմեղ սիրով
Թունալի բաժակը տեղափոխեց «Նա»,
Որով դաւաճան թունաւորելով՝
Թըմրեցաւ, մընաց աթոռի վերայ:
Ո՛ր մինը յիշեմ... ես տեսայ դարձեալ,
Մինչ դուրս էր գալիս ծովից լայնարձակ,
Հազար պըչրանքով, քընքուշ շարժմունքով,
Ջըկնորս էր որսում, սըրտով համարձակ:

«Նա» խոստանում էր նորան անմահ կեանք.
«Նորան» սիրելը էր անմահութիւն.
Ես տեսայ, ինչպէս ձկնորսը ուրախ
Վայելում էր մի ճոխ արքայութիւն:
Վերջին անգամն էր, աւել չը տեսայ,
Գնում էի ծովով հեռաւոր աշխարհ...
Երկինքը մըթնեց, մըրրիկը սուլեց,
Որոտ, փայլակը անթիւ փայլակեց:
Սարերի նըման մեծ-մեծ ալիքի
Կատաղած ծովին եղած խաղալիք,
Գալիս էր մի նաւ, ջարդուած կայմերով,
(Առաջ մեր նաւից տեսան նաւաստիք):
Եկաւ մօտեցաւ նաւը մեր նաւին.
Ի՜նչ սիրտ կըտրատող մի պատկեր էր այն,
Թըշուառ, յուսահատ իբր անխել նաւորդք
Կորուսել էին և յոյս փրկութեան:
Նաւորդների մէջ ես տեսայ «Նորան»,
Բըռնել էր կայմից խելքը կորուսած,
Ինչպէս յուսահատ անմեղ աղաւնին,
Բաղէի աչքից անդութ հալածուած:
Անդունդի վերայ այսպէս քանի ժամ,
Օրօրաց, ճօճաց տարաբաղդ նաւը.
Գիշերը կոխեց... կայծակը թընդաց...
Կուլ տըւեց բոլոր անյատակ ծովը...
Կայծակի թունդը, ձայնը մըրրկի
Խուլ աղաղակը կատաղի ծովի
Միախառնեցան վերջին ձայնի հետ,
Որ արձակեցին այնքան շատ հոգի......
Մըրրիկը անցաւ, ծովը հանդարտեց.
Շատ հեռի չէինք մենք ծովեզերքից...
Ջըրեղէն դաշտում, դեռ նոր խաղաղած,
Մի սպառաժոտ կըղզի երևեց:
Ահա՛ «Նա» դարձեալ՝ ծովում լողալով
Դիմում է դէպի քարքարոտ կըղզին,
Տեսնում ենք «Նորան»....բըռնեց քարերից,
Եւ շուտ վեր ելաւ իբր անխիթ մարմին:
Ցօղնած, ուժաթափ, մինչ վեր բարձրացրեց
Իր արտասուքով լըցուած աչերը,
Ահա լուսինն ամպերի տակից
Դուրս սողաց տեսնել «Նորա» երեսը:
Ես շատ նայեցայ... բայց մեր նաւն արագ
Վազեց դէպ առաջ... կորաւ իմ աչքից...
Եւ այլ միւս անգամ մինչև այս րոպէս,
Կամ դուցէ յաւերժ զըկւեցայ բախտից...:
Չէ՛, այն երա՛զ էր... հեռի՛ ինձանից...
Խօլական ցընո՛րք, հոգի գիշատող.
Թողէ՛ք ինձ հանգիստ մաշել իմ կեանքը,
Եւ խաղաղ սըրտով մըտնել դէպ ի հող...:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

No. 246

ADA NEGRI

ՇՐՋՄՈԼԻԿ ՏՂԱՆ

Երբ տեսնում եմ ես, որ կեղտոտ, սիրուն
Թափառում է նա ցեխոտ փողոցում,
Ցրնցոտի դարձած ժաքէթը հագին,
Կօշիկը ծակած, դէմքը քըմահած.

Երբ տեսնում եմ ես, որ հին չալմարով
Կանգնած է դըրսում, սայլերի մէջն
Ու քար է նետում անցնող շըներին,
Թէ գող է արդէն, լըկտի, սըրիկայ.

Կամ մացառում է ուրախ ցատկոտում
Բացուած խեղճ ծաղիկ, և խորհում եմ թէ
Աշխատանոցումն է մայրը բանում,
Թէ խուցը դատարկ, իսկ հայրը բանտում,

Իսկոյն մի խոր վիշտ ճընշում է հոգիս,
Եւ ասում եմ ես. — ի՞նչ վերջ կ'ունենաս,
Շըրջմոլիկ տըղայ, տըգէտ, ցընցոտուն,
Դո՛ւ, որ աշխարհում անտէր ես, անտուն.

Աղքատ խըրճիթի ուրախ երգեցիկ,
Ի՞նչ ես լինելու քըսան տարեքից.
Մի խարդախ ըստո՞ր, թէ՞ կայտառ բանւոր,
Կամ դուցէ դառնաս դըրպաններ կըտրո՞ղ:

Արդեօք կը հագնիս արհեստաւորի
Համեստ վերնազգե՞ստ, թէ՞ թիապարտի
Անպատիւ հագուստ. աշխատանոցո՞ւմ,
Հիւանդանոցո՞ւմ, բանտո՞ւմ կը լինիս:

Ո՛րչափ կ'ուզէի իջնել հէնց փողոց,
Վըշտի, գըթութեան և հոգեվարքի
Սուրբ ու գերագոյն գըրկախառնութեամբ
Սեղմելու նըրան իմ կըրծքի վերայ:

Բոլոր համբոյրներս կ'ուզէի մէկից
Դընել շըրթունքին, դընել իր կըրծքին,
Եւ եղբայրական սուրբ սիրով լըցուած
Կ'ուզէի մընչել խեղդուկ հըծծիւնով —

Ես էլ եմ ապրել սուգով, տանջանքով,
Ես էլ մացառի ծաղիկ եմ թըշուառ,
Իմ մայրս էլ մաշուեց աշխատանոցում.
Ես վիշտ եմ տեսել, ես սիրո՛ւմ եմ քեզ:

Կ'ուզեմ լինալ, սիրո՛յ բուրվառ՝
Անբիծ կոյսի բազկաց մէջ,
Եւ՝ քաղցրաբոյր խունկի մը յար՝
Մըխա՛լ այնտեղ միշտ անշէջ...:

Ա. ՏԽՐՈՒՆԻ

No. 247

ՑԵ՛Տ ՏԱՐ ՔՈ ԽԱՉԸ

Անծա՜յր տափարակ... գետինը սառած,
Ձեան կարծըր շերտի հիւրընկալ գըրկին,
Դէմքը ցաւագար, խընամքով ծածկած՝
Լո՛ւռ մըտարում է վիշտն անմեկին...
Բըքաշունչ քամին վազում սանձարձակ
Ոռնում է, ճըչում... կամ պաղ թևերով
Ծեծկում է գետնին և իր անգունակ
Հին կըսկիծները երգում է լալով.
Գորշ մառախուղը տըձև փեշերի
Ծալքերըն երկնում համարձակ ձըգել,
Ծածկել է չըքնաղ լուսնի, աստղերի
Լուսաբեր ցոլքը — ազա՛տ, անարգե՛լ...
Եւ ահա հեռուից ինչ որ մութ գըծեր
Սևին են տալիս, ճօճում անհաստատ,
Ճօճում, երերում՝ կ'ասես ագռաւներ
Քաղցից չուարած, ծարաւ կամ քընհատ:
Եւ դաշտավայրի ըսպիտակ կըրծքին
Որպէս չորացած վէրքերի սպիներ —
Այն սև գըծերը լուռ և մոլեգին՝
Տագնապ են ազդում, սարսուռ ահաբեր...
Ահա կանգ առան... խառնուեցին իրար...
Մի խո՛ւլ հարուածից տընքաց ու դողաց
Ամայի դաշտը... քամին թևահար
Պինդ փարուեց երկրին, քարացած մընաց:
Եւ մի սոսկալի, խօլ հեկեկանքի
Խեղդած հեծկըլտանք տարածուեց դաշտում,
Մի ամօթապարտ, մեղսոտ պատրանքի
Դիւային քըրքիջ շըշընչաց օդում:
Ու ալեկըտուր լալագին վըշտի
Հոգոց դուրս թըռաւ երկրի երեսից,
Եւ սևին տըուեց սև յաղթանակի
Գարշելի փառքին պատրաստուած մի ցից...
Ամենքը լուռ են... Մի լուռ պատմութիւն,
Մարդկային կեանքի մի հըսկայ հոսանք.
Ապրածի վերջը, նորի յայտնութիւն,
Դարերի ճընշման պոռթկումի թափից
Ըմբոստ վիժուածքը տառապանքների,
Անարգ բըռնութեան սուր ճիրաններից
Նորածիլ սաղմը ազատ մըտքերի,
Հաւասարութեան միակ փըրկարար
Վեհ գիտակցութեան ծնունդըն հըսկայ—

Օրնիբուն փըտող, անվերջ հողմահար
Տիրող կարգերի լուծըն արճիճեայ՝
Կանգնեցին անխօս, դէմ առ դէմ այնտեղ —
Այդ ոչընչացման տըխուր հանդէսի
Սոսկալի ժամին... այն ժամին ահեղ,
Երբ սոսկ մարմնացած դա՛րը կը խօսի...
. . . .

Քամին դողալով շոյում է, գըգւում
Այն լուռ դէմքերին. և իր վըշտահար,
Մենակ, անընկեր կեանքից անխընդում
Պատմում է նըրանց, լալիս անդադար:
Նա մերթ քըծնելով սև փարաջայի
Երկար փեշերն է վախկոտ փողփողում,
Եւ այն ծեր ձեռքում բըռնած սառ խաչի
Շուրջը զարմացած գալարւում, խաղում:
Նա մերթ այն դաժան դէմքերից ցասկոտ
Թըռչում է հեռուն ու սիւնին դիպչում,
Կամ սիւնին կապած էակի թախծոտ
Այրուող ճակատը պաղ թևով շըփում:
Թըշուա՛ռ էակի... նըրան վերցըրին
Մի պայթած ռումբի փըշրանքների մօտ՝
Ուրտեղ փորուել էր — իր ջահէլ կեանքին,
Ջախջախուած մարմին առանց ձեռ ու ոտ,
Բըռնութեան ճընշող հաճոյք'ն յարմար
Մի անդարձ անդունդ — ըմբոստի համար...
Եւ ահա ինքը՝ մարդկութեան որդին,
Տառապանքների, անարգ բըռնութեան
Ըմբոստ մարտիկը — իր նըմաններին
Փըրկելու համար եղաւ կախաղան:
Ի՞նչ հոգ խաւարի սև հոգիներին
Որ նա կէս մարդ է... որ նա տըրորուած
Արիւնաշաղախ մի վիրաւոր մարմին,
Սպիների մի ցանց, ձեռք—ոտք կորցըրած...
Չէ՞ որ թըշուառի խիզախ կըրծքի տակ
Դեռ տըրոփում են զարկերը վերջին,
Այն ըմբոստ հոգու տենչըն անխորտակ,
Ցաւեցած վրէժի ցոլք կայ աչերին.
Չէ՞ որ արնաքամ, չորցած շըրթերում
Արհամարհանքի խաղում է ժըպիտ,
Ու մի ըստահակ, գոհունակ խընդում
Տիրում այլանդակ մարմընին վըտիտ...
Հա՛, կատարուե՛լ է... պէտք է մեռցընել
Բախտաւորներին արհամարողին.
Պէտք է շո՛ւտ խեղդել, արմատից խըլել
Ըմբոստ խըլըրտման ծիլերը վերջին...
Եւ ահա թըշուառ դատապարտեալին
Լուռ մօտենում է ծերուկ քահանան՝
Ըստրուկի շղթան փըշրել ուզողին —
Համբուրել տալու հաւատի շըղթան...
Ցե՛ս տար քո խաչը.

Ցե՛ս տար քո խաչը — գործիքըն յարմար
Անվերջ կեղծիքի, լըպիրշ քըսութեան․
Անխախտ պատճառը արուած ոտնահար
Ամէն մի տենչի թըշուառ մարդկութեան:
Ցե՛ս տար ազգերի տխուր կապանքի —
Վեհ ձըգտումների, սուրբ ճըշմարտութեան,
Գիտակից մըտքի — ազատ փայլերի,
Շաղկապ իդէալի — հաւասարութեան,
Եւ սատանական անվերջ ջարդերին,
Անմեղ զոհերի անգութ ըսպառման՝
Վաղո՜ւց կեղծըւած ժանգոտ բանալին:
Ցե՛ս տար մոլեռանդ, անմիտ ու անհամ
Կեղեքիչների զէնքը քառաթև՝
Որ պաշտուեց երկա՛ր, երբ ամէն անգամ
Տընքում էր մարդը — մըտքով կո՛յր. անթև՛...
Ցե՛ս տար... նըրանից արիւն է ծորում,
Վազում արցունքի, շարաւի հեղեղ,
Բիւրաւոր, անթիւ զոհերի լըքում —
Ղօղանջում մահուան նըզովքով ահեղ...
Ցե՛ս տար — տրորուած ըմբոստ գանգերի
Տաք-տաք, բաբախուն, արիւնաշաղաղ
Թարմ ուղեղներից հաւատողների
Կոփանքի սալը — և խաչդ՝ աւա՜ղ...
Ահա՛ մեր խաչը — սև սիւնը անարգ
Փըրկութեան համար հանուած Գողգոթա,
Ահա և ինքը՝ նոր լոյսի զաւակ,
Որ ազատութեան հարթում է ճամբայ...
Բըքաշունչ քամին վըշտից կարկամած
Ոռնում է, ճըչում. իր պաղ թևերով
Ծեծկում է թըմբին, կոյսերի սառած,
Արնոտ փըշրանքը գուրգուրում լալով...

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆԵԱՆ

Ամպի մը տակ լուսինն յանկարծ կը մարի.
Կը լռէ հովն, ամէն աստղեր մի առ մի
Ասուպ կ'ըլլան, կ'ըլլան վարդերն ալ՝ վէրքեր:
Ո՛վ անանուն շիրիմ, դու որ անտարբեր
Ու երազկոտ կը նայիս դէպի երկին՝
Մարդիկ այս օր, ո՛հ, գիր առ գիր ջնջեցին
Այդ բառը քու քարիդ վրայէ սրբազան,
Ահա՛ ինչո՞ւ թէ ճերմակ է մնացած ան:

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

No. 248

ԹԻՖԼԻՍԵՑՈՑ ԳԱՆԳԱՏԸ

Տեհար մէկը շլապայով,
Բաշած ձեռին շան կաշին,
Ծուշի կլոտրն աչքերին,
Լուս ընկաւ քո առաջին։
Էսենց է, մօդա է, մօդա է, մօդա է։
Պետերբուրգումը միթօմ
Աւարտիլ է իր ուսում,
Փիլիսօփայ է, կօսես,
Խուրը տրկէմէն է խօսում։
Էսէնց է, եէ։
Մէկ էլ տեհնում իս պուչը
Թուև է տալիս ղայրաթով,
Կօսիս քուչի ալլիլը
Վիր է կալել փուղրաթով։
Մէկ էլ տեհնիս բըժիշկը
Իւր վիզլիթի փուղն առած՝
Դեռ ինքն էլ տուն չը հասած՝
Հիւանդն էլ յետնէն մեռած։
Մի ձեռը նա փըքուելով
Ունի չալուարի ջիբում,
Կոտրատուելով միւս ձեռով
Իւղած մազիրն է քօքում։
Ու բերանում ծըխելով
Սատանայի բուրվառը,
Մէջքը կոտրած կատուի պէս
Երբ չափում է բուլվարը։
Մէկն էլ ոչխարի նըման՝
Էղնէն կախիլ է դըմակ,
Կօսիս դարբնի մեծ փուքսով
Փըչած ըլին իր քամակ։
Ա՜խ էն դամբի պէս գործած
Էրէսների էն քուղը,
Սապոկների ճըռճռոցը
Բանդում է իմ ըղուղը։
Ջիմ կանացի, հա՜յ Աստուծ,
Բարկութիւնը իմ սանձել,
Ըսկըսում եմ վա՜յ տալով
Միր կնանիքն անիծել։

ՐԱՖՖԻ

No. 249

ՀԱՅԵՐՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Էս հակոտնեայ աշխարհում
Ամենայն ինչ է փոխուել,
Կըրօնք, լեզու, ազգութիւն,
Մօդայի է վերածուել։
Էս ի՞նչ է — մօդա է։
Հայ պատանին թէ տեսս,
Օ՜, նա գիտէ ամէն բան.
Դատարկ գըլխով փաթաթէս,
Խօսքով փըրկէ Հայաստան։
Էս ի՞նչ է, եէ։
Եկեղեցի գընալիս՝
Բաֆէ–շանթան է կարծում,
Ոտքը ոտքի վըրայից
Նա երբեք վար չէ առնում։
Մէկ էլ տեսնես փողոցում
Ոսկի ակնոցը քըթին՝
Անգլիերէն է ջարդում,
Բըծնող ժըպիտն երեսին։
Հայ տիկինը իր զաւկին
Անգլիերէն է խօսում,
«Պապա, մամա, գուդ–մօրնինգ.»
Անպէտ թութակ է դարձնում։
Հայ քարոզիչ–պատուելին
Հայաստանն է մոռացել.
Վարդան, Ներսէս, Սահակին
Նա երբեք չէ քարոզել։
Հայհոյում է Րաֆֆին.
Նորան սրիկայ է կոչում.
Դըրանց փոխան Հիչքօքից
Իւղոտ ոռճիկ է գանձում։
Դուք չէ՛ք տեսնի վարդապետ
Լայն մօրուքով ու վեղար,
Հագած ունի «Պրէնս ալբէրտ»
Ու սիլինդրը չողահար։
Նա չէ պահում և մեծ պահք,
Ա՜խ, ըստամոքսն է տըկար.

Բայց ամբիոնից պահք ու ծոմ
Քարոզում է անդադար։
Հայ օրիորդ նազելի,
Օ՜, շատ սիրում է ռոման.
Սենեակումը հայելի՝
Դէմքն է դիտում անպայման։
Նա չէ սիրում հայ տղայ,
Սա կարճ է շատ, միւսը ցած,
Դա տգեղ է, նա աղքատ,
Աչքն օտարին է տընկած։
Թէ ուզում ես բախտ չինել,
Ճաշրանապետ կը լինես,
Բայց քիչ օրից անպատճառ
Շունչդ Եգիպտոս կը քաշես։

Ճաշարանում չիք պարոն
Կոկոզավից, Թեթեւիկ,
Այնտեղ պառկում է և ուտում,
Վճարում է ապառիկ։
Եւ խօսում է ալամօտ,
«Պօնժուռ միւսիւ» քեզ կ'ասէ.
Բայց հէնց իր պարտքն թէ ուզես՝
Քիթն ու բերան կը կախէ։
Մէկ էլ տեսնես երկու հայ
Ընկերութիւն են կազմել,
Բայց հաշիւներ քըննելիս՝
Իրար գլուխ են պատռել։
Էս ի՞նչ է — մօտա է։

Ա. ՑՈՎԱՍԷՓԵԱՆ

No. 250

ԾԱՄԹԵԼ

Իմ գըլխու փաթէն կիտամ,
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
Լողվորի մէկ լէ ես եմ,
Ձեմ խանա ծամթելն ի ծովէն։

Իմ գըլխու չարար կիտամ,
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
Լողվորի մէկ լէ ես եմ,
Ձեմ խանա ծամթելն ի ծովէն։

Եար ունիմ, եար ունիմ,
Եարըս եօթն ախպէր ունի.
Եար ունիմ, եար ունիմ,
Եօթ լէ գացած բանելու։

Իմ վըզի վըզնոց կիտամ,
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն,
Լողվորի մէկ լէ ես եմ,
Ձեմ խանա ծամթելն ի ծովէն։

Իմ սերսուփ ծամեր կիտամ,
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն,
Լողվորի մէկ լէ ես եմ,
Ձեմ խանա ծամթելն ի ծովէն.

Եար ունիմ, եար ունիմ,
Պախչիս միջին վարդի ծառ.
Եար ունիմ, եար ունիմ,
Վարդը քաղեմ՝ արի՛ տար։

NO. 251

ՆԴԻԱՐԴ (ԼԷՕՆ) ՊԱԼԱՊԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Երկինքը գոռաց, չանթեր պատռեցան,
Մէկ քանի վատեր ինկան կայծակէն,
Վասակի դանկը եղաւ ցիրուցան
Հերոս Եդուարդի նետած գընդակէն:

Վասակ-Ծառուրի մահն անարգական
Զըր յաղեցուց ընաւ Լէօնի հոգին,
Մինչ հուժկու բազկով նորէն առնական
Հարուածն իջեցուց ժանտարմ, փօլիսին:

Բայց հասաւ նոյնպէս իր վերջին օրհաս,
Զուցեց ան մեռնիլ թըշնամու ձեռքով,
Վերջին փամփուշտ մ'ալ կեանքին դեռահաս
Վախճանը դըրաւ՝ կըրծքին մըխելով.

Անցաւ հերոսը. բայց իր վեհ հոգին
Կը հըսկէ արթուն՝ երկընքէն անշեղ,
Սպասելով օրւան, երբ հայ աշխարհին
Ծագէ փըրկութեան արփին հրաշագեղ:

Երանի՛ քեզի, հերոսդ աննըման —
Քանի՛ մանուկներ, կոյսեր նազելի
Պիտ դափնիք հիւսեն քեզ անմահութեան,
Երգելով փառքըդ յաւէ՛տ խընկելի:

Յ. ԹՈՔՍԱՃԵԱՆ

No. 252

ՄԵՆԱԿԻ ՆԻԻՐԱԿԱՆ ՍՏԻԵՐԻՆ

Բոցիկու սարին սև ամպն է չոքեր,
Հովն է հեծեծում Բասենի դաշտում,
Ոսկի երգերըդ, իմ աղիղ ընկե՛ր,
Էն հովն է երգում Բասենի դաշտում:

Քաջ ընկերներով կռուի սըլացար՝
Աղւոր երգերով Արագի դաշտում.[ցար
Նամարդ թշնամուն զարկիր, զարկե-
Ընկերներիդ հետ Բասենի դաշտում:

Ու ժողովուրդը կարօտ քո սիրուն,
Բասենի դաշտից մինչ Ալաթ ու Մուշ
Երգում են անվերջ երգերդ սիրուն,
Ու չեն մոռանում երգերդ անուշ:

Ախ, սուրբ վէրքերով ընկերներիդ հետ
Արնոտ հողի տակ անուշ քնեցիր,
Թո՛ղ ծանրը չթւայ այն հողը վըրէդ,
Որ այնպէս հըզօր, անհուն սիրեցիր:

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

No · 253

ԵՂԻԱԶԱՐ (ԶԱՐՄԱՅՐ) ԲԱՄԲԱԿԳԻԶԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Էրնէ՛կ, քե՛զ, ընկե՛ր, որ ապրիլ գիտցար
Մինչ հաւատարիմ քո վեհ սկզբունքին,
Տուն, տեղ, ընտանիք նոյնիսկ դու մոռցար,
Զոհ բերիր կեանքըդ սուրբ գաղափարին։

Մութ, մըռայլ բանտի ո՛չ անուր շըղթան,
Ո՛չ բըռնապետի խուժդուժ չարչարանք,
Ո՛չ էլ ոսոխներիդ յօշյօշ կըտրատում
Երբե՛ք չընկճեցին երկաթէ քո կամք։

Սո՛ւրբ ազատութիւն—քո վեհ նըպատակ,
Որին գիտէիր զոհել հանդիստ, քուն,
Որ միշտ երգէիր հոգւովդ անապակ,
Որ քարոզէիր անվախ, աներկուն։

Ընկեր էինք մենք անսուտ երդումով,
Գաղափարների երիզներն անծայր
Գըրկել էին մեր սըրտերն ամրապինդ,
Յիշատակների իբրև զոյգ ծըրար։

Երկինք միշտ անդուլ, բախտն էր անողոք,
Ճակատագրական հասել էր օրհաս...
Աղբակի դաշտի կըռւին արիւնոտ
Վերջ պիտի դընէր կեանքիդ նորահաս։

Ահաւոր վայրկեան, հրաժեշտի սև ժամ,
Անդունդ դահավէժ բացւ մեր միջև,
Քեզ վիճակւեցաւ պըսակ անթառամ,
Ինձ բաժին մընաց վիշտ, սուգ, օրեր սև։

Սև ու սուգ օրեր, անմա՛հ Եղիազար,
Բիւր յիշատակացդ էջէրն ծալ ի ծալ
Ես միշտ պըրպըտեմ, ուր տեսնեմ Զարմայր,
Նըհելի ափին, դու, արիւնթաւալ։

Սիրտըս փըրփըրի, հոգիս խըռովի,
Ցրւեալ ոսկերացըդ, չիմ իդ տամ համբոյր,
Խաչքար մը դըլխիդ, կաթիլ մ՚արտասուք,
Այս իմ ուխտս ահա՛ — հոգիդ մահարոյր։

Ա. Մ. ՋՋԵԱՆ

No. 254

ՍՏՐԱՆԷ ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՇԱ

Աւդալըմ․ ա՛ղ, Թալորի չա՛վրտի ռէզա բա՛րան․
Շա՛ռէ Անդռան փաշաէ գրան բու ,
Դաք՛ա՛ռ դա՛շտա Մուշէ բա՛ր չա՛փա՛րան․
Զա՛րք՛ա՛ղ Ալի բընրաշի դըկ՛ա՛գազի․
«Սիարէ Միրալայէ դա՛սա հըլինըն ,
Սընկ՛էխո բըդըն սընկ՛էվէ նաեարան» ։

Իմտատա վան քաֆըրան ռէ ժը կռալան․
Դէ բա՛ռդա՛ Անթռան փաշա , դէ բա՛ռդա՛ ,
Հաժ էվարդա քօլօղ փափախէ հա՛միդիէ
Ֆինօ սօրէ կա՛րա՛ նիզամէ , մաեա՛ լա՛ռաէ ։

Պէշխա դռնգդա թարուր կարա նիզամէ ,
Տէ լը պառա սիարէ ջա՛ռդէ ․
Դէ բա՛ռդա՛ Անթռան փաշա , դէ բա՛ռդա՛
Դէ բա՛ռդա՛ փաշա ու բա՛ռդա՛ ։

Թալորի չա՛վրտի դար ու դոլ ա՛ ․
Սա՛րա՛վի սըրէ բարախո բըդա՛
Վան փափախան Ֆիդաեան բը ռիշա՛ ։

Թալորի խոպան դար ու մէշա՛ ,
Ֆիդաի Ֆըլա՛ն սա՛ր դա՛շտա՛ Մուշէ պէշխա պէշխա ․
Բըրինա՛ Ֆիդաիէ Ֆըլա՛ն փըռ տը դէշա՛ ։

Թալորի չավրտի դարէ չա՛մ ա՛ ,
Ա՛րմեն գըդ՛ա՛ դազի․ «Անդռան փաշա ,
Թա՛նըէհ ըրկ՛ա՛ եխոիրէ Ֆըլա՛ն բըքշինա՛ ժա՛մէ ․
Սէ սա՛տ բա՛լան բըք՛ա՛վա՛ Թախտէ սըլթան Հա՛միդէ ,
Զա՛ւան նաէդ չա՛ռէ վան Ֆիդաեան ,
Կ՛ըրխա՛ Ֆա՛րմանէ օլուխ չօջուխէ նաֆիամի ։

Թալորի չա՛վրտի դարէ մա՛րխ ա՛ ․
Ֆիդաի Ֆըլան դօր խըլամէ բուա՛ չարխա ․
Զարք՛ա՛ղ Ալի բընրաշի դըկ՛ա՛ դազի․
«Նալէմի մավիզա՛րէ վան Ֆիդաեան
Նոթըլի կուրէ դա՛վ բը խույն նավ Գէռի բա՛րխէ ։

Թալորի չա՛վրտի բը կա՛ռա՛նկ՛ ա՛ ․
Նալ բըզմարէ ջզմաէ Ֆիդաեան ջըրկ՛ա՛ ջըրկ՛ա՛ ․
Կոլ բը ք՛ա՛վա՛ մալա Զա՛րք՛ա՛ղ բընրաշի ,
Զա՛վան կոլլակ՛ի լաւ է Սադըղ դանա՛ ,
Մաեա՛ ըէխուդան ջօթա՛կ բուկէ ։

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԵՐԳԸ
(Թարգմանություն)

Ոզմելլի եմ. ես այրուելիք Տալւորիկս լեռնաշղթայ (եմ).
Անդրանիկ փաշաի կռիւը սաստկացաւ,
Ընկաւ Մշու դաշտում դիրքերի դիմաց.
Զարքաղ Ալի հազարապետը կանչեց.
«Միրալայի ձիաւորնե՛ր, ձեռք բարձրացրէ՛ք,
Ձեր կրծքերը թշնամիների կրծքերին տուէ՛ք»:

Անօղորմների (Փիդայիների) օգնութիւնը տէրութիւններից է գալիս.
Դէ՛հ յառա՛ջ, Անդրանի՛կ փաշա, դէ՛հ յառա՛ջ,
Մինչև երեկոյ համիդիէ քօլօզները, կարմիր Փէսերը գետին են մնացել:

Առջևում տասներկու գունդ հետիոտն զինուորներ (կան),
(Իսկ) ետևից գալիս է ձիաւոր հրոսակ (խումբը).
Դէ՛հ, հետապնդի՛ր, Անդրանի՛կ փաշա. դէ՛հ յառա՛ջ,
Դէ՛հ յառա՛ջ, փաշա և յառա՛ջ:

Այրուելիք Տալւորիկը ծառ ու ծաղիկ է.
Առաւուն կանուխ ուշադրութիւն արա՛
Ֆիդայիների ծոպաւոր փափախներին:

Զորանալիք Տալւորիկը ծառ ու անտառ է.
Հայ Փիդայիներ Մուշի դաշտին վրայ յառաջ յառաջ (գնում են).
Հայ Փիդայու (տուած) վէրքը շատ է ցաւում:

Այրուելիք Տալւորիկը ղօմի ծառ է,
Արմենակ կանչեց. «Անդրանի՛կ փաշա,
Պատուիրե՛ր հայերին, եկեղեցին քաշուին.

Երեք հարիւր պատուհաս ընկնի սուլթան Համիդի գահին,
Ի՛նչպէս չի գալիս Փիդայիների կռւին.
Հրավարտակ է հանել ընտանիքները կոտորելու:

Այրուելիք Տալւորիկը մայրի ծառ է.
Հայ Փիդայիներ իսլամներին շրջապատել են.
Զարքաղ Ալի հազարապետը կանչեց.
«Ֆիդաիների մավզէրների ձայնը նմանում է
Արիւն-բերան գայլի (ոռնոցին) գառների մակաղատեղու մէջ:

Այրուելիք Տալւորիկը կանգառով է.
Ֆիդայիների կօշիկի պայտն ու մեխերը կարգ-կարգ (են).
Ցաւ ընկնի Զարքաղ հազարապետի տունը,
Ի՛նչպէս մի գնդակ են զարկել Սադըղի տըղին —
Անտէր մնացել են մի զոյգ հարսներ:

No· 255

ՍՏՐԱՆԻ ՍԵՐՈԲ ՓԱՇԱ

Հէ՜յ աղաո…: Կ'էլա Մուշէ լըվան քաշան·
Մէզպըրըկ'ա' դա'սա թըլինկէ Սերոբ փաշա
Հընդուստըվանէ, դէռ ու գիվա լըվան կղաշան·
Վորա' մա' շա', Սերոբ փաշա, վորա' մա' շա',
Թօմ խաթին ա' դա' դըխարինա',
Սօսունի ճավ բա'լա'ք ժըտա' դըստինա':

Կ'էլխա Մուշէ վա րը կ'ա'ա ա',
Դէ դըճէրա կադուբա'դա'·
Տըռսա' Սերոբ փաշա, նոթըլի տըռսա'
Բա'դըրխան բա'կ'է, նավ բըրջա բա'լա'ք'·
Պաշի Սերոբ փաշա, բըրա բըդա'
Նավէխո կղօճա' վա Փա'լա'կ':

Մուշա' խոպան բարան բարի,
Թուկ'է ա'ռաէ բու չըլօփա·
Շա'ռէ Սերոբ փաշա նոթըլի
Շա'ռէ ա'ռճա'րէ դա'վրէ բա'րէ,
Թուստա'մէ-Ջալէ րը ռըմ-թօպէ:

Բարան բարի, դա'շտա' Մուշէ կ'ըր խոնավ,
Շա'ռէ Սերոբ փաշա նոթըլի շա'ռէ բուշա
Բա'րա'նէ Ա'րա'բստանէ, րը ռըմր գըավ:

Հէ՜յ աղաո…: Ա'խյա'թա' վէրան դոնդէ կղազի,
Սերոբ փաշա րը ռէ դա'նկա կըխԳազի·
«Հըսէն փաշա, տխու շա'ռէմըն մա'կ'ա',
Բը նա'մա'րդի տխու կօշտընա'մըն դըխուռզի»:

Սերոբ փաշա դա'րման դանա', մըտալա'կ'ըր·
Սօրընէ ճավ բա'լա'ք' դա'սա հա'վէտ
Մավզա'րէ, նավ մըլան վա'րէ'ըր·
Ժը էվարդա հա'տա ռըրէ շա'ռէխո կ'ըր·
Խարաս Սերոբ փաշա նամուսա'կ'է զօռ նամուս կ'ըր:

Հէ՜յ աղաո…: Գէլխէզուզան վա րը դար ա'·
Սերոբ փաշա ժը սա'րէ ճխա հասի խառա'·
Սօսէ նըզանա' վոկ'ի Սերոբ փաշա բըխնդա'ր ա':

Հէ՜յ աղաո…: Դըլէմըն բէթա' բէթա·
Թաղադա'կ'է նա'խէրէ փաշամընտա տէդա',
Կոլէ մալա ք'ա'ւօ դասա բռավա' բըկ'ա',
Հաֆթ հա'զար ա'կ'ա'րէ ալ-օսման հասա սա'րտա':

Հէ՜յ աղաո…: Մուշա վէրան լը րէտռան·
Սա'րէմըն խոլամ ա' սա'րէ Սերոբ փաշա,
Շա'րէ ռիշէ դաք'ա'տա' սա'ր կոհանռա·
Զա'վան Սերոբ փաշա դա'րման դանա',
Բը բէրա'խտի սա'րէվի բըռխնա'·
Ջա'նդակէ Սերոբ փաշա մանա'
Նավ թօղ շուբարէ հա'սպէ նըհարան:

ՍԵՐՈԲ ՓԱՇԱՅԻ ԵՐԳԸ

(Թարգմանութիւն)

Ա՜յ աղա···: Մուշի բերդը զառիվայր տեղ է·
Մտածի՛ր Սերոբ փաշաի ձեռքի մատների
Մատանիների (մասին), այնտեղ (կան) ոսկի, արծաթ, թանկագին քա–
Ե՛կ, մի՛ երթար, Սերոբ փաշա, ե՛կ, մի՛ երթար, [րեր·
Օսմանցին նենգաւոր է, քեզ կը խաբի,
Նաշխուն–աչք Սօսէն քեզնից կ՛առնի:
Մուշի բերդը աւոյտով է,
Մէջն արածում են ոզեր և բազեր·
Սերոբ փաշաի երկիւղը նմանում է
Բէգրխան բէգի երկիւղին, (որ գտնւում էր) Նախշուն աշտարակին մէջ.
Սերոբ փաշայից յետոյ միմիայն
Հսկայ բախտը (թող) իր անունը տայ:
Ամայի Մուշին (մէջ) անձրև տեղաց,
Գետն երեսը ջուր ու ցեխ եղաւ,
Սերոբ փաշաի կռիւը նմանում է
Հին ժամանակ (ների) մարգարէների կռուին·
Ռուստամ–Զալին (է նմանում նա) նիզակների խուրձով:
Անձրև տեղաց, Մուշի դաշտը խոնաւցրեց,
Սերոբ փաշաի կռիւը նմանում է
Արաբիայի բարակ նիզակով քաջերի կռւին:
Ա՜յ աղա···: Աւերելիք Ախլաթ շ–շ–– գիւղ է,
Սերոբ փաշան երեք անգամ կանչեց·
«Հիւսէ՛ն փաշա, դու մի կուիր ինձ հետ,
Նամէրդութեամբ դու իմ սպանութիւն ես ուզում»·
Սերոբ փաշաին թունաւորել են· մտածում է (նա)·
Նախշուն–աչք Սօսէն ձեռք գցեց
Մավզէրին, թեւից ցած առեց·
Իրիկուանից մինչև առաւօտ իր կռիւը մղեց·
Սերոբ փաշաի կինը մի լաւ պատիւ վաստկեց:
Ա՜յ աղա···: Կէլիգուզան ծառով է
Սերոբ փաշան լեռան գլխից ցած եկաւ (արշաւեց).
Սօսէն չէր իմանում թէ Սերոբ փաշան վիրաւոր է:
Ա՜յ աղա··: Սիրտըս բարախում է·
Իմ փաշաի մասին մի չարիմաստ նամակ եկաւ,
Ցաւ ընկնի դունդ, ձեռք չարժի՛ր,
Եօթ հազար օսմանցի զօրք քո վրայ եկաւ:
Ա՜յ աղա··: Աւերելիք Մուշը խօզանոտ է
Իմ գլուխը ծառայ է Սերոբ փաշաի գլխին,
Փուշու ձիգերը (փաթթոցի ծոպեր) ընկել են ականջների վրայ·
Ի՛նչպէս Սերոբ փաշաին թունաւորեցին,
Ստորնութեամբ իր գլուխը կտրեցին·
Սերոբ փաշաի մարմինը մնացել է
Թշնամիների ձիերի (հանած) փոշու և մառախուղի մէջ:

Հաւաքեց և Թարգմանեց ԱԶԻԶ

ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

	ԵՐԵՍ
Ալիշան, Հ. Ղ.	255
Ահարոնեան Աւ.	231
Գամառ–Քաթիպա (Ռաֆայէլ Պատկանեան)	21
Դուրեան Պ.	179
Խրիմեան Հայրիկ	259
Նալբանդեան Մ.	3
Նար–Պէյ, Խ. Արք.	115
Պէշիկթաշլեան Մ.	71
Քուչակ, Նահապետ	195

ՁԱՅՆԱԳՐԻԱԾ ԵՐԳԵՐ

		ԵՐԵՍ
1.	*Ազատն Աստուած այն օրից. — Մ. Նալբանդեան*	5
2.	*Ազատութեան սատղը պայծառ. — երաժտ.* Mr. Eben H. Bailey	152
3.	*Ազնիւ ընկեր մեռանում եմ. — Ս. Շահազիզ*	123
4.	*Ա՛խ Վասպուրական*	263
5.	*Արի՛, իմ սոխակ. — Գամառ–Քաթիպա*	68
6.	*Բա՛մբ որոտան. — Հ. Ղ. Ալիշան*	93
7.	*Դաշնակցական խումբ*	16
8.	*Դարդս լացէ՛ք. — Աւ. Իսահակեան*	186
9.	*Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին*	29
10.	*Դու զո՞վ խնդրես, մայր իմ անոյշ. — Մ. Պէշիկթաշլեան*	72
11.	*Ես լսեցի մի անոյշ ձայն. — Ս. Շահազիզ*	215
12.	*Երբոր բացւին դռներն յուսոյ. — Ն. Ռուսինեան*	40
13.	*Զարթի՛ր, որդեա՛կ. — Պ. Վ. Նաթանեան*	105
14.	*Զէնքերս տո՛ւր, մայրիկ. — (Կորկոտեանի երգը)*	87
15.	*Թո՛ղ երգէ բլբուլ*	83
16.	*Թո՛ղ կորնչին բռնապետներ*	108
17.	*Թո՛ղ մէջէ քամին. — Գամառ–Քաթիպա*	46
18.	*Ի բիւր ձայնից բնութեան շքեղ. — Մ. Պէշիկթաշլեան*	85
19.	*Ի զէ՛ն, հայեր*	133
20.	*Ի զո՛ւր են, ի զուր, բռնաւո՛ր. — Խ. Ե. Նար–Պէյ*	116
21.	*Իմ հայրենիք զիս կը կանչէ. — Ա. Հայկունի*	117
22.	*Ի՞նչ կայ որսից լաւ.* Ar. K. M. Veber	273
23.	La Marseillaise. — Rouget de LIsle	137

24. Լէ՛փօ, լէ՛, լէ՛ 247
25. L'Internationale. — Eugene Pottier, Musique de Adolphe Degeyter 150
26. Լուսին չկար, մութ գիշեր էր. — (Խանի երգը) 89
27. Լռեց... ամպերը եկան... — Գամառ-Քաթիպա 30
28. Խաղաղ դաշտի որդիք 38
29. Խաւարել եմ որպէս գիշեր 191
30. Ծառիս տակը մանիշակ (Ջան գիւլիւմ) 239
31. Կալի հոռովէլ — Երաժշտ. Գ. Միրզայեան (Սիւնի) 272
32. Կարկուտ տեղաց. — Թորոս 11
33. Կռուեցէ՛ք, տղերք. — Մ. Ե. 59
34. Հարբրան 242
35. Հա՛յ ապրինք, եղբա՛րք. — Խ. Ե. Նար-Պէյ 52
36. Հա՛յ եղբայրներ, դէ՛, գունդ ի գունդ 62
37. Հա՛յ երիտասարդներ, չո՛ւտ չտապեցէք 98
38. Հայրի՛կ, Հայրի՛կ 262
39. Հեռաւոր երկիր. — («Հնչակ»). — Մ. Տամատեան 100
40. Հերի՛ք, որդեա՛կ. — Մնակեան 34
41. Հիմի՞ էլ լռենք. — Գամառ-Քաթիպա. — Երաժշտ. Կոմիտաս վրդպ. 24
42. Հովերն առան սար ու դարեր. — Ա. Իսահակեան 189
43. Հօ՛յ, Նազանըմ 193
44. Մայր Արաքսի ափերով. — Երաժշտ. Կոմիտաս վարդապետ 22
45. Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ. — Ղ. Աղայեան 176
46. Մանկութեան օրեր. — Մ. Նալբանդեան 14
47. Մեզի մոռցաւ հայոց ազգը. — Գամառ-Քաթիպա 33
48. Մենք պէտք է կռուենք 103
49. Մեր հայրենիք. — Մ. Նալբանդեան 9
50. Մի գեղեցիկ, պարզ գիշեր էր. — Ս. Սափարեան 81
51. Մի՛ լար, բլբո՛ւլ 203
52. Նպատակիս հասնիմ միայն 44
53. Ո՛վ ծիծեռնակ, վարանած թռչնիկ. — Գրօսի 124
54. Ով որ քաջ է, ի՞նչ կը սպասէ. (Սերոբ փաշայի երգը) 149
55. Սարերը ման եմ եկել. — Երաժշտ. Գ. Միրզայեան (Սիւնի) 248
56. Սարերի հովին մեռնիմ. — Երաժշտ. Գ. Միրզայեան (Սիւնի) 267
57. Սարէն կուգայ ձիաւոր 235
58. Star Spangled Banner. — Musique Francis Scott Key 144
59. Տալւորիկի կորիւն եմ քաջ. — Մ. Տամատեան 134
60. Տէ՛ր, կեցո՛, դու զհայս. — Մ. Դ. Թաղիադեան 78
61. Քանի՛ թմրինք. — (Զէյթունի մարշ) 111

ԱԶԳԱՅԻՆ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Ազատութեան քաջ զինուորը. — Թարգմ. Գ. Բարխուդարեան 61
Ազիզ մէրիկ. — Հայ-Գուսան 89
Աղօթարանը բացուեցաւ. — Գամառ-Քաթիպա 28
Ամէն տեղ տիրած խորին լռութիւն (Ձայն տո՛ւր, ո՛վ ծովակ). — Րաֆֆի 131
Այդ մե՛նք ենք գալիս. — Շուշանիկ Կուրղինեան 166
Այն ո՞ւր կերթայ զւարթադէմ (Հայ քաջուհին). — Մ. Պէշիկթաշլեան 90
Անի քաղաք. — Ա. Վ. Արարատեան 106

Անցեալին տա՛նք հրաժեշտ յաւէտ (Ռուս. Մարսէյեզ) Թարգմ. Ա. Մելիք 142
Անծա՛յր տափարակ (Ցե՛տ տար քո խաչը).— Շուշանիկ Կուրղինեան 285
Աստեղազարդ դրօշակը (Ամերիկեան ազգային երգ) 145
Աստուած վկայ որ մենք կը յաղթէինք.— Գամառ-Քաթիպա 84
Արտն ի վեր կամկար գութան կը քաշէր.— Գամառ-Քաթիպա 161
Գարահիսար լերան կրծքին (Պետօյի յիշատակին) 104
Դու մի՛ զարմանար. — Գամառ-Քաթիպա 171
Դուն խելօք, հաշւով վաճառական ես.— Գամառ-Քաթիպա 37
Դուն նստեր ես ճամբաներուն անկիւնը. Ա. Զօպանեան 74
Եդուարդի յիշատակին Ց. Թոքաճեան 290
Ելէ՛ք, ո՛վ երկրի տառապեալներ, (Ինթէրնասիօնալ). — Eugene Pottier,
Թարգմ. Ա. Իսրայէլեան 151
Ես հանեցի սուրս պատեանից 149
Ես մէկ ծառ եմ ծիրանի. Ջիւան 51
Ես մշեցի ճամբորդ եմ.— Գամառ-Քաթիպա 43
Երբ ես մեծցայ, տղամարդ դարձայ.— Հայ-Գուսան 126
Երբոր մայրը երկունքով. Գամառ-Քաթիպա 44
Զարթի՛ր, մանուկ իմ նազելի. Գամառ-Քաթիպա 104
Զարմայրի յիշատակին Ա. Մ. Զշեան 291
Է՛յ, ջա՛ն հայրենիք.— Հայ-Գուսան 45
Էն արծիւ էր. (Ա. Մալօյեանի յիշատակին). — Հայ Գուսան 60
Ընցաւ տարին 56
Թէ իմ ալեոր հերքս սեւնային.— Գամառ-Քաթիպա 32
Թէ իմս հայրենեաց քնար ոգւոր.— Ս. Ֆէլէկեան 92
Թէ հայրենեաց պսակադիր.— Գ. Եպ. Սրուանձտեանց 122
Թէպէտ ես մեծ տան նշանն եմ.— Սէյեադ 51
Թռի՛ր իմ նժոյգ.— Ա. Ծատուրեան 45
Իբրև արծիւ սաւառնում ես (Անդրանիկին) 31
Ի՛մ Հայաստան, իմ մայր. Պատ. Ա. Մ. Ի. 146
Իմ սիրելի զաւակունքս 77
Ինձ համար չէ գարնան գալը — Թարգմ. Ք. Տ. Պատկանեան 82
Ինձ տեղ տւէ՛ք.— Հայ-Գուսան 42
Ի՛նչ ուկեղէն դարագլուխ է այս (Կովկաս, արտասանութիւն) Սիամանթօ 12
Ինչո՞ւ, ինչո՞ւ խոալացիք. Ս. Շահազիզ 264
Լա Մարսէյեզ. Թարգմ. Պ. Խ. Թէրզեան 140
Լուռ գիշերին.— Հայ-Գուսան 79
Խաղաղութի՛ւն ձեզ, սուրբ մարտիրոսներ.— Ա. Ծատուրեան 42
Ծիծեռնա՛կ, ծիծեռնակ.— Գ. Դոդոխեան 266
Ծուխը ամպի պէս. — Գամառ-Քաթիպա 48
Կովկասի քաջե՛ր, խմբեր կազմեցէք (Անդրանիկի երգը) 157
Կռունկ.— Նահապետ Քուչակ 265
Հազա՛ր բարով, հպարտ սարեր.— Հայ-Գուսան 13
Հայրենեաց սիրոյ համար 101
Հայրենիք սրբազան Յ. Քուչուրէգեան 17
Հայր մեր երկնաւոր.— Գամառ-Քաթիպա 55
Հիմի է՞լ խօսենք — Մ. Նալբանդեան 27
Ձիներն հառ-հառ.— Մ. Փորթուգալեան 86
Մասի ճակատին ամպրոպ պատռեցաւ.— Գամառ-Քաթիպա 67
Մեր խեղճ ազգը ուսում չունի.— Գամառ-Քաթիպա 36
Մեր նախնիքը ազգի համար իրենց կեանքը զոհեցին 106

Մնա՛ս բարեաւ, քաղցր մայր իմ 111
Յառա՛ջ հայեր. — Մ. Փորթուգալեան 141
Նպատակիս գէթ մի մասը կատարուէր 194
Շչինքը արեան. Գամառ-Քաթիպա 174
Շնորհակալութի՛ւն վեհափառ սուլթան. — Գամառ-Քաթիպա 41
Ո՛հ, ի՛նչ անոյշ և ինչպէս զով. — Մ. Պէշիկթաշլեան 82
Ողջոյն տուէք իմ հայրենեաց. Գ. Շէրենց 47
Ո՞նց գաս, իմ լուսնակ. - Հ. Ղ. Ալիշան 256
Ո՛չ, եղբարք, ո՛չ. Խորէն Եպ. Նար Պէյ 118
Ոչ փող զարկինք (Թաղումն քաջորդւոյն). — Մ. Պէշիկթաշլեան 80
Ոսկէ գագաթը բարձրիկ Նէմրութայ (Սերոբ փաշայի յիշատակին). — Հայ Գուսան 49
Ո՛վ հայկազունք, ո՛վ դիւցազունք 112
Ո՛վ պատանիք, ուերց ներքև. — Մինաս Չերազ 88
Պզտիկ տղայ. - Գամառ-Քաթիպա 77
Սև խաւարը իմ ընկերն է անբաժան (Աշուղը). — Ա. Ահարոնեան 6
Վէրքերով լի ջան Ֆիդայ եմ 99
Տո՛ւր ձեռքդ, ընկեր. — Գ. Թադէոսեան 67
Քնէ՛, քնէ՛, իմ հայրենիք - Գամառ-Քաթիպա 107
Քնի՛ր, բալիկ (Բօլգար մօր օրօրը). — Ա. Ահարոնեան 232
Քնի՛ր, իմ բալիկ. — (Նազէի օրօրը): — Ա. Ահարոնեան 18
Քուն եղի՛ր, պալա՛ս. — Գամառ-Քաթիպա 125
Օտար երկիր, օտար պանդուխտ 266

ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

Ախչի՛, քեօ գլօխն է դրած 246
Ահա ելաւ լուսինն արծաթ. Շանթ 190
Ահա սուրհանդակի սայլակը 200
Այն աղջիկը երէկ տեսայ. Շանթ 200
Առաւօտեան քաղցր ու անուշ հովերն 238
Արի էրթանք սարն ի սէյրան 278
Արի՛, հովի՛կ. — Հաֆըզ 219
Բազմած լուսնի նուրբ շողերին — Յովհ. Թումանեան 220
Բերէ՛ք շիշը, բերէք բաժակ. — Գամառ-Քաթիպա 190
Բլբուլի հիդ լաց իս էլի. — Սայեաթ-Նովա 238
Բոյլ մը նայուածք, փունջ մը ժպիտ. — Պ. Դուրեան 183
Գիշեր ու ցորեկ ի քո տարփական 236
Դուն կ'աղօթէիր — Շանթ 201
Ես Ջուլօն եմ 250
Երդւում եմ ստեղծման առաջին օրով. Լէրմօնտով 224
Երեկոյ է, բոցավառ է հորիզոն. — Պ. Դուրեան 188
Էն տեսակ կին. — Յովհ. Թումանեան 187
Ըզբօսանքի համար մի օր կարդայինք. — Տանթէ 217
Թամամ աշխարհում չկայ մին, — Սէյեադ 181
Թաք տանէին, տանէին 278
Ի՞նչ է, եա՛րար. — Հաֆըզ 216
Լա՛ց, ո՛ կուսիկ. — Մ. Պէշիկթաշլեան 212
Լէ՛, լէ՛, եամա՛ն 277

Լճի մէջ նաւակ. — Գամառ-Քաթիպա 205
Ծիծաղախիտ Վանայ ծովի (Ա՛խ, Թամար). — Յովհ. Թումանեան 204
Ծովուն խաւք մը կէր 245
Կապոյտ երկնքում աստղեր են փայլում. — Գ. Բարխուդարեան 249
Կէս գիշերին գետի ափին — Աւ. Իսահակեան 182
Կը բանեցնէ ամէն հնարն. — Թ. Թասսօ 213
Համբո՛յր մ'առի ներանէ. — Պ. Դուրեան 185
Հայոց աղջիկներ. — Գ. Միրիմանեան 241
Հանգիստ իմ անոյշ. — Մ. Շահազիզ 270
Հերի՛ք մնչես. — Ա. Տխրունի 234
Ճառագայթի ու վարդի. — Պ. Դուրեան 187
Մանում է թելը. — Աղա Նեգրի 228
Մինչև մահուան անյիշատակ ի շիրիմ. — Թարգմ. Մ. Պէշիկթաշլեան 217
Մնացե՛ս բարեա՛ւ, սէ՛ր իմ սէր. — Մ. Պէշիկթաշլեան 123
Մութ պարտիզում. — Աւ. Իսահակեան 209
Նա ինձ հարցրեց. — Աղա Նեգրի 184
Շաղի, շողի ժամք էին. — Պ. Դուրեան 192
Ո՛ւր էր թէ զեփիւռիկ. — Մ. Պէշիկթաշլեան 194
Պաղ աղբիւրի մօտ 247
Սևորակ աչեր. — Մ. Շահազիզ 199
ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐ. — Նահապետ Քուչակ. 197, 210, 216, 222, 223, 237, 271, 280
Սիրում եմ ես ջլուտ, ուժեղ բազուկները բանւորի. — Աղա Նեգրի 219
Վարդն ի բացե 270
Վկայ է աստղը կէս գիշերային. — Լէրմօնտով 212
Տո՛ւր ինձ ձեռքդ, ո՛վ հայ աղջիկ. — Գամառ-Քաթիպա 206
Քնքո՛յշ տատրակս. — Աւ. Իսահակեան 209

ԽԱՌՆ ԵՐԳԵՐ

Ալ ու ալւան ես հագել 276
Ա՛խ, ինչպէս կ'ուզեմ. — Գամառ-Քաթիպա 154
Ա՛խ, մեր սիրտը. — Աւ. Իսահակեան 39
Ականջ դրէք (Կիկօյի քարողը). — Տ. Ամիրջանեան 276
Ահա ծագեց կարմիր արև. — Րաֆֆի 161
Աղջկե՛րք, պար բռնեցէք — Ղ. Աղայեան 279
Անհոգ ես, չը գիտես (Այծեամ) Ջիւան 251
Անմիտ ճնճղուկը (Խելքի աչեցէք). — Ջիւան 172
Աշնան աւրող քարաւանն եկաւ. — Շուշանիկ Կուրղինեան 234
Աչերնիդ պղտոր. — Վտարանդի 36
Աստւա՛ծ, ինչպէս ծուխ օրերս անցան. Յովհ. Թումանեան 102
Արագն եկաւ լափին տալով 202
Արի գութան. — Յովհ. Թումանեան 161
Աքաղաղը կանչում է. — Աղայեան 279
Դէ գնա՛, կիգամ 277
Դու փափկաթև մանկիկ զեփիւռ. — Մ. Պէշիկթաշլեան 99
Եթէ տժգոյն մահու հրեշտակ. — Պ. Դուրեան 180
Երբ ալեկոծ ծովի վրայ. -- Գ. Թադէոսեան 39
Երբ տեսնում եմ որ. — Աղա Նեգրի 284
Երեք չորս հատ ջաղացաքար. — Ղ. Աղայեան 167

Եւ հեռո՛ւ, այնտեղ. — Հ. Անուշաւան 170
Զինուորին երգերը. — Թարգմ. Գ. Դոդոխեան 136
Է՛, մնաք բարով, (տրտունջ). — Պ. Դուրեան 169
Էս հակոտնեայ աշխարհում. — Ա. Յովէփեան 288
Ինծի կ'ըսեն, ինչո՞ւ լուռ ես. — Պ. Դուրեան 215
Ինձ մի՛ խնդրի 87
Ինչպէս փչէ հուժկու մրրիկ. — Վէտա 102
Ինչո՞ւ պաշած են, լճակ. — Պ. Դուրեան 202
Ինչո՞ւ կուլաս, դու Գառնիկ 279
Լօ՛, լօ՛ 143
Խունկը կը ծխի. — Սիպիլ 201
Ծիծեռնակը բոյն է շինում. — Ղ. Աղայեան 236
Ծիտը ծառին ծլլում է. — Ղ. Աղայեան 279
Ծխում է խունկը — Վարուժան 54
Ծո՛վ, ե՛կ բացուինք մենք իրար. — Շանթ 163
Կանգնի՛ր, ո՛վ անցորդ. — Ա. Ծատուրեան 10
Կուսանք հայոց (Շուշանն Շաւարշանայ). — Հ. Ղ. Ալիշան 158
Հազա՛ր երանի. Գամառ-Քաթիպա 73
Հայրիկի երգերէն 260
Հաւաքուել էին բազմաթիւ հայեր — Ա. Ծատուրեան 263
Ձախորդ օրերը. — Ջիւան 50
Մակոյկն է խրած. — Շանթ 191
Մանուկները գոռում-գոչում. — Յովհ. Թումանեան 164
Մութ գիշերս. Մ. Պէշիկթաշլեան 76
Յուսահատուել մեղք է, ընկե՛ր. — 88
Շուրջիս տափակ, ցամքած կեանքէն. — Շանթ 165
Ո՛հ, լոկ երազ էր. Մ. Նալբանդեան 283
Որսկան ախպէր. Աւ. Իսահակեան 8
Ուղիղ գինետնից. Գ. Դոդոխեան 256
Սար ու ձոր ընկած (Աղասիի երգը). — Խ. Աբովեան 120
Սիրելիս մի օր. — Սաստի 217
Սիրո՛ւն պատկեր. — Ս. Շահազիզ 236
Սուրբ տենչերով լոկ ծարաւած. — Պ. Դուրեան 203
Վառ արշալոյսին. — Հր. Ֆալեան 168
Տաւիղն առաւ. — Յ. Յովհաննէսեան 162
Տեհար մէկը շլապայով. — Րաֆֆի 288
Տո՛ւր ձեռքդ, ընկե՛ր, 175
Ցաւատանջ հոգիս (Հայրիկին). — Ս. Չէեան 261
Ցուրտը փչեց, ձմեռը սաստիկ. Բէրանժէ 269

ԲԱՌԱՐԱՆ

Աբրիշում—մետաքս
Ագիզ—պատուական
Ալամ—աշխարհ
Ալամի—յայտնի
Ալւան—տեսակ
Աճապ—արդեօք
Ա՛մ—եամա՛ն
Ամանաթ—աւանդ
Ամպրաւ—արմաւ
Այեր—օդ
Անանակ—ծիածան
Անգուման—յանկարծակի, անակնկալ
Անմատաթ—անօգնական, անկարող
Աշել—նայել, դիտել
Աշերու խնճեր—աչքակապիճներ
Ապոլըն—սիրոյ աստուած
Ապով—համար
Ասլի—իսկական
Աստուր—աշխարհ
Արի—պարսիկ
Աւուզ—աւազան (հաւուզ)
Բազայ—բազէ
Բաժ—տուրք
Բալաք—խայտաբղէտ
Բալքամ, բալքեամ, պալքիմ—թերեւս
Բահար—գարուն
Բաջի—քոյր
Բարութ—վառօդ
Բեդամադ անել—սիրտը ցաւցնել, վի-
րաւորել
Բեհեշտի—դրախտային
Բէգեառ, պէքէրիա—տարապարհիկ
տուրք
Բըճիր—կօշիկներ
Բուլվար—փողոց, պողոտայ
Բրինդար—վիրաւոր
Բրորալ—պղտորել
Բօյ, պօյ—հասակ
Գէմ—եթէ, թէ որ
Գէօ—ահա, ահաւասիկ
Գժութիւն—խենթութիւն
Գիւգիւմ, կիւկիւմ—պղնձէ սափոր
Գիւլ—վարդ, ծաղիկ
Գիւլիւմ—իմ վարդը, իմ սիրելին
Գոզալ, կիւզէլ—գեղեցիկ
Գոլ—լիճ
Դաուլճի, տավուլճի—թմրկահար
Դար—բլուր
Դարգեահ—մեծ դուռ
Դըմէջխ—Դամասկոս, Շամ
Դխարի—նուէր
Դիժար—դժւար
Դինջանալ—հանդստանալ
Դմպլիկ—պզտիկ թմբուկ
Դուման—մէգ, մշուշ
Դուշման—թշնամի, հակառակորդ
Դուրան—ընդարձակ դաշտ
Դօշ, տէօշ—կուրծք
Դօշկեկ—դօշակ
Եալամ, եալալամ—է՛յ, դէ՛յ
Եախա—օձիք
Եար—սիրուհի, սիրական
Եարաբ—ո՛վ Տէր, Աստուած իմ
Եարալի, եարալու—վիրաւոր
Ելքեան—առագաստ
Եղնավիզ—եղնիկի վզով
Եղտիր—աշխարհ, կեանք, տիեզերք
Զառ—ոսկէթել գործուած
Զարար—վնաս
Զէռ—ոսկի
Զիրա—որովհետեւ
Զիլֆ—խոպոպիկ
Զգգուն—մեղմ հոսանք
Զուլալ—վճիտ
Զուլում—տառապանք, թշւառութիւն
Զօհալ—արուսեակ աստղ
Էնդուր—այն պատճառով
Ըդման—ատոր նման
Ընքփեր—ունքեր
Թալել—ձգել. թողնել
Թահնայ—առանձին
Թավուր—կերպ, տեսակ
Թարաֆ—կողմ
Թարթիկ—աչքի թարթիչ
Թարկ—ձգել
Թուլութ—թուլութիւն, նւաղում

Թեւթօն (տեւտօն)—գերմանացի
Թէզ—շուտ, արագ
Թէզնիք—թեւկապ
Թէկուզ—եթէ նոյնիսկ
Թէպուր—փետուր
Թիրախ—նետի նպատակ
Թիւռնիւռ—կանանց շրջազգեստի ե-
տեւի մասը
Թումբլան—պարի տեսակ
Ժում—անգամ, հերթ
Իլլահի—անպայման
Իղրար—ուխտ
Իման—հաւատք
Իշել—նայել
Իրիշկել—նայել
Լալէ փդան—կակաչի բաժակ ?
Լանըլօ—սիրավէպ մը
Լաշքեար (ասքէր)—զօրք
Լաթիֆ—գեղեցիկ, վայելուչ, քաղցր
Լէզէա—ճաշակ, համ, հաճոյք
Լուկ—լոկ, միայն
Լփռտել—լափել
Լօք—միայն թէ, լոկ
Խաղուխ—ցից
Խալխ—ժողովուրդ
Խամեմ—համեմ
Խանդեալ—ալորուն
Խապար, խապրիկ—լուր, տեղեկութ.
Խատավաթ—վիշտ, հոգս
Խատնել (հատնիլ)—սատկիլ
Խարապ—աւեր, փճացած
Խաւ-խուսոց—հաւախօս
Խեռլել—ուշաթափիլ, խենթանալ
Խոպան—անմշակ, վայրի, պարապ
Խուն—սիրուն, անոյշ
Խուրպան—մատաղ, զոհ
Խօշ—քաղցր, սիրելի
Կալէհոն—միջնորդ (փոխաբերաբար)
Կապանի—զարդարուն
Կապուլ—ընդունելի, համաձայն
Կարիպութիւն—օտարութիւն
Կեամ—նաւ
Կէօրօմաստ—եփած կաթ, սեր
Կիւզէլ—գեղեցկուհի
Կուլակ—քունքերին ի վար կախուած
վարսափունջ
Կոլատ—կարճահասակ
Կուման—յոյս
Կստան—ծեր զոմէշ
Կսմաթ—բաժին, ճակատագիր,
Հագագ—ձայն հանող, շունչ
Հազարա—սոխակ
Հազրիվարդ—վարդ՝ ընտիր տեսակէն
Հալպաթ—անշուշտ ի հարկէ
Հալխայ—օղակ
Հաղ (հախ)—իրաւունք
Հանց—այնպէս
Հասրաթ—կարօտ, փափաք
Հաւա—օդ
Հաւար—վտանգի կոչ, լուր
Հէճապ—վախ, ակնածանք
Հէյրան—հիացմունք, մատաղ
Հիդ—հետ
Հօնդուր-հօնդուր—կողկողագին
Ղադալէ—եղնիկ
Ղալամ (կալէմ)—գրիչ
Ղալամքաշ—գրչանկար
Ղասդի—դիտմամբ, ի հեճուկս
Ղաթիր—գրկում, գրկանք
Ղամար—լուսին
Ղումաշ—բրդեղէն հիւսուածք
Ղուշ—թռչուն
Ճինվի (ճըճու)—որդ
Ճոթ—ծայր, եզերք
Ճուպա (ճիւպպէ)—վերարկու
Մալ—ապրանք, հարստութիւն
Մալուլ—տխուր
Մախշա—ճակտի արծաթէ զարդ
Մահպուպ—սիրելի, սիրուհի
Մահրում—զրկուած
Մամդէլ—օրիորդ
Մանթօ—թիկնոցակ
Մանկեար (մէկէր)—միթէ
Մաշալա—ջահ
Միթօմ—իբրև թէ
Միւլք—կալուածք
Մորճիկ—տղայ, երիտասարդ
Մուրվէթ—մարդավարութիւն
Մօհլաթ (մէօհլէթ)—ժամանակ, միջոց
Յօռի՞—ինչո՞ւ, ինչո՞ւ համար
Յուրաստ կալ—ուրանալ
Յանկիւման—անակնկալ, անյոյս
Նամարդ—տմարդի, վատ
Նեմցէն—գերմանացին
Շամս—արև
Շառ—ամբաստանութիւն
Շառաֆ—լուսափայլ
Շարեղէն—բամբակէ
Շաֆաղ—արշալոյս
Շհու—սրինգ

Շուշի—ապակի
Ումէտ—յոյս
Ձայիր—մարգագետին
Ձաշմակ—ակնոց
Ձափար—Ցանկապատ, պատնէշ
Ձիչակ—ծաղիկ
Ձիւմ—որովհետև
Պաշմաղ—կօշիկ
Պեզարել—Ձանձրանալ
Պիթուն—ամբողջ, բոլոր
Պողմախ—խեղդել
Պուճուր—փոքրիկ
Պրինտար վիրաւոր
Ջամալ—բարեձև դէմք, վայելուչ
Ջիւան—երիտասարդ, կայտառ
Ջուհար—գոհար
Ջունան անել—ուրախանալ
Սաղել, սաղ գալ—պատրաստել, վայելել, յարմարիլ
Սապոկ—կօշիկ
Սապր—համբերութիւն
Սաւտա—սէր, սիրահարութիւն
Սելամ—ողջոյն, բարև
Սեղեխ—շնացող, լպիրշ, մոլի
Սէլավ (սէլ)—հեղեղ
Սէյրան անել—դիտել, պտոյտի ելլել
Սէրաուփ—մաքուր
Սէֆիլ—խեղճ, թշուառ
Սմբուլ (զիւմպիւլ)—լիլա ծաղիկ
Սուրաթ—դէմք, երես, կերպարանք
Սուրայի—ձևաւոր, երկայն
Սուրուխ ծէր—սրածայր
Սռսռուն—զուտ, հատիկ հատիկ
Սօնա—բարձրահասակ, վայելչակազմ
Տէսթուր—ազատ, արտօնութիւն
Տէրտ—վիշտ, ցաւ, մտահոգութիւն
Տի—պիտի (համառօտութիւն)
Տիքամ—պատառ
Վաթան—հայրենիք, ծննդավայր
Վաղէ—ժամանակամիջոց
Վէրէմ—խոց, հիւծախտ
Վիզիթ—այցելութիւն, այցելութեան վարձք
Վռօշ—ապուր
Փաղանդ—քնար
Փայլէվան (փէհլիվան)—ըմբիշ, գօտեմարտող
Փանդռ—քնար
Փէշքէշ—նւէր
Փեստա—բրիչ
Փիւսկիւլ—ծոպ, փունջ
Փոդրաթ—կապալ
Փութա—խումբ
Փուշարմացք—ապաշխարութիւն, փախ
Քահրպար (քեահրիպար)—սաթ
Քեսայ—պնակ
Քէրէմ—շնորհք
Քուրա—հնոց
Օթվան—օթևան
Օրօխկել—ուղարկել
Ֆառահ—զւարթ, ազատ, լայն, զով
Ֆուէյլին—օրիորդ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ—.

Երես 236, «Գիշեր ու ցորեկ ի քո տարտկան»՝ հաւանական է ադաւաղումն ըլլայ Քուչակի տաղերու. գոյութիւն ունին նոյն երգի ուրիշ, աւելի ընդարձակ վարիանթներ, Մուշի և Վանի բարբառով.

Երես 265, «Կռունկ»-ի հեղինակն է Քուչակ. մինչև այժմ իբրև այդ երգի հեղինակ ճանչցւած անձերը միայն անոր ընդօրինակողներ եղած են.

Երես 245, գրի առած ենք Զլսիարնակ Վանեցիներու բերնէն, ըստ որոնց՝ հեղինակն է Խարականիցի «աշուղ Ձիչակ» (Քուչակ)· հաւանական է աղաւաղումն ըլլայ Քուչակի նոյնիմաստ երգի մը։

ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ.—

Երես 8, «Որսկան ախպէր» երգի մէջ պակաս է հետևեալ—չորրորդ տ
—Գլուխն առաւ, քարերն ընկաւ իմ ջիւանս, իմ բալէս։

Երես 134, «Տղւորիկցի կարին եմ զորդ» — պէտք է ըլլայ «խորդ», քըրտերէն հուժկու, յաղթանդամ.

Երես 182, «Իմ փէրին» երգի հեղինակն է Աւ. Իսահակեան.

Երես 236, «Ծիծեռնակը բոյն է շինում» երգի հեղինակն է՝ Ղ. Աղայեան.

Гос. Библиотека